



Երեւանի մամուլի ակումբ



«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն



Բաց հասարակության ինստիտուտի Մարդու իրավունքների և կառավարման դրամաշնորհային ծրագիր

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ

# ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

## ՁԵԿՈՒՅՑ

---

2006

# ԷԶԱՆԻՇ

Նախաբան	4
Բարեփոխումների մոնիտորինգը եւ 2007-ի ընտրությունները	8
Համառոտ ամփոփում	12
<b>1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>19</b>
<i>1.1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>	<i>19</i>
Հավաքների ազատություն	19
Խոշտանգումներ եւ անմարդկային վերաբերմունք	23
Կրոնական, ազգային եւ այլ փոքրամասնությունների իրավունքներ (այդ թվում՝ փոքրամասնությունների քաղաքական իրավունքներ)	29
Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կայացումը	37
<i>1.2. ԽՈՍՔԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ</i>	<i>41</i>
ԶԼՄ եւ տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությունը եւ փոփոխությունները 2006 թվականին	41
Իրավիճակը խոսքի, մամուլի եւ տեղեկատվության ազատության բնագավառում	46
Ազատ եւ արդարացի մրցակցության ապահովում մեդիա ոլորտում, պետական հատկացումներ տպագիր լրատվամիջոցներին	49
<b>2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b>	<b>56</b>
Քաղաքական միավորումներ (կուսակցություններ) ստեղծելու եւ դրանց ազատ գործելու հնարավորությունները	56
Ազատ եւ արդար ընտրությունների գերակշռումը, ընտրությունների ժամանակ քաղաքական կուսակցությունների՝ արդար մրցակցության հնարավորությունները	61
Կուսակցությունների կախվածությունը ռազմական, օտարերկրյա, կրոնական կազմակերպություններից եւ տնտեսական օլիգարխիայից	65

<b>3. ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>68</b>
Հասարակական կառույցների կողմից քաղաքացիական իրավունքներ պաշտպանելու կարողությունը	68
Կառավարության ձեւավորման վրա քաղաքացիների մասնակցության աստիճանը	71
Իշխանությունների գործունեության վրա ՁԼՄ-ների վերահսկողությունը	72
<b>4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b>	<b>75</b>
Տեղեկատվության ազատությունը եւ կառավարության քաղաքականության թափանցիկությունը	75
Հանրային ոլորտի ծառայությունների որակը	77
Քաղաքացիական ծառայողների իրազեկությունը եւ անկախությունը քաղաքական ազդեցություններից	90
<b>5. ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>100</b>
Ոստիկանության մասին օրենքը եւ պրակտիկան, դատախազության գործունեությունը: Օրենքների եւ իրավապահ կառույցների նկատմամբ հանրության վստահությունը եւ հարգանքը	100
Դատական իշխանության արդյունավետությունը եւ կանխատեսելիությունը	105
<b>6. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ</b>	<b>110</b>
Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում	110
Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները	114
Կոռուպցիան՝ որպես Հայաստանում գործարարության ծավալման խոչընդոտ	117
Քաղաքական կոռուպցիա եւ «պետության զավթում»	121

# ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների առաջին մոնիտորինգը Երեւանի մամուլի ակումբը, «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության անդամ մի քանի հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ, իրականացրել է 2005 թվականին:

Յուրաքանչյուր նման ուսումնասիրություն սկսելու համար նախ պետք էր պատասխանել երկու հարցի`

1. Ինչպես ընտրել հետազոտության ուղղությունները, կառուցվածքը եւ մեթոդոլոգիան
2. Ինչպես ապահովել պրոֆեսիոնալիզմը եւ օբյեկտիվությունը:

Ըստ այդմ` 2005 թվականի հետազոտության համար հիմք հանդիսացան Եվրոպայի խորհրդին անդամագրվելիս այդ կազմակերպության առջեւ Հայաստանի ստանձնած հիմնական պարտավորությունները: Մասնավորապես, հետազոտությունը նպատակ ուներ պարզել, թե Հայաստանն ինչպես է կատարել մարդու իրավունքների եւ ժողովրդավարության բնագավառներում իր ստանձնած պարտավորությունները: Ընդ որում` մոնիտորինգի առարկա էին ոչ միայն բուն պարտավորությունները, այլեւ հետագայում` պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄՎ) բանաձեւերի պահանջները:

Պրոֆեսիոնալիզմը եւ օբյեկտիվությունն ապահովելու համար յուրաքանչյուր բաժնի հետազոտությունը պատվիրվել էր այդ բնագավառում մասնագիտացած եւ նրանում իր նեղ շահերը չհետապնդող հասարակական կազմակերպության: Ձեկույցի բոլոր բաժինների նախնական տեքստը քննարկվում էր գործընկեր կազմակերպությունների եւ անկախ փորձագետների մասնակցությամբ եւ դիտողություններն ու առաջարկություններն արտացոլվեցին զեկույցի վերջնական տեքստում:

Նոր մոնիտորինգն ընդգրկել է բարեփոխումների ընթացքը 2006 թվականին: 2006-ի մարտի 27-ին «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան 235.65 միլիոն ԱՄՆ դոլարի հնգամյա համաձայնագիր ստորագրեց ՀՀ կառավարության հետ, որի նպատակն էր կրճատել գյուղական բնակչության աղքատությունը` գյուղատնտեսության ոլորտում կայուն ու տեւական աճի ապահովման միջոցով: Հայաստանը նախատեսում է դա իրագործել գուղական ճանապարհներում, ոռոգման ենթակառուցվածքներում ռազմավարական ներդրումներ կատարելու, ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու, ֆերմերներին եւ ագրոբիզնեսին աջակցելու հնգամյա ծրագրի միջոցով: Ծրագիրը շոշափելի արդյունք պիտի ապահովի շուրջ 750 000 հոգու կամ գյուղական բնակչության 75%-ի համար:

2006թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում կայացած արարողության ընթացքում նախարար Վարդան Խաչատրյանն ու «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ներկայացուցիչ Ալեքս Ռասինը փոխանակեցին աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրի մեկնարկը նշանավորող նամակները:

Նկատի ունենալով, որ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան երկրների ընտրությունը կատարում է` արդարության, ժողովրդավարական կառավարման, ազատական տնտեսության սկզբունքներին հավատարիմ լինելը գնահատելու եւ տվյալ

երկրի ժողովրդի բարեկեցության ապահովման համար գործադրվող հնարավոր բոլոր ջանքերն ուսումնասիրելու արդյունքում եւ որ կորպորացիայի ներկայացուցիչները բազմիցս նշել են, թե ծրագրի շարունակականությունը կախված է նաեւ Հայաստանում բարեփոխումների ընթացքից, իբրեւ 2006 թվականի մոնիտորինգի հիմք ընդունվել են «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի ընտրության սկզբուքների «Արդար կառավարում» բաժնի ինդիկատորները:

Հիշյալ բաժնում այդ ինդիկատորները խմբավորված են ըստ հետեւյալ ենթաբաժինների՝ **քաղաքացիական ազատություններ, քաղաքական իրավունքներ, ձայնի իրավունք եւ իշխանության հաշվետվողականություն, արդյունավետ կառավարում, օրենքի գերակայություն, կոռուպցիայի վերահսկողություն:**

Մոնիտորինգի խումբն այդ ենթաբաժիններում ընդգրկված ինդիկատորներն առանձնացրեց իբրեւ առանձին խնդիրներ եւ ըստ բաժինների դասակարգեց այսպես.

## **1. Քաղաքացիական ազատություններ**

### *1. Մարդու իրավունքներ եւ անձնական ազատություններ*

Հավաքների ազատություն:

Խոշտանգումներ եւ անմարդկային վերաբերմունք:

Կրոնական, ազգային եւ այլ փոքրամասնությունների իրավունքներ (այդ թվում՝ փոքրամասնությունների քաղաքական իրավունքներ):

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կայացումը:

### *II. Խոսքի եւ տեղեկատվության ազատություն*

ՁԼՄ եւ տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությունը եւ փոփոխությունները 2006 թվականին:

Իրավիճակը խոսքի, մամուլի եւ տեղեկատվության ազատության բնագավառում:

Ազատ եւ արդարացի մրցակցության ապահովում մեդիա ոլորտում, պետական հատկացումներ տպագիր լրատվամիջոցներին:

## **2. Քաղաքական իրավունքներ**

Քաղաքական միավորումներ (կուսակցություններ) ստեղծելու եւ դրանց ազատ գործելու հնարավորությունները:

Ազատ եւ արդար ընտրությունների գերակշռումը, ընտրությունների ժամանակ քաղաքական կուսակցությունների՝ արդար մրցակցության հնարավորությունները:

Կուսակցությունների կախվածությունը ռազմական, օտարերկրյա, կրոնական կազմակերպություններից եւ տնտեսական օլիգարխիայից:

## **3. Ձայնի իրավունք եւ իշխանության հաշվետվողականություն**

Հասարակական կառույցների կողմից քաղաքացիական իրավունքներ պաշտպանելու կարողությունը:

Կառավարության ձեւավորման վրա քաղաքացիների մասնակցության աստիճանը:

Կառավարության գործունեության վրա ՁԼՄ-ների վերահսկողությունը:

## **4. Արդյունավետ կառավարում**

Տեղեկատվության ազատությունը եւ կառավարության քաղաքականության թափանցիկությունը:

Հանրային ոլորտի ծառայությունների որակը:

Քաղաքացիական ծառայողների իրազեկությունը եւ անկախությունը քաղաքական ազդեցություններից:

## **5. Օրենքի գերակայություն, արդարադատություն, ոստիկանություն**

Ոստիկանության մասին օրենքը եւ պրակտիկան, դատախազության գործունեությունը:

Օրենքների եւ իրավապահ կառույցների նկատմամբ հանրության վստահությունը եւ հարգանքը:

Բռնի եւ ոչ-բռնի հանցագործությունների ցուցանիշը:

Դատական իշխանության արդյունավետությունը եւ կանխատեսելիությունը:

## **6. Կոռուպցիայի մակարդակի վերահսկողություն**

Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում:

Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները:

Կոռուպցիան՝ որպես Հայաստանում գործարարության ծավալման խոչընդոտ:

Քաղաքական կոռուպցիա եւ «պետության զավթում»:

Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ մոնիտորինգն ընդգրկել է օրենսդրական փոփոխությունները, օրենքների կիրառման պրակտիկան, բարեփոխումների ընթացքը, իրավիճակը, ինչպես նաեւ՝ բարեփոխումներն արդյունավետ դարձնելու առաջարկություններ:

Մոնիտորինգի իրականացման ընթացքում օգտագործվել են հետեւյալ մեթոդները

### **1. Փաստաթղթային վերլուծություններ**

Օրենսդրության փորձագիտական վերլուծություն, վիճակագրական տվյալներ, պաշտոնական փաստաթղթեր, պաշտոնական հաղորդագրություններ:

Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրվել են պաշտոնական ատյանների հետ քաղաքացիների նամակագրությունները:

### **2. Դիտարկումներ**

Մարդու իրավունքների խախտումների արձանագրում, ուսումնասիրություն, մոնիտորինգի խնդիրներին առնչվող հրապարակումների ուսումնասիրություն, դատական պրակտիկայի եւ հասարակական հետաքրքրություն առաջացրած դատավարությունների վերլուծություններ, տարբեր հաստատությունների գործունեության դիտարկումներ, իրավունքների պաշտպանության արդյունավետության ուսումնասիրություն:

### **3. Հարցումներ**

Սոցիոլոգիական հարցումներ, անհատական հարցազրույցներ, ֆոկլուս խմբերի հարցումներ:

## Ներկայացվող զեկույցի բաժինները պատրաստել են

«Գործընկերություն՝ հանուն բաց հասարակության» նախաձեռնության մեջ ընդգրկված հետևյալ ՌԿ-ները՝

Հայաստանի Հելսինկյան կոմիտե,  
Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն,  
Երեւանի մամուլի ակումբ,  
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե  
Համայնքների ֆինանսիստների միավորում  
Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսի Ինթերնեշնլ-  
Հայաստան

Մոնիտորինգի խումբը շնորհակալություն է հայտնում Մամուլի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությանը, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնին, Հայաստանի ժուռնալիստների միությանը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնին, Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբին, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին՝ հետազոտության ընթացքում եւ նախնական քննարկումների ժամանակ ցուցաբերած աջակցության համար:

Նախագիծը ֆինանսավորել է Բաց հասարակության ինստիտուտի Մարդու իրավունքների եւ կառավարման դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի առանձին բաժինների հետազոտություններին եւ սույն հաշվետվության նախապատրաստմանն աջակցել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը:

## ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԵՎ 2007-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների սույն մոնիտորինգն ընդգրկել է մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանը, հետևաբար՝ չի անդրադարձել 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին: Միեւնույն ժամանակ՝ այս կարեւորագույն քաղաքական իրադարձությունը երեւան հանեց իրավիճակը մի շարք բնագավառներում, որոնց հետազոտությանն էր ուղղված անցկացված մոնիտորինգը:

Ինչպես Հայաստանի հասարակական-քաղաքական շրջանակները, այնպես էլ միջազգային հանրությունն ընդգծում էին խորհրդարանական ընտրությունների բացառիկ կարեւորությունը երկրի ժողովրդավարական հեռանկարների որոշարկման առումով: Այդ պատճառով սույն հետազոտությունը հազիվ թե ամբողջական լիներ առանց 2007 թվականի ընտրությունների ընթացքի եւ արդյունքների համառոտ վերլուծության: Միջազգային չափանիշներին վերջիններիս համապատասխանությունից կամ անհամապատասխանությունից էր կախված նաեւ երկրի հետագա մասնակցությունը Հարեւանության եվրոպական քաղաքականությանը եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրին: Այս առթիվ իշխանությունները հայտարարում էին, թե ընտրությունները լավագույնը կլինեն անկախ Հայաստանում երբեւէ անցկացվածներից:

Միջազգային դիտորդական առաքելությունը, որի կազմում էին ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի, ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովների եւ Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչներ, իր նախնական հայտարարության մեջ նշել է, որ ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի մայիսի 12-ին կայացած ընտրությունները «բարելավվում ցուցաբերեցին եւ մեծամասամբ անցկացվեցին ժողովրդավարական ընտրությունների համար ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների եւ այլ միջազգային չափանիշների համաձայն»: Ընդամին, նշվում է, որ թեպետ Հայաստանի իշխանությունները քայլեր ձեռնարկեցին նախկինում եղած թերությունները վերացնելու նպատակով, սակայն «ի վիճակի չեղան լիարժեք կերպով հետեւողական լինել իրենց կողմից հայտնած մտադրությանը. այն է՝ անցկացնել ընտրությունները միջազգային չափանիշներին համապատասխան, եւ որոշ հարցեր չլուծված են մնում»:

ԱՄՆ պետդեպարտամենտը հիմնականում համաձայնել է Եվրոպական դիտորդների եզրակացությունների հետ: Մասնավորապես, նշվում է, որ «ընտրական ենթակառույցները նշանակալիորեն բարելավվել են», եւ դա «ճիշտ ուղղությամբ կատարված քայլ էր»: Ինչպես ընդգծել է պետդեպարտամենտի ներկայացուցիչ Թոմ Բեյսին, նախկինների հետ համեմատած, ներկա ընտրությունները կարելի է համարել հաջողված, թեպետ դրանք «ամբողջովին չէ, որ համապատասխանեցին միջազգային չափանիշներին»: Այս առնչությամբ ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչը Հայաստանի իշխանություններին կոչ արեց անցկացնել թույլ տրված խախտումների մանրակրկիտ հետաքննություն եւ մեղավորներին պատժել երկրի օրենսդրությանը համապատասխան:

Միաժամանակ, տեղական մի շարք հասարակական կազմակերպություններ, հանդես գալով կայացած ընտրությունների սեփական գնահատականներով, նշեցին, որ իրենց կաշկանդված չեն զգում միջազգային առաքելությունների եզրակացություններով եւ ամեն ինչում չէ, որ համաձայն են նրանց հետ: Այդ ՀՀ-ների կարծիքով, խախտումներն ունեցել են ավելի մասշտաբային եւ խորքային բնույթ, քան ներկայացրել են միջազգային դիտորդները: Այսպես, մայիսի 14-ին 18 (այդ թվում՝ «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությանն աջակցող) հասարակական կազմակերպություններ, հանդես եկան հայտարարությամբ, որում ներկայացրին



սեփական փաստարկները եւ ընդգծեցին. «... այս ընտրությունները չեն համապատասխանում ժողովրդավարության արժեքների մեր ընկալմանը ... Լուրջ մտահոգություն է առաջանում Հայաստանի Հանրապետության ընտրած ուղու վերաբերյալ»:

Եվրոպական դիտորդական առաքելության պատրաստած փաստաթղթում, նշվում է, որ հանրային հեռարձակողները (Հանրային հեռուստատեսության առաջին ալիքը (Հ1) եւ Հայաստանի հանրային ռադիոն), հիմնականում, նախընտրական արշավի մասնակիցների համար եթերի մատչելիություն ապահովեցին, եւ համարյա բոլորն օգտվեցին քարոզչության համար նախատեսված անվճար ժամանակից: Ինչ վերաբերում է ընտրարշավի խմբագրական լուսաբանմանը, ապա Հանրային ռադիոյի լուսաբանումը գնահատվում է հավասարակշռված, այն դեպքում երբ Հ1-ի օբյեկտիվությունը կասկածի տակ է առնվում: Առաջատար մասնավոր հեռուստաընկերությունները, ինչպես արձանագրում են միջազգային դիտորդները, ընտրությունների մասնակիցներին վճարովի քաղաքական գովազդի հնարավորություն ընձեռեցին, սակայն հայտարարված գներն ավելի բարձր էին, քան սովորական առևտրային գովազդի սակագինը, եւ մի շարք կուսակցություններ հանդես եկան քննադատությամբ, որ նման գները խոչընդոտ են իրենց նախընտրական արշավների համար: Ընդսմին, ինչպես հանրային, այնպես էլ համապետական մասնավոր հեռուստաընկերությունները խմբագրական լուսաբանումներում առավել ուշադրության են արժանացրել կառավարության գործունեությունը, ինչպես նաեւ՝ երկու իշխող կուսակցություններին՝ Հայաստանի հանրապետական կուսակցությանն ու Հայ յեղափոխական դաշակցությանը, ապա եւ՝ իշխանամետ «Բարգավաճ Հայաստանին»:

Հիմնականում համաձայնելով փաստաթղթի այս՝ «Լրատվական դաշտը» վերնագրված հատվածում միջազգային դիտորդների եզրակացությունների հետ, տեղական դիտորդները արձանագրում են եւս մի կարեւոր փաստ. ընտրություններին նախորդած տարիներին եւ ընդհուպ մինչեւ պաշտոնական ընտրարշավի սկիզբը, առնվազն երեք ընդդիմադիր կուսակցություններ՝ «Ժառանգությունը», «Նոր ժամանակները», «Հանրապետությունը» զրկված էին ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր հեռուստաընկերությունների եթերում երեւալու հնարավորությունից: Այս են վկայում երեւանի մամուլի ակումբի, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի, այլ լրագրողական կազմակերպությունների տվյալները:

Այսպիսով, քաղաքական տարբեր ձեւերի կիրառման հետեւանքով մի շարք ընդդիմադիր կուսակցություններ ընտրազանգվածի հետ շփվելու սահմանափակ հնարավորություններ ունեին, ինչը չէր կարող չազդել ընտրությունների ելքի վրա: Բացի այդ, պաշտոնական քարոզարշավից առաջ երեւանյան եւ մարզային հեռուստաընկերությունների մեծ մասը հրաժարվեց քաղաքական գովազդի համար վճարովի եթերաժամ տրամադրել, ինչը նույնպես վկայում է տեղեկատվական դաշտում առկա լուրջ խնդիրների եւ ընտրարշավի սահմանափակ հնարավորությունների մասին: Սա ամենից առաջ վերաբերում է ընդդիմադիր կուսակցություններին, քանի որ իշխանամետներն ունեին հեռուստաեթեր դուրս գալու իրենց ուղիները:

Ընտրարշավի ընթացքում բացահայտվեցին նաեւ հանրահավաքներ եւ ցույցեր անցկացնելու իրավունքի ապահովմանն առնչվող խնդիրներ: Մասնավորապես, տեղական իրավապաշտպան կազմակերպությունները արձանագրել են ընդդիմադիր «Ժառանգություն», «Օրինաց երկիր» կուսակցությունների եւ «Իմպիչմենտ» դաշինքի՝ երեւանում եւ հատկապես մարզերում նախընտրական հանդիպումները խոչընդոտելու դեպքեր: Նման մի դեպք ներկայացված է միջազգային դիտորդների եզրակացության մեջ:

Ընդդիմության ելույթների նկատմամբ իշխանությունների անհանդուրժողականության օրինակ էր 2007 թվականի մայիսի 9-ին «Նոր ժամանակներ», «Հանրապետություն» կուսակցությունների եւ «Իմպիչմենտ» դաշինքի հանրահավաքին եւ դրան հաջորդած երթին իրավապահ մարմինների արձագանքը, երբ

միջոցառման կազմակերպիչների, ինչպես նաև խաղաղ ցուցարարների ու ներկա լրագրողների դեմ բռնություն կիրառվեց:

Իսկ դրանից առաջ՝ մայիսի 5-ին, «փողերի լվացման» մեջ կասկածի պատրվակով խուզարկություն կատարվեց երկու ընդդիմադիր գործիչների՝ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի եւ արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախկին նախարար Վահան Շիրխանյանի բնակարաններում: Երկու օր անց Ալեքսանդր Արզումանյանը կալանավորվեց: Այս գործողությունները նույնպես բացասական ազդեցություն ունեցան ընտրարշավի մթնոլորտի վրա:

Տեղական դիտորդների կողմից իբրեւ նախընտրական շրջանում ընդդիմության վրա ճնշում գործադրելու մեթոդ է դիտարկվում բրիտանացի դիվանագետի հետ «Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանի զրույցի գաղտնալսումը: Այդ զրույցի բովանդակությունը լուսաբանվեց «Գոլոս Արմենիի» թերթի մի շարք հրապարակումներում, երկրի նախագահի, ՀՀ ԱԺ խոսնակի եւ վարչապետի մեկնաբանությունները բազմիցս հեռարձակվեցին հանրային եւ մի քանի համապետական հեռուստաընկերությունների եթերով, ընդսմին՝ պետության ղեկավարը ընդդիմադիր գործչի գործողությունները որակեց «դավաճանություն»: Այս հանգամանքին ուշադրություն դարձրին նաև եվրոպական դիտորդները, որոնք ընդգծեցին, թե հայկական իշխանությունները «դեռևս պետք է ապացուցեն, որ ազատ արտահայտվելու եւ մասնավոր հաղորդակցվելու գաղտնիությունը պաշտպանվում են ՀՀ Սահմանադրությամբ»:

Ինչպես եւ նախկին բոլոր ընտրություններում, այս անգամ էլ լայնորեն օգտագործվեցին վարչական ռեսուրսները, ինչը անհավասար պայմաններ էր ստեղծում մի կողմից իշխող, ինչպես նաև իշխանամետ քաղաքական ուժերի եւ մյուս կողմից՝ ընդդիմադիրների միջև: Եվ միջազգային, եւ տեղական դիտորդներն իրենց հաշվետվություններում ներկայացրել են օրինակներ, թե ինչպես են, մասնավորապես, Սերժ Սարգսյանի կողմից պետական միջոցներն օգտագործվել իր ղեկավարած Հանրապետական կուսակցության ընտրարշավի համար:

Տեղական դիտորդների կարծիքով աննախադեպ (նույնիսկ 2003 թվականի ընտրությունների համեմատ) չափերի է հասել ընտրողներին կաշառելու պրակտիկան: Դա տեղի էր ունենում դեռևս պաշտոնական ընտրարշավից շատ առաջ եւ շարունակվում էր ընդհուպ մինչև քվեարկության օրը: Գյուղմթերքների, աուդիո եւ վիդեո տեխնիկայի, զանազան ծառայությունների տեսքով ընտրակաշառքները ներկայացվում էին իբրեւ «բարեգործություն»: Մայիսի 12-ին, ըստ տեղական դիտորդների վկայությունների, ընտրողներին կաշառում էին կանխիկ դրամով: Ընդ որում՝ հայտնի են նաև կաշառքի չափերը՝ 2000-ից մինչև 30000 դրամ: Նման երեւույթը հնարավոր դարձավ բոլոր մակարդակներում քաղաքականության եւ բիզնեսի սերտաճման շնորհիվ, ինչը նկատել են նաև միջազգային դիտորդները, որոնք մտահոգություն են հայտնել, հատկապես՝ ընտրարշավի ժամանակ օգտագործվող միջոցների հայտարարագրման եւ թափանցիկության համատեքստում: Փաստորեն, տեղի է ունենում ընտրական գործընթացում կոռուպցիայի աճ :

Հասարակայնությանը հայտնի դարձան դեպքեր, երբ մարդկանց տրամադրվում էին կեղծ անձնագրեր, որոնցով նրանք գալիս էին քվեարկության: Նման մեկ դեպք արձանագրել են եվրոպական դիտորդները: Իսկ տեղական դիտորդները ընդգծում են, թե կեղծված անձնագրերով քվեարկությունները լայն մասշտաբներ են ընդունել, եւ դա առանց իշխանությունների մասնակցության չի եղել:

Լուրջ մտահոգության տեղիք է տալիս նաև այն, որ Հայաստանի՝ ձայնի իրավունք ունեցող այն քաղաքացիները, որոնք գտնվում են երկրից դուրս (իսկ դրանք հազարավորներ են) զրկված էին ընտրություններին մասնակցելու հնարավորությունից: Թեպետ այս խնդիրն օբյեկտիվ բնույթ ունի եւ պայմանավորված է օրենսդրության նոր դրույթներով, այսուհանդերձ այն միանշանակ չի ընկալվում քաղաքացիների քաղաքական իրավունքների տեսակետից:

Հայաստանի քաղաքական եւ հասարակական կյանքում անբավարար է ներկայացված երկրի բնակչության կանաչի մասը, ինչը երեւաց նաեւ 2007-ի ընտրությունների ընթացքում: Չնայած ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններին, այսուհանդերձ, ինչպես նշել են միջազգային դիտորդները, 41 մեծամասնական մանդատների համար պայքարող 119 թեկնածուներից միայն 5-ն էր կին: Քիչ էին կանայք նաեւ ընտրական հանձնաժողովներում. ԿԸՀ 9 անդամներից՝ երկուսը, 41 ընտրատարածքային հանձնաժողովների նախագահներից՝ երեքը:

Ընտրություններից հետո՝ մայիսի 26-ին, ընդդիմադիր ուժերը՝ «Իմպիչմենտ» դաշինքը, «Նոր ժամանակներ», «Հանրապետություն», «Օրինաց երկիր» կուսակցությունները դիմեցին ՀՀ Սահմանադրական դատարան՝ պահանջելով չեղյալ համարել ՀՀ ԿԸՀ 2007 թվականի մայիսի 19-ի՝ «ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» որոշումը: Հունիսի 1-ից Սահմանադրական դատարանը սկսեց գործի քննությունը եւ հունիսի 10-ին հրապարակեց որոշումը, որով ԿԸՀ հիշյալ որոշումը թողեց ուժի մեջ: Չորս ընտրատեղամասերում հայտնաբերված խախտումների վերաբերյալ նյութերը ՍԳ -ը որոշեց տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար: Միաժամանակ, համաձայն Սահմանադրական դատարանի որոշման, արձանագրված իրավական, կառուցակարգային եւ կազմակերպական որոշ թերություններ անհրաժեշտություն են առաջացնում փոփոխություններ ու լրացումներ կատարել ԸՕ-ի մեջ:

Ընդհանուր առմամբ, 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում երեւան եկավ հասարակական եւ քաղաքական այն խնդիրների մեծ մասը, որոնք խոչընդոտում են երկրի ժողովրդավարական զարգացմանը: Այդ խնդիրներն ըստ բնագավառների առավել մանրամասն ներկայացված են սույն հետազոտության համապատասխան բաժիններում:

## ՀԱՄԱՌՈՑ ԱՄՓՈՓՈՒՄ

**Հավաքների ազատություն:** 2005թ. հոկտեմբերին «ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը փոփոխվեց, սակայն չնայած որոշ բարելավումներին, օրենքի ընդհանուր հայեցակարգը չի փոխվել: Այն շարունակում է կրել ոչ թե հանրահավաքների ազատության երաշխիքներն ամրապնդող, այլ հրապարակային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը սահմանափակող բնույթ: Չնայած 2006 թվականն առանձնապես քաղաքական ակտիվ տարի չի եղել, զանգվածային միջոցառումներ ընդդիմության կողմից չեն անցկացվել, սակայն արձանագրվել են ընդդիմության հանդիպումները խոչընդոտելու դեպքեր. դահլիճներ չեն տրամադրվել, կուսակցական ժողովներին աջակցած անձանց աշխատանքից հեռացրել են եւ կազմակերպիչների նկատմամբ ոստիկանության հետապնդումներ են եղել: 2006 թվականին տարբեր պատճառաբանություններով մերժվել են «Ժառանգություն», «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» կուսակցություններին քաղաքացիների հետ հանդիպումներ կազմակերպելու համար վարձակալության հիմունքներով հանրային ու մասնավոր դահլիճներ տրամադրելու դիմումները:

**Խոչտանգումներ եւ անմարդկային վերաբերմունք:** Հայաստանում խոչտանգումները հիմնականում կիրառվում են ոչ այնքան պատժելու, որքան ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Հետագայում դատարաններն էլ մեծամասամբ հենվում են մեղադրանք առաջադրող մարմնի ներկայացրած ապացույցների վրա, ուր դարձյալ հիմնական կետը մեղադրյալների ինքնախոստովանական ցուցմունքներն են: Դիտարկումները ցույց են տալիս, որ դատավարությունների ընթացքում մեղադրյալների մոտ 80 տոկոսը հրաժարվում է նախաքննության ժամանակ տված իր ցուցմունքներից՝ պատճառաբանելով, որ դրանք կորզվել են բռնությունների կիրառմամբ: Սակայն մեղադրյալների այդ հայտարարությունները մնում են անհետեւանք, եւ խոչտանգումներ ու բռնություններ գործադրողները քրեական պատասխանատվության չեն ենթարկվում:

**Կրոնական, ազգային եւ այլ փոքրամասնությունների իրավունքներ:** ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է կրոնի ազատությունը (հոդված 26) եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում (հոդված 8.1): Հայաստանի իշխանությունները կրոնական խնդիրների վերաբերյալ հստակ քաղաքականություն չեն վարում: Միջին պաշտոնյաները, հատկապես տեղական իշխանությունների եւ իրավապահ մարմինների որոշ ներկայացուցիչներ կրոնական համայնքներին ուղղված սպառնալիքներով են հանդես գալիս եւ կատարում են գործողություններ, որոնք սահմանափակում են կրոնական կազմակերպությունների սահմանադրական իրավունքները:

Հայաստանի ազգային փոքրամասնությունների զգալի հատվածը բնակվում է հատվածաբար եւ հիմնականում Երեւանում: Առանձին բնակավայրերում կոմպակտ բնակվում են եզդիները, ասորիները, մոլդկանները: Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները քաղաքական պահանջներով հանդես չեն գալիս:

**Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կայացումը:** ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, ԵԽ-ի փորձագիտական եզրկացություններում «Մարդու իրավունքներ պաշտպանի մասին» ՀՀ օրենքի թերություն է համարվում 7-րդ հոդվածի 1-ին կետը, որը բացառում է դատական մարմինների եւ դատավորների դեմ ներկայացված բողոքների քննումը Պաշտպանի կողմից: Այսինքն՝ Պաշտպանը լիազորված չէ օգնել այն անձանց, ում նկատմամբ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ

հողվածով եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հողվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Ինչպես նաեւ՝ Պաշտպանը չի կարող արձագանքել դատական վարույթներում անպատեհ ձգձգումների կամ դատապաշտպանի իրավունքների մերժման խնդիրներին:

2006 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումներով ՀՀ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել է Երեւանի կենտրոնի կառուցապատման հիմքում ընկած օրենքների դրույթները եւ կառավարության համապատասխան որոշումը, ինչպես նաեւ՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե ԱԺ իրար հաջորդող ցանկացած 2 ընտրություններից յուրաքանչյուրում նրա ընտրական ցուցակը ստացել է ընտրությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի 1%-ից պակաս ձայն»:

***ՉԼՍ եւ տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությունը եւ փոփոխությունները 2006 թվականին:*** Տպագիր լրատվամիջոցների համեմատական ազատության պայմաններում շարունակում են մտահոգիչ մնալ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» մասին ՀՀ օրենքի անկատարությունը, հեռարձակման բնագավառը կարգավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաեւ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կախվածությունը իշխանություններից, թաքնված գրաքննության առկայությունը եթերում: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով պարտադրված՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու առաջարկվող օրնագիծն էլ չի կարող վերացնել այն խոչընդոտները, որոնք խանգարում են Հայաստանում հեռարձակման անկախ ոլորտի զարգացմանը: Դրանք են՝ ոլորտը կարգավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաեւ՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կախվածությունը իշխանություններից, ըստ այդմ՝ նրանց գործունեության հարմարեցումը քաղաքական կոնյունկտուրային, հեռարձակման լիցենզավորման մրցույթների հաղթողների մասին որոշում ընդունելիս սուբյեկտիվիզմի եւ քաղաքական կողմնակալության գերակշռումը, մրցույթի հաղթողներին որոշելիս չափանիշների անհստակ լինելը եւ լիցենզա տրամադրելու կամ չտրամադրելու որոշման պատշաճ հիմնավորման բացակայությունը, օրենքների եւ լիցենզիայի պայմանների պահպանման վրա վերահսկողության բացակայությունը, խախտումների համար պատժամիջոցներ կիրառելիս խտրական վերաբերմունքը:

***Իրավիճակը խոսքի, մամուլի եւ տեղեկատվության ազատության բնագավառում:*** 2006 թվականին խնդրահարույց էր մնում հեռուստատեսության (այդ թվում՝ հանրային հեռուստատեսության եթերի) մատչելիությունը քաղաքական ուժերի համար: Տպավորություն է ստեղծվում, թե կան քաղաքական դեմքեր եւ կուսակցություններ, որոնց հայտնվելը եթերում սահմանափակված է: Ավելին, ըստ դիտարկումների, նրանց ասուլիսներին անգամ ոչ մի հեռուստաընկերություն չի ներկայանում, եւ նման միջոցառումները լուսաբանվում են միայն տպագիր լրատվամիջոցներով: Սա վկայում է իշխանական կառույցների կողմից թաքնված գրաքննության մեխանիզմների կիրառման մասին: Լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ ահաբեկումները, հարձակումները, ծեծը 2006 թվականին եւս շարունակվել են, ընդ որում, մեղավորները կամ չեն հայտնաբերվել, կամ, եթե անգամ հայտնաբերվել են՝ չեն պատժվել:

***Ազատ եւ արդարացի մրցակցության ապահովում մեդիա ոլորտում, պետական հատկացումներ տպագիր լրատվամիջոցներին:*** Թեպետ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ունի հակամենաշնորհային դրույթ, ըստ որի՝ «Ֆիզիկական եւ իրավաբանական անձինք կարող են ոչ ավելի, քան միեւնույն սփռման գոտում եթերային

հեռարձակում ունեցող մեկ հեռուստառադիոընկերության կամ մեկ հեռուստաընկերության եւ (կամ) մեկ ռադիոընկերության արտոնագրատեր լինել», Հայաստանում կան մի քանի հեռարձակող ընկերություններ ունեցող անձինք: Գերակշռող դիրք ստացած հեռարձակողներն այդ դիրքն օգտագործում են լրացուցիչ գովազդ ներգրավելու համար՝ ակնհայտ ցածր գներ սահմանելով, դրանով իսկ խախտելով արդար մրցակցության սկզբունքը: Նման գործողություններն անառողջ մթնոլորտ են ստեղծում եւ բացասաբար են ազդում հեռարձակման ոլորտի ողջ իրավիճակի վրա: Պետությանը դեռեւս չի հաջողվել անկախ լրատվամիջոցների կայացման ու զարգացման, նրանց արդար ու ազատ մրցակցության բարենպաստ պայմաններ ստեղծել:

**Քաղաքական միավորումներ (կուսակցություններ) ստեղծելու եւ դրանց ազատ գործելու հնարավորությունները:** Ընդհանուր առմամբ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, ըստ էության, չի խոչընդոտում կուսակցությունների գրանցումն ու գործունեությունը: Սակայն գործնականում Հայաստանում ապահովված չեն կուսակցությունների մրցակցության հավասար պայմաններ: Առնվազն 2000 անդամ, մարզերում մասնաճյուղեր, դրանցից յուրաքանչյուրում նվազագույնը 100 անդամ ունենալու օրենքի պահանջները կատարելը շատ կուսակցությունների համար բավական բարդ է, քանի, որ այն բացի ֆինանսական միջոցներից, պահանջում է գրասենյակների հիմնում, լրացուցիչ մարդկային ռեսուրսների ներգրավում: Պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ձեռնարկությունների աշխատողները զգուշանում են դառնալ ընդդիմադիր կուսակցության անդամ: Մինչդեռ իշխանամետ կուսակցությունները գրասենյակներ բացելու, անդամներ հավաքագրելու դժվարություններ չեն ունենում: Իշխող կուսակցություններն իրենց վարչական լծակներն օգտագործում են կուսակցությունները համալրելու նպատակով՝ ներկայացնելով քաղաքացիներին կուսակցության անդամագրվելու պահանջը չկատարելու պարագայում աշխատանքի կորստյան հեռանկարներ: Այս գործընթացը մեծ կիրառում ունի հատկապես որեւէ կուսակցության վերահսկողության տակ գտնվող մարզերում, ՏԻՄ-երում, կրթական եւ առողջապահական հաստատություններում:

**Ազատ եւ արդար ընտրությունների գերակշռումը, ընտրություններում կուսակցությունների արդար մրցակցության հնարավորությունները:** 2006թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ Ընտրական օրենսգրքում հերթական անգամ փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին: 2006 թ. համապետական ընտրություններ, հանրաքվեներ Հայաստանում չեն եղել: Անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնցում հաղթել են իշխող կուսակցությունների կամ նրանց կողմից հովանավավորվող թեկնածուները: Հայաստանում ընտրությունների արդյունքների վրա վճռորոշ ազդեցություն են ունենում ոչ այնքան ընտրողների հավաքական կամքը, որքան՝ վարչական եւ ֆինանսական ռեսուրսները: Ընտրակաշառքների բաժանումը համակարգված գործընթաց է դառնում: Ընտրություններից բավական առաջ այն արդեն դրսևորվում է բարեգործության անվան տակ: Արդյունքում՝ ընտրությունները Հայաստանում դեռեւս չեն հաստատվել իբրեւ ժողովրդավարական ինստիտուտ: Առանձին մարդիկ եւ մարդկանց խմբեր այն օգտագործում են անձնական ամբիցիաներն ու մասնավոր շահերը բավարարելու համար:

**Կուսակցությունների կախվածությունը ռազմական, օտարերկրյա, կրոնական կազմակերպություններից եւ տնտեսական օլիգարխիայից:** 2006 թվականի հուլիսին Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ դարձավ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, որն այնուհետեւ՝ 2006 թվականի հուլիսի 22-ին կայացած կուսակցության համագումարում ընտրվեց ՀՀԿ խորհրդի նախագահ՝ կուսակցական հիերարխիայում զբաղեցնելով երկրորդ պաշտոնը: Նրանից հետո այս կուսակցության անդամագրվեցին մի խումբ գործարարներ եւ գործարար պատգամավորներ: Իսկ նրանցից ոմանք համագումարում ընտրվեցին նաեւ կուսակցության ղեկավար մարմնի՝

խորհրդի կազմում: Խոշոր բիզնեսի ներկայացուցիչների ներգրավումը ՀՀԿ, այդ կուսակցության՝ տնտեսական շահերից հնարավոր կախվածության մտահոգություններ է առաջացնում: Խոշոր կապիտալից կախվածության հնարավորությունը էլ ավելի բարձր է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պարագայում: Այս կուսակցության նախագահը հայտնի գործարար Գագիկ Ծառուկյանն է, որի սեփականությունը հանդիսացող «Մուլտի գրուպ» կոնցեռնի կազմում կան բազմաթիվ ձեռնարկություններ: Հայաստանում կրոնական կազմակերպություններից կախված կան կրոնական դավանաբանությամբ կուսակցություններ չկան:

**Հասարակական կառույցների կողմից քաղաքացիական իրավունքներ պաշտպանելու կարողությունը:** Քաղաքացիական իրավունքները կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջազգային չափանիշներին: ՀԿ-ներին հաջողվում է (ճիշտ է մեծ ջանքերի գնով) խորհրդարանին օրենսդրության կատարելագործման առաջարկություններ ներկայացնել եւ լրբբինգ անել քաղաքացիական հասարակության շահերը: Սակայն մարդու իրավունքների պահպանման, դրանց պաշտպանության իրական վիճակը, ամենեւին էլ բարեհաջող չէ: Միաժամանակ, էական խնդիր է մնում այն, որ հայկական ՀԿ-ների իրավապաշտպան գործունեությունն իրականացվում է հիմնականում արտասահամայնյան դրամաշնորհների հաշվին, ինչը հղի է այդ գործունեության նվազմամբ, եթե նման աջակցությունը ինչ-ինչ պատճառներով կրճատվի կամ դադարեցվի:

**Կառավարության ձեւավորմանը քաղաքացիների մասնակցության աստիճանը:** Ոչ ժողովրդավարական ընտրություններով ձեւավորված կառավարության վրա քաղաքացիների ազդեցությունը մեծ չէ: «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ամփոփագրում, որը կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն Ջոն Դանիլովիչը ներկայացրել է Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ասված է. «2006 թվականին ձայնի իրավունքի եւ հաշվետվողականության հայաստանյան միավորը 0,27-ից դարձել է 0, ինչի արդյունքում Հայաստանի ցուցանիշը դարձել է անբավարար... Հայաստանի միավորը քաղաքացիական ազատությունների մասով շարունակաբար եղել է 4 (7բալանոց սանդղակով, որտեղ ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): Սակայն «Ֆրիդոմ Հաուս»-ի վերջին տվյալներով, իրադրությունը Հայաստանում այդ ոլորտում սկսել է վատանալ ու կարող է 4-ից դառնալ 5»:

**Իշխանությունների գործունեության վրա ՁԼՄ-ների վերահսկողությունը:** Իշխանությունների գործունեության վրա սոցիալական վերահսկողության գործառույթի իրականացմանը խոչընդոտում են լրագրողների եւ ՁԼՄ-ների նկատմամբ ճնշումների զանազան ձեւերը, այդ թվում՝ բռնությունների եւ սպառնալիքների փաստերը, որոնք, արձանագրված են, մասնավորապես, Երեւանի մամուլի ակումբի եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տարեկան զեկույցներում, երկրի լրագրողական կազմակերպությունների մի շարք հայտարարություններում: Նման դեպքերը հանգեցնում են լրատվամիջոցներում ինքնագրաքննության տարածմանը: Վերջինս հաճախ հասարակությանը ներկայացվում է իբրեւ բացառապես լրագրողների ինքնասահմանափակում: Այնինչ, դեպքերը, երբ ինքնագրաքննությունը կրում է ոչ կամավոր բնույթ, այլ հետեւանք է արտաքին ճնշման, կարող են դիտարկվել իբրեւ «թաքնված», «քողարկված» գրաքննության դրսեւորումներ:

**Տեղեկատվության ազատությունը եւ կառավարության քաղաքականության թափանցիկությունը:** Տեղեկատվության ազատության ոլորտում շարունակում է խնդրահարույց մնալ այն, որ կառավարությունը չի կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ 5-րդ եւ 10-րդ հոդվածների պահանջները եւ չի ընդունել տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ՝

պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգերը: Հայաստանում իշխանության երեք թելերից ամենից թափանցիկը, թերեւս, Ազգային ժողովի գործունեությունն է: Իշխանության մյուս թելում՝ կառավարությունում որոշումներ ընդունելու գործընթացը թափանցիկ չէ, թեպետ կառավարության նիստերը լուսաբանվում են: Այսուհանդերձ, որոշումների նախապատրաստության եւ ընդունման գործընթացը փակ է, դրա վրա հասարակության ազդեցությունը՝ չնչին, քանի որ կառավարության որոշումների նախագծերը համարվում են աշխատանքային փաստաթղթեր եւ մատչելի չեն հասարակության համար:

**Հանրային ոլորտի ծառայությունների որակը:** Չնայած ՀՀ Սահմանադրությունը եւ մի շարք օրենքներ պարունակում են դրույթներ, որոնք վերաբերում են հանրային ծառայությունների մատուցման ընթացքում ծագող իրավահարաբերություններին եւ չնայած 2003թ.-ից գործում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որի դերն այդ ոլորտում պետական կարգավորում իրականացնելն ու սպառողների եւ ծառայություն մատուցողների շահերի հավասարակշռումն է, այնուամենայնիվ դեռեւս ցածր է հանրային ծառայությունների մատուցման որակը եւ մատչելիությունը բնակչության, հատկապես աղքատ շերտերի համար: Հանրային կառավարման համակարգում քաղաքականության իրականացման, որոշումների կայացման գործընթացում շարունակվում է հանիրավի բարձր մնալ կենտրոնացվածության աստիճանը՝ բացակայում է թափանցիկությունը, չի գործում հաշվետվողականության արդյունավետ համակարգ, չի ապահովվում քաղաքացիական հասարակության լիիրավ մասնակցությունը:

**Քաղաքացիական ծառայողների իրազեկությունը եւ անկախությունը քաղաքական ազդեցություններից:** ՀՀ քաղծառայողների համար տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրներ են էլեկտրոնային լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, որն իշխանության հսկողության տակ է: Այլընտրանքային տեղեկությունների «քաղցր» քաղծառայողները փորձում են լրացնել արտասահմանյան հեռուստաալիքներ դիտելով եւ ռադիոկայաններ ունկնդրելով, ինչպես նաեւ՝ տեղական տպագիր ընդդիմադիր մամուլն ընթերցելով (առավել շատ ընթերցվող երեք թերթերը ունեն ընդդիմադիր ուղղվածություն): Քաղծառայողները բավականաչափ լայն հնարավորություններ ունեն իրենց աշխատանքային պարտականություններին առնչվող տեղեկությունների ձեռք բերման առումով՝ բացառությամբ այլ գերատեսչություններում եւ իրենց հիմնարկների այլ ստորաբաժանումներում մշակվող նյութերի: Սա, թերեւս, վկայում է ինչպես միջգերատեսչական, այնպես էլ ներգերատեսչական տեղեկատվական հոսքերի համակարգերի թերզարգացածության մասին: Քաղծառայողները եւ իրավաբանորեն, եւ հոգեբանորեն հեռու են անկախ լինելուց: Կան թեմաներ, որոնց մասին նրանք կամ աշխատում են չխոսել ընդհանրապես կամ էլ ասել ոչ այն, ինչ մտածում են:

**Ոստիկանության մասին օրենքը եւ պրակտիկան, դատախազության գործունեությունը: Օրենքների եւ իրավապահ կառույցների նկատմամբ հանրության վստահությունը եւ հարգանքը:** «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ ոստիկանության դերին եւ գործունեության սկզբունքներին վերաբերող դրույթները մեծ մասամբ համապատասխանում են միջազգային չափանիշներին, սակայն լիազորություններ, պարտականություններ, պատասխանատվություն սահմանող դրույթներում բազմաթիվ են բացթողումները: Բացի այդ, այն գործառույթները եւ գործունեության սկզբունքները, որոնք «Ոստիկանության մասին» օրենքով ամրագրված են, պրակտիկայում հաճախ խախտվում են: Վերջին տարիներին բարեփոխումների մի քայլ է կատարվել. ոստիկանությունը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծել է ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու



վայրերում հասարակական դիտորդների խումբ, որն իրավունք ունի անարգել մտնել ժամանակավոր պահման մեկուսարաններ եւ մոնիտորինգ կատարել, զրուցել այնտեղ գտնվողների հետ: Սակայն ժամանակավոր պահման վայրերում, մեծ մասամբ, շատ դժվար է հայտնաբերել անօրինական մեթոդներ կիրառելու դեպքեր: Դրանք հիմնականում կատարվում են ոստիկանական բաժանմունքներում, որտեղ խումբը մուտքի իրավունք չունի: «Ոստիկանության մասին» օրենքով ամրագրված գործառույթներից եւ գործունեության սկզբունքներից առավել հաճախ խախտվում են օրենքին համապատասխանության, համարժեքության, համաչափության, խտրականության բացառման, խոշտանգումների բացառման, կամայականություններից անձին պաշտպանելու սկզբունքները: Հասարակության մեջ այժմ էլ պահպանվում է խորհրդային շրջանում արմատավորված պետության դերի գերագնահատումը եւ հասարակության դերի թերագնահատումը, ոստիկանության, դատախազության համակարգերը շարունակում են մնալ վախի ու պատժի մթնոլորտ ստեղծելու միջոցով հասարակությանը իշխանության ենթակայության տակ պահելուն ծառայող կառույցներ:

***Դատական իշխանության արդյունավետությունը եւ կանխատեսելիությունը:***

Սահմանադրական փոփոխություններից հետո էլ ՀՀ արդարադատության նախարարին է վերապահված դատավորների պաշտոնական պիտանելիության եւ ծառայողական առաջխաղացման քննությունների կազմակերպումը եւ անցկացումը: Արդարադատության նախարարը Արդարադատության խորհրդին ներկայացնում է դատավորի լիազորությունների դադարեցման առաջարկություն եւ այն հիմնավորող նյութեր: Միաժամանակ, դատավորների առաջխաղացումը միշտ չէ ծառայողական առաջխաղացման ցուցակի վրա հիմնված. երկար տարիներ այդ ցուցակում գտնված անձիք կարող են պաշտոնական առաջխաղացում չունենալ, իսկ նոր ընդգրկվածները՝ միանգամից նշանակվել պաշտոնի: Դատարանները շարունակում են խուսափել քաղաքացիների, այլ ոչ թե գործադիր կամ իրավապահ մարմինների օգտին որոշումներ կայացնելուց կամ էլ՝ ընդունել արդարացման դատավճիռներ: Առայժմ շարունակում է չգործել դատական իշխանության արդյունավետության կարելու երաշխիքներից մեկը՝ դատարանների իրավասությունը օրենքը դիտարկել որպես իրավունքի իրականացման միջոց եւ չկիրառել այն օրենքները, որոնք խախտում են մարդու սահմանադրական իրավունքները: Դատարանները հիմնականում շարունակում են հանդես գալ ոչ թե իրավունքի այլ օրենքի պաշտպան: Քաղաքական առումով դատական իշխանությունը կանխատեսելի է, քանի որ այն քաղաքական կոնյուկտուրային համապատասխան վարքագիծ է դրսևորում, բազմաթիվ դեպքերում նույն հիմքերով բացարձակապես տարբեր որոշումներ (վճիռներ) կարող են կայացվել:

***Կոռուպցիայի մակարդակի վերահսկողությունը:***

Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում պաշտոնապես հռչակվեց 2001-ին, երբ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորությամբ ստեղծվեց կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի աշխատանքները համակարգող հանձնաժողով: 2003թ. հունիսին նոր ձեւավորված կոալիցիոն կառավարությունը վերջնական տեսքի բերեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը (ՀՌ) եւ դրա իրականացման միջոցառումների ծրագիրը (ԻՄԾ), որոնք 2003թ. դեկտեմբերի 10-ին վավերացվեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից: Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված նոր կառույցներ ստեղծելու փոխարեն՝ Հայաստանի կառավարությունը որդեգրել է գործող իրավապահ մարմինները հզորացնելու մոտեցումը: Երկրում չկան նաեւ զուտ կոռուպցիոն հանցագործությունների քննությանն ու քրեական հետապնդմանը վերաբերող հատուկ իրավական կամ ընթացակարգային գործիքներ: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմամբ եւ քննությամբ զբաղվող մարմիններն են ՀՀ դատախազությունը, ոստիկանությունը եւ Ազգային անվտանգության ծառայությունը: Կոռուպցիային առնչվող հանցագործությունների (ինչպիսիք են կաշառակերությունը, պաշտոնական դիրքի չարաշահումը, պաշտոնական կեղծիքը եւ այլն) մեծ մասը

հետաքննվում է դատախազության կողմից: ՀՀ Գլխավոր դատախազության կազմում 2004-ի ապրիլի 30-ին ստեղծված Կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ բաժինը համակարգում է ՀՀ Ոստիկանության եւ Ազգային անվտանգության ծառայության հետաքննչական գործողությունները՝ կապված կոռուպցիային առնչվող դեպքերի հետ: Մինչ օրս կառավարությունը չի ապահովել օրենքների պատշաճ կիրարկումն ու օրենքի առջեւ մարդկանց հավասարությունը՝ անկախ նրանց պաշտոնից ու եկամտից: Անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել քաղաքացիների բողոքներին եւ մամուլի կողմից կոռուպցիայի դեպքերի բացահայտումներին, դրանք կոծկվել են կամ զուտ ձեւական ուշադրության արժանացել: Հասարակության մեջ գնալով խորանում է թերահավատությունն ու անտարբերությունը, վախն ու հուսահատությունը: Մինչդեռ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի անհրաժեշտ նախապայմաններից են կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելումն ու բացահայտումը, կաշառատուների եւ կաշառակերների դատապարտումը եւ կոռուպցիայի դեմ հասարակության անհանդուրժողականությունը: Ըստ հանրության եւ փորձագետների տեսակետի՝ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի պաշտոնական հռչակումից ի վեր կոռուպցիայի մակարդակը երկրում չի նվազել: 2005թ. «ՏԶԿ/ԹԻ-Հայաստան»-ը երկրի ողջ տարածքում 1500 տնային տնտեսությունների շրջանում անցկացրեց հեռախոսային հարցում: Պարզվեց, որ հարցման մասնակիցների 62.9%-ի կարծիքով կոռուպցիան երկրում նույնիսկ աճել է: Հարցվողների զգալի մասը համարում էր, որ բոլոր պետական հաստատությունները կոռումպացված են, ըստ որում՝ ոստիկանությունը, դատարանները եւ դատախազական համակարգը հիշատակվում էին որպես առավելագույնս կոռումպացված ոլորտներ: Կոռուպցիայի հիմնական պատճառների շարքում նշվում էին սոցիալական անբարենպաստ պայմանները, անիշխանությունը եւ պետական պաշտոնյաների ազահությունը: Նույն ընթացքում անցկացված 25 անհատական հարցազրույցների մասնակիցների մեծամասնության կարծիքով եւս Հայաստանում կոռուպցիայի մակարդակը վերջին 3 տարվա ընթացքում բարձրացել է: Մասնակիցների մեծամասնության գնահատմամբ՝ Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն ձեռնարկներն անարդյունավետ են:

Հայաստանում առկա են քաղաքական կոռուպցիայի հետեւյալ հիմնական ռիսկերը. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող՝ քաղաքական ղեկավարների կողմից պաշտոնեական դիրքի չարաշահումը՝ քաղաքական դիվիդենտներ շահելու նպատակով, կազմակերպված հանցագործության կառույցների կամ օտարերկրյա կառավարությունների կողմից ֆինանսավորումը (առանձին դեպքերում՝ նշված գործող անձինք ձեւավորում են իրենց կուսակցությունները), պետական միջոցների անօրինական փոխադրումը կուսակցության «գանձարկղ» հատուկ այդ նպատակով հիմնված ընկերությունների ու կազմակերպությունների միջոցով, ընդդիմադիր կուսակցությունների որոշ ղեկավարների կամ աչքի ընկնող անդամների կաշառումը՝ իրենց կուսակցությունից հրաժարվելու դիմաց, քաղծառայողներին եւ այլ պետական պաշտոնյաներին կուսակցության անդամ դառնալ հարկադրելը եւ կուսակցության կարիքների համար նրանցից գումար կորզելը, մասնավոր հատվածից, հատկապես՝ խոշոր կապիտալի ներկայացուցիչներից անօրինական նվիրատվություններ ընդունելը եւ դրանց դիմաց արտոնություններ տրամադրելը, ձեռներեցներին ստիպելը, որպեսզի «ընդունեն» իշխող կուսակցության ղեկավարներին եւ բարձրաստիճան քաղաքական պաշտոնյաներին՝ որպես իրենց բիզնեսի «տանիք», ինչպես նաեւ՝ ընդդիմադիր կուսակցությունների համար ֆինանսական եւ այլ ռեսուրսների մատչելիության սահմանափակումը:

# 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մինչև 2004թ. քաղաքացիների խաղաղ, առանց զենքի հավաքների անցկացնելու իրավունքը կարգավորվում էր միայն ՀՀ Սահմանադրության (խոսքը մինչ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեն գործող Սահմանադրությանն է վերաբերում - /*խմբ.*) 26-րդ հոդվածով: Քաղաքական լարվածությունների ժամանակ հանրահավաքների եւ ցույցերի մասնակիցները ենթարկվում էին վարչական հետապնդումների՝ հիմնականում որպես չարտոնված երթերի, ցույցերի մասնակիցներ՝ ըստ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 180 հոդվածի:

Հարկ է նշել, որ Սահմանադրության նշված հոդվածում խաղաղ, առանց զենքի երթեր եւ ցույցեր անցկացնելու սահմանփակում չկար, սահմանված չէր նաեւ վարչական զանցանքի համար պատասխանատվության ենթարկելու ընթացակարգ:

2003-2004թ.թ. ընդդիմության կողմից հանրահավաքներ եւ ցույցեր անցկացնելու հայտերը հիմնականում մերժվում էին, իսկ անցկացվող հանրահավաքները, ցույցերն ու երթերը իշխանության կողմից որակվում էին որպես չարտոնված, որոնց հետեւում էին զանգվածային ձերբակալությունները:

Որպես այդ իրավունքի գործնական իրականացումը ապահովելու ԵԽԽՎ պահանջի (ԵԽԽՎ 1374 բանաձեւ, փաստաթուղթ 10163 կետ 9/բ) կատարում 2004 ապրիլի 27-ին ընդունվեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, որի վերաբերյալ ԵԽԽՎ տվել էր «խիստ սահմանափակող» բնորոշումը:<sup>1</sup> Դեռ մինչ ընդունումը, օրենքի նախագիծն «անընդունելի, եվրոպական չափանիշներին չհամապատասխանող» էին համարել ԵԱՀԿ-ն, Վենետիկի հանձնաժողովի փորձագետները (CDL(2004)022), իսկ ԵԽԽՎ-ն հորդորել էր այն «համապատասխանեցնել ԵԽ սկզբունքներին եւ չափանիշներին» (ԵԽԽՎ 1361 բանաձեւ, կետ 15, 27 հունվարի 2004թ., փաստաթուղթ 10027):

2005թ. հոկտեմբերին օրենքը փոփոխվեց, սակայն չնայած որոշ բարելավումներին, օրենքի ընդհանուր հայեցակարգը չի փոխվել: Այն շարունակում է կրել ոչ թե հանրահավաքների ազատության երաշխիքներն ամրապնդող, այլ հրապարակային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը սահմանափակող բնույթ: Մասնավորապես, եթե մինչ օրենքի փոփոխությունները հրապարակային միջոցառումները որոշ տարածքներում պարտադիր արգելվում էին, ապա կատարված փոփոխություններով պարտադիր արգելքը տարածվում է միայն զորամասերի, պաշտպանական նշանակության օբյեկտների, ՔԿՀ-երի, նախնական կալանքի վայրերի տարածքներից 150 մետրից պակաս հեռավորության վրա: Օրենքում նշված մյուս վայրերում հրապարակային միջոցառումը լիազոր մարմնի կողմից «կարող է արգելվել», այսինքն կարող է նաեւ չարգելվել: Փոփոխություններով (հոդված 6) կամուրջների վրա, թունելներում, ստորերկրյա վայրերում, վտանգավոր շինություններում, շինհրապարակներում հրապարակային միջոցառումների անցկացումն արգելվելու համար լրացուցիչ նախապայմաններ են դրվել՝ «եթե վտանգված են հանրային անվտանգությունը, մասնակիցների եւ այլոց առողջությունը ...»: Դրական փոփոխություն է այն, որ եթե ոչ զանգվածային միջոցառումը ինքնաբուխ վերածվել է զանգվածայինի, այն կարող է անցկացվել առանց իրազեկման:

<sup>1</sup> Մանրամասն վերլուծությունը տես «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ»-ի 2005թ. զեկույցում

Պահպանվել են զանգվածային հրապարակային միջոցառման արգելման հետևյալ հիմքերը՝ միեւնույն վայրում միաժամանակյա միջոցառումների անցկացման անհնարինությունը, հավաստի տվյալների առկայությունն այն մասին, որ «միջոցառման անցկացումը իրական վտանգ է սպառնում անձաց կյանքին կամ առողջությանը»:

Եթե նախկինում արգելվում էր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային տարածքներում եւ ՀՀ կառավարության սահմանած պետական, հատուկ, կարելորագույն նշանակության օբյեկտների տարածքներում եւ դրանցից 150 մետրից պակաս հեռավորության վրա հրապարակային զանգվածային միջոցառումների անցկացումը, ապա փոփոխություններով սահմանվել է այն վայրերի ցանկը, որտեղ կարող է արգելվել հրապարակային զանգվածային միջոցառման անցկացումը: Այդ ցանկում պետական մարմիններից ընդգրկված է միայն ՀՀ նախագահի նստավայրը, որից այնքան հեռավորության վրա կարող է արգելվել զանգվածային միջոցառման անցկացումը, որքան ոստիկանությունն անհրաժեշտ կհամարի անվտանգության նկատառումներով:

Եթե մինչ օրենքի փոփոխությունները մշակութային, մարզական համալիրների (դրանցում այլ միջոցառումների անցկացման դեպքում) տարածքներում եւ դրանցից 150 մետրից պակաս հեռավորության վրա հրապարակային զանգվածային միջոցառման անցկացումն արգելվում էր, ապա այժմ դրանց անցկացումը կարող է միայն սահմանափակվել եւ այն էլ բացառապես մշակութային, մարզական համալիրների տարածքում: Սակայն «սահմանափակվել» տերմինը օրենքում հստակեցված չէ եւ սահմանափակման ձեւը թողնված է լիազոր մարմնի հայեցողությանը:

Հանվել են զանգվածային հրապարակային միջոցառման արգելման հետևյալ հիմքերը. «եթե անցկացվող երթի պատճառով կկազմալուծվի տվյալ բնակավայրի կամ միջպետական ճանապարհների երթելությունը» եւ «եթե նշված վայրի անմիջական մոտակայքում նույն օրը, նույն ժամին տեղի է ունենալու կազմակերպիչի ընդդիմադիր անձանց կողմից անցկացվող զանգվածային հրապարակային մեկ ուրիշ միջոցառում, եւ առկա են հավաստի տվյալներ ընդդիմադիր ուժերի ընդհարման իրական վտանգի վերաբերյալ»:

2004թ. դեկտեմբերի 24-ին փոփոխություններ են կատարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ եւ ՀՀ Քրեական օրենսգրքերում, այնուհետեւ՝ 2005թ. հոկտեմբերի 4-ին, կրկին ՀՀ Քրեական օրենսգրքում: Արդյունքում քրեականացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառում կազմակերպելը, անցկացնելը եւ օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառումը դադարեցնելու վերաբերյալ որոշման պահանջներին չենթարկվելուն ուղղված կոչեր անելը: Այս նորմերը եւս արժանացել են ԵԱԿԿ եւ Վեներտիկի հանձնաժողովի քննադատությանը: Վերջիններս կասկածելի են համարել այս դրույթների համատեղելիությունը օրինականության սկզբունքի հետ, որը քրեական իրավունքում հիմնարար է եւ արգելում է օրենքի կամայական կիրառումը: Նրանք քրեական պատասխանատվության սահմանումը հնարավոր են համարել միայն այն դեպքում, երբ ցույցին մասնակցող անձը բռնություն է գործադրում կամ ֆիզիկական վնաս է պատճառում: Իր CDL(2005)018 կարծիքում Վեներտիկի հանձնաժողովը նշել է, որ ՀՀ Քրեական օրենսգրքի եւ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի վերոնշյալ փոփոխությունների հետ միասին «ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները հիմք կհանդիսանան, որ «արգելվեն այն ցույցերի կազմակերպումն ու անցկացումը, որոնք պետք է փաստացիորեն թույլատրվեն»:

Օրենքի գործողության մեջ մտնելուց հետո (22.05.04թ.) Երեւանի քաղաքապետը կարող է միայն ի գիտություն ընդունել հանրահավաքի անցկացումը կամ արգելել այն օրենքով սահմանված հիմքերով: Սակայն միջոցառումների արգելման կամ խոչնդոտման նախկին պրակտիկան շարունակվել է 2004-2005 թվականներին:<sup>2</sup>

<sup>2</sup> Տես նույն տեղում:

Չնայած 2006 թվականն առանձնապես քաղաքական ակտիվ տարի չի եղել, զանգվածային միջոցառումներ ընդդիմության կողմից չեն անցկացվել, սակայն արձանագրվել են ընդդիմության հանդիպումները խոչընդոտելու դեպքեր. դահլիճներ չեն տրամադրվել, կուսակցական ժողովներին աջակցած անձանց աշխատանքից հեռացրել են եւ կազմակերպիչների նկատմամբ ոստիկանության հետապնդումներ են եղել:

2006 թվականի վերջին ամիսներին տարբեր պատճառաբանություններով մերժվել են «Ժառանգություն» կուսակցությանը, մասնավորապես՝ Գյումրի, Վանաձոր, Արմավիր, Էջմիածին, Եղեգնաձոր, Սիսիան, Կապան քաղաքներում, քաղաքացիների հետ հանդիպումներ կազմակերպելու համար վարձակալության հիմունքներով հանրային ու մասնավոր դահլիճներ տրամադրելու դիմումները:

2006 թվականի մայիսի 20-ին «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Յովհաննիսյանը եւ կուսակցության ղեկավար մարմնի անդամները մեկնել էին Արմավիրի մարզի մի շարք բնակավայրեր՝ հանդիպելու տեղական կառույցի ակտիվիստներին: Ոստիկանության տեղական ստորաբաժանման աշխատակիցները կուսակցության տարածքային ստորաբաժանման ղեկավարից հետաքրքրվել են այցի նպատակների, ժամկետի, պատվիրակության կազմի մասին՝ պահանջելով պատվիրակության ժամանելուն պես տեղյակ պահել իրենց: Մյասնիկյան գյուղում հանդիպումը դեռ չավարտված ահազանգ է ստացվել Արմավիր քաղաքից, որ տարածքային ստորաբաժանման գրասենյակի աշխատակից Լեւոն Մարգարյանը բերման է ենթարկվել տեղի ոստիկանությունում եւ զգուշացվել, որ եթե Յովհաննիսյանի այցելությունը Արմավիր տեղի ունենա, ոստիկանությունն ուժ է գործադրելու: «Ժառանգություն» կուսակցության Արմավիրի գրասենյակը շրջապատվել է ոստիկաններով: Այնուհանդերձ հանդիպումը կայացել է, որից հետո Ռաֆֆի Յովհաննիսյանը այցելել է ոստիկանության բաժանմունք՝ ոստիկանապետ, գնդապետ Աշոտ Գեւորգյանին հանդիպելու համար: Աշոտ Գեւորգյանը Ռաֆֆի Յովհաննիսյանին չի ընդունել: Չցանկանալով այլ պատասխանատուի հետ հանդիպել՝ Ռաֆֆի Յովհաննիսյանը դիմում է հանձնել լեյտենանտ Կարապետ Մելքոնյանին՝ ոստիկանության գործողությունների վերաբերյալ գրավոր բացատրություններ ստանալու ակնկալիքով:

Մայիսի 22-ին կուսակցության վարչությունը նամակ ուղարկեց ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանին՝ պահանջելով մեկնաբանել ու գնահատական տալ վերոհիշյալ գործողություններին: ՀՀ ոստիկանության շտաբի պետ Էդիկ Ղազարյանը հուլիսի 17-ին պատասխան ուղարկեց «Ժառանգության» վարչության անդամ Գեւորգ Կալենյանին՝ նշելով, որ կուսակցության կողմից հասցեագրված դիմումը քննարկվել է ՀՀ ոստիկանությունում: Ոստիկանության ծառայողների կողմից իրավախախտում թույլ տալու վերաբերյալ դիմումում նշված փաստերը ստուգմամբ չեն հիմնավորվել:

«Ժառանգություն» կուսակցության 4-րդ համագումարի անցկացման համար, կուսակցության վարչությունը 2006 թ. ապրիլի 13-ին, 26-ին, այնուհետեւ մայիսի 4-ին գրավոր դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանին՝ խնդրելով մայիսի 30-ին կամ 31-ին կուսակցությանը տրամադրել Մելիք-Ադամյան փողոցի 1 հասցեում գտնվող ՀՀ կառավարության նիստերի դահլիճը: Գրավոր պատասխանները ստացվեցին համապատասխանաբար ապրիլի 19-ին, մայիսի 4-ին եւ 17-ին, որոնցում ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ Հայկարամ Մխիթարյանը նշում է, որ կառավարության նիստերի դահլիճում նախատեսված են մի շարք ցուցահանդեսներ, իսկ ազատ օրերին կատարվելու են վերանորոգման աշխատանքներ, ուստի խնդրանքը չի կարող բավարարել:

Եղեգնաձորում 2006 մայիսի 6-ին նախատեսված հանրահավաքը քաղաքապետ Սիրակ Բաբայանի կողմից արգելվել է: Ռաֆֆի Յովհաննիսյանի 2006 թ. մայիսի 24-ի գրավոր դիմումը քաղաքապետին՝ պարզաբանումներ ստանալու խնդրանքով մնացել է անպատասխան: Հավաքի արգելմանը նախորդել են «Ժառանգություն» ցուցանակի

անհետացումը, քաղաքացիների հետ «բացատրական-հսկողական աշխատանքը» համապատասխան օղակների կողմից:

2006 թվականի մայիսի 17-ին «Ժառանգություն» կուսակցության վարչությունը դիմել է ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանին, որպեսզի մայիսի 27-ից հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում որեւէ հարմար օր տրամադրեն ԳԱԱ նիստերի դահլիճը «Ժառանգություն» կուսակցությանը՝ համագումար անցկացնելու համար: ԳԱԱ գործերի կառավարիչ էլմիր Գելորգյանը հունիսի 6-ին պատասխանել է, որ ԳԱԱ նախագահության որոշմամբ նիստերի դահլիճները թույլատրվում է օգտագործել գիտության բնագավառի կազմակերպությունների միջոցառումների, գիտական քննարկումների, սեմինարների համար: Չի թույլատրվում Ակադեմիայի դահլիճում կազմակերպել հասարակական-քաղաքական եւ կուսակցական միջոցառումներ, այդ պատճառով խնդրանքը չի կարող բավարարվել:

2006 թվականի փետրվարին Գյումրիի բնակիչների հետ Ռաֆֆի Հովհաննիսյանի հանդիպման համար նախնական բանավոր պայմանավորվածություն էր ձեռք բերվել «Հոկտեմբեր» կ/թ տնօրինության հետ, սակայն հանդիպման ժամանակ դահլիճը չի տրամադրվել:

«Քաղաքացիական ազգային նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունը 2006-ի հոկտեմբերի 9-ին գրավոր դիմել է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Ստեփան Դավթյանին, հոկտեմբերի 15-ին կազմակերպությանը տրամադրել թատրոնի մեծ դահլիճը՝ քաղաքացիական ժողով անցկացնելու համար: Նույն խնդրանքով հոկտեմբերի 11-ին դիմումներ են հղվել Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Հարություն Արմենյանին եւ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Լաուրա Ավագյանին:

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնից եւ Ամերիկյան համալսարանից ստացվել են բանավոր մերժումներ, իսկ մարզահամերգային համալիրից գրավոր, որտեղ նշվում է, որ համալիրում նախատեսված միջոցառումների գրաֆիկը խիստ հագեցած է մինչեւ դեկտեմբերի 15-ը: Միաժամանակ, համալիրում ընթանում են վերանորոգման աշխատանքներ, որի հետեւանքով դադարեցվել է նոր պայմանագրերի կնքումը:

«Նոր ժամանակներ» կուսակցությունը 2006 թվականի մարտի սկզբից մինչեւ մարտի 20-ը ընկած ժամանակահատվածում շարունակաբար դիմել է (մարտի 15-ին նաեւ գրավոր դիմում է ուղարկել) ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ Հայկարամ Մխիթարյանին, 2006 թվականի ապրիլի 4-ին կառավարության նիստերի դահլիճը Ժ.12-ից մինչեւ 18-ը տրամադրել կուսակցության կոնֆերանս անցկացնելու համար: Ստացվել է միայն բանավոր պատասխան այն մասին, որ դահլիճը հատկացվել է ուրիշի: Կուսակցության անդամների պնդմամբ այդ օրը դահլիճում ոչ մի միջոցառում չի անցկացվել:

«Օրինաց երկիր» կուսակցությունը իշխող կոալիցիայից դուրս գալուց հետո ամենուր հանդիպում էր խոչնդոտների: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այցելել է հանրապետության մարզեր բնակիչների հետ հանդիպելու համար: Կուսակցությունը հիմնականում նախնական բանավոր պայմանավորվածություններ է ունեցել գրեթե բոլոր քաղաքներում, բայց տեղ հասնելուն պես հանդիպել է փակ դահլիճների: Դահլիճները տրամադրել են միայն կրկնակի բանակցություններից ու զանգերից հետո: Ինչպես օրինակ, հոկտեմբերի 7,8,9-ին Գյումրիում, Աշտարակում ու Արթիկում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ:

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Ալբերտ Ժամհարյանը թատրոնի դահլիճը սեպտեմբերի 2-ին «Օրինաց երկրին» տրամադրելուց հետո ազատվել է աշխատանքից:

Հատկապես Երեւանի դպրոցներում տնօրենները դահլիճներ չեն տրամադրում ՕԵԿ-ին՝ պատճառաբանելով աշխատանքից հեռացվելու մտավախությամբ:

Հանդիպում անցակցնեու համար հոկտեմբերի 14-ին ՕԵԿ-ը դիմել է Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքում գտնվող նախկին «Հայաստան» կ/թ շենքում տեղակայված «ԱրմենԱկոր» մշակութային կենտրոնին՝ հանդիպման համար դահլիճ տրամադրելու խնդրանքով: Կանխավ պայմանավորվածություն է ձեռք բերվել, սակայն հանդիպումից երկու օր առաջ կուսակցությունը մերժում ստացավ, այն պատճառաբանմամբ, թե շենքը վաճառվել է եւ նոր սեփականատերը հրաժարվում է տրամադրել այն: Մշակութային կենտրոնի համասեփականատեր Արմեն Ամիրյանն «Առավոտ» օրաթերթի հարցմանը պատասխանել է, թե «Կինոթատրոնի շենքի գնորդը մինչեւ առքուվաճառքի պայմանագիրը կնքելը, գործարքն ավարտելը արգելել է այնտեղ անցկացնել որեւէ միջոցառում՝ առեւտրային, մշակութային կամ քաղաքական<sup>3</sup>»:

Հավաքների ազատության իրավունքի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ են՝

1. Պատասխանատվության ենթարկել գործող օրենքի խախտմամբ հավաքների իրավունքը խոչնդոտող անձանց,

2. Բացառել հավաքների կազմակերպիչների եւ մասնակիցների նկատմամբ հետապնդումները:

3. Փոփոխել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքը միջազգային չափաորոշիչներին համապատասխան, մասնավորապես.

- առաջին հերթին հայեցակարգային առումով փոփոխել օրենքը՝ այն

դարձնելով հանրահավաքների ազատության իրավունքի երաշխիքներն ամրապնդող,

- վերացնել հրապարակային միջոցառման կազմակերպման եւ անցկացման սահմանափակումները, դրանք նախատեսելով միայն հատուկ դեպքերում (արտակարգ իրավիճակ եւ ռազմական դրություն),

- պետական լիազոր մարմինների օրենքի կամայական մեկնաբանությունները բացառելու համար հավաքներին վերաբերող բոլոր կարգերը սահմանել օրենքով,

- հանել ՀՀ նախագահի նստավայրի մոտ հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու արգելքը:

## ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրությունը պարունակում է խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի կանխարգելմանն ուղղված դրույթներ (հ.հ. 17, 22):

ՀՀ-ն 1993 թ.-ին միացել է «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիային, ԵԽ անդամ դառնալուց հետո 2002թ. վավերացրել է «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիան: 2006 թ.-ին Հայաստանը միացել է նաեւ ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը:

2004 թվականին Եվրոպայի խորհրդի կտտանքների կանխարգելման կոմիտեն հրապարակել է Հայաստանին վերաբերող առաջին զեկույցը, որը հիմնված է 2002 թվականին Հայաստան կատարած այցելության արդյունքների վրա: Զեկույցում նշվում է, որ ձեռքակալված անձինք մեկուսարաններում արժանանում են ոչ պատշաճ վերաբերմունքի, ծեծն ու այլ խոշտանգումներ իրականացվում են ոստիկանական հարցաքննությունների ժամանակ, ոստիկանության օպերատիվ աշխատակիցների կողմից:

<sup>3</sup> «Առավոտ» օրաթերթ, 17.10. 2006 թ.

Երբ 2004 ապրիլին ընդդիմության բողոքի ակցիաների ժամանակ Հայաստանի իշխանությունները բռնություններ գործադրեցին ընդդիմության արկտիվիստների նկատմամբ, Եվրոպայի խորհրդի կտտանքների կանխարգելման կոմիտեի ներկայացուցիչներն արտահերթ այց կատարեցին Հայաստան, հանդիպումներ ունեցան բռնության ենթարկված անձանց հետ: Կոմիտեի հաշվետվությունն առաջօր հրապարակված չէ, քանի որ չկա կառավարության համաձայնությունը: Հերթական այցելությունը կատարվեց 2006թ. ապրիլին, սակայն այդ զեկույցը նույնպես դեռևս հրապարակված չէ:

«Ձերբակալվածներին եւ կալանավորվածներին պահելու մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն 2004թ. մայիսի 14-ին ձեւավորվեց ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբ: Խմբում ընդգրկված է 15 անդամ՝ մի շարք հասարակական, այդ թվում՝ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներ, խմբի կազմում է նաեւ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչը: «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի» համաձայն՝ խումբը, կալանավորվածներին պահելու վայրերում գտնվող անձանց իրավունքների եւ ազատությունների պահպանման խնդիրներով զբաղվող վերահսկող մարմին է: Կարգի համաձայն՝ խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ), ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը (նաեւ, կալանավորված անձի համաձայնությամբ, նրա անձնական գործերին եւ գրագրությանը, բացի գաղտնի փաստաթղթերից), հիմնարկում տիրող իրավիճակին, ինչպես նաեւ՝ հանդիպել կալանավորված անձանց:

Դիտորդական խումբը հրապարակել է իր 2006թ. զեկույցը՝ հիմնված 2005թ. ՔԿՀ-ների այցելությունների վրա:

Հայաստանում կալանավորվածներին պահելու վայրերը յոթն են. «Նուբարաշեն», «Վանաձոր», «Գորիս», «Գյումրի», «Աբովյան», «Վարդաշեն» եւ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկները: Ձեկույցում նկարագրված են վերոնշյալ քրեակատարողական հիմնարկների ընդհանուր վիճակը, նյութական, սանիտարահիգիենիկ պայմանները, արտաքին աշխարհի հետ կապը, ինչպես նաեւ՝ կալանավորների նկատմամբ հիմնարկների անձնակազմերի վերաբերմունքը: Ձեկույցում հատուկ ուշադրություն է դարձված «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկին, որը գտնվում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության շենքում: Այն դեռևս խորհրդային տարիներից ծառայել է որպես ՊԱԿ-ի մեկուսարան: Ի տարբերություն այլ ՔԿՀ-երի, որոնք 2001թ-ից փոխանցվեցին ԱՆ ենթակայության տակ, «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ-ն միայն 2003թ. հունվարից անցավ այդ նախարարության ենթակայության տակ: Խմբին դեռևս հայտնի չէ որեւէ օրենսդրական կամ ենթօրենսդրական փաստաթուղթ, որի հիման վրա կալանավորվածները պահվում են այդ ՔԿՀ-ում: Խմբի դիտարկումները թույլ են տալիս ենթադրելու, որ «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահվում են քաղաքական ենթատեքստ պարունակող քրեական մեղադրանքով ձերբակալված անձինք (օրինակ՝ 2004-ի ապրիլին ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերին մասնակցած, այնուհետեւ, ձերբակալվածներ), օտարերկրացիներ, ինչպես նաեւ, առանձին դեպքերում, հասարակական հնչեղություն ստացած քրեական գործերով մեղադրյալ անձինք: Ի տարբերություն մյուս ՔԿՀ-ների, «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ խմբի այցելությունը սկսվում է ԱԱԾ անցագրային կետից, փաստորեն ՔԿՀ մուտք գործելը նույնացվում է ԱԱԾ մուտք գործելու հետ: «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ-ում արտաքին աշխարհի հետ կապը չի համապատասխանում օրենքով սահմանված չափանիշներին: Հիմնարկում գործում է ներքին ռադիոհաճույց, ընդսմին՝ կալանավորվածներին չի թույլատրվում ունենալ ռադիոընդունիչներ: Բացի այդ, կալանավորները զրկված են թերթեր ստանալու հնարավորությունից, բայց



ծանոթանում են հիմնարկի պետի կողմից ընտրված թերթերին («Հայաստանի Հանրապետություն», «Հայոց Աշխարհ», «Ազգ»):

Կալանավորները զրկված են հեռախոսակապից, միայն առանձին դեպքերում հիմնարկի պետի ցանկությամբ որոշ կալանավորներ կարող են օգտվել պետի ծառայողական հեռախոսից: Հիմնարկում չի պահպանվում նամակագրության գաղտնիությունը, նամակների բացումը եւ ընթերցումը բացատրվում է այլ, չթույլատրված առարկաներ փնտրելու պատճառաբանությամբ:

«Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ում, հակառակ «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 11 կետի պահանջների, կալանավորված օտարերկրյա քաղաքացիները ՀՀ քաղաքացիներից անջատ չեն պահվում: Բացի այդ, օտարերկրյա քաղաքացիներին իրենց համար հասկանալի լեզվով չեն բացատրվում նրանց իրավունքները: Օրենքի 31 հոդվածի 5 կետի համաձայն՝ դատարանների, իրավապահ, մաքսային եւ հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, ինչպես նաեւ ոստիկանության զորքերի զինծառայող կամ նախկին զինծառայող կալանավորված անձինք պահվում են մյուսներից անջատ, սակայն 2005թ. դեկտեմբերի 30-ին, «Վարդաշեն» ՔԿՅ-ից, որը նախատեսված է նախկին իրավապահ մարմինների աշխատակիցների համար, առանց որեւէ պատճառաբանության, «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ է տեղափոխվել նախկինում դատախազության աշխատակից, այժմ փաստաբան Վահե Գրիգորյանը: Նա պահվել է ընդհանուր խցում՝ այլ կալանավորների հետ, որոնց մեջ եղել է կրկնահացագործ:

«Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ում պահվող կալանավորների եւ նրանց փաստաբանների մոտ կասկածներ կան, որ նրանց հանդիպումները գաղտնալսվում են: Ձեկույցի պատրաստման ընթացքում «Առավոտ» օրաթերթում (4.03.2006թ.) հրապարակում եղավ, ըստ որի ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետը ՀՀ ազգային անվտանգության ծառայության օպերատիվ տեխնիկական վարչության պետին՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ծառայություններին տեսաձայնագրել եւ ձայնագրել «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ում պահվող մեղադրյալներ Ջավեն եւ Վլադիմիր Սկրտչյանների եւ նրանց պաշտպանների առանձնատեսակցությունները եւ արդյունքների մասին հայտնել նախաքննության մարմիններին:

2005թ. «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ում արձանագրվել է նաեւ անօրինական անազատության մեջ պահելու դեպք: Այնտեղ պահվող Սիլվա Ասատրյանի կալանքի տակ պահելու ժամկետը լրացել էր 23.11.2005 ժամը 17:45-ին: (Առաջին ատյանի դատարանը 22.11.2005-ին մերժել է կալանքը երկարացնելու մասին միջնորդությունը: Որոշումը նույն օրը ժամը 11:00-ին ներկայացվել է «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ): Սիլվա Ասատրյանը 23.11.2005-ին ՔԿՅ-ի 4 աշխատակիցների հսկողության ներքո ուղղարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանի նիստը հետաձգվել է մինչեւ 24.11.2005թ, սակայն Սիլվա Ասատրյանին չեն ազատել, այլ տարել են «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ եւ անօրինական անազատության մեջ պահել մինչեւ 24.11. 2005թ., երբ եւ կայացվել է վերաքննիչ դատարանի որոշումը կալանքի ժամկետը երկարացնելու մասին:

Վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ չնայած «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ն իրավական կարգավիճակով գտնվում է Արդարադատության նախարարության ենթակայության տակ, բայց փաստորեն գործում է որպես Ազգային անվտանգության ծառայության մեկուսարան:

Հաշվի առնելով, որ «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ն գտնվում է Ազգային անվտանգության ծառայության տարածքում եւ տեխնիկապես հնարավոր չէ հիմնարկները տարանջատել, զեկույցում առաջարկվում է դադարեցնել «Երեւան-Կենտրոն» ՔԿՅ-ի գործունեությունը:

Ինչ վերաբերում է հիմնարկներում ազատագրվածներին տրվող սննդի որակին, ապա բացառությամբ 1-2 հիմնարկների, այն անբավարար է: Սնունդը հիմնականում պատրաստում են դատապարտյալները: Որոշ ՔԿՅ-ների («Նուբարաշեն», «Գյումրի») խոհանոցներում հակասանիտարական վիճակ է: Խմբի այցելությունների ընթացքում

հազվադեպ է հանդիպել, որ խոհանոցում պահպանված լինեին նախորդ օրվա սննդի նմուշները, ինչը թույլ կտար համաճարակների կամ սննդային թունավորումների դեպքում պարզել դրանց պատճառները: Խոհանոցներում չկան սառնարաններ, ուր հնարավոր կլիներ պահել պահեստից ստացված սննդամթերքը: Դա հատկապես կարելու է հանգստյան օրերին, քանի որ այդ օրերի համար սնունդը ստացվում է նախօրոք: «Նուբարաշեն» ՔԿՅ-ում հացի որակը ցածր է: Ոչ բոլոր հիմնարկներն են դիտարկում սննդով ապահովում այն ազատազրկվածներին, ովքեր ունեն դրա կարիքը: «Գորիս» ՔԿՅ-ից տեղեկատվություն է ստացվել որպես պատիժ ազատազրկվածներին ճաշից զրկելու դեպքերի մասին: «Նուբարաշեն» ՔԿՅ-ից նույնպես բազմաթիվ բողոքներ են ստացվել այն մասին, որ պատժախցում գտնվողները զրկվում են ճաշից: Սա ՀՀ օրենսդրության եւ միջազգային չափանիշների կոպիտ խախտում է:

ՔԿՅ-ներում բուժսպասարկումը հեռու է բավարար լինելուց: Հիմնարկները համալրված չեն ինչպես անհրաժեշտ մասնագետներով, այնպես էլ բժշկական սարքավորումներով եւ դեղորայքով: Միայն «Նուբարաշեն» ՔԿՅ-ն ունի տարբեր պրոֆիլի բժշկական անձնակազմ, այն նաեւ միակն է, որ ունի հոգեբույժ: Առավել մեծ է հոգեբույժի անհրաժեշտությունը «Գորիս» ՔԿՅ-ում, ուր դատապարտյալները պահվում են բանտային ռեժիմում: Ատամնաբուժական ծառայությունը բոլոր ՔԿՅ-ներում, բացի ատամ հեռացնելուց, այլ բուժում չի իրականացնում: Ատամնաբուժական սարքավորումները հնամաշ են, դրանցով գործնականում հնարավոր չէ թերապեւտիկ բուժում իրականացնել:

2006թ. ընթացքում խումբը դաժան վերաբերմունքի դեպքեր արձանագրել է «Գորիս» քրեակատարողական հիմնարկում: 2006թ. մախի 6-ին հասարակական վերահսկողության դիտորդական խմբի անդամներ Միքայել Արամյանը, Ավետիք Իշխանյանը, Անդրանիկ Հարությունյանը եւ Արման Դանիելյանը ստացված ահազանգերի հիման վրա ոչ պլանային այցելություն կատարեցին «Գորիս» ՔԿՅ: Խմբի անդամները հանդիպումներ ունեցան հիմնարկի ղեկավարության եւ ազատազրկված մի շարք անձանց հետ՝ ինչպես կալանավորվածների եւ դատապարտյալների խցերում, այնպես էլ պատժախցերում:

Հանդիպումների արդյունքում խումբը պարզեց, որ 2006թ. ապրիլի 29-ին «Գորիս» ՔԿՅ-ում իրականացվել է հատուկ «միջոցառում»՝ ՀՀ ոստիկանության ներքին զորքերի ուղեկցող խմբի ծառայողների եւ «Գորիս» ՔԿՅ աշխատակիցների կողմից, որի ընթացքում կատարվել է զանգվածային խուզարկություն բոլոր խցերում: Խուզարկության ընթացքում ձեռնաշղթայել են ազատազրկվածներին, հանել խցերից դուրս եւ խցերը տակնուվրա անելով՝ վերցրել են նրանց անձնական իրերն ու ՔԿՅ-ի բակում այրել: Այրված իրերի թվում եղել են ազատազրկվածների փաստաթղթերը, ընտանեկան լուսանկարները, ներքնաշորերը, սափրվելու պարագաները եւ անձնական օգտագործման այլ իրեր: Ազատազրկվածները խուց բերվելուց հետո հայտանաբերել են, որ իրենց պատկանող ծխախոտները անհետացել են, իսկ թեյը, սուրճը եւ շաքարավազը թափված են խցի հատակին: Ձանգվածային խուզարկության ժամանակ խցերից մեկում ջարդուփշուր է արվել ազատազրկվածներին պատկանող ռադիոընդունիչը: Խուզարկությունները ուղեկցվել են բռնություններով: Ունեցած առանձնագրույցներով խումբը փաստեց, որ իրականացված «միջոցառման» ընթացքում առնվազն 5 ազատազրկված ենթարկվել է դաժան ծեծի: Ծեծի ժամանակ ազատազրկվածների ձեռքերը եղել են շղթայված: Ըստ ազատազրկվաների՝ ծեծին մասնակցել է 7-10 հոգի: Ծեծել են ռետինե մահակներով, ոտքերով, ինչպես նաեւ կիրառվել է էլեկտրաշոկ: Բռնության ենթարկված 3 ազատազրկվածները, ըստ իրենց խոսքերի, ծեծի հետեւանքով ուշագնաց են եղել: Խմբի այցելության ժամանակ ազատազրկվածների մարմինների տարբեր հատվածներում (մեջքին, ոտքերին, դեմքին) դեռեւս պահպանված էին ծեծի հետքերը, դաստակներին պահպանված էին ձեռնաշղթաներից մնացած վերքերը: Ծեծի ենթարկվածները չեն ստացել բժշկական օգնություն, իսկ նրանց վնասվածքները չեն արձանագրվել բժշկական քարտերում:

Բռնության ենթարկված ազատագրվածներից 3-ը խմբի այցելության ժամանակ գտնվում էին պատժախցերում: Իրենց նկատմամբ կիրառված բռնությունների եւ նվաստացումների պատճառով նրանք բողոքի հացադուլ էին հայտարարել: Ըստ հիմնարկի պետի՝ «միջոցառման» պատճառ է հանդիսացել դատապարտյալ Արթուր Այվազյանի եւ ռազմական դատախազության քննիչի միջեւ «Գորիս» ՔԿՅ-ի տարածքում ապրիլի 26-ին տեղի ունեցած միջադեպը, ինչի մասին պետը հայտնել է Քրեակատարողական վարչությանը: Ապրիլի 29-ին «Գորիս» ՔԿՅ են ժամանել ՀՀ ոստիկանության ներքին զորքերի ուղեկցող խմբի ծառայողներ, որոնք էլ «Գորիս» ՔԿՅ աշխատակիցների հետ համատեղ իրականացրել են վերը նշված «միջոցառումը»:

Դատապարտյալ Սարգիս Հարությունյանին, դեռ մինչ ապրիլի 29-ի դեպքերը, ռեժիմի խախտման պատճառով հիմնարկի ղեկավարությունը նշանակել էր պատիժ՝ 5-օրյա պատժախուց: Սակայն պատիժը հետաձգվել էր բժշկի առաջարկությամբ՝ առողջական խնդիրների պատճառով: Մայիսի 4-ին Սարգիս Հարությունյանը ենթարկվել է սոնոգրաֆիկ հետզոտության. պարզվել է, որ նա կարող է տեղափոխվել պատժախուց: Ըստ իր հայտարարության՝ մայիսի 4-ին, որպես բողոքի նշան, նա կուլ էր տվել մեխ եւ ալյումինե գդալի պոչը: Նրան մինչ խմբի այցելության պահը ռենտգեն հետազոտության չէին ենթարկել: Պատժախցերում պահվող մյուս 2 ազատագրվածները նշեցին, որ պատժախցում պահվելու առաջին 3 օրերին չեն բացվել մահճակալները եւ նրանց չեն տրամադրվել անկողնային պարագաներ, ինչպես նաեւ զրկել են զբոսանքից:

Դիտորդական խումբը համարեց, որ ՀՀ ոստիկանության ներքին զորքերի ուղեկցող խմբի ծառայողների եւ «Գորիս» ՔԿՅ աշխատակիցների կողմից կիրառված հատուկ միջոցները եւ վերը նշված մասսայական պատժիչ գործողությունները՝ անձնական գույքի դիտավորյալ ցուցադրական ոչնչացումը, բռնությունները, արժանապատվությունը նվաստացնող գործողությունները, դաժան ու անմարդկային վերաբերմունքը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին եւ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի չափանիշներին ու ոգուն: Այսպիսով, խումբը արձանագրել է, որ կոպտորեն խախտվել են ՀՀ Սահմանադրության 3, 14 եւ 17-րդ հոդվածները, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 6-րդ, 78-րդ եւ 98-րդ հոդվածները, «Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 13-րդ կետը, 16-րդ, 37-րդ, 38-րդ եւ 39-րդ հոդվածները, ինչպես նաեւ ՀՀ կողմից վավերացված «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը:

«Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 47-րդ հոդվածի հիման վրա ՀՀ Ոստիկանության պետի 14.01.05թ. Ա1-Ն հրամանով հաստատեց ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգը: 10.03.06թ. ձեւավորվեց ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը, որի լիազորությունների մեջ մտնում է միայն այդպիսի վայրեր այցելելը : Այսինքն՝ խումբը զրկված է ոստիկանական բաժանմունքներ այցելության հնարավորությունից, իսկ պրակտիկան ցույց է տալիս որ խոշտանգումներ կատարվում են ոստիկանական բաժանմունքներում:

Ոստիկանությունը առանց փաստաթղթային ձեւակերպման բերման ենթարկելով անձանց եւ առանց կարգավիճակը հայտնելու՝ նրանց պահում է ոստիկանական բաժանմունքներում, որտեղ էլ կիրառվում են ծեծ եւ դաժան վերաբերմունք: Բռնությունների ենթարկվածները հիմնականում չեն էլ հայտնում իրականությունը:

Հայաստանում խոշտանգումները հիմնականում կիրառվում են ոչ այնքան պատժելու, որքան ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու նպատակով: Հետագայում դատարաններն էլ մեծամասամբ հենվում են մեղադրանք առաջադրող մարմնի ներկայացրած ապացույցների վրա, ուր դարձյալ հիմնական կետը մեղադրյալների ինքնախոստովանական ցուցմունքներն են: Դիտարկումները ցույց են տալիս, որ դատավարությունների ընթացքում մեղադրյալների մոտ 80 տոկոսը հրաժարվում է նախաքննության ժամանակ տված իր ցուցմունքներից՝ պատճաբանելով,

որ դրանք տվել է խոշտանգումների եւ բռնությունների ազդեցությամբ: Սակայն մեղադրյալների այդ հայտարարությունները մնում են անհետեւանք, եւ խոշտանգումներ ու բռնություններ գործադրողները քրեական պատասխանատվության չեն ենթարկվում: Նախաքննական մարմիններում գործադրված, նույնիսկ մահվան ելքով բռնարարքների դեպքերում միշտ չէ, որ քրեական գործեր են հարուցվում: Հարուցված գործերով էլ հազվադեպ է, որ հանցագործության մեղավորները համապատասխան պատիժ են ստանում: Գործերի մի մասը կարճվում է հանցակազմի բացակայության կամ հանցավորների չբացահայտվելու հիմնավորմամբ, լավագույն դեպքում՝ բռնարարները մեղադրվում են իշխանագանցության կամ պաշտոնի չարաշահման մեջ:

Կալանավորվածների շուրջ 60 տոկոսը հայտնել է, որ իրենց ծեծել են ձերբակալման ժամանակ կամ ոստիկանական բաժանմունքներում: Սակայն մեկուսարանների ընդունման մատյաններում վնասվածքները կամ չեն արձանագրվում կամ արձանագրվում են մակերեսորեն:

2006 թ ապրիլի 20-ին ՀՀ Ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչություն (6-րդ վարչություն) առանց համապատասխան որոշման ապօրինաբար բերման է ենթարկվել 47-ամյա ոսկերիչ Արմեն Ղամբարյանը, եւ 2 օր պահվել նույն վայրում՝ ենթարկվելով դաժան ծեծի «բութ կոշտ առարկաների ներգործությամբ», որի մասին հետագայում հիշատակվում է փորձագետի եզրակացության մեջ: Ապրիլի 22-ին կայացվում է ձերբակալման որոշում եւ նա տեղափոխվում է ՀՀ Ոստիկանության՝ ձերբակալվածների պահելու վայր: 23.04.2006թ. ՀՀ Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության հերթապահ մասում կազմվում է արձանագրություն ձերբակալվածի բուժզննության վերաբերյալ: Ըստ որի՝ «ձախ կողքին կան կարմրակապտավուն հետքեր եւ այտուցված է, ձախ թիակին եւ մեջքին կան վերքեր, ձախ աչքի տակ կապտած եւ այտուցված է, աջ ոտքի ծնկի մոտ կան քերծվածքներ»: Այնուհետեւ Ղամբարյանին տեղափոխում են «Նուբարաշեն» ՔԿՀ, ոտեղից էլ տեղափոխվում է «Դատապարտյալների հիվանդանոց»: Այստեղ 03.05.06թ. կատարվում է բժշկական փորձաքննություն : Փորձագետի թիվ 427/հ եզրակացության համաձայն Արմեն Ղամբարյանը ստացել է կրծքավանդակի, ձախ աչքի, ձախ թիակի, աջ ոտքի ծնկի վնասվածքներ, փայծախի պատռվածք, որը ուղեկցվել է ներքին արնահոսությամբ, որոնք հասցված են բութ կոշտ առարկաների ներգործությամբ, առողջությանը ծանր վնաս են հասցրել եւ կյանքին վտանգ սպառնացող են»: ՀՀ Ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխավոր վարչություն բերման ենթարկվելու պահից Արմեն Ղամբարյանի հետ կատարված գործողությունների ամբողջ ընթացքում փաստաբան չի մասնակցել:

Իրավիճակի շտկման համար անհրաժեշտ են անհետաձգելի եւ ինտենսիվ գործողություններ: Մասնավորապես.

1. Ի կատարումն «խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիային կից կամընտիր արձանագրության պահանջների՝ ստեղծել հասարակական դիտորդների խումբ, վերապահելով նրան ոստիկանական բաժանմունքներ եւ ձերբակալված անձանց պահելու վայրեր, ձերբակալված զինվորականներին պահելու վայրեր, ՔԿՀ-ներ, զինված ուժերի ստորաբաժանումներ, հոգեբուժարաններ, մանկատներ, ծերանոցներ անարգել այցելություններ կատարելու իրավասություններ:

2. Դատավարական պրակտիկայի փոփոխություն, այդ թվում՝

- կիրառել քրեական օրենսդրության համապատասխան դրույթները, որոնց համաձայն խոշտանգումների մասին մեղադրյալի հայտարարության դեպքում դատարանը պետք է անմիջապես պահանջի հետաքննություն իրականացնել,

- հրաժարվել ինքնախոստովանական ցուցմունքները որպես հիմնական ապացույց ընդունելու պրակտիկայից:

3. Խոշտանգումների փաստերով ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի կիրառում:

4. «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի եւ պատժի դեմ» կոնվենցիայի 22 հոդվածով սահմանված կարգով հայտարարություն կատարել այն մասին, որ Հայաստանը ճանաչում է «Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի» իրավասությունը՝ ստանալու եւ քննելու այն անձանց անհատական դիմումները, ովքեր գտնում են, որ տեղի է ունեցել վերոնշյալ կոնվենցիայի խախտում:

5. Քրեական օրենսդրության բարեփոխում, այդ թվում՝

- քրեական դատավարության օրենսգրքի՝ կասկածյալի, մեղադրյալի, վկայի հարցաքննությանը վերաբերող դրույթների լրացում եւ փոփոխություն՝ սահմանելով ոստիկանության կողմից հարցաքննության վարման սպառիչ կանոնակարգ:

6. Կազմակերպել ոստիկանության աշխատակիցների վերապատրաստում, եւ նոր նշանակման ժամանակ իբրեւ չափանիշ ընդունել պրոֆեսիոնալիզմը եւ միջազգային նորմերին տիրապատելը:

## **ԿՐՈՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

### **Ա) Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում**

#### ***Օրենսդրություն***

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1991թ. հունիսի 17-ին՝ հիմք ունենալով ԽՍՀՄ 1990-ի նույնանուն օրենքը: Դրանից հետո այն երկու անգամ՝ 1997թ. եւ 2001թ. փոփոխվեց եւ լրացվեց:

Խորհրդային օրենքին ավելացված 17-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը ազդարարում է, որ պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու (Հայաստանյայց առաքելական եկեղեցի) մենաշնորհի հանդիսացող առաքելությունների իրագործմանը եւ նշվում են մենաշնորհներ, որոնք հակասում են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային փաստաթղթերին, ՀՀ Սահմանադրության 26 եւ 27 հոդվածներին, նույն օրենքի մյուս դրույթներին, ՀՀ տարբեր օրենքներին եւ իրավական ակտերին: Սակայն, չնայած նրան, որ Սահմանադրությունը եւ միջազգային համաձայնագրերը առաջնային են, հաճախ օրենքի այդ դրույթները հիմք են հանդիսանում ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցված որոշ կրոնական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակելու համար:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է կրոնի ազատությունը (հոդված 26) եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում (հոդված 8.1):

Սահմանադրության այդ դրույթը Հայաստանյայց առաքելական եկեղեցին եւ պետական կառույցները հիմք են համարում ազգային եկեղեցու հետ հատուկ հարաբերություններ հաստատելու համար, որը եւս սահմանափակում է երկրում գործող մյուս կրոնական կազմակերպությունների իրավունքները:

2006-ի նոյեմբեր ամսին «Շողակաթ» հեռուստատեսությամբ հեռարձակվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի եւ Աժ նախագահ Տիգրան Թորոսյանի մասնակցությամբ «Խղճի ազատության մասին» նոր օրինագծի մշակմանը նվիրված մի հանդիպումը լուսաբանող ռեպորտաժ, որտեղ Կաթողիկոսը հայտարարել է, որ դրանում պետք է հաշվի առնվի «աղանդների» դեմ պայքարի անհրաժեշտությունը: Աժ նախագահի տեսակետը հաղորդման ընթացքում չի հնչել, սակայն 2006-ի նոյեմբեր

ամսին Տիգրան Թորոսյանի նախաձեռնությամբ, առանց որեւէ հրապարակային քննարկման, անգամ այդ ոլորտում պատասխանատու պաշտոնական մարմինների գիտության, շտապ կերպով ԱԺ օրակարգ ներառնվեց «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունների մասին» օրինագիծ, որը խղճի ազատության վերաբերյալ միջազգային նորմերի, ՀՀ Սահմանադրության հետ մի շարք հակասություններ ունի եւ կան անորոշ ձեւակերպումներ, որոնք կարող են տարբեր կերպ մեկնաբանվել: Այն իր մեջ այլ կրոնական կազմակերպությունների եւ որեւէ կրոնական կազմակերպությանը չհարող քաղաքացիների հանդեպ խտրականության տարրեր է պարունակում: Հատկապես մտահոգիչ է «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու դերակատարությունը կրթական ոլորտում» հոդվածը, որը խախտում է կրթական ոլորտի աշխարհիկ բնույթը ու այլ հայացքներ ունեցող քաղաքացիների սահմանադրական իրավունքները: Այդ օրինագծով եկեղեցին մուտք է գործում հանրակրթական դպրոց եւ ձեռք է բերում դասագրքերի բովանդակությունը որոշելու եւ ուսուցիչների որակավորում կազմակերպելու իրավունք:

Այդ օրինագիծն առաջին ընթերցմամբ ձայների մեծամասնությամբ, ԱԺ-ում ընդունվել է: Հայտնի է, որ օրինագծի մասին բացասական կարծիքներ են հայտնել պաշտոնական եւ անկախ փորձագետներ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգեւորականները Հայաստանում գործող այլ կրոնական ուղղությունների ներկայացուցիչներին անվանում են աղանդավորականներ, որը հաճախ թարգմանվում է «սեկտա» բառով: «Աղանդ» բառը փաստորեն այժմ գործածվում է հետեւյալ իմաստով. Հայաստանում գործող եւ ազգությամբ հայերից բաղկացած ցանկացած կրոնական ուղղություն (բացի Հայաստանյայց առաքելական եկեղեցուց) աղանդ է: Բառն ունի քամահրական երանգ, ինչը վիրավորում է այլ եկեղեցիների անդամների կրոնական զգացմունքները: Մյուս տերմինը, որը օգտագործված է գործող օրենքում եւ կիրառվում է պրակտիկայում, դա «հոգեորությունն» է: Այն ազգային եկեղեցու եւ հասարակության մի զգալի հատվածի կողմից ընկալվում է հետեւյալ կերպ՝ յուրաքանչյուր ազգությամբ հայ պետք է լինի Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետեւորդ եւ նրան այլ ուսմունք քարոզելը հոգեորություն է: Այդ տերմինը նման իմաստով հաճախ է գործածվում ՁԼՄ-ներում եւ պետական պաշտոնյաների կողմից:

2006-ին Կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչության նախաձեռնությամբ տեղի են ունեցել բաց եւ հրապարակային քննարկումներ նոր օրենքի սկզբունքները մշակելու նպատակով, սակայն այդ քննարկումներն այժմ սառեցված են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2007 եւ 2008 թթ Հայաստանում սպասվում են խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ, ամենայն հավանականությամբ նոր օրենքի մշակման աշխատանքներն առնվազն երկու տարով կհետաձգվեն:

Հայաստանի իշխանությունները կրոնական խնդիրների վերաբերյալ հստակ քաղաքանություն չեն վարում: Չի կարելի ասել, թե երկրի բարձրագույն իշխանությունները խտրականություն պարունակող քաղաքականություն են իրականացնում, սակայն միջին պաշտոնյաները, հատկապես տեղական իշխանությունների եւ իրավապահ մարմինների որոշ ներկայացուցիչներ, կրոնական համայնքներին ուղղված սպառնալիքներով են հանդես գալիս եւ կատարում են գործողություններ, որոնք սահմանափակում են կրոնական կազմակերպությունների սահմանադրական իրավունքները:

«Մենք հասկացանք, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարները լայն ձեւով կընդունեն հանդուրժողականությունը եւ կաշխատեն այս ուղղությամբ, բայց Հայաստանում կան ազդեցիկ շերտեր, որոնք պատրաստ չեն հարգելու կրոնական հանդուրժողականության միջազգային իրավունքի սկզբունքները, -ասում է Հայաստանյայց ավետարանական եկեղեցու առաջնորդ, դոկտոր Ռենն Լեւոնյանը: - Մեզ համար մտահոգիչ երեք գլխավոր հարցեր կան այս ոլորտում, որոնք ամրագրված են

«Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում. քարոզչության մենաշնորհը, լրատվության փակ լինելը Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների առջեւ, «հոգեորսության» խնդիրը, որը գործածվում, բայց այդպես էլ չի սահմանվում օրենքում եւ մշտապես շահարկվում է»:

Խղճի ազատության ոլորտում Հայաստանում գոյություն ունեն նաեւ դրական զարգացումներ: Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները վկայում են, որ նրանք վստահությամբ են վերաբերվում կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությանը, հատկապես այդ վարչության պետ տիկին Հրանուշ Խառատյանին: Իրենց հուզող բազմաթիվ հարցերով դիմում են տիկին Խառատյանին, եւ շատ հարցեր լուծում են ստանում են: Նրանց կարծիքով վարչությունը աշխատում է պրոֆեսիոնալ եւ անկողմնակալ կերպով: Եղել են դեպքեր, որ նրանք դիմել են ՀՀ նախագահին կամ հանրապետության բարձրագույն քաղաքական դեկավարությանը, որի հետեւանքով խղճի ազատությանն ու մարդու իրավունքներին հակասող որոշ զարգացումներ կանխվել են:

Հայաստանի Հանրապետությունում գործող ընդդիմադիր կուսակցությունները հանդես չեն գալիս կրոնական անհանդուրժողականության դեպքերի ակտիվ քննադատությամբ: Նրանց զգալի հատվածն այս ոլորտում ավելի արմատական անհանդուրժողական հայացքներ ունի:

### ***Իրավիճակը դպրոցներում***

2003 թվականից դպրոցներում սկսվել է դասավանդվել Հայ եկեղեցու պատմությունն առարկան: Կրոնական կազմակերպություններն իրավունք չունեն դպրոցներում կրոնական դասեր վարել, սակայն պետական գրանցում ունեցող կազմակերպությունները դա կարող են անել մասնավոր պարապմունքներով՝ իրենց անդամների երեխաների համար:

Հանրակրթական դպրոցներում երբեմն Հայ եկեղեցու պատմություն դասավանդում են Հայաստանյայց առաքելական եկեղեցու քահանաները: Մասնավորապես, նման դեպքեր արձանագրվել են Լոռու մարզում: Այդ առարկայի ուսուցումը որոշ դպրոցներում լարվածություն է մտցրել այն աշակերտների հանդեպ, որոնք ոչ ավանդական եկեղեցու հետեւորդներ են:

Ավետարանական եկեղեցու տվյալներով դպրոցներում եղել են դեպքեր, երբ ուսուցիչները կամ դպրոց հաճախող հոգեւորականները զգուշացրել են, որ այն երեխաները, որոնք ծնողների հետ կհաճախեն Հայ առաքելական եկեղեցուց բացի այլ եկեղեցիների (աղանդների) միջոցառումներին՝ կպատժվեն:

Ըստ Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու առաջնորդ, դոկտոր Ռենե Լեւոնյանի, հայտնի են դեպքեր, երբ մարզպետարանների կրթության բաժիններից հրավիրում են դպրոցների տնօրեններին եւ հրահանգում, որ դպրոցներում «աղանդավորականների» երեխաների հետ հատուկ հակաքարոզչական աշխատանքներ վարեն:

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու վարչական կենտրոնի նախագահ, հովիվ Վիգեն Խաչատրյանը պատմում է, թե ինչպես Սյունիքի մարզի Ախլաթյան գյուղի դպրոցում աշխատանքից զրկվել են իրենց համայնքի անդամ 7 ուսուցիչներ:

Միաժամանակ նշում է, թե դպրոցի պարագայում այս խնդիրն այնպես է լուծվում, որ թվում է, թե որեւէ օրենք չի խախտվում: «Ստեղծում են այնպիսի պայմաններ, որ ուսուցիչն ինքը դուրս գա աշխատանքից», -բացատրում է Վիգեն Խաչատրյանը:

Հիմնական խնդիրը շաբաթ օրվա հետ է կապված: Դպրոցներում ուսուցիչներին աշխատանքային շաբաթում մեկ օր հանգիստ են տալիս, երբ այդ եկեղեցու անդամ ուսուցիչը խնդրում է, որ այդ օրը շաբաթը լինի, տնօրենը հատուկ դա չի անում: Ախլաթյան գյուղի դպրոցում այս պատմությունը շարունակվում է մոտ 10 տարի: Սյուս դպրոցների տնօրեններն այս հարցում հիմնականում ընդառաջ են գնում:

Ըստ Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու հասարակական գործերի տնօրեն Միլենա Գելորգյանի, 2006-ի ապրիլ ամսին Գյումրիի թիվ 28 միջնակարգ դպրոցի տնօրենն իմանալով, որ մի ընտանիքի երկու երեխաները հանդիսանում են այդ եկեղեցու անդամ, կանչել է ծնողներին եւ պարտադրել, որ նրանց երեխաները հաճախեն «Հայ եկեղեցու պատմության» դասերին, հայտարարելով, որ «Հավատացյալը իրավունք չունի հաճախելու այս դպրոցը»: Միջադեպի կապակցությամբ եղել է հանդիպում քաղաքապետի հետ, որը կրկնել է դպրոցի տնօրենի պահանջը: Արդյունքում երեխաները ստիպված են եղել փոխել դպրոցը: Ըստ տիկին Գելորգյանի՝ նմանատիպ դեպքեր այլ դպրոցներում նույնպես եղել են:

2006-ի հոկտեմբեր ամսին Լոռու մարզպետը եւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու Լոռվա թեմի առաջնորդը մարզպետարանում հավաքել են մարզի դպրոցների ուսուցիչներին եւ նրանց հրահանգներ տվել «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասերի վարման մասին:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ եւ միջոցներով նման հավաքներ պարբերաբար են կազմակերպվում: Ինչպես նշվեց վերելում՝ արձանագրվել են դեպքեր, երբ դասերը դասավանդում են հոգեւորականները: Այդ ամենը հարցականի տակ է դնում եկեղեցու եւ պետության անջատ լինելու սահմանադրական դրույթը:

Ըստ Եհովայի վկաներ կազմակերպության տրամադրած տվյալների «Համարյա բոլոր դպրոցներում խնդիրներ են առաջանում կապված «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասերին կամ տեղի ունեցող միջոցառումներին չմասնակցելու հետ: Օրինակ՝ Երեւան քաղաքի Նոր Նորք համայնքի թիվ 139 միջնակարգ դպրոցում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչը 5-րդ դասարանում դեռ ուսումնական տարվա սկզբին վարկաբեկիչ հայտարարություն է կատարել Եհովայի վկաների հասցեին եւ երեխաներին վախեցրել է, որ ոչ մեկը չփորձի նույնիսկ նրանց հետ շփվել: Անգամ աշակերտներից մեկին վիրավորել է ամբողջ դասարանի առջեւ եւ անբավարար գնահատել այն բանի համար, որ երեխան չի ցանկացել խաչակնքել: Նույն համայնքի թիվ 62 միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում ուսուցիչը ամբողջ դասարանի առջեւ «Եհովայի վկաներ» եկեղեցու անդամի երեխային ամոթանք է տվել իր հավատքի համար: Եղել են դեպքեր, երբ ծնողները ստիպված իրենց երեխաներին տեղափոխել են մեկ այլ դպրոց: Արդարության համար նշենք, որ նման փաստերը վերջին շրջանում բավականին պակասել են : Նախկինում շատ հաճախակի էին դեպքերը, երբ դպրոցում աշխատող Եհովայի վկա հանդիսացող մանկավարժներին ազատում էին աշխատանքից: Այժմ շատ քիչ «Եհովայի վկաներ» եկեղեցու անդամ մանկավարժներ են մնացել դպրոցներում»:

Հայտնի են նաեւ դեպքեր, երբ տարբեր կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները նպատակաուղղված քարոզչական աշխատանքներ են իրականացնում ուսուցիչների շրջանում:

### ***Միջոցառումների համար տարածքների վարձակալում***

Կրոնական կազմակերպությունների գործունեությունը խանգարելու ձեւերից մեկն էլ տարբեր միջոցառումների կազմակերպման համար տարածքների վարձակալմանը խոչընդոտելն է: Դրանց պարբերական լինելու հանգամանքը հուշում է, որ նման դեպքերը պատահական չեն:

Օրինակ՝ Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին Երեւանի Թեքեյան կենտրոնի դահլիճի վարձակալման պայմանավորվածություն է ունեցել, սակայն երբ արդեն կնքվում էր պայմանագիրը, կենտրոնի տնօրենը իմանալով, որ պայմանավորվող կողմը Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին է, հրաժարվել է տրամադրել դահլիճը: Նման բազմաթիվ միջադեպերի մասին պատմում են նաեւ մյուս եկեղեցիների անդամները: Որոշ դեպքերում հիմնարկների տնօրեններն արդարացել են, ասելով, թե իրենց հատուկ զգուշացրել են, որ «աղանդներին» դահլիճներ չտրամադրեն:



Ըստ «Եհովայի վկաներ» կազմակերպության տրամադրած տվյալների՝ «Գյուներիում՝ 2006-ի ապրիլ ամսին վարձակալության պայամանագիր կնքելու համաձայնություն ձեռք բերվեց Վարդան Աճեմյանի անվան թատրոնի տնօրինության հետ, սակայն ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից արգելվեց այդ պայամանագրի կնքումը: Երեւանում 2006-ի հունիս ամսին «Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտ» ՓԲԸ-ի տնօրինության հետ համաձայնության գալուց հետո պայամանագրի կնքումը մերժվեց, քանի որ վերադաս մարմինների կողմից ստացվել էր առարկում: 2006 իուլիս ամսին թեպետ պայամանագիր կնքվեց «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի հետ, սակայն համաժողովի անցկացումից մի քանի շաբաթ առաջ լուծվեց պայամանագիրը նույնպես՝ վերադաս մարմինների առարկության պատճառով»: Նման բողոքներ վերջին տասը տարիների ընթացքում պարբերաբար եղել են:

### ***Իրավիճակը ՋԼՍ-ներում***

Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները մշտապես նշում են մամուլում եւ հեռուստատեսությամբ հնչող անհանդուրժողականության կոչերի առթիվ իրենց անհանգստության մասին : Դա բացասաբար է անդրադառնում հասարակական կարծիքի վրա, ինչը հասարակության մեջ կրոնական կազմակերպությունների հանդեպ անհանդուրժողականության մթնոլորտ է ձեւավորում: Հաճախ տպագրվում են ոչ հավաստի, իսկ երբեմն ուղղակի կեղծ տվյալներ: Երբ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները լրատվամիջոցներին դիմում են հերքում տպագրելու խնդրանքով, որպես կանոն դրանք չեն տպագրվում:

2006 թ. հոկտեմբեր 22-ին «168 ժամ» թերթում տպագրվել է «Կրիմիալ կա նաեւ կրոնական կազմակերպություններում», վերնագրով մի հոդված, որտեղ «Քայքայիչ պաշտամունքից տուժածների վերականգնողական եւ օգնության կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Ամարյանը հայտարարում է, թե «կրոնական համայնքների ներսում գոյություն ունի նաեւ կրիմիալ», որի մասին խոսելն ու անուններ բացահայտելը կենտրոնի ղեկավարը համարում է դեռեւս վաղաժամ: Ըստ նրա՝ «աղվենտիստները բարեգործական կառույց ունեն, որը կոչվում է «Օգնության եւ զարգացման միջազգային աղվենտիստական գործակալություն»՝ ԱԴԲԱ: Ռուսական լրատվամիջոցներով ԱԴԲԱ-ն ներկայացվում է որպես չեչեն գրոհայիններին ֆինանսավորող կազմակերպություն, որը ներկայումս առաքելություն ունի նաեւ Իրաքում եւ Նախիջեւանում: Այս կառույցի հովանավորությամբ Երեւանում հունիս ամսին 8 օր շարունակ տեղի են ունեցել առողջության ցուցահանդես-սեմինարներ»: Հոդվածում կան նմանատիպ մեղադրանքներ մի շարք այլ կրոնական կազմակերպությունների հանդեպ, որոնց ապացույցները հանրությանը տեղեկացնելը Ալեքսանդր Ամարյանը նույնպես «դեռեւս վաղաժամ» է համար: Կենտրոնի ղեկավարը հաճախ հանդես է գալիս հեռուստատեսությամբ եւ մամուլում՝ «աղանդավորականների» շրջանում ինքնասպանությունների եւ քայքայիչ գործունեության մասին չհիմնավորված հայտարարություններով, ինչը հասարակությանը բացասաբար է տրամադրում կրոնական կազմակերպությունների հանդեպ: Հիշյալ հոդվածից եւ Ալեքսանդր Ամարյանի գործունեությունից բողոքել են Վանաձորի ավետարանական հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվ Ռաֆայել Գրիգորյանը, Յոթերորդ օրվա աղվենտիստների եկեղեցու վարչական կենտրոնի նախագահ, հովիվ Վիգեն Խաչատրյանը: Սակայն նման ելույթների եւ հոդվածների կապակցությամբ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները դատական հայցերով հանդես չեն գալիս:

«168 ժամ» թերթի նույն հոդվածում նշված է, որ «Աղանդավորական «շարժման» դեմ պայքարի առանձնահատուկ մեթոդ են ընտրել «Մեկ ազգ» կուսակցության անդամները. նրանք թռուցիկներ են տարածում: «Օգտվելով երկրում ստեղծված

բարոյահոգեբանական, սոցիալական ճգնաժամից, աղանդները ճկուն, կենդանի քարոզչությամբ եւ հասարակ մեթոդներով կարողանում են հասարակության անկիրթ զանգվածին իրենց ետեւից տանել ու իրենց սեւ գործն անել», - նշում է կուսակցության ղեկավար Գոռ Թամազյանը: «Ի պաշտպանություն հայ առաքելական եկեղեցու, նրանք նույնքերի սկզբներին Երեւանի փողոցներով կիրականացնեն իրենց 11-րդ երթը: Բայց այս երթը, որը կազմակերպիչները կոչում են «պայքար», շատ փոքր է այն «շարժման» դեմ, որը մեծ թափով իրականացնում են Հայաստանում գործող օտարածին կրոնական կազմակերպությունները», - ասում է Ալեքսանդր Ամարյանը վերոհիշյալ հոդվածում :

2006 մարտ ամսին Վանաձոր քաղաքում պատերին կապվել են թռուցիկներ «մահ աղանդավորականներին» բովանդակությամբ: Երբ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի մասնաճյուղի կազմակերպության «Քաղաքացիական նախաձեռնություն» թերթում քննադատվել են այդ թռուցիկները, կազմակերպության նախագահը ստացել է ինտերնետային նամակներ «Մահ Հելսինկյան ասամբլեային», «Մահ, մահ Հելսինկյան ասամբլեայի նախագահ Սաքունցին» բովանդակությամբ: Երբ կրոնական կազմակերպությունների ղեկավարները բողոքել են ՀՀ նախագահին, ԱԺ նախագահին եւ վարչապետի կրոնի հարցերով խորհրդականին, այդ դեպքի կապակցությամբ քրեական գործեր են հարուցվել:

Ըստ «Եհովայի վկաներ» կազմակերպության տրամադրած տվյալների՝ «Այսօր ավելի հաճախ են արձանագրվում դեպքեր, երբ հանրապետության տարբեր վայրերում ֆիզիկական ճնշում են գործադրում Եհովայի վկաների դեմ: Դրա հիմնական պատճառը այն նյութերն են, որոնք հրապարակվում են մամուլում կամ լրատվության այլ միջոցներով: Ֆիզիկական բռնությունների է հրահրում նաեւ «Մեկ ազգ» կուսակցության կողմից կազմակերպված քարոզարշավը, որն իրականացվում է ցույցերով եւ հասարակական վայրերում թերթիկների տարածմամբ»:

Վանաձորի ավետարանական հավատքի քրիստոնյաների եկեղեցու հովիվ Ռաֆայել Գրիգորյանը նշում է, որ «Ազգ» թերթում իրենց մասին պարբերաբար տպվող հոդվածների տեղեկությունները հերքելու խնդրանքներն այդպես էլ անպատասխան են մնացել:

Ըստ «Քաղաքացիական նախաձեռնություն» թերթի լրագրող Նաիրա Բուլղադարյանի՝ «Շիրակի թեմի առաջնորդ Սիքայել եպիսկոպոս Աջապահյանը ուղղակի արգելել է Գյումրիի տեղական հեռուստատեսություններին եթեր տրամադրել մյուս կրոնական կազմակերպություններին: Մինչ այդ, Հայաստանի Ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցիների միության նախագահ Ռուբեն Փահլեւանյանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել հեռուստատեսային բազմապիսի հաղորդումների, այդ թվում՝ նաեւ ոչ կրոնական թեմաներով»:

Հայտնի են դեպքեր, երբ հազվադեպ կրոնական կազմակերպությունների առաջնորդները եթերի հնարավորություն են ստանում (ոչ քարոզի համար), ապա այդ հեռուստաընկերություններ կրոնական ներկայացուցիչներին եթեր չտրամադրելու զգուշացնող զանգեր են գալիս:

Կրոնական անհանդուրժողականություն են քարոզում Հայաստանում գործող որոշ քաղաքական կուսակցություններ: Հիշյալ «Մեկ ազգ» կուսակցությունից բացի, որը «մասնագիտացած է» «աղանդների» դեմ պայքարում, կան նաեւ այլ կուսակցություններ, որոնք փորձում են շահարկել հասարակության մեջ խորացող կրոնական անհանդուրժողականության զգացումը: Մասնավորապես [www.Iragir.am](http://www.Iragir.am) կայքը 09-11-2006 –ին «Հնչակները պայքարելու են աղանդների դեմ» լուրում տեղեկացնում է՝ «Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության երիտասադական-ուսանողական միության ներկայացուցիչ Սահակ Մանուկյանը հայտարարել է, որ Հնչակյան կուսակցությունը շարունակելու է պայքարել Հայաստանում գործող աղանդների դեմ: Այդ պայքարում նրանք համագործակցելու են Հայ Առաքելական եկեղեցու հետ: Սահակ Մանուկյանի խոսքով, պայքարի շրջանակներում իրենց միությունը միջոցառումներ է կազմակերպել 11-12 տարեկան երեխաների համար՝ նրանց ծանոթացնելով հայրենիքի պատմությանը, մշակույթին: Նա ասել է նաեւ, թե

իրենց արածը նախընտրական արշավ չէ, եւ 120-ամյա կուսակցությունը գովազդի կարիք չունի»:

### **Ամփոփում**

-1991-1995 թվականներին տեղի են ունեցել կազմակերպված հարձակումներ Հայաստանում գործող կրոնական համայնքների վրա: Ծեծով, գուլքի փչացմամբ եւ հափշտակումներով ուղեկցված հարձակումներ կազմակերպիչներն ու կատարողները իրավապահ մարմինների կողմից չեն պատժվել:

- «խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1991թ. հունիսի 17-ին՝ հիմք ունենալով ԽՍՀՄ 1990-ի նույնանուն օրենքը: Դրանից հետո այն երկու անգամ՝ 1997թ. եւ 2001թ. փոփոխվեց եւ լրացվեց: Օրենքը իր մեջ ունի բազմաթիվ հակասություններ, թերություններ: Օրենքի որոշ դրույթներ չեն համապատասխանում Սահմանադրությանը եւ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերին: 2006-ին ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչության նախաձեռնությամբ տեղի են ունեցել բաց եւ հրապարակային քննարկումներ նոր օրենքի սկզբունքները մշակելու նպատակով, սակայն այդ քննարկումներն այժմ սառեցված են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2007 եւ 2008 թթ Հայաստանում սպասվում են խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ, ամենայն հավանականությամբ նոր օրենքի մշակման աշխատանքներն առնվազն երկու տարով կհետաձգվեն:

- 2006-ի նոյեմբեր ամսին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանի նախաձեռնությամբ, առանց որեւէ հրապարակային քննարկման, առանց անգամ այդ ոլորտում պատասխանատու պաշտոնական մարմինների գիտության, շտապ կերպով ԱԺ օրակարգ մտցվեց «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունների մասին» օրինագիծ, որը խղճի ազատության վերաբերյալ միջազգային նորմերի, ՀՀ Սահմանադրության հետ մի շարք հակասություններ ունի: Այն իր մեջ այլ կրոնական կազմակերպությունների եւ որեւէ կրոնական կազմակերպությանը չհարող քաղաքացիների հանդեպ խտրականության տարրեր է պարունակում: Այն ձայների մեծամասնությամբ առաջին ընթացքում ընդունվել է: Հայտնի է, որ օրինագծի մասին բացասական կարծիքներ են հայտնել պաշտոնական եւ անկախ փորձագետներ:

- կրոնական հանդուրժողականության եւ խղճի ազատության հիմնական խնդիրներից մեկը պետք է համարել մամուլում եւ էլեկտրոնային լրատվամիջոցներում պարբերաբար հնչող կրոնական անհանդուրժողականության, իսկ երբեմն անգամ ուժի կիրառման կոչերը:

### **Բ) Ազգային եւ այլ փոքրամասնությունների իրավունքները**

Հայաստանը էթնիկ առումով միատար երկիր է: Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների, էթնիկ փոքրամասնությունները՝ ասորիներ, եզդիներ, քրդեր, ռուսներ, ուկրաինացիներ, հույներ, մոլդկաններ, հրեաներ եւ այլն, կազմում են Հայաստանի բնակչության 2,2 տոկոսը: Առավել մեծաթիվ փոքրամասնություններից են եզդիները (40620), քրդերը (1519), ռուսները (14660), ասորիները (3409): Վերջին տարիների ընթացքում Հայաստանում ժամանակավոր բնակություն են հաստատել մեծ թվով Իրանի քաղաքացիներ, որոնց մասին վիճակագրական տվյալները հրապարակված չեն:

Հայաստանի ազգային փոքրամասնությունների զգալի հատվածը բնակվում է հատվածաբար եւ հիմնականում Երեւանում: Առանձին բնակավայրերում կոմպակտ բնակվում են եզդիները, ասորիները, մոլդկանները: Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները քաղաքական պահանջներով հանդես չեն գալիս:

Հայաստանը 1993-ի հունիսին վավերացրել է «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան: ՀՀ Սահմանադրությունը, օրենքները հավասար վերաբերմունք են նախատեսում բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ ռասայական, էթնիկական, կրոնական պատկանելությունից:

Գործող Սահմանադրության 14.1 հոդվածում, մասնավորապես, ասվում է. «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Սահմանադրության 41 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային եւ էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի եւ մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք»:

Ազգային, ռասայական խտրականության համար Քրեական օրենսգրքում սահմանված են պատիժներ:

«Հայ արիների միություն» կազմակերպության ղեկավար Արմեն Ավետիսյանը քրեական պատասխանատվության է ենթարկվել ազգային խտրականություն պարունակող հայտարարությունների համար: Նման այլ դեպք, որը հրապարակային հնչողություն է ստացել, արձանագրված չէ:

Հայաստանի էթնիկական փոքրամասնություններն իրենց կուսակցությունները չունեն: Ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ անդամակցում են Հայաստանում գործող տարբեր կուսակցությունների եւ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ներկայացված են եղել կուսակցությունների համամասնական ցուցակներում, սակայն խորհրդարանում ազգային փոքրամասնությունները ներկայացուցիչներ չունեն: Տեղական իշխանություններում ազգային փոքրամասնության ներկայացուցիչները ներկայացված են՝ ինչպես ընտրովի, այնպես էլ վարչական պաշտոններում: Ընդհանուր առմամբ ազգային փոքրամասնությունները քաղաքականապես պասիվ են եւ քաղաքականությամբ զբաղվելու համար նրանց նկատմամբ խոչընդոտներ չեն հարուցվել: Այնուամենայնիվ, ազգային փոքրամասնություն ներկայացուցիչները լիարժեք կերպով չեն ներկայացված խորհրդարանում եւ կառավարությունում:

Ազգային փոքրամասնություններն իրենց մայրենի լեզվի ուսուցման իրավունքը իրականացնելիս հակազդեցությունների չեն հանդիպում: Էթնիկական փոքրամասնությունները կարող են Հայաստանի Հանրապետության հանրակրթական միջնակարգ դպրոցներում սովորել իրենց մայրենի լեզուն եւ այդ լեզվով կրթություն ստանալ: Սակայն գրեթե բոլոր ազգային փոքրամասնությունների համար առկա են եւ մասնագետների, եւ կրթական ծրագրերի պատրաստման խնդիրներ: Առավել լավ պայմաններում է գտնվում ռուսական համայնքը, քանի որ ուսումնական նյութերը ստանում է Ռուսաստանից, որտեղ պատրաստվում են նաեւ անհրաժեշտ մասնագետներ:

Կառավարությունն իրականացնում է ազգային փոքրամասնությունների համար դասագրքեր հրատարակելու եւ կրթական ծրագրեր պատրաստելու հատուկ ծրագիր: Կառավարությունը միջոցներ է տրամադրում նաեւ ազգային փոքրամասնությունների մշակութային ծրագրեր իրականացնելու համար:

ՀՀ Կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով վարչությունը ազգային փոքրամասնությունների կրթական եւ մշակութային ծրագրերի նախաձեռնություններով է հանդես գալիս, արձագանքում է այս ոլորտի խնդիրներին: Վարչությունը մշակել է ազգային փոքրամասնություններին նվիրված մի օրինագիծ: Օրենքի նախագիծը խնդիր ունի պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքները եւ պայմաններ ստեղծել զարգացնելու համար նրանց մշակույթը: Օրինագիծում ճանաչվում է փոքրամասնությունների կուլտիվի իրավունքը: Տվյալ

օրինագիծը ոչ միայն ենթադրում է ազգային փորձաքննությունների համար ստեղծել մշակութային ինքնավարություն, այլև տեղական մակարդակներում նրանց ներկայացում կառավարման համակարգում: Օրինագիծով նախատեսվում է որոշակի քվոտաների համակարգ՝ տեղակալական ինքնակառավարման մարմիններում նրանց պարտադիր ներկայացման մասին: Այն նաև ենթադրում է ազգային փոքրամասնությունների համար կառավարության կողմից հատուկ հիմնադրամի ստեղծում, որը պետք է խթանի նրանց մշակութային ինքնատիպության պահպանումը:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի թերությունները մանրամասն վերլուծվել են «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» (2005)<sup>4</sup> հաշվետվության մեջ: Նշենք համառոտ, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, ԵԽ-ի փորձագիտական եզրկացություններում օրենքի թերություն է համարվում 7-րդ հոդվածի 1-ին կետը, որը բացառում է դատական մարմինների եւ դատավորների դեմ ներկայացված բողոքների քննումը Պաշտպանի կողմից: Այսինքն՝ Պաշտպանը լիազորված չէ օգնել այն անձանց, ում նկատմամբ խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով եւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքը: Ինչպես նաև՝ Պաշտպանը չի կարող արձագանքել դատական վարույթներում անպատեհ ձգձգումների կամ դատապաշտպանի իրավունքների մերժման խնդիրներին:

Օրենքի 8-րդ հոդվածը սահմանափակում է Պաշտպանին դիմողների շրջանակը. «Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաև՝ մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները»: Այսինքն՝ Պաշտպանը չի կարող ուսումնասիրել որեւէ երրորդ կողմի, օրինակ, իրավապաշտպան ՀԿ-ի դիմումը:

Մինչեւ 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով Սահմանադրության փոփոխություններն ընդունելը, Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքի համաձայն պաշտպանը նշանակվում էր ՀՀ նախագահի կողմից՝ Աժ պատգամավորական խմբերի եւ խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Սակայն առանց խորհրդակցելու նախագահը 2004 թ. փետրվարին մարդու իրավունքների պաշտպան նշանակեց «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Լարիսա Ալավերդյանին:

2005թ. ապրիլի 4-ին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց 2004թ. ընթացքում (մարտ-դեկտեմբեր) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության եւ երկրում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը (համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի): Ձեկույցում ներկայացված մարդու իրավունքների բազմաթիվ ոտնահարումների շարքում առանձնանում էին մայրաքաղաքի Հյուսիսային եւ Գլխավոր պողոտաների շինարարության ընթացքում Կենտրոն համայնքի բնակիչների սեփականության իրավունքի խախտումների, ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ կիրառվող վարչական կալանքների եւ խոշտանգումների փաստերը: Ձեկույցը խիստ քննադատվեց ՀՀ արդարադատության նախարարի, ՀՀ գլխավոր դատախազի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից: Մասնավորապես նշվում էր, որ «զեկույցի մի շարք դրվագներ հիմնավորված չեն, փաստական տվյալները որոշ դեպքերում թվացյալ են»: Տարեկան զեկույցից 6 ամիս հետո մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց արտահերթ զեկույց՝ մանրամասն ներկայացնելով

<sup>4</sup> տես՝ [www.ypc.am](http://www.ypc.am) ինտերնետային կայքում:

օրինախախտումները եւ մարդու իրավունքի ոտնահարումները, որ կատարվել են Երեւանի կենտրոնի կառուցապատման ընթացքում:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո մարդու իրավունքների պաշտպանը հնարավորություն ստացավ դիմել Սահմանադրական դատարան: Դրանից օգտվելով՝ Լարիս Ալավերդյանը դիմեց ՍԴ՝ Կենտրոնի բնակիչների սեփականության օտարման մասին կառավարության որոշման սահմանադրականությունը քննելու համար: Սակայն նա հեռացվեց պաշտոնից, որի հետեւանքով նրա հայցին ընթացք չտրվեց:

2005թ. մայիսի 26-ին ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) կողմից խարդախության մեղադրանքով ձերբակալվեց պաշտպանի աշխատակազմի գիտավերլուծական բաժնի աշխատակիցը, հարուցված գործի շրջանակներում պաշտպանի գրասենյակից առգրավվեց համակարգիչը, որտեղ պահվում են գրասենյակի տեղեկատվությունները եւ քաղաքացիների կոնֆիդենցիալ բողոքները, մինչդեռ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ, որը տարածվում է նաեւ նրա նամակագրության, Պաշտպանի օգտագործած կապի միջոցների, ինչպես նաեւ նրան պատկանող փաստաթղթերի վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրացավ 2006թ. հունվարի 5-ին (փոփոխված Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 30-րդ օրը): Ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 6-րդ հոդվածի համապատասխանաբար 1 եւ 4 կետերի՝ «Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից: ... Պաշտպանի լիազորությունների դադարեցման դեպքում նոր Պաշտպան պետք է նշանակվի նախորդի լիազորությունների դադարեցման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Մինչեւ նոր Պաշտպան նշանակվելը Պաշտպանի պարտականությունները կատարում է նրա տեղակալը:»:

2006 թ. հունվարի 4-ին, ՀՀ նախագահի հրամանագրով Լարիսա Ալավերդյանը ազատվեց իր զբաղեցրած պաշտոնից, քանի որ ավարտվել էր Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը: Նախագահի նույն հրամանագրով ձեւավորվեց հանձնաժողով, որը փոխարինեց է Պաշտպանին՝ մինչեւ նորի նշանակումը: Հանձնաժողովի անդամներ նշանակվեցին Առուշան Հակոբյանը (Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար), Մարտին Զաքարյանը (ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ), Նունե Խաչատրյանը (Արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար): Փաստորեն հակառակ օրենքի պահանջի՝ Պաշտպանի տեղակալը չկատարեց Պաշտպանի պարտականություններ:

Սահմանադրության 83.1 հոդվածի համաձայն՝ մինչեւ 2006 թ. փետրվարի 9-ը, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-րդով՝ 6 տարի ժամկետով պետք է ընտրեր Մարդու իրավունքների պաշտպան: Պաշտպանի թեկնածուներ առաջադրվեցին Պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Արմեն Հարությունյանը, «Մարդու իրավունքներ 96» կուսակցության նախագահ Ռուբեն Թորոսյանը եւ «Սահմանադրական իրավունք» միության նախագահ, ԱԺ պատգամավոր Հրանտ Խաչատրյանը: Խորհրդարանական առաջին քվեարկությունը տապալվեց, քանի որ թեկնածուներից ոչ մեկը չհավաքեց բավարար քանակությամբ ձայներ: Երկրորդ քվեարկությունը, որի ընթացքում, ըստ «Հայկական ժամանակ» օրաթերթի (18.02.2006թ.), քվեաթերթիկներում օգտագործվել են պայմանական նշաններ (որոնք հնարավորություն են տալիս պարզելու, թե որ պատգամավորն ինչպես է քվեարկել), ավարտվեց հօգուտ Արմեն Հարությունյանի, եւ նա 2006թ. փետրվարի 17-ին նշանակվեց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան՝ 6 տարի ժամկետով:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 17 հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության նախագահին, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության

մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկուլյց»: Նորընտիր Պաշտպանը ԱԺ-ում ներկայացրեց պաշտպանի ինստիտուտի 2005թ. գործունեության վիճակագրությունը՝ նշելով, որ ինքը չի կարող այլ Պաշտպանի գործունեության մասին զեկուլյցել:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցչի հետ զրույցում Արմեն Հարությունյանը նշել է. «95 մլն դրամ կազմող տարեկան բյուջեով եւ 39 աշխատակիցներով, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը անում է հնարավորինը՝ մարդկանց իրավունքները լավագույնս պաշտպանելու համար»:

Պաշտպանի նախաձեռնություններից Արմեն Հարությունյանն առաջին հերթին մատնացույց է արել ՀՀ Սարդու իրավունքների պաշտպանը դիմումը ՍԴ Կենտրոնի կառուցապատման հիմքում ընկած օրենքների եւ ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 1151 որոշման (սահմանում է սեփականատերերից օտարվող տարածքները) սահմանադրականությունը որոշելու համար: Դատարանը որոշեց, որ Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածը («Հողամասը պետության կամ համայնքի կարիքների համար վերցնելը»), Հողային օրենսգրքի 104, 106 եւ 108 հոդվածները (վերաբերում են հողամաս եւ անշարժ գույք վերցնելու իրավահարաբերություններին), ինչպես նաեւ ՀՀ կառավարության վերը նշված որոշումը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթներին: Սակայն հակասահմանադրական ճանապարհով իրենց սեփականությունից զրկված Կենտրոնի մի քանի հարյուր բնակիչների իրավունքներն այդպես էլ չվերականգնվեցին: ՍԴ-ի որոշումից հետո շարունակվեցին Կենտրոնի բնակիչների՝ իրենց տներից վտարումներն ու սեփականության հարկադիր օտարումը:

Սարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը ՍԴ-ի որոշումը դրական է համարում, քանի որ բնակիչները հնարավորություն են ստացել ետ ստանալ իրենց սեփականության դիմաց փոխհատուցումից զանձված 10 տոկոս եկամտահարկը, իսկ փոխհատուցման չափի հետ կապված խնդիրները լուծելու համար քաղաքացիներին առաջարկում է դիմել Սարդու իրավունքների եվրոպական դատարան:

Պաշտպանը Սահմանադրական դատարան է դիմել նաեւ «Կուսակցությունների մասին» օրենքի այն դրույթի սահմանադրականության հարցով, ըստ որի «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե ԱԺ իրար հաջորդող ցանկացած 2 ընտրություններից յուրաքանչյուրում նրա ընտրական ցուցակը ստացել է ընտրությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի 1%-ից պակաս ձայն»:

Սահմանադրական դատարանը այդ դրույթը ճանաչեց ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Իր պաշտոնավարման 10 ամիսների ընթացքում Արմեն Հարությունյանը քաղաքացիների հետ հանդիպումներ գրեթե չի անցկացրել եւ դրա համար հատկացված օրեր չունի: «Փորձը ցույց է տալիս, որ պարտադիր չեն ընդունելության օրերը: Հանդիպումներ պետք է լինեն միայն անհրաժեշտության դեպքում», - Հայաստանի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցչի հետ զրույցում ասաց Ա. Հարությունյանը:

Ըստ Պաշտպանի ներկայացրած վիճակագրության՝ 2006թ. փետրվար-դեկտեմբեր ամիսներին գրասենյակը ստացել է 2508 դիմում-բողոք (2004-ին եղել է 1800 դիմում, 2005-ին՝ 2640), որոնցից 1158-ը՝ գրավոր: Վերջիններից 155-ը ստացել է դրական լուծում:

«Գործի դրական լուծում է գրանցվում այն դեպքում, երբ մարդու իրավունքների խախտում հայտնաբերելուց հետո քննարկվում է դեպքը, ձեռնարկվում են միջոցառումներ, որի արդյունքում իրավունքը խախտողը պատասխանատվություն է կրում, դիմումատուի իրավունքներն էլ վերականգնվում են», - Հայաստանի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցչին ասաց Պաշտպանի գրասենյակի քրեադատավարական եւ զինծառայողների իրավունքների վերականգնման խմբի ղեկավար Արմեն Բաղդասարյանը: Սակայն որեւէ կոնկրետ օրինակ նա չբերեց: «Դրական լուծումներով

բոլոր դիմումներին ծանոթանալու համար մի քանի շաբաթ է հարկավոր, քանի որ նախ պետք է արխիվները ուսումնասիրել, տեսակավորել, հետո միայն առանձնացնել», - դրական լուծումներով գործերին ծանոթանալու մոնիտորիգային խմբի անդամի հարցին ի պատասխան ասաց Պաշտպանի մամուլի քարտուղար Գրիգորի Գրիգորյանցը: Նա նաեւ ներկայացրեց, որ Պաշտպանի գրասենյակն ամսական ստանում է 150-200 դիմում, որից 40-ը՝ հեռախոսով: «Դիմումները գալիս են ընդհանուր բաժին, այնտեղ ուսումնասիրում են եւ որոշում, թե որ խմբին պիտի հանձնել՝ քաղաքացիաիրավակա՞ն, թե՞ քրեաիրավական: Դրանից հետո խմբի ղեկավարն է զբաղվում դիմումներով, եւ վերջում միայն անհրաժեշտության դեպքում գործերը հասնում են Պաշտպանին»:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի 9-րդ, 11-րդ, 15-րդ հոդվածների համաձայն բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր: Բանավոր բողոքների բովանդակությունը պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը: Պաշտպանը բողոքի վերաբերյալ իր ընդունած որոշման պատճենը ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

Հայաստանի հելսինկյան կոմիտեի փորձագետների կարծիքով, չնայած սահմանված ընթացակարգային նորմերի, պաշտպանի գրասենյակի գործունեությունը բյուրկրատացված է եւ որոշ դիմումատուներ այդպես էլ չեն ստանում բավարար աջակցություն:



## 1.2. ԽՈՍՔԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

### ՁԼՍ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետությունում խոսքի, լրատվամիջոցների եւ տեղեկատվության ազատության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ մանրամասն վերլուծությունը Երեւանի մանուկի ակումբը ներկայացրել է «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» (2005)<sup>5</sup> հաշվետվության մեջ, որում բարեփոխումների ընթացքը վերլուծվում էր Եվրոպայի խորհրդի առջեւ Հայաստանի ստանձնած պարտավորությունների համատեքստում:

Այդ վերլուծության ամփոփումը հետեւյալն էր. «Թեպետ Հայաստանում խոսքի եւ տեղեկատվության ազատության բնագավառը կարգավորող մի շարք առաջադիմական օրենքներ են ընդունվել («Տեղեկատվության ազատության մասին», «Ձանգվածային լրատվության մասին»), սակայն այս ոլորտում դեռեւս առկա են բազմաթիվ բացասական երեւույթներ: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը շարունակում է խոչընդոտել հեռարձակվող լրատվամիջոցների առաջընթացին ու զարգացմանը: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը դեռեւս մնում է իշխանության խոսափողը: 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններն էլ էական ազդեցություն չեն ունենալու հեռարձակման բնագավառը կարգավորող մարմինների կազմերի վրա: Փոփոխված Սահմանադրությունը միայն մեկ կարգավորող մարմնի գոյություն է ենթադրում, իսկ վերջինիս ձեւավորման կարգն էլ (անդամների 50 տոկոսն Ազգային ժողովի, 50 տոկոսը՝ ՀՀ նախագահի նշանակմամբ) արդեն իսկ կաղապարների մեջ է դնում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հետագա փոփոխությունները: Մտահոգիչ է հեռարձակվող լրատվամիջոցների ազատության վիճակը: Հեռուստառադիոհաճախությունների արտոնագրման 2002 թվականից անցկացվող մրցույթների արդյունքների, ինչպես նաեւ ոլորտը կարգավորող մարմինների գործունեության վերլուծությունները ցույց են տալիս, որ մի շարք հարցերում այդ մարմինները, հետեւաբար նաեւ հեռարձակող ընկերությունները առաջնորդվում են ավելի շատ քաղաքական եւ այլ շահերով, քան օրենքների պահանջներով, ակնհայտ է օրենսդրության ընտրովի կիրառումը: Վտանգավոր միտումներից է նաեւ «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքում «Հակաահաբեկչական գործողության մասին տեղեկատվության սահմանափակումը» հոդվածը, որը կարող է լրատվամիջոցների ներկայացուցիչների համար խոսքի ազատության եւ տեղեկատվություններ ստանալու հերթական խոչընդոտը դառնալ: Վերջապես, 2005 թվականի վերջից տեղեկատվության ազատ տարածմանը սկսեցին խոչընդոտել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը եւ դրա ընդունման հետ միաժամանակ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, ըստ որոնց տպագիր մանուկի բաժանորդագրությամբ եւ տարածմամբ զբաղվող ընկերությունները պետք է լիցենզավորվեն»:

2006 թվականին տեղի են ունեցել նոր զարգացումներ, որոնք ամենից առաջ վերաբերում են «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» խնդրահարույց օրենքի փոփոխություններին: Այն նախաձեռնեց ՀՀ կառավարությունը՝ 2006 թվականի սեպտեմբերին: Ըստ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 117 հոդվածի պահանջի, Ազգային ժողովը գործող օրենքները պետք է համապատասխանեցնի Սահմանադրությանը: Իսկ փոփոխված Սահմանադրության 83.2 հոդվածը նախատեսում է փոփոխություններ

<sup>5</sup> տես՝ [www.ypc.am](http://www.ypc.am) ինտերնետային կայքում:

«Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում: Այդ հոդվածը սահմանում է «Յեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»:

Լրագրողական կազմակերպություններն ու ոլորտի մասնագետներն ակնկալում էին, որ Սահմանադրությունից բխող փոփոխությունների անհրաժեշտությունն օգտագործելով՝ ՀՀ Ազգային ժողովը եւ կառավարությունը կաշխատեն ընդհանրապես օրենքը բարելավելու ուղղությամբ՝ կատարելով անհրաժեշտ այլ փոփոխություններ եւ լրացումներ եւս: Սակայն 2006 թվականի սեպտեմբերի 21-ի նիստում ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց սեպտեմբերի 26-ին հրավիրել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, որի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, պիտի քննարկվեր «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի մի նախագիծ, որի մասին, թերեւս բացի դրա հեղինակներից, ոչ ոք ոչինչ չգիտեր: 2006 թվականի սեպտեմբերի 26-ին լրագրողական հինգ կազմակերպություններ (Երեւանի մամուլի ակումբ, Հայաստանի «Ինտերնյուս», Հայաստանի ժուռնալիստների միություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Լրագրողների «Ասպարեզ» ակումբ) հանդես եկան հայտարարությամբ եւ նշեցին, որ օրինագիծն անընդունելի է, քանի որ

1) Նախագիծը շրջանառության մեջ է դրվել հապճեպ, առանց շահագրգիռ կողմերի՝ հեռուստառադիոընկերությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումների:

2) Իբրեւ օրինագծի ընդունման հիմնավորում բերվում է միայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի որոշումը: Փոփոխությունների բովանդակության այլ հիմնավորումներ չկան, եւ ըստ էության նախագծի միայն 21-րդ հոդվածը կարող էր հիմնավորվել Սահմանադրության 83.2 հոդվածի պահանջով:

3) Օրինագիծը միջազգային փորձաքննություն չէր անցել:

4) Օրինագիծը չէր քննարկվել ԱԺ գլխադասային՝ Գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովում:

5) Օրենքի նախագծում առկա են մի շարք վիճելի դրույթներ, որոնք լուրջ մտավախություններ են առաջացնում խոսքի ազատության եւ հեռուստառադիոհեռարձակման շուկայի արդար ու օբյեկտիվ կարգավորման տեսակետից:

Օրինագիծը քննարկվեց ԱԺ արտահերթ նստաշրջանի սեպտեմբերի 27-ի նիստում, սակայն դրա քվեարկությունը տեղի ունեցավ արդեն հոկտեմբերի 3-ին՝ ԱԺ հերթական նիստում: Օրինագիծը չընդունվեց: Օրինագծի մերժումից հետո այն ներկայացնողը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնարկեց դրա նախ օնլայն, ապա եւ՝ աշխատանքային քննարկումներ:

«Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի մանրամասն վերլուծությունը տրված է «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» (2005) հաշվետվության մեջ<sup>6</sup>: Լրագրողական կազմակերպությունների եւ մեդիա փորձագետների կարծիքով «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը հայեցակարգային առումով է անկատար, եւ անցյալ տարիներին շատ հաճախ է հնչել ընդհանրապես նոր օրենք ունենալու անհրաժեշտության մասին կարծիքը: Ավելին, հիշյալ կազմակերպությունները հիմնականում հավանություն են տվել նաեւ «Ինտերնյուսի» մշակած հայեցակարգին եւ կարծում են, որ այն կարող է նոր օրենքի նախագծի հիմք դառնալ: Սահմանադրության փոփոխությունները նպատակ ունենին հաստատելու բազմակարծությունը հեռուստատեսությունում, ապահովելու

<sup>6</sup> նույն տեղում

հեռուստաընկերությունների եւ ոլորտը կարգավորող մարմնի անկախությունը, սակայն Սահմանադրության 83.2 հոդվածը, որն ինչպես նշվեց կադապարների մեջ է դրել «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում փոփոխությունների հնարավորությունը, առավել եւս առաջարկվող օրինագիծը չեն վերացնում այն խոչընդոտները, որոնք խանգարում են Հայաստանում հեռարձակման անկախ ոլորտի զարգացմանը: Դրանք են՝

- ոլորտը կարգավորող մարմնի՝ Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաեւ՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կախվածությունը իշխանությունից, ավելի ճիշտ՝ երկրորդի պարագայում՝ ՀՀ նախագահից
- ըստ այդմ՝ նրանց գործունեության հարմարեցումը քաղաքական կոնյունկտուրային,
- հեռարձակման լիցենզավորման մրցույթների հաղթողների մասին որոշում ընդունելիս սուբյեկտիվիզմի եւ քաղաքական կողմնակալության գերակշռումը,
- մրցույթի հաղթողներին որոշելիս չափանիշների անհստակ լինելը եւ լիցենզա տրամադրելու կամ չտրամադրելու որոշման պատշաճ հիմնավորման բացակայությունը,
- օրենքների եւ լիցենզիայի պայմանների պահպանման վրա վերահսկողության բացակայությունը,
- խախտումների համար պատժամիջոցներ կիրառելիս խտրական վերաբերմունքը:

Օրենքում առաջարկվող փոփոխությունները չէին լուծում այս խնդիրները կամ լուծում էին դրանք մասնակիորեն: Ավելին, փոփոխություններն ամբողջովին առելտրայնացնում էին նաեւ Հանրային հեռուստառադիոընկերությունը՝ հանելով վերջինիս համար սահմանված գովազդային սահմանափակումները (ըստ գործող օրենքի Հանրային հեռուստառադիոընկերությունում առելտրային գովազդը չի կարող գերազանցել ընդհանուր եթերաժամանակի 5 տոկոսը, եւ հեռարձակվող հաղորդումները չեն կարող ընդհատվել գովազդով), ընդսմին՝ չէին նախատեսվում փոփոխություններ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ձեւավորման կարգում, եւ խորհուրդը շարունակելու է ամբողջովին մնալ ՀՀ նախագահի կողմից նշանակվող եւ հետեւաբար նրանից կախված մարմին:

2006 թվականի դեկտեմբերի 15-ին 60-ից ավելի հասարակական կազմակերպություններ միավորող «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը բաց նամակով դիմեց Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամներին: Դիմումում Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամներին կոչ էր արվում դրսևորել քաղաքացիական կամք ու «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարվելուց հետո ամբողջ կազմով հրաժարական տալ: Կոչը հիմնավորվում էր նրանով, որ Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության 83.2 հոդվածի համաձայն փոխվել է ՀՀ-ի ձեւավորման կարգը. դրա անդամների կեսին պետք է ընտրի Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով, իսկ կեսին նշանակի նախագահը՝ 6 տարի ժամկետով: Միաժամանակ, ըստ Սահմանադրության «Եզրափակիչ եւ անցումային դրույթներ» գլխի 117 հոդվածի 11-րդ կետի՝ կարգավորող մարմնի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչեւ «Յեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Նրանց պաշտոնավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր տեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի եւ Հանրապետության նախագահի կողմից: Այդպիսով, ասվում է հայտարարության մեջ, Յեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի գործող անդամների պաշտոնավարման տարբեր ժամկետները ստեղծում են մի իրավիճակ, երբ Սահմանադրական պահանջին՝ 50:50

հարաբերակցությանը հասնելու համար կպահանջվի մինչև 6 տարի ժամանակ: Ստեղծված իրավիճակից հնարավորինս շուտ դուրս գալու ճանապարհը Ազգային հանձնաժողովի անդամների լիազորությունների կամավոր միաժամանակյա դադարեցումն է, ինչը Ազգային ժողովին եւ ՀՀ նախագահին հնարավորություն կտա ընտրել եւ նշանակել Ազգային հանձնաժողովի նոր անդամներ, եւ միանգամից կկատարվի Սահմանադրության պահանջը:

Դեկտեմբերի 19-ին, պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանին, ՀՈԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանն այս առաջարկության վերաբերյալ ասաց. «...Ընդունել եմ ի գիտություն ընդամենը»: ԵՄԱ -ն հիշեցրել է, որ սա առաջին դեպքը չէ, երբ Գրիգոր Ամալյանը ՀՈԱՀ-ին հղված դիմումներին ոչ համարժեք պատասխաններ է տալիս, ընդսմին, իրեն իրավունք է վերապահում խոսելու հանձնաժողովի բոլոր անդամների անունից:

2006 թվականի ընթացքում անհանգստացնող էր մնում «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիցենզավորման պահանջը պարբերականների բաժանորդագրությամբ եւ տարածմամբ զբաղվող կազմակերպությունների համար: Թեպետ 2006թ-ի հունվարի 20-ին տրանսպորտի եւ կապի նախարարությունը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Արդարադատության նախարարություն է ուղարկել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի պաշտոնական պարզաբանումը, որի համաձայն պարբերական մամուլի բաժանորդագրությունը չի հանդիսանում փոստային ծառայություն եւ հետեւաբար արտոնագրման ենթակա գործունեություն չէ (տրանսպորտի եւ կապի նախարարության այդ պարզաբանումը տպագրվել է ՀՀ «Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» 4-րդ համարում՝ 2006 թվականի փետրվարի 1-ի), այսուհանդերձ եւ այստեղ, եւ կառավարության նախաձեռնությամբ ստեղծված «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագծում խոսքը միայն բաժանորդագրությունը չլիցենզավորվող գործունեություն ճանաչելու մասին է, մինչդեռ առաքումը, ըստ էության, մնում է լիցենզավորվող գործունեություն, ինչը նշանակում է, որ բաժանորդագրողը չի կարող տարածող լինել, եթե լիցենզիա չունի: Նման իրավիճակը, ԵՄԱ փորձագետների գնահատմամբ, նշանակում է.

1. Միայն պարբերականների բաժանորդագրությամբ եւ տարածմամբ զբաղվող փոքր կազմակերպությունները կամ պիտի վճարեն պահանջվող գումարը (5 միլիոն դրամ՝ լիցենզիայի վճար), ինչը նրանց համար չափազանց մեծ է եւ կհանգեցնի սնանկացման, կամ՝ պիտի իրականացնեն բաժանորդագրություն, իսկ տարածումը կազմակերպեն ազգային օպերատորի կամ այլ լիցենզավորված կազմակերպության միջոցով, ինչը նախ՝ կնշանակի բաժանորդի առջեւ ստանձնած պարտավորության միջնորդավորված իրականացում, ապա եւ՝ կհանգեցնի բաժնեգնի բարձրացման եւ տպաքանակների իջեցման՝ բաժանորդագրությունն ու առաքումը տարբեր կազմակերպությունների կողմից իրականացնելու հետեւանքով:

2. Լրատվական գործունեություն իրականացնողները (պարբերականների խմբագրություններն ու հրատարակիչները) կզրկվեն իրենց հրատարակություններն անձամբ բաժանորդագրելու եւ առաքելու հնարավորությունից:

Բացի այդ, նման իրավիճակը հակասում է՝

ա ) ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»: Իսկ այս իրավունքը, ըստ Սահմանադրության 43 հոդվածի, կարող է սահմանափակվել միայն «օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»: Մարդկանց՝ իրենց ընտրած կազմակերպության միջոցով պարբերականներ տարածելու կամ

ստանալու, այսինքն՝ «տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու» ազատության սահմանափակումը բնավ չի բխում Սահմանադրության 43 հոդվածի պահանջից:

բ) «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին, որը տեղեկություններ եւ գաղափարներ տարածելու ազատությանն առնչվող բնագավառներից չի արգելում միայն ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորումը:

գ) «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքին, որի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն « Լրատվության միջոցները թողարկվում եւ տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որեւէ այլ մարմնում հայտարարագրման կամ որեւէ մարմնի ծանուցման» (ընդգծումը՝ խմբ.): Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Արգելվում է ... 4) խտրականությունը լրատվության համար անհրաժեշտ սարքավորումների եւ նյութերի քաղաքացիական շրջանառությունում. 5) ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված եւ տարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը»:

Տպագիր մամուլի ոլորտը, ի տարբերություն հեռարձակման ոլորտի, Հայաստանում ավելի ազատ է: Եվ նրա տարածման համար արհեստական խոչընդոտներ ստեղծելը հղի է տարածումը մոնոպոլացնելու եւ դրանով իսկ՝ այստեղ եւս պետական խիստ վերահսկողություն սահմանելու վտանգով: Ավելացնենք, որ 2006 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ Ազգային ժողովը դեռեւս չէր քննարկել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Աժ մի քանի պատգամավորների հեղինակած օրինագիծը, որն ընդունելու դեպքում վերոհիշյալ բոլոր մտահոգությունները կվերանային: Եվ ՀՀ կառավարությունը, եւ Ազգային ժողովի գլխադասային՝ Ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը, բացասական կարծիք ունեն այդ օրինագծի վերաբերյալ, եւ ավելի հակված են պահպանելու լիցենզավորումը՝ նվազեցնելով լիցենզիայի համար գանձվող վճարի չափը: ԵՄԱ փորձագետները սկզբունքորեն դեմ են նման մոտեցմանը՝ համարելով, որ տպագիր պարբերականների բաժանորդագրության եւ տարածման լիցենզավորումն ընդհանրապես պետք է վերացնել, որովհետեւ փոստային կապի բնագավառում պետական լիցենզավորումը անհրաժեշտ է միայն այնպիսի գործունեության համար, որը կարող է առնչվել մարդկանց անվտանգությանը, նրանց՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությանը, ինչի իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ: Նման գործունեություն են նամակների, ծանրոցների առաքումները, դրամական փոխանցումները եւ այլն: Սակայն պարբերականներում տպագրվող բաց ինֆորմացիա է, եւ այստեղ մարդկանց իրավունքների պաշտպանությունը կարգավորվում է այլ օրենքներով:

2006 թվականի մայիսի 2-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» մի օրենք, որով նախատեսվում է դեղերի, բուժտեխնիկայի եւ բուժական մեթոդների գովազդի համար ստանալ ՀՀ առողջապահության նախարարության թույլտվությունը: ԵՄԱ փորձագետների կարծիքով ոչ միայն դեղերի, այլեւ ցանկացած գովազդի թույլտվության կարգ սահմանելը, լրացուցիչ պահանջներ նախատեսելը եւ թույլատրող մարմին ունենալը հղի են կոռուպցիոն վտանգներով: Ստեղծվում է լրացուցիչ խոչընդոտ՝ գովազդային տեղեկատվության ազատ տարածման ճանապարհին, այն դեպքում, երբ գովազդ արտադրողը եւ գովազդակիրը հնարավորություն ունեն մինչ դեղերի, բուժտեխնիկայի եւ բուժական մեթոդների գովազդ արտադրելը եւ տարածելը գովազդատուից ստանալ եւ ստուգել համապատասխան փաստաթղթերի առկայությունը: Գովազդի կարգավորման համար բավական է, որ տվյալ դեղը կամ բուժտեխնիկան հանրապետությունում լիցենզավորված լինեն:

Պետությունն իր վերահսկողական ֆունկցիան պետք է իրականացնի՝ հետեւելով բարեխղճությանը եւ անբարեխիղճ գովազդ հայտնաբերելու դեպքում «Գովազդի մասին» օրենքի 25-րդ եւ 26-րդ հոդվածների համաձայն պատասխանատվության ենթարկելով օրենքը խախտողներին:

## **ԻՐԱՎԻՃԱԿԸ ԽՈՍՔԻ, ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Բացի օրենքների անկատարությունից, վտանգավոր են նաեւ այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են լրատվամիջոցների եւ լրագրողների նկատմամբ ահաբեկումներն ու դրանք իրականացրած անձանց անպատիժ մնալը (կամ ձեւական պատժի արժանանալը), սեփականության համակենտրոնացումը տեղեկատվության ոլորտում, հեռուստատեսություններում թաքնված գրաքննությունն ու բազմակարծության պակասը:

2006 թվականին խնդրահարույց էր մնում հեռուստաեթերի (այդ թվում՝ հանրային հեռուստատեսության եթերի) մատչելիությունը քաղաքական ուժերի համար: Այսպես, 2006 թվականի հոկտեմբերի 5-ին «Օրինաց երկիր» կուսակցության մամուլի ծառայությունը ծանուցեց հանրությանը, որ Վանաձորի (Լոռու մարզ) «Միզ» հեռուստաընկերությունը հրաժարվել է հեռարձակել կուսակցության առաջնորդ, ՀՀ ԱԺ նախկին նախագահ Արթուր Բաղդասարյանի հետ հարցազրույցը: Ըստ կուսակցության ներկայացուցիչների՝ չհեռարձակելը քաղաքական ճնշման հետեւանք է եւ գրաքննության դրսեւորում: Հեռուստաընկերության ղեկավարությունը, ընդհակառակը, պատճառաբանում է, թե հարցազրույցում տեղ էին գտել վիրավորական արտահայտություններ Լոռու մարզային ղեկավարության եւ «Լոռի» հեռուստաընկերության հասցեին, եւ երբ ՕԵԿ ղեկավարությունը չի համաձայնել մոնտաժել այդ հատվածները, իրենք որոշել են չհեռարձակել հարցազրույցը եւ պատրաստ են վերադարձնել վճարված գումարը (հարցազրույցը վճարովի էր):

Ընդհանրապես, քաղաքական ուժերի՝ եթերում իրենց տեսակետներն ազատորեն ներկայացնելու խնդիրը մտահոգում է, եւ տպավորություն է ստեղծվում, թե անգամ կան քաղաքական դեմքեր եւ կուսակցություններ (օրինակ, «Ժառանգություն», առաջնորդ՝ Րաֆֆի Հովհաննիսյան, «Նոր ժամանակներ», առաջնորդ՝ Արամ Կարապետյան, «Հանրապետություն», առաջնորդ՝ Արամ Զ. Սարգսյան, իսկ պաշտոնանկությունից հետո նաեւ՝ Արթուր Բաղդասարյանն ու նրա ղեկավարած «Օրինաց երկիր» կուսակցությունը), որոնց հայտնվելը եթերում սահմանափակված է: Սա, ԵՄԱ փորձագետների գնահատմամբ, թաքնված գրաքննության ձև է: Ավելին, ըստ դիտարկումների, հիշյալ գործիչների ասուլիսներին անգամ ոչ մի հեռուստաընկերություն չի ներկայանում, եւ նման միջոցառումները լուսաբանվում են միայն տպագիր լրատվամիջոցներով: Նման իրավիճակը դատապարտող հայտարարություններով հանդես են եկել եւ ՕԵԿ -ը, եւ «Նոր ժամանակներ», եւ «Ժառանգություն» կուսակցությունները: Մասնավորապես, այդ մասին 2006 թ. նոյեմբերի 7-ին նման մի հայտարարություն է տարածել ՕԵ կուսակցությունը, նշելով, որ Սեւանում ու Գավառում տեղի բնակչության հետ Արթուր Բաղդասարյանի հանդիպումները ոչ միայն չեն լուսաբանվել, այլև տեղական հեռուստաալիքներով տարածվել են կուսակցության ղեկավարին վարկաբեկող նյութեր:

Նոյեմբերի 9-ին Հայաստանում գործող դիվանագիտական հաստատություններին է դիմել «ՆԺ» կուսակցության վարչությունը, նշելով, որ իրենց կուսակցության նախագահ Արամ Կարապետյանն «արդեն մեկուկես տարի զրկված է հեռուստաեթերից օգտվելու եւ ազգաբնակչությանն իր եւ կուսակցության տեսակետներն ուղիղ եթերում փոխանցելու հնարավորությունից»:

Միաժամանակ, կան հեռուստաալիքներ, որոնք կարգավիճակով մասնավոր լինելով, իրականում կուսակցական վերահսկողություն կամ ուղղվածություն ունեն:

Այսպես, ԱԼՄ հեռուստաընկերության սեփականատերը, ղեկավարը, գլխավոր խմբագիրը եւ քաղաքական հաղորդումներ վարողը՝ Տիգրան Կարապետյանը, նաեւ ժողովրդական կուսակցության նախագահին է եւ հեռուստաընկերությունը վերջինիս մարզեր կատարած այցերը լուսաբանում է իբրեւ կուսակցության (եւ ոչ թե հեռուստաընկերության) ղեկավարի այցեր: «Կենտրոն» հեռուստաընկերությունն ըստ էության դարձել է Գագիկ Շամշյանի եւ նրա ղեկավարած «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը ենթակա ալիք, «Երկիր մեդիա» հեռուստաալիքը՝ Հայ հեղափախական դաշնակցություն կուսակցության հետ է նույնացվում եւ այլն:

Լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ ահաբեկումները, հարձակումները, ծեծը 2006 թվականին եւս շարունակվել են, ընդ որում, մեղավորները կամ չեն հայտնաբերվել, կամ, եթե անգամ հայտնաբերվել են՝ չեն պատժվել: Ամենից բնորոշը «Չորրորդ իշխանություն» եւ «Առավոտ» թերթերի արտահաստիքային թղթակից, ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանի դեմ իրականացված ահաբեկումն էր. 2006 թ. հուլիսի 12-ին Գագիկ Շամշյանը հետապնդման է ենթարկվել Երեւանի Նուբարաշեն համայնքի ղեկավար Սիեր Յովհաննիսյանի հարազատների եւ ենթակաների կողմից: Գագիկ Շամշյանի դիմումի համաձայն Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների դատախազությունը քրեական գործ է հարուցել ՀՀ Քր. օր.-ի 164 («Լրագրողի օրինական մասնագիտական գործունեությունը խոչընդոտելը») հոդվածի, 176 («Կողոպուտ») հոդվածի 1-ին մասի եւ 258 («Խուլիգանություն») հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով: Գագիկ Շամշյանը ԵՄԱ-ին տեղեկացրել է նաեւ, որ հուլիսի 13-ին եւ հետագայում ենթարկվել է տարբեր ճնշումների, մասնավորապես՝ հոսանքազրկվել է նրա բնակարանը, իսկ բնակարանի հեռախոսագիծը՝ կտրվել: Հուլիսի 25-ին ՀՀ Գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, որ հիշյալ գործով իբրեւ մեղադրյալ է ներգրավվել համայնքի ղեկավարի եղբայրը՝ Ռուբեն Յովհաննիսյանը, որի նկատմամբ իբրեւ խափանման միջոց ընտրվել է կալանքը, սակայն հետագայում Ռ. Յովհաննիսյանը գրավով ազատ է արձակվել: Իսկ ահա նոյեմբերի 10-ին Շամշյանը Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների դատախազությունից գրություն է ստացել, ըստ որի քրգործը կարճվել է եւ գործով անցնողների (այդ թվում համայնքապետի եղբոր) նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է նրանց գործողություններում «հանցակազմի առկայությունը հիմնավորող ապացույցների բացակայության հիմքով» («Առավոտ» օրաթերթ, 14. 11. 2006 թ.): Այս գործն աղաղակող է նրանով, որ լրագրողի դեմ ահաբեկություն իրականացրած անձինք, որոնք բոլորն էլ հայտնի են, փաստորեն մնացին անպատիժ, իսկ Գագիկ Շամշյանի դեմ մի խումբ քաղաքացիների բողոքի հիման վրա օգոստոսի 3-ին հարուցված գործի (վիրավորանքի, խարդախության եւ շորթման մեղադրանքներով) քննությունը տարեվերջին ավատվել է, եւ գործն ուղարկվել է դատարան:

2006 թվականին լրագրողներին ահաբեկելու երկու դեպք է գրանցվել Ազգային ժողովում: Մայիսի 23-ին խորհրդարանում ՀՀԿ խմբակցության պատգամավոր Ալեքսանդր Սարգսյանը (ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի եղբայրը) ականատեսների ներկայությամբ վիրավորանքներ ու հայհոյանքներ է ուղղել «Իրավունք» թերթի թղթակից Թագուհի Թովմասյանին, պահանջել բացահայտելու տեղեկատվության աղբյուրը, նաեւ սպառնացել է ու հայհոյել: Միջադեպը մնացել է անհետեւանք, թեպետ «Իրավունքի» խմբագրական խորհուրդը դիմել էր ՀՀ Գլխավոր դատախազությանը, ոստիկանությանը եւ Ազգային անվտանգության ծառայությանը:

Նման մի միջադեպ էլ տեղի է ունեցել 2006 թվականի հոկտեմբերի 13-ին, Աժ պատգամավոր Նահապետ Գեւորգյանը հարձակվել է «Առավոտ» թերթի լրագրող Աննա Իսրայելյանի վրա եւ սպառնալիքներ ու հայհոյանքներ տեղացել. «Կտամ գլուխդ կթոցնեն», - սպառնացել է նա: Պատճառը «Առավոտում» հրապարակված մի հոդված էր, որում հիշատակված է եղել պատգամավորի անունը, ընդ որում հոդվածի հեղինակը Աննա Իսրայելյանը չէր:

2006 թվականի սեպտեմբերի 6-ի առավոտյան հարձակման ենթարկվեց «Իրավունք» թերթի խմբագիր Յովհաննես Գալաշյանը: Երկու հոգի հետեւից հարվածել

են լրագրողի եւ տապալել գետնին: Այս փաստի առթիվ դատապարտող հայտարարություններ են տարածել տեղական եւ միջազգային կազմակերպությունները: Հարուցված քրեական գործը մինչ սույն զեկույցը պատրաստելու պահը արդյունք չի տվել. հարձակվողները հայտնաբերված չեն: Նույն կերպ՝ չնայած հարուցված գործերին չեն հայտնաբերվել 2006 թվականի հունվարի 30-ին «Հայկական ժամանակ» օրաթերթի մարզական մեկնաբան Դավիթ Ջալալյանի վրա հարձակում գործած եւ ֆուտբոլային մեկնաբան, «Ֆուտբոլ պլուս» թերթի հիմնադիր Սուրեն Բաղդասարյանի ավտոմեքենան փետրվարի 7-ին հրկիզած անձինք:

Նման դեպքեր են գրանցվել նաեւ մարզերում, մասնավորապես՝ փետրվարի 23-ին ահաբեկել են Վանաձորի (Լոռու մարզ) «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն Նարինե Ավետիսյանին, ընդ որում սպառնացողը հայտնի է, սակայն հարուցված քրեական գործին ընթացք չի տրվել, իսկ մայիսի 15-ի լույս 16-ի գիշերը անհայտ անձինք քարկոծել են լրագրողուհու ավտոմեքենան: Մեղավորները չեն հայտնաբերվել: Այսպիսով կարելի է արձանագրել, որ չնայած «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի « Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» պահանջի, 2006 թվականին լրագրողների նկատմամբ բռնություն գործադրած կամ սպառնալիքներ հնչեցրած ոչ մի անձ չի հայտնաբերվել կամ պատասխանատվության չի ենթարկվել, եւ լրագրողներն ու լրատվամիջոցները պետության կողմից պաշտպանվածություն չեն զգում:

Լրատվամիջոցների դեմ ճնշումների համատեքստում պետք է դիտարկել նաեւ 2006 թվականի հունիսի 26-ին «Ժամանակ Երեւան» թերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանին ձերբակալելը եւ ՀՀ Քրեական օրենսգրքի 327 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով (ժամկետային զինվորական ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը) նրա դեմ հարուցված քրեական գործը: Արման Բաբաջանյանի նկատմամբ հարուցված քրեական գործի դատական քննությունը ավարտվեց սեպտեմբերի 8-ին. Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավճռով Արման Բաբաջանյանը դատապարտվեց ազատազրկման՝ չորս տարի ժամկետով: Բազմաթիվ լրագրողական եւ իրավապաշտպան կազմակերպություններ հակված են կարծելու, որ Արման Բաբաջանյանը հետապնդման է ենթարկվում իր պրոֆեսիոնալ գործունեության համար, եւ որ պատիժը, որը սահմանել է դատարանը, համարժեք չէ կատարվածին: Նման գնահատական, մասնավորապես, 2006 թվականի հոկտեմբերի 31-ին ի պաշտպանություն Արման Բաբաջանյանի տարածած հայտարարության մեջ տվել է «Լրագրողներ առանց սահմանի» միջազգային կազմակերպությունը: Ըստ հայաստանյան կազմակերպությունների՝ «ԺԵ» խմբագրի նկատմամբ ակնհայտորեն ցուցաբերվել է խտրական մոտեցում՝ չի կիրառվել 2003 թվականին Ազգային ժողովի ընդունած «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքը, որը թույլատրում է 27 տարին լրացած, զինծառայություն չանցած քաղաքացուն՝ որոշակի վճարի դիմաց ազատվել քրեական պատասխանատվությունից: Եվ թեպետ Արման Բաբաջանյանը դիմել է 27 տարին լրացած, 1992 թվականի աշնանային զորակոչից մինչեւ 2005 թվականը պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների խնդիրներով զբաղվող համապատասխան հանձնաժողովին՝ իր նկատմամբ վերոհիշյալ օրենքը կիրառելու խնդրանքով, հանձնաժողովը մինչ տարեվերջ դեռ պատասխան չէր տվել: Արման Բաբաջանյանի գործը 2006 թվականի վերջին դեռեւս քննվում էր վերաքննիչ դատարանում՝ փաստաբանների վերաքննիչ բողոքի հիման վրա:



## ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՈՒՄԸ ՄԵԴԻԱ ՈԼՈՐՏՈՒՄ, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՏՊԱԳԻՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

Հայաստանում զանգվածային տեղեկատվության հիմնական աղբյուրը հեռուստատեսությունն է: Հեռարձակման ոլորտում արդարացի մրցակցությունն ապահովելու կոչված է ամենից առաջ կարգավորող մարմինը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ), որը մրցույթով բաշխում է ռադիոհաճախականությունները եւ պարտավոր է հետեւել, որ մասնավոր հեռուստառադիոընկերությունները պահպանեն իրենց լիցենզիայի պայմաններն ու ՀՀ օրենսդրության պահանջները:

Ենթադրվում է, որ այդ մարմինը պետք է լինի անկախ: Սակայն նրա ձեւավորման կարգը, ըստ որի հանձնաժողովի բոլոր անդամներին նշանակում էր բացառապես երկրի նախագահը, արդեն վկայում է քաղաքական կախվածության մասին: Քանի որ 2005 թվականին փոփոխված Սահմանադրությանը համապատասխան «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի՝ կարգավորող մարմնի ձեւավորմանը վերաբերող դրույթում նախատեսված ուղղումները եւ լրացումները (*տես՝ սույն գեկույցի «ԶԼՄ եւ տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությունը եւ փոփոխությունները 2006 թվականին» բաժնում*) դեռեւս քննարկվում են պետական կառույցներում եւ հասարակական կազմակերպություններում ու ձեւավորման կարգը դեռեւս հաստատված չէ, ուստի վաղ է խոսել ՀՌԱՀ-ի անկախության խնդրի լուծման վրա դրանց դրական ազդեցության մասին: Երկրի լրագրողական կազմակերպությունները արտահայտել են իրենց դիրքորոշումը հեռարձակման ոլորտին առնչվող սահմանադրական եւ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ (*տես՝ նույն բաժնում*):

ՀՌԱՀ-ի անկախությունն ապահովելու անհրաժեշտությունը բազմիցս ընդգծվել է նաեւ ազդեցիկ միջազգային կազմակերպությունների, ամենից առաջ Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ-ի՝ Հայաստանին վերաբերող մի շարք փաստաթղթերում: Այսպես, ԵԱՀԿ մանուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտիի 2006 թվականի հուլիսի 26-ին հրապարակված «Մանուլի ազատության իրավիճակը Հայաստանում» հաշվետվության մեջ նշվում է, որ այս խնդրի օրենսդրական փոփոխությունները չպետք է սահմանափակվեն «կիսանախագահական-կիսախորհրդարանական» խորհրդով եւ որ դրա կազմը պետք է «արտացոլի երկրի քաղաքական-հասարակական բազմազանությունը եւ պետք է ներառվեն ՀԿ-ներ եւ մասնագիտական ընկերակցություններ»:

Միաժամանակ, միջազգային կառույցներն ու տեղական լրագրողական միավորումները լրջորեն քննդատում են նաեւ հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթների պրակտիկան: Այդ քննադատությունը վերաբերում է գլխավորապես երկու խնդրի՝ հայտերի քննարկման անբավարար թափանցիկությանը եւ հաղթողներին որոշելու չափանիշների անհստակությանը:

Մրցույթների արդյունքների արդարացիությունը հաճախ է կասկածներ առաջացրել եւ առաջացնում ինչպես մասնագիտական շրջանակներում, այնպես էլ հասարակության մեջ ընդհանրապես: Եվ թեպետ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը հնարավորություն է տալիս հայտերի քննարկման ու գնահատման համար ներգրավել հասարակական փորձագետների, իսկ լրագրողական միավորումները ոչ միայն պատրաստակամություն են հայտնում, այլեւ անհրաժեշտ են համարում իրենց մասնակցությունն այդ գործընթացին, ՀՌԱՀ-ը հրաժարվում է իր գործունեության նման թափանցիկությունից:

Ինչ վերաբերում է հաղթողին որոշելու հիմնավորմանը, ապա այստեղ էլ, չնայած «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի այն պահանջին, որ «Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիր տալը մերժելու... մասին որոշումները», ՀՌԱՀ-ը չի պահպանում այդ դրույթը: Ի դեպ, այս պահանջը օրենքի մեջ է մտցվել 2003

թվականի դեկտեմբերի 29-ի փոփոխություններով, եւ հանուն արդարության պետք է նշենք, որ դրանից հետո Հանձնաժողովը մրցույթի մասնակիցներին սկսել է տրամադրել իր որոշումների ավելի ընդարձակ տեքստ, սակայն դրանից էությունը համարյա չի փոխվել: Եթե նախկինում ուղղակի նշվում էր, որ մրցույթի արդյունքները հաշվի առնելով ընկերությունը ճանաչվել է լիցենզավորման մրցույթի հաղթող, ապա փոփոխությունից հետո նշվում է հաճախականությունը, մրցույթի մասնակցի գտնվելու վայրը, որոշման ամիս-ամսաթիվը, ինչպես նաեւ հիմնավորում, թե համաձայն ներկայացված հայտի, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենքի պահանջների ու մրցույթի պայմանների» ՀՌԱՀ-ը տվյալ ընկերությանը հաղթող է ճանաչում:

Լրատվամիջոցների աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը, որը «Հեռուստատեսության եւ ռադիոյի կարգավորում» ծրագրի շրջանակներում իրականացրել է ՀՌԱՀ-ի կողմից անցկացված մրցույթների վերլուծություն, համարում է, որ հաղթողին որոշելու նման հիմնավորումը չի համապատասխանում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ 50-րդ հոդվածին: Այս գնահատականին համաձայն են նաեւ այլ լրագրողական միավորումներ՝ Երեւանի մամուլի ակումբը, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն, Հայաստանի ժուռնալիստների միությունը, Լրագրողների «Ասպարեզ» ակումբը (Գյումրի): Նրանց կարծիքով, հեռարձակման լիցենզավորման մրցույթների հաղթողներին որոշելիս պետք է ելնել ամենից առաջ օրենքում հիշատակված 4 հիմնական չափանիշներից՝ սեփական արտադրության հաղորդումների գերակշռությունից, հայրենական արտադրության հաղորդումների գերակշռությունից, տեխնիկական եւ ֆինանսական հնարավորություններից, անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունից: Ընդսմին, որոշումը պետք է պարունակի այս չափանիշներից յուրաքանչյուրի գնահատումից բխող հիմնավորումներ:

Այսպիսով, հայտերի քննարկման թափանցիկության եւ ընդունվող որոշումների անբավարար հիմնավորվածության խնդիրները ՀՌԱՀ-ի անցկացրած մրցույթների արդյունքների արդարացիության լուրջ կասկածներ են առաջացնում: Կայացած եւ մեծ լսարան ունեցող «Ա1+» հեռուստաընկերությունը եթերից զրկվել է 2002 թվականի ապրիլին, եւ այն փաստը, որ «Ա1+»-ը 2002 - 2006 թվականներին 12 անգամ տարբեր հաճախականությունների մրցույթների հայտ է ներկայացրել եւ բոլորն էլ մերժվել են, իսկ առավելությունը տրվել է նրա մրցակիցներին՝ հաճախ նաեւ անհայտ ընկերությունների, վկայում է մրցույթների արդարացիությանը կասկածելու հիմնավորվածության եւ ընդհանրապես ՀՌԱՀ-ի անկախության խնդրի չլուծված լինելու մասին, ինչը բազմիցս մատնանշել են եւ երկրի լրագրողական միավորումները, եւ միջազգային կառույցները: Այսպես, ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի 2004 թվականի ապրիլի 28-ի 1374 բանաձեւը կոչ է անում ՀՀ իշխանություններին՝ «ստեղծել արդար պայմաններ լրատվամիջոցների բնականոն գործառնության համար, հատկապես հեռուստաընկերություններին հեռարձակման արտոնագիր եւ մասնավորապես «Ա1+»-ին հեռուստաալիք տրամադրելու առնչությամբ»: Իշխանություններն, իրենց հերթին, հղում են կատարում ՀՌԱՀ-ի ձեւական անկախությանը, եւ հետեւաբար՝ այդ մարմնի որոշումների ընդունմանը միջամտելու անհնարինությանը, ինչը չի համապատասխանում փաստացի իրականությանը:

Այս մոնիտորինգի ընթացքում անցկացրած զրույցների ժամանակ մի շարք ընկերությունների ներկայացուցիչներ խոստովանեցին, որ հեռարձակման ոլորտում բարեխիղճ եւ արդար մրցակցության բավարար պայմաններ չեն ապահովվում: Խնդիրները պայմանավորված են եւ օրենսդրության լուրջ թերություններով, եւ Ազգային հանձնաժողովի կողմից մի շարք կարգավորիչ գործառնություններ չկատարելով, եւ ընդհանրապես բիզնեսում, մասնավորապես հեռարձակման ոլորտում իրական շուկայական հարաբերությունների չձեւավորված լինելով:

Թեպետ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ունի հակամենաշնորհային դրույթ, ըստ որի՝ «Ֆիզիկական եւ իրավաբանական անձինք կարող

են ոչ ավելի, քան միեւնույն սփռման գոտում եթերային հեռարձակում ունեցող մեկ հեռուստառադիոընկերության կամ մեկ հեռուստաընկերության եւ (կամ) մեկ ռադիոընկերության արտոնագրատեր լինել», Հայաստանում կան մի քանի հեռարձակող ընկերություններ ունեցող անձինք: Այս հանգամանքը նշված է նաեւ ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի վերը հիշատակված հաշվետվության մեջ:

Հեռուստաընկերությունների որոշ ներկայացուցիչներ, իրենց հերթին, փաստեցին, որ գերակշռող դիրք ստացած հեռարձակողներն այդ դիրքն օգտագործում են լրացուցիչ գովազդ ներգրավելու համար՝ ակնհայտ ցածր գներ սահմանելով, դրանով իսկ խախտելով արդար մրցակցության սկզբունքը: Նման գործողությունները անառողջ մթնոլորտ են ստեղծում եւ բացասաբար են ազդում դիտարկվող ոլորտի ողջ իրավիճակի վրա: Մասնավորապես, մյուս հեռարձակողները նույնպես ստիպված են լինում արհեստականորեն ցածրացնել գովազդային սակագները, եւ որպեսզի փոխհատուցեն եկամուտների կրճատումները՝ ավելացնում են դրա հեռարձակման ծավալները՝ նշանակալիորեն գերազանցելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանվածը:

Ինչպես ցույց են տալիս IREX միջազգային կազմակերպության Հայաստանի ներկայացուցչության ՁԼՄ-ների աջակցության ծրագրի անցկացրած մոնիտորինգի արդյունքները, Հայաստանում հետազոտված բոլոր հեռուստաընկերությունները խախտում են եթերում գովազդի ծավալին վերաբերող օրենսդրական նորմերը: Մասնավոր հեռարձակողներից նման խախտումներ ամենից շատ արձանագրվել են Հայկական երկրորդ հեռուստաալիքում: Այստեղ, ըստ IREX-ի տվյալների, օրվա առանձին ժամերին (օրինակ՝ 9:00 - 10:00, 13:30 - 14:30, 17:00 - 20:00 եւ 21:30 - 23:00) սահմանված նորմաները գերազանցվում են ավելի քան 1,5 - 2 անգամ: Նման խախտումները, սակայն մի փոքր ավելի քիչ ծավալներով, բնորոշ են մյուս հետազոտված հեռուստաընկերություններին եւս: Այսպես, հատկապես երեկոյան ժամերին (այդ թվում «փրայմ-թայմ»-երին) օրենքով 1 ժամում գովազդի ծավալի թույլատրված սահմանները «Շանթ» ՀԸ-ում գերազանցվում են 2, «Կենտրոն» ՀԸ-ում՝ մինչեւ 1,7, «Արմենիա» ՀԸ-ում՝ մինչեւ 1,5 անգամ:

Եթե հեռարձակման ոլորտում հակամենաշնորհային դրույթների խախտումների դեպքում ՀՌԱՀ-ն օրենքով միջամտելու եւ իրավիճակը շտկելու լիազորություններ չունի (դա ավելի շուտ ՀՀ տնտեսական մրցակցության հանձնաժողովի իրավասությունն է), ապա եթերում գովազդի ծավալների գերազանցումը կանխելու իրավունք ունի, սակայն դրանք չի կիրառում:

Սա վերաբերում է նաեւ թունդ ալկոհոլային խմիչքների (բացի կոնյակից) գովազդի օրենսդրական արգելքին: «Ինտերնյուսի» իրականացրած հետազոտության արդյունքների համաձայն, հեռուստաընկերությունների մեծ մասը խախտում է թունդ ալկոհոլային խմիչքների գովազդի արգելքը: Ընդ որում՝ հեռարձակողները բերում են կասկածելի փաստարկ այն մասին, թե հեռուստադիտողներին ներկայացվում է միայն առեւտրային պիտակը, եւ ոչ թե կոնկրետ խմիչքը: Իրականում ցուցադրվող հոլովակներում ալկոհոլային արտադրանքի գովազդն ակնհայտ է: Այս հարցում եւս ՀՌԱՀ-ը չի կատարում իր պարտականությունը եւ չի ազդում իրավիճակի վրա, թեպետ ունի համապատասխան լիազորությունները:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ նշված խախտումները բնորոշ են նաեւ Հայաստանի հանրային հեռուստատեսությանը (Հ1): Ըստ IREX-ի տվյալների, այստեղ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով թույլատրված գովազդի ծավալը (հանրային հեռարձակողի համար այն չպետք է գերազանցի ընդհանուր հաղորդումների հինգ տոկոսը) գերազանցվում է միջին հաշվով 3 անգամ: Այն դեպքում, երբ հեռուստաընկերությունն իր հանրային գործառույթներն իրականացնելու համար նշանակալի ֆինանսավորում է ստանում պետական բյուջեից: Ընդսմին՝ բովանդակային առումով էլ Հ1-ը նախապատվություն է տալիս առեւտրային տեսակետից ձեռնտու, գովազդային հոսքերն ավելացնելու ընդունակ նախագծերին՝ ի վնաս «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում նշված՝ հանրային հեռուստաալիքի գերակայությանը՝ ապահովելու քաղաքացիների

սահմանադրական իրավունքը «ազատորեն ստանալ քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի եւ պատմության, մարզական, զվարճալի եւ հանրության համար կարելու ու նշանակալից այլ տեղեկատվություն»: Այս ամենը հանգեցնում է հեռարձակման եւ գովազդային շուկաներում Հ1-ի գերիշխանությանը եւ մրցակցության անարդարացի պայմաններ է ստեղծում:

Գովազդային գործունեության նույն խախտումները բնորոշ են նաեւ ռադիոհեռարձակմանը: Գովազդի թույլատրելի ծավալների գերազանցմանը, նրանում թունդ ալկոհոլային խմիչքները ներառելուն ավելանում է եւս մեկ խնդիր. գովազդի հեռարձակումը օտար լեզուներով, մասնավորապես՝ ռուսերեն: Այս խնդիրը, ինչպես պնդում են ռադիոընկերությունները, կապված է օրենսդրական թերության հետ: Մի կողմից, ինչպես սահմանված է «Գովազդի մասին» ՀՀ օրենքով, ապրանքները եւ ծառայությունները պետք է գովազդվեն հայերեն, իսկ անհրաժեշտության դեպքում, գովազդատուի հայեցողությամբ, գովազդի շարադրանքը կարող է զուգորդվել նաեւ օտար լեզուներով՝ լուսագրերով, մյուս կողմից՝ այս պահանջը հաշվի չի առնում ռադիոյի առանձնահատկությունը. այստեղ լուսագրեր չեն կարող լինել: Ի հետեւանք՝ ռադիոհեռարձակողները ուղղակիորեն խախտում են օրենքը:

Հեռարձակման ոլորտում այսքան տարածված օրինախախտումները վտանգ են ստեղծում, որ ՀՌԱՀ-ը կարող է ընտրովի պատժամիջոցներ կիրառելի այս կամ այն ընկերության նկատմամբ, եթե այն, ասենք, բավարար լոյալություն չցուցաբերի իշխանության հանդեպ: Նման նախադեպեր արդեն կան: Մասնավորապես, փորձ արվեց տուգանել «Վան» ռադիոկայանին՝ ռուսերեն գովազդի համար, իսկ «Հայրենիք» հեռուստաընկերությանը՝ ստիպված եղավ տուգանք վճարել ֆրանսիական «Մեցցո» ալիքի ծրագրերի վերահեռարձակման (առանց համապատասխան պայմանագրի) համար, թեպետ նման բնույթի խախտումները բնորոշ են նաեւ այլ ընկերությունների: Ստեղծված իրավիճակը ՁԼՄ-ների վրա քաղաքական ճնշումներ բանեցնելու հնարավորություն է ստեղծում, ինչպես նաեւ իր մեջ կոռուպցիոն վտանքներ է պարունակում:

Ընդհանուր առմամբ, ինչպես պնդում են հեռուստառադիոընկերությունների որոշ ներկայացուցիչներ, հեռարձակողների՝ իշխող վերնախավին մոտ լինելու աստիճանից մեծապես կախված է ստացվող գովազդի ծավալը, այսինքն տեղի է ունենում քաղաքականության եւ բիզնեսի միաձուլում: Իշխանությունների կողմից ՁԼՄ-ների՝ «յուրայինների» եւ «եւ ոչ այնքան յուրայինների» (իսկ ընդդիմադիր տպագիր լրատվամիջոցների դեպքում՝ «օտարների») բաժանում գոյություն ունի նաեւ պետության առաջին դեմքերի արտասահմանյան ուղեւորությունների ժամանակ նրանց ուղեկցող լրագրողների կազմը որոշելիս կամ՝ պաշտոնական աղբյուրներից տեղեկություններ տրամադրելիս. ոմանց շուտ, ոմանց՝ ուշ, ինչը նույնպես ՁԼՄ-ների համար ակնհայտ անհավասար պայմաններ է ստեղծում:

Հեռարձակման ոլորտում ստեղծված իրավիճակը հատկապես մտահոգում է նաեւ Հայաստանում թվային հեռարձակման սպասվող ներդրման կապակցությամբ: Այս դեպքում առավել հրատապ է դառնում կարգավորող մարմնի ինչպես ձեւական, իրավական, այնպես էլ փաստացի անկախությունը: Ինչպես ՀՀ-ում թվային հեռարձակման ներդրման ծրագրի նախագծի իր վերլուծության մեջ նշում է ԵԱՀԿ եւ Եվրոպայի խորհրդի փորձագետ Քեթրին Նիման-Մեթկալֆը, քանի որ անալոգային հեռարձակումից թվայինի անցնելու սկզբնական փուլերում մրցակցության ապահովումը դժվարություններ է զուգորդվում, անհրաժեշտ է սեփականության համակենտրոնացումը կանխելու միջոցառումներ ձեռնարկել եւ խուսափել շուկայի մենաշնորհացումից: Որպեսզի որոշ ընկերություններ չհայտնվեն գերադասելի պայմաններում քան ուրիշները, նոր հեռարձակման ինֆրակառույցների (չնայած դրանց սահմանափակ լինելուն) մատչելի դարձնելը պետք է լինի արդարացի՝ մրցակցության համար առավելագույն հավասար պայմաններ ստեղծելու միջոցով: Այդ պատճառով, ինչպես խորհուրդ է տալիս փորձագետը, անհրաժեշտ է, որ կարգավորող մարմնի

գործունեությունը լինի անաչառ ու թափանցիկ, իսկ ցանցային օպերատորը եւ ապագա թվային հեռարձակողները ընտրվեն բաց մրցույթով:

ՀՀ կառավարության հանձնարարությամբ միջգերատեսչական աշխատանքային խումբը նշակել է թվային հեռարձակումը ներդնելու ծրագրի նախագիծ: Սակայն այդ փաստաթուղթը մի շարք էական թերություններ ու բացթողումներ ունի: Մասնավորապես, ըստ նախագծի՝ 2007 թվականի հունվարից պետք է դադարեցվի անալոգային հեռարձակման լիցենզիաներ հատկացնելը: Հետեւանքը կարող է լինել այն, որ անալոգային հեռուստառադիոընկերությունները առաջիկա մի քանի տարիներին կդադարեցնեն իրենց գործունեությունը, իսկ թվայիններն էլ դեռ ստեղծված չեն լինի:

Բացի այս, նախատեսվում է ներմուծել «սոցիալական փաթեթ» հասկացությունը, ինչը նշանակում է բնակչության աղքատ խավերին դոտացիայի հատկացում՝ հանրային եւ մասնավոր ալիքների նվազագույն փաթեթ ստանալու համար: Իսկ թե այդ փաթեթի մեջ որ մասնավոր հեռուստաընկերությունները կմտնեն, կորոշի կառավարությունը: Այսպիսի մոտեցումը անկախ հեռարձակման սկզբունքների խախտում է: Նման որոշումները պետք է լինեն բացառապես անկախ կարգավորող մարմնի, այլ ոչ թե կառավարության իրավասությունը: Նախագիծը ենթադրում է նաեւ բյուջետային նշանակալի հատկացումներ պետական հեռարձակող օպերատորին, ինչը կհանգեցնի վերջինիս եւ մասնավոր օպերատորների միջեւ հավասարակշռության խախտման եւ հեռահաղորդակցության շուկայի մոնոպոլացման: Այլ կերպ ասած՝ նախագծի այս եւ այլ դրույթները, ընդհանուր առմամբ, հակասում են շուկայական ազնիվ մրցակցության սկզբունքներին՝ ինչպես բյուջետային ներդրումների, այնպես էլ հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման, նրանում պետական քաղաքականության տեսակետից:

Տպագիր լրատվամիջոցների ոլորտում պետության միջամտությունը ավելի քիչ է, քան հեռարձակման բնագավառում: Սակայն թերթերի դերն էլ տեղեկատվական շուկայում ծայրահեղորեն փոքր է: Թերթերից յուրաքանչյուրի օրական տպաքանակը, միջին հաշվով, 3000 - 4000 օրինակ է, ընդ որում՝ դա էլ հաճախ սպառվում է ոչ ամբողջությամբ: Համապատասխանաբար՝ գովազդային մուտքերն էլ չափազանց աննշան են: Ի վիճակի չլինելով գոյատևել այս՝ հիմնականը համարվող եկամուտների հաշվին, տպագիր հրատարակությունների մեծ մասը ստիպված է օգտվել հովանավորչական գումարներից, իսկ ավելի հաճախ՝ զանազան քաղաքական եւ (կամ) օլիգարխիկ խմբերի ուղղակի ֆինանսավորումից եւ կախված է նրանցից: Նման կարգի հոսքերը, իբրեւ կանոն, թերթերի խմբագրությունների եկամուտների մեծ մասն են կազմում: Այդ պատճառով խոսել շուկայական հարաբերությունների եւ մրցակցության մասին հնարավոր չէ:

Ինչպես նշված է ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի վերոհիշյալ հաշվետվության մեջ, նման պայմաններում «Լրատվամիջոցների բազմազանությունը խրախուսելու համար կառավարությունը պետք է դիտարկի տպագիր մամուլի հատուկ պաշտպանության ներդրումը, օրինակ՝ տարածման օժանդակ համակարգ, ԱԱՀ-ի կամ հարկային արտոնություններ»: Այնինչ 2004 թվականի դեկտեմբերին ընդունված «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է տպագիր մամուլը բաժանորդագրությամբ տարածող ընկերությունների գործունեության լիցենզավորում, ինչն էլ իր հերթին ենթադրում է լիցենզիայի համար վճար, որը անտանելի բեռ կարող է լինել փոքր կազմակերպությունների համար: Իսկ վերջիններիս դուրս գալը շուկայից հղի է այստեղ մրցակցության դադարեցմամբ եւ մոնոպոլացմամբ, ու բաժանորդագրությամբ տարածումը կկենտրոնացվի «Հայփոստ» ընկերության ձեռքին:

Հրատապ է մնում տպագիր լրատվամիջոցների հարկային բեռի թեթևացումը: Դեռեւս 1997 թվականին լրագրողական կազմակերպությունները դիմեցին իշխանություններին՝ առաջարկելով թերթերն ու հանդեսները ազատել ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ): Կառավարությունն էլ այլ գաղափար առաջ քաշեց՝ տպագիր

լրատվամիջոցներին աջակցել պետական բյուջեից սուբսիդավորմամբ: Դրա իրականացման համար ստեղծվեց հանձնաժողով, որի մեջ մտան պետական կառույցների եւ լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Որպեսզի միջոցներն արդարացի բաշխվեն, լրագրողական կազմակերպություններն առաջարկեցին կիրառել խմբագրությունների կողմից տարվա ընթացքում վճարված հարկերի համամասնությամբ հրատարակություններին ֆինանսավորելու սկզբունքը: Սակայն այս մոտեցումն իշխանությունների կողմից չընդունվեց: Հանձնաժողովը գործեց երկու տարի, հետագայում այն այլեւս չհավաքվեց, եւ պետությունն ինքն էր բաշխում տպագիր ՁԼՄ-ների աջակցության համար նախատեսված բյուջետային միջոցները:

2000 թվականին հայկական մամուլի դեմքը ներակայացնող հիմնական համազգային թերթերը հրաժարվեցին սուբսիդիաներից, եւ այդ ժամանակից ֆինանսական օգնություն են ստանում հիմնականում գրական-մշակութային, գիտական, մանկապատանեկան, տարածաշրջանային հրատարակությունները, ինչպես նաեւ՝ ազգային փոքրամասնությունների պարբերականները: Ընդ որում, կառավարության որոշմամբ մանկական պարբերականները ֆինանսավորվում են պետբյուջի առանձին տողով:

2003 թվականին Հայաստանի ժուռնալիստների միության նախաձեռնությամբ երկրի նախագահը ընդունեց մարզային եւ քաղաքային թերթերի ղեկավարներին քննարկված խնդիրների թվում, բարձրացվեց նաեւ այն հարցը, որ մի քանի տարածաշրջանային հրատարակություններ անհիմն կերպով չեն ներառնվել սուբսիդավորվող թերթերի ցանկում: Նախագահը կարգադրեց իր ֆոնդից 2 մլն. դրամ հատկացնել՝ հիշյալ հրատարակություններին աջակցելու համար: 2005 թվականին ՀԺՄ միջնորդությամբ կասեցվեց տպագիր պարբերականների սուբսիդավորման մասին կառավարության որոշման կատարումը, քանի որ ցուցակում ընդգրկվել էին մի շարք չհրատարակվող թերթեր եւ հանդեսներ, իսկ որոշ տպագրվողների օգնություն նախատեսված չէր: 2006 թվականին, չնայած նախորդ տարիների բողոքներին, աջակցություն ստացող հրատարակությունների ցանկում դարձյալ հայտնվեցին անհայտ անուններ, եւ ժուռնալիստների միությունը բոյկոտեց այդ գործընթացին իր մասնակցությունը՝ անհիմաստ համարելով միեւնույն պաշտոնյաներին նույն պահանջով դիմելը:

Սուբսիդավորման հստակ չափանիշների բացակայության պայմաններում ձեւավորվել է մի արատավոր պրակտիկա, երբ մարդիկ բացում էին հրատարակություն, ստանում պետական օգնություն, իսկ հետո կամ հրատարակում էին թերթի (կամ հանդեսի) մեկ-երկու համար կամ ոչինչ էլ չէին հրատարակում: Իսկ գործող շատ խմբագրություններ չէին արժանանում ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության հրատարակչական գործի գործակալության (որը զբաղվում է սուբսիդիաների բաշխմամբ) ուշադրությամբ: Այսպես, Կոտայքի մարզի երեք չգործող հրատարակությունների, որոնց հիմնադիրը միեւնույն մասնավոր ընկերությունն է, 2006 թվականին օգնություն է հատկացվել, իսկ մարզում միակ հայտնի եւ պարբերաբար հրատարակվող թերթին՝ ոչ: Պետական միջոցների այսպիսի անարդարացի բաշխման օրինակներ, ինչպես վկայում են ՀԺՄ իրականացրած վերլուծությունը, ամենեւին էլ հատուկենտ չեն:

ՀԺՄ ղեկավար Աստղիկ Գեւորգյանի գնահատմամբ, հրատարակությունների ընտրության սահմանված, թեպետ եւ անբավարար, չափանիշները հաճախ անտեսվում էին, իսկ ֆինանսական օգնության չափերը որոշվում էին կամայականորեն: Իբրեւ հետեւանք՝ տեղի ունեցավ 2006 թվականին մամուլի աջակցության համար նախատեսված նշանակալի միջոցների՝ ավելի քան 182 մլն. դրամի, փոշիացում:

2007 թվականի սուբսիդիաների հարցը քննելու համար վերոհիշյալ գործակալությունը (ՀԺՄ պահանջի եւ ՀՀ վարչապետի միջամտության շնորհիվ) հանձնաժողով ձեւավորեց, որի կազմում ընդգրկվեցին երկու ստեղծագործական միությունների ներկայացուցիչներ՝ Հայաստանի ժուռնալիստների միության

նախագահը եւ Հայաստանի գրողների միության քարտուղարը: Այդ հանձնաժողովի մյուս երեք անդամները նույն գործակալությունից էին: ՀԺՄ ղեկավար Աստղիկ Գեւորգյանի կարծիքով, միջոցների բաշխմամբ պետք է զբաղվի անկախ փորձագիտական հանձնաժողովը: Ինչ վերաբերում է տպագիր ՁԼՄ-ների սուբսիդավորման ավելի հստակ եւ արդարացի չափանիշների մշակման անհրաժեշտությանը, ապա այստեղ, ինչպես համարում է ՀԺՄ ղեկավարը, առավել անաչառ մոտեցում կլինի հրատարակությունների համամասնորեն ֆինանսավորումը՝ հաշվի առնելով տարվա ընթացքում նրանց վճարած հարկերը, ինչպես առաջարկում են մի շարք լրագրողական կազմակերպություններ:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք հեռարձակման եւ տպագիր լրատվամիջոցների ոլորտներում վերը նկարագրված իրավիճակը, կարելի է արձանագրել, որ պետությանը դեռեւս չի հաջողվել անկախ լրատվամիջոցների կայացման ու զարգացման, նրանց արդար ու ազատ մրցակցության բարենպաստ պայմաններ ստեղծել:

## 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՎՈՐՈՒՄՆԵՐ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԱՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԱՏ ԳՈՐԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1990 թ. օգոստոսի 23-ին անկախության մասին հռչակագրի ընդունմամբ Հայաստանում բազմակուսակցական համակարգի զարգացման հիմքը դրվեց: Անկախության հռչակագրի դրույթներին համապատասխան, 1991թ. փետրվարի 20-ին ընդունվեց «Հասարակական քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը: Այն կուսակցություններին գրանցվելու հնարավորություն տվեց: 2002 հուլիսի 3-ին ընդունվեց «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, որով արդեն կուսակցությունների համար որակապես նոր պահանջներ սահմանվեցին: Այսպես՝ ըստ օրենքի 5-րդ հոդվածի «Կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 200 անդամ», ինչպես նաև՝ «առանձնացված ստորաբաժանումներ ՀՀ մարզերի առնվազն 1/3-ում, ներառյալ՝ Երեւանում»:

2004 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքով սահմանվեց. «Պետական գրանցման պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 2000 անդամ, ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ոչ պակաս, քան 100 անդամ, եւ տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, ներառյալ՝ Երեւան քաղաքում, որի մասին գրավոր տեղեկացում է պետական լիազորված մարմնին» (օրենքի 5-րդ հոդվածին ավելացված 11-րդ մաս): Առաջին հայացքից այս պահանջները, որոնց նպատակը կուսակցությունների խոշորացումն է եւ դրանց սոցիալական բազայի ձեւավորումը, կարելի է միանգամայն անհրաժեշտ համարել, սակայն գործնականում դրանք ձեւական բնույթ են կրում: Կուսակցությունների անդամների ցուցակները ստուգելու մեխանիզմ ՀՀ արդարադատության նախարարությունը չէր մշակել: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի գործողության մեջ մտնելու պահից դրա 33 հոդվածի 3-րդ մասի հիմքով (այն է՝ մարզերում ստորաբաժանումներ ստեղծելու, անդամների սահմանված նվազագույն թիվ հավաքագրելու պահանջները չբավարարելը, կամ պահանջները կատարելը, բայց այդ մասին պետական լիազորված մարմնին չժամուցելը) ընդհանուր իրավասության դատարանների վճիռներով լուծարվել է 49 կուսակցություն: Օրենքով նախատեսված ցուցակներ ներկայացրած կուսակցությունները արդարադատության նախարարության կողմից վերագրանցվեցին:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածով կուսակցության իրավաբանական գոյության հնարավորությունը կախման մեջ էր դրվել համապետական ընտրություններում դրա մասնակցությունից եւ քվեների անհրաժեշտ որոշակի քանակ հավաքելուց: Սահմանվել էր, որ. «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե չի մասնակցել ՀՀ Ազգային ժողովի վերջին երկու ընտրություններին, կամ դրանցից որեւէ մեկում նրա ընտրական ցուցակը ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի մեկ տոկոսից պակաս ձայն»:

«Կուսակցությունների մասին» օրենքը ընդունումից հետո երեք անգամ (2002թ., 2003թ., 2005թ.) փոփոխությունների եւ լրացումների ենթարկվեց, սակայն այդ դրույթը որոշակի փոփոխություններով պահպանվեց: Այն «Կուսակցությունների մասին» օրենքի 2002 թ. դեկտեմբերի 2-ին ընդունված փոփոխություններով եւ լրացումներով մեղմացվեց եւ սահմանվեց, որ «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե ԱԺ իրար հաջորդող ցանկացած 2 ընտրություններից յուրաքանչյուրում նրա ընտրական ցուցակը ստացել է ընտրությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին



կողմ տրված ձայների ընդհանուր թվի եւ անճշտությունների թվի գումարի 1%-ից պակաս ձայն»:

Այս պահանջը եւս Վենետիկի հանձնաժողովը իր փորձագիտական փաստաթղթում (CDL-EL(2006)026 rev2, Վենետիկ, 8 հունիսի 2006) մտահոգիչ է համարել եւ գնահատել Սահմանադրությանը չհամապատասխանող՝ հորդորելով այն վերացնել: ԶԶ Մարդու իրավունքների պաշտպանը 2006թ. դիմեց Սահմանադրական դատարան ԶԶ Սահմանադրությանն այս դրույթների համապատասխանության հարցով: Սահմանադրական դատարանը նույն թվի դեկտեմբերի 22-ին այդ դրույթները ճանաչեց Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Ընդհանուր առմամբ «Կուսակցությունների մասին» ԶԶ օրենքը, ըստ էության, չի խոչընդոտում կուսակցությունների գրանցումն ու գործունեությունը: Սակայն գործնականում Հայաստանում ապահովված չեն կուսակցությունների մրցակցության հավասար պայմաններ:

Անդրադառնալով վերջին շրջանում կուսակցությունների ձեւավորման եւ զարգացման դիմամիկային:

Մինչ «Հասարակական քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունումը (1991 թ.) քաղաքական միավորումները, բացի կոմունիստական կուսակցությունից, գործում էին որպես ոչ ֆորմալ կամ էլ որպես հասարակական կազմակերպություններ: Օրենքի ընդունումից անիջապես հետո գրանցվեց 20 կուսակցություն, մինչ 1995թ., այսինքն մինչ նոր խորհրդարանական ընտրությունները դրանց թիվը հասավ 47-ի: Եթե 1991-1992թ.թ. նոր ստեղծված եւ ավանդույթներ չունեցող բազմակուսակցական համակարգում մեծ թվով կուսակցությունների առաջացումը բնական գործընթաց էր, ապա 1994-1995թ.թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին շատ կուսակցություններ հիմնականում ստեղծվեցին արհեստականորեն, կոնյուկտուրային նպատակներով: 1991-99 թվականներին կուսակցությունների ստեղծման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ այժմ քաղաքական դաշտում առկա քիչ թե շատ ազդեցիկ կուսակցությունները, բացի Հայաստանի ժողովրդական կուսակցությունից (ԶԺԿ), գրանցվել են 1991-1992թ.թ.: Դրանք են՝ Հայ յեղափոխական դաշակցությունը (ԶԶԴ), Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ) եւ Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ):

1995 թվականից Հայաստանում սկիզբ դրվեց ազդեցիկ պաշտոնյաների, հատկապես ուժային ոլորտի ներկայացուցիչների կողմից կուսակցություն ստեղծելու եւ դրա միջոցով խորհրդարան մուտք գործելու ավանդույթին: Այս առումով հատկանշական է 1995թ. խորհրդարանական ընտրությունների նախաշեմին այն ժամանակվա ՆԳ նախարարի հովանավորությամբ գրանցված «Շամիրամ» կուսակցության ֆենոմենը, որն այդ ընտրությունների արդյունքում պատգամավորական տեղերի թվով զբաղեցրեց երկրորդ տեղը: 1995թ. 190 պատգամավորական տեղերից 3 ընդդիմադիր կուսակցությունները զբաղեցնում էին 15-ը (ՀԿԿ-ն՝ 7, ԱԺՄ-ն՝ 5, ԱԻՄ-ը՝ 3), 114 պատգամավոր ուներ «Հանրապետություն» դաշինքը, 8 պատգամավոր՝ «Շամիրամ» կուսակցությունը: 1995թ. խորհրդարանական ընտրություններում Հայաստանում հիմք դրվեց եւս մի ավանդույթի. իշխող կուսակցությունը (ՀՀՇ-ն), ոչ թե մրցակցեց ընդդիմադիր կուսակցությունների հետ, այլ իրեն նույնացնելով պետության հետ՝ օգտագործեց պետական բոլոր, հատկապես ուժային լծակները՝ իշխանությունը պահելու համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտողները 1995 թ. ընտրությունները որակեցին ազատ, բայց ոչ արդար: 1995թ. ընտրությունները կուսակցությունների զարգացմանը խոչընդոտող առաջին լուրջ հարվածն էին: Անբնական ու անտրամաբանական է, որ քաղաքական ուժը, տվյալ դեպքում ՀՀՇ-ն, 1995թ. հաղթելով մոտ 90%-ով, 1999թ. չհաղթահարեր 5%-ի շեմը: Այս համատեքստում պատահական չէր, անշուշտ, 1998թ. խորհրդարանում մեկ օրում ուժերի դասավորության կտրուկ փոփոխությունը:<sup>7</sup>

<sup>7</sup> ԶԶ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոյանի հրաժարականի հաջորդ օրը:

Ի վերջո, կուսակցությունների զարգացման մասին շատ մեծ վերապահումով կարելի է խոսել, քանզի 1991 թվականից հետո դասական իմաստով, այն է՝ ընտրությունների ճանապարհով, Հայաստանում փաստորեն իշխանություն չի փոխվել: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ 1999թ. ընտրություններում նախընտրական սուր պայքարի բացակայության պատճառով մեծ խախտումներ չարձանագրվեցին: Իշխանությունը փաստացի կրում էր ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: Նա կիրառեց միանգամայն այլ տարբերակ, ոչ թե ստեղծեց նոր կուսակցություն ինչպես 1995 թվականին «Շամիրամի» դեպքում էր, այլ «վերցրեց» ազդեցություն չունեցող մի քաղաքական ուժ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), եւ Կարեն Դեմիրճյանի ղեկավարած Հայաստանի ժողովրդական կուսակցության հետ ստեղծեց նախընտրական դաշինք: Այսպիսով, 1999թ. ընտրություններում ի հայտ եկավ հերթական քաղաքական ֆենոմենը. իրականում իշխանությունը փաստացի կրող Վազգեն Սարգսյանի եւ 1998 թվականից ժողովրդի ընկալմամբ թիվ մեկ ընդդիմադիր համարվող (իբրեւ 1998 թվականի նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանի գլխավոր մրցակից) Կարեն Դեմիրճյանի միջև ստեղծված «Միասնություն» դաշինքը մրցակցությունից դուրս էր եւ քիչ ազդեցություն ունեցող ՀՀԿ-ն հասավ իշխանության: Եթե 1999թ. Վազգեն Սարգսյանի ընտրությունը կանգ առներ ՀՀ-ում գրանցված 86 կուսակցություններից ցանկացածի վրա, ապա այսօր այդ ուժը կլիներ խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցություն:

2003 թ. ընտրություններում նույնպես չապահովվեց կուսակցությունների միջև հավասար մրցակցությունը եւ պատգամավորական տեղերի մեծ մասը ստացան իշխանության լծակներին տիրապետող եւ նույն 2003-ի նախագահական ընտրություններում գործող նախագահին սատարած ուժերը (ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ), որոնք էլ կազմեցին կոալիցիոն կառավարություն:

Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում էլ կուսակցությունների համար պետք է ապահովված լինեն լրատվամիջոցներից (հատկապես էլեկտրոնային) օգտվելու, ֆինասական միջոցներ հայթայթելու հավասար հնարավորություններ, հավաքների ազատություն, կուսակցական գրասենյակների ազատ գործունեություն:

Ըստ «Ժառանգություն» կուսակցության տրամադրած տեղեկատվության՝ 2005թ. աշնանից սկսած կուսակցության քաղաքացիական եւ քաղաքական գործունեության աշխուժացումից եւ հատկապես նոյեմբերի 25-ին նրա առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի կողմից առաջիկա սահմանադրական հանրաքվեի հետ կապված քաղաքացիական ժողովի եւ նստացույցի կազմակերպումից հետո, նրան ոչ միայն եթեր չի տրամադրվում, այլեւ մոնտաժվում են Րաֆֆի Հովհաննիսյանին պատկերած կադրերը: Վերջինիս կողմից հրավիրված մամուլի ասուլիսներին ներկա չեն լինում հեռուստաընկերությունները: 2005 թվականի դեկտեմբերի 9-ի ընդդիմության հանրահավաքից հետո Հայաստանի հանրային հեռուստատեսության «Հայլուր» լրատվական ծրագիրը Րաֆֆի Հովհաննիսյանի կնոջը՝ Արմենուհի Հովհաննիսյանին մեղադրեց ֆինանսական կեղծարարությունների ճանապարհով ամուսնու քաղաքական գործունեությունը ֆինանսավորելու մեջ՝ չբերելով որեւէ ապացույց: Իսկ Րաֆֆի Հովհաննիսյանին թերթերից մեկը անվանեց ամերիկյան լրտես: Հերթելու Արմենուհի եւ Րաֆֆի Հովհաննիսյանների պահանջները որեւէ իշխանամետ լրատվամիջոց, այդ թվում հեռուստաընկերությունները չբավարարեցին: Արմենուհի Հովհաննիսյանին պատասխանի հնարավորություն տվեց «Ազատություն» ռադիոկայանը:

2006թ. փետրվարին «Ժառանգություն» կուսակցությունը փորձում էր ճշտել հեռուստաընկերություններից, թե որքան արժե քաղաքական գովազդը: Կուսակցությանը առաջարկում էին կամ խիստ բարձր գներ, կամ միանգամից հրաժարվում էին եթեր տրամադրել՝ տարբեր պատճառաբանություններ բերելով:

Ըստ «Օրինաց երկիր» կուսակցության (ՕԵԿ) տրամադրած տեղեկությունների՝ ՕԵԿ-ի ղեկավարների մարզային այցելությունների ժամանակ տեղական

հեռուստաընկերությունները նկարահանում են ՕԵԿ-ի եւ բնակիչների հանդիպումները, սակայն չեն լուսաբանում տեղական լուրերով:

2006 թ. հոկտեմբերին Վանաձորի «Միգ» հեռուստաընկերությունը Արթուր Բաղդասարյանի հետ հարցազրույց պատրաստեց: Սակայն հարցազրույցը այդպես էլ եթեր չհեռարձակվեց: Ըստ «Միգ»-ի տնօրեն Սամվել Զարությունյանի, հարցազրույցի տեսագրությունը դիտելուց հետո ինքն առարկություններ է ունեցել Լոռու մարզային վարչակազմի եւ մի այլ տեղական հեռուստաընկերության՝ «Լոռիի» դեմ Արթուր Բաղդասարյանի քննադատական խոսքերի համար: Բացի այդ, նշեց Սամվել Զարությունյանը, հարցազրույցում առկա էր բացահայտ քաղաքական ագիտացիա, ինչի համար «Միգը» կարող էր տուգանվել: Այդ պատճառով, ընդգծեց «Միգ»-ի ղեկավարը, ինքն անձամբ, առանց որեւէ արտաքին ճնշման բանակցություններ է սկսել «Օրինաց երկրի» ներկայացուցիչների հետ՝ հարցազրույցի՝ իր կարծիքով անընդունելի հատվածները կրճատելու համար: Սակայն, ասաց Սամվել Զարությունյանը «Օրինաց երկիրը» համաձայնել է հանել միայն մարզային ղեկավարության հասցեին քննադատությունը, մյուս վիճահարույց հարցերում համաձայնություն ձեռք չբերվեց, եւ ինքը որոշեց հանել հարցազրույցը եթերից<sup>8</sup>:

Առնվազն 2000 անդամ, մարզերում մասնաճյուղեր, դրանցից յուրաքանչյուրում նվազագույնը 100 անդամ ունենալու օրենքի պահանջները կատարելը շատ կուսակցությունների համար բավական բարդ է, քանի, որ այն բացի ֆինանսական միջոցներից, պահանջում է գրասենյակների հիմնում, լրացուցիչ մարդկային ռեսուրսների ներգրավում: Մինչդեռ, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ձեռնարկությունների աշխատողները զգուշանում են դառնալ ընդդիմադիր կուսակցության անդամ:

2006 թվականի մարտին «Ժառանգություն» կուսակցությունը առանց վտարվեց իր կենտրոնական գրասենյակից (կուսակցությունն այն վարձակալում էր Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում, պայմանագրի ժամկետը մինչեւ 2007 թվականն էր): «Ժառանգության» վարչության անդամները եւ գրասենյակի անձնակազմը զրկվեցին գրասենյակում գտնվող փաստաթղթերից եւ կուսակցության կնիքից օգտվելու հնարավորությունից: Օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որոնց դիմել է կուսակցությունը (ոստիկանություն, դատախազություն, առաջին, երկրորդ եւ երրորդ ատյանների դատարաններ), որեւէ արդյունք չեն տվել: 2006 թ. մարտի 8-ին՝ «Ժառանգության» կենտրոնական գրասենյակի փակումից 4 օր անց, անհայտ անձինք մուտք են գործել գրասենյակի գլխադասային համակարգիչ, որը տեղեկատվություն էր պարունակում կուսակցության, նրա անդամների թվակազմի եւ գործունեության մասին: Զամակարգիչը փորձաքննության ենթարկելուց հետո ԶԶ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրոյի» փորձագետները հաստատեցին, որ այդ գիշեր համակարգիչն իսկապես 22-24 րոպե տեւողությամբ միացված է եղել: Դրան միացվել են օտար մոնիտոր եւ հիշողության կրիչ: ԶԶ ոստիկանությունը եւ Գլխավոր դատախազությունը մերժեցին իրականացնել համապատասխան հետաքննություն՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

«Ժառանգություն» կուսակցության անդամների հանդեպ հանրապետությունով մեկ գործադրվում են հետապնդումներ, հնչում են ձերբակալության, աշխատանքից ազատելու սպառնալիքներ: Ապարանի, Եղվարդի, Սիսիանի, Եղեգնաձորի ու Կապանի տարածքային կառույցների գրասենյակներից կուսակցության ցուցանակները գիշերով հանվել են:

Մինչդեռ իշխանամետ կուսակցությունները գրասենյակներ բացելու, անդամներ հավաքագրելու դժվարություններ չեն ունենում: Այսպես, Վայք քաղաքում նախկինում շրջգործկոմի պատկանող շենքը սեփականաշնորհվել է ԶԶԿ-ին, որն էլ այն վարձակալության է տվել պետական մարմիններին: Իշխանամետ կուսակցությունների գրասենյակները տեղակայված են պետական, տեղական ինքնակառավարման

<sup>8</sup> Տես [www.ypc.am](http://www.ypc.am) ինտերնետային կայքում

մարմինների շենքերում, ուսումնական հաստատություններում, չնայած ըստ «Կուսակցությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, իրավապահ մարմիններում, նախադպրոցական, դպրոցական եւ այլ ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում կուսակցությունների կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը եւ գործունեությունն արգելվում են:

Իշխող կուսակցություններն իրենց վարչական լծակներն օգտագործում են կուսակցությունները համալրելու նպատակով, ներկայացնելով քաղաքացիներին կուսակցության անդամագրվելու պահանջը չկատարելու պարագայում աշխատանքի կորստյան հեռանկարներ: Այս գործընթացը մեծ կիրառում ունի հատկապես որեւէ կուսակցության վերահսկողության տակ գտնվող մարզերում, ՏԻՄ-երում, կրթական եւ առողջապահական հաստատություններում, ինչպես նաեւ՝ մասնավոր ձեռնարկություններում:

2006 թվականի ապրիլի 21-ին Երեւանի ոստիկանության Երեբունու բաժնի մոտակայքում «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյանի եւ նրա թիկնազորի անդամների ու վարորդների վրա հարձակում է կատարվել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից: 12 դիմակավոր անձինք՝ ավտոմատներով եւ ատրճանակներով զինված, առանց ներկայանալու հարձակվել են ավտոմեքենաների վրա, փշրել ապակիները եւ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ հասցրել թիկնազորի անդամներին: ԱԱԾ-ի կողմից այն որակվեց որպես օրենքի սահմաններում Կարապետյանի թիկնապահների մոտ զենքի առկայության մասին օպերատիվ տվյալների ստուգում: Սակայն թիկնապահների մոտ եղած երեք զազային ատրճանակների օրինականությունը հաստատված էր ՀՀ փոխօստիկանապետ Հովհաննես Վարյանի հաստատած արտոնագրերով:

Նույն օրվա երեկոյան կուսակցությունը դիմեց դատաբժշկական փորձաքննության կենտրոն՝ թիկնապահների՝ մարմնական վնասվածքներ ստանալու փաստը հաստատելու համար: Դատաբժշկական փորձաքննության կենտրոնում պատճառաբանել են, թե փորձաքննություն անցկացնելու համար հարկավոր է դատախազության համապատասխան ուղեգիր: Կուսակցությունը դիմեց ՀՀ գլխավոր դատախազության, Երեւանի քաղաքային դատախազություն եւ Երեբունու բաժանմունքի դատախազություն, սակայն ուղեգիր այդպես էլ չտրամադրվեց:

«Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյանը 2006թ. ապրիլի 25-ին նամակ ուղարկեց ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, որով առաջարկեց է քրեական գործ հարուցել կազմակերպիչների դեմ, քանի որ խախտվել են ՀՀ Սահմանադրության եւ Քրեական օրենսգրքի մի շարք դրույթներ:

ՀՀ Գլխավոր դատախազությունից մայիսի 5-ին գրավոր պատասխան ստացվեց, որում միայն նշվում է, որ կուսակցության հաղորդումը գտնվում է ՀՀ Գլխավոր դատախազության վերահսկողության տակ:

Նախընտրական հիմնադրամների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իշխանամետ կուսակցությունների հիմնադրամում հիմնականում մուծումներ են կատարում իրավաբանական անձինք, իսկ ընդդիմադիրների հիմնադրամներում՝ ֆիզիկական անձինք: Ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնող ձեռնարկություններն ու ընկերությունները նախընտրում են ֆինանսական աջակցություն ցուցաբերել այն քաղաքական ուժերին, որոնց ձեռքերում են բիզնեսի համար որոշակի պայմաններ ստեղծելու, «խաղի կանոններ» սահմանելու լծակները: Իշխող կուսակցությունների հիմնադրամներում գործարարները մուծումները կատարում են իրավաբանական անձանց միջոցով:

Բացի ֆինանսավորումը, գործարարները նաեւ անդամագրվում են իշխող կուսակցություններին: Այսպես, երբ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը դարձավ Հանրապետական կուսակցության անդամ, մեծ թվով գործարարներ նույնպես համալրեցին Հանրապետականի շարքերը: 2003 թվականին խորհրդարանական

ընտրությունների արդյունքում ՀՀԿ եւ ՀՅԴ կուսակցությունների հետ կառավարող կոալիցիա կազմած «Օրինաց երկիր» կուսակցությունը, իր ղեկավար Արթուր Բաղդասարյանի՝ խորհրդարանի խոսնակի պաշտոնից հրաժարական տալուց հետո, դուրս եկավ այդ կոալիցիայից: Դրանից անմիջապես հետո կուսակցության կազմից դուրս եկան գործարար անձիք՝ ստեղծելով «Գործարար» պատգամավորական խումբը, այնուհետեւ խմբի պատգամավորների մի մասը անդամագրվեց հանրապետական կուսակցությանը:

Իշխող կոալիցիայի կազմից դուրս գալուց հետո ՕԵԿ-ը գործունեության բազմաթիվ խոչնդոտների հանդիպեց: ՕԵԿ-ի օրինակը ՀՀ-ում իշխանամետ եւ ընդդիմադիրի կուսակցությունների անհավասար մրցակցության դասական դրսեւորում է:

## **ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱԿՇՈՒՄԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ըստ Եվրոպայի խորհրդի՝ «ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրք»-ի (ընդունվել է 2002թ. հոկտեմբերի 18-19-ի՝ 52-րդ լիագումար նստաշրջաններում)՝ Եվրոպական սահմանադրական ժառանգության երեք հիմնաքարերն՝ են մարդու իրավունքների հարգումը, օրենքի գերակայությունը եւ ժողովրդավարությունը: Ժողովրդավարությունը հնարավոր է միայն ազատ եւ արդար ընտրությունների ճանապարհով: Իսկ իրական ժողովրդավարական ընտրություններ որեւէ պետությունում կարող են անցկացվել միայն, եթե պահպանվում են օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետության որոշ հիմնական պայմաններ. մարդու իրավունքների հիմնարար ազատությունների հարգումը (խոսքի ազատություն, ազատ տեղաշարժի, հավաքների, ցույցերի, միավորման, այդ թվում՝ կուսակցությունների ստեղծման եւ գործունեության ազատություն), ընտրական օրենսգրքի կայունությունը եւ քաղաքական մանիպուլացիայից զերծ մնալը, արդյունավետ ընթացակարգային երաշխիքները՝ թափանցիկություն, անկողմանակալություն, վարչական մարմինների (ընտրական հանձնաժողովներ) անկախություն քաղաքական իշխանություններից: Սահմանված ընթացակարգերը պետք է այնպիսին լինեն, որ բացառվի կեղծարարության մասին ցանկացած կասկած, որ կանոնների արդյունավետ իրականացման հնարավորություն չլինի, պահպանվեն ընտրական իրավունքի հավասարության, գաղտնիության, ազատության սկզբունքները:

Արդեն հինգ տարուց ավելի միջազգային փորձագետները Հայաստանից պահանջում են այս սկզբունքները հարգելու եւ ազատ ու արդար ընտրությունների երաշխավորման համար ընտրական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ապահովելու համար

- ճշգրիտ ընտրացուցակների կազմում եւ վարում,
- վստահված անձանց բավարար իրավունքներ եւ դրանց իրականացման երաշխիքներ,
- ընտրական վարչարարության հավասարակաշռվածություն եւ ընտրական հանձնաժողովների չեզոքություն եւ անկախություն իշխանություններից,
- ընտրությունների ընթացքում արդար մրցակցության հնարավորություններ,
- բողոքարկման գործունե եւ հստակ ընթացակարգեր:

1999 թվականին ընդունված ՀՀ Ընտրական օրենսգրքը հինգ անգամ ենթարկվել է փոփոխությունների (վերջին անգամ՝ 2006 թվականի դեկտեմբերի 22-ին): Դրանք միշտ կատարվել են հատկապես ընտրությունների նախաշեմին, չնայած այն բանի, որ ըստ Վենետիկի հանձնաժողովի հիշյալ կանոնագրքի հանձնարարականների ընտրական օրենքը չպետք է փոխվի ընտրություններից առաջ առնվազն մեկ տարվա ընթացքում:

Ընտրացուցակների կազմման եւ վերահսկողության մեխանիզմը փոխվել է չորս անգամ: Սկզբում միայն համայնքի ղեկավարն էր կազմում եւ ստորագրում, այնուհետեւ, որպես պատասխանատվության մեծացում, ավելացվեց կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկողություն սահմանող դրույթը, որից հետո սահմանվեց, որ ընտրացուցակների վրա պետք է ստորագրի նաեւ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պատասխանատու ներկայացուցիչը: 1996 մինչ 2003 թ. անցկացված բոլոր ընտրությունների ընթացքում ընտրողների ցուցակները լի են եղել սխալներով եւ կեղծիքներով: Ընտրական օրենսգրքի 2005 թվականի մայիսի 19-ի փոփոխություններով ընտրողների ցուցակների կազմումը եւ վարումը վերապահվեց ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությանը: Այսուհանդերձ, 2005 թ. աշնանը կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ էլ ընտրողների ցուցակներում կային բազմաթիվ սխալներ, ինչը հազարավոր մարդկանց փաստացի զրկում էր ընտրություններին մասնակցելու հնարավորությունից:

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2005 թվականի մայիսի 19-ի օրենքով վստահված անձանց իրավունքներն ավելի ընդլայնվեցին: Որպես վստահված անձանց իրավունքների իրականացման երաշխիք սահմանված է. «Վստահված անձի իրավունքների որեւէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները, իրավունք չունեն վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի»<sup>9</sup>: Մինչ այս փոփոխությունն էլ վստահված անձանց իրավունքների որեւէ սահմանափակում չէր թույլատրվում, սակայն 2003 թվականին անցկացված ընտրությունների ժամանակ բազմաթիվ էին ընդդիմադիր թեկնածուների վստահված անձանց ընտրական տեղամասից դուրս հանելու դեպքերը կամ հանձնաժողովի աշխատանքներին նրանց մասնակցությունը հավասարեցվում էր նվազագույնի, նրանց արգելվում էր ծանոթանալ ընտրական փաստաթղթերին, այդ թվում՝ նաեւ քվեարկված քվեաթերթիկներին:

Հիշյալ կանոնագրքի «Ղեկավար սկզբունքներ եւ բացատրական զեկույց» բաժնում շեշտվում է, որ ընտրական օրենքի առավել հատկանշական կանոնների կայունությունը, հատկապես նրանք, որոնք վերաբերում են ընտրական համակարգին, ինչպես օրինակ՝ ընտրական հանձնաժողովների կազմավորումը եւ ընտրատարածքների սահմանագծումը, համարվում են որոշիչ գործոններ ընտրությունների արդյունքներում, հետեւաբար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել՝ իշխող կուսակցությանը թույլ չտալու այդ գործընթացում մանիպուլյացիաներ անել ի շահ իրեն, ինչպես նաեւ խուսափելու չարաշահումների ցանկացած այլ դրսեւորումներից (կետ 64): Վենետիկի հանձնաժողովը, հատուկ շեշտելով անկողմնակալ մարմնի կողմից ընտրությունների կազմակերպման կարելությունը, նշել է, որ «միայն թափանցիկությունը, անկողմնակալությունն ու քաղաքականորեն պատճառաբանված մանիպուլյացիայից անկախությունը կապահովեն ընտրական գործընթացի ճիշտ վարչարարություն՝ նախընտրական փուլից մինչեւ արդյունքների ստացումը» (կետ 68): «Ահա թե ինչու պետք է կազմավորվեն անկախ, անկողմնակալ ընտրական հանձնաժողովներ ազգային մակարդակից մինչեւ ընտրատեղամասի մակարդակ՝ ապահովելու ընտրությունների պատշաճ ընթացքը, կամ առնվազն խուսափելու ընտրակեղծիքների վերաբերյալ լուրջ կասկածներից» (կետ 71):

<sup>9</sup> Հիշյալ օրենքի 17-րդ հոդվածով «Ընտրական օրենսգրքում» ավելացված 27<sup>9</sup> հոդվածի 4-րդ մաս:

Այս սկզբունքը ապահովող նորմեր ՀՀ Ընտրական օրենսգրքում ամրագրված չեն եւ դեռ ընդհակառակը՝ սահմանված է հանձնաժողովների ձեւավորման խառը եղանակ, որտեղ իշխող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներն ունեն որոշիչ դեր: Ընտրական հանձնաժողովներում նշանակումներ կատարող սուբյեկտների եւ նշանակվող անձանց նկատմամբ պահանջների բազմակի փոփոխություններով հանձնաժողովների կազմավորման խառը քաղաքական սկզբունքը չի փոխվել:

Հայաստանում ընտրական հանձնաժողովների քաղաքական կախվածության արդյունքներն իրենց զգացնել են տալիս ընտրությունների պրակտիկայում, սկսած դեռևս 1995թ.-ից: 2005 թվականի մայիսի 19-ին «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքով ոչ միայն չլուծվեցին այս խնդիրները, այլև սահմանվեցին Սահմանադրությանը հակասող մի քանի դրույթներ՝ ամրագրելով ընտրական հանձնաժողովների կազմավորման հետեւյալ կարգը. ԿԸՀ-ը կազմավորվում է ԱԺ-ում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության (դաշինքի) կողմից նշանակված մեկ անդամից, Հանրապետության նախագահի նշանակած մեկ անդամից, Ազգային ժողովում գործող պատգամավորական խմբի (իսկ Ազգային ժողովի հաջորդ ընտրություններից սկսված՝ դատարանների նախագահների խորհրդի կողմից ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվից նշանակված) կողմից նշանակված մեկ անդամից, վճռաբեկ դատարանի կողմից նշանակված վճռաբեկ դատարանի մեկ դատավորից: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները նշանակվում են ԿԸՀ-ի անդամների կողմից: Վճռաբեկ դատարանի եւ դատարանների նախագահների խորհրդի կողմից նշանակված անդամները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում են ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվից:

Ընտրական հանձնաժողովներում դատավորների ընդգրկման հետ կապված դրույթները Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվեցին հակասահմանադրական եւ 2006 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված ԸՕ փոփոխություններով սահմանվում է, որ դատավորների փոխարեն նշանակվում են դատական ծառայողներ, ինչն ըստ էության հանձնաժողովներում ՀՀ նախագահի իշխանության պահպանում է: 1999 եւ 2003 թվականներին անցկացված ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովների նախագահները, գրեթե առանց բացառության, Հանրապետության նախագահի կամ հետագայում իշխող կոալիցիան կազմած կուսակցությունների կողմից նշանակված անդամներից էին: 2005 թվականի աշնանը կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովների անդամների երկու երրորդը եւ ավելին իշխանությունների ներկայացուցիչներ էին:

Սահմանադրական դատարանի կողմից անվավեր է ճանաչվել Ընտրական օրենսգրքի նաեւ այն դրույթը (հոդված 38), ըստ որի «նախագահական ընտրությունների ժամանակ, քվեարկությանը նախորդող 20 օրվա ընթացքում ԿԸՀ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում, եթե թափուր մնացած տեղերի թիվն ավելին է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 1/3-ից, այդ տեղերը լրացվում են ՀՀ նախագահի կողմից», այլ ոչ թե հենց այդ անդամին նշանակած սուբյեկտի կողմից: Սակայն պահպանվում է այն դրույթը (հոդված 35, կետ 3), ըստ որի ԿԸՀ-ի կազմը սահմանվում է ՀՀ նախագահի հրամանագրով. պարզ չէ՝ Հանրապետության նախագահը իրավունք ունի՞ չհաստատելու այս կամ այն սուբյեկտի կողմից ներկայացված թեկնածուին, թե՞ ոչ:

Սահմանադրական դատարանը չանդրադարձավ ՀՀ ընտրական օրենսգրքի այն դրույթին (35 հոդվածի 1-ին կետ), ըստ որի «գործող Ազգային ժողովի առաջին նստաշրջանի դրությամբ հայտարարված պատգամավորական խմբի որոշմամբ նշանակված մեկ անդամ ներգրավվում է կենտրոնական ընտրական հանձնաժողովում»: Համաձայն «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի՝ առնվազն 10 պատգամավորներ կարող են ստեղծել պատգամավորական խումբ:

Քաղաքական միավորում չհանդիսացող, անհայտ եւ անորոշ հիմքերով կազմավորվող պատգամավորական խմբին ընտրական վարչարարություն իրականացնող հիմնական օղակում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում տեղ հատկացնելը խախտում է պետական մարմինների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված ընտրական հանձնաժողովների ձեւավորման ընդհանուր քաղաքական-իրավական տրամաբանությունը: Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի բացառում պատգամավորական խմբերում կոնկրետ կուսակցության՝ Ազգային ժողովում գործող խմբակցության մեջ չընդգրկված անդամների ներգրավումը, ապա տվյալ կուսակցությունն արհեստականորեն հնարավորություն է ստանում կենտրոնական ընտրական հանձնաժողովում ունենալ երկու տեղ, ինչը խախտում է քաղաքական կուսակցությունների՝ վերը նշված միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված հնարավորությունների հավասարության սկզբունքը: Այսպես, ընտրական հանձնաժողովներում տեղեր ունեցող միակ պատգամավորական խմբի՝ «Ժողպատգամավորի» անդամների գերակշիռ մասը անդամագրվել է Հայաստանի հանրապետական կուսակցությանը, արդյունքում այդ կուսակցությունը ընտրական հանձնաժողովներում ունի երկու տեղ:

Հանձնաժողովի ձեւավորման սահմանված կարգը ինչպես եւ հանձնաժողովների ձեւավորման նախորդ կարգերը, չեն ապահովում ընտրական հանձնաժողովների հավասարակշռությունն ու անկողմնակալությունը:

2006թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ Ընտրական օրենսգրքում հերթական անգամ փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին: Դրանցից էականներն են՝

- ստացիոնար բուժհիմնարկներում այսուհետ քվեարկելու են շրջիկ քվեատուփերով,

- հանվել է ընտրական հանձնաժողովների քվորումի պահանջը՝ համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած մինչեւ ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ հանձնաժողովների հերթական նիստերը իրավազոր են՝ անկախ նիստին ներկա անդամների թվից, եթե սպառված են հանձնաժողովի՝ նիստ գումարելու համար անհրաժեշտ թվով անդամներին նիստին մասնակից դարձնելու բոլոր հնարավորությունները: Որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին կողմ քվեարկած հանձնաժողովի անդամների թիվը մեծ է դեմ քվեարկածների թվից: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է,

- հանվել է նույն անձի՝ 2 անգամից ավելի անընդմեջ համայնքի ղեկավար դառնալու արգելքը (հոդված 123, կետ 9):

2006 թ. համապետական ընտրություններ, հանրաքվեներ Հայաստանում չեն եղել: Անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնցում հաղթել են իշխող կուսակցությունների կամ նրանց կողմից հովանավորվող թեկնածուները:

Ազատ եւ արդար ընտրությունների գերակշռման ամենամեծ խոչընդոտը կապված է, ոչ թե ընտրական օրենսգրքի, այլ դրա կիրառման հետ: Ընտրական օրենսդրությունը ինքնին չի կարող երաշխավորել ժողովրդավարական ընտրություններ:

Ընտրությունների ժողովրդավարական բնույթը առաջին հերթին եւ գլխավորապես կախված է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իշխանությունների եւ ընտրական գործընթացի մնացած բոլոր դերակատարների պատրաստականությունից:

Հայաստանում ընտրությունների արդյունքների վրա վճռորոշ ազդեցություն են ունենում ոչ այնքան ընտրողների հավաքական կամքը, որքան՝ վարչական եւ ֆինանսական ռեսուրսները: Ընտրակաշառքների բաժանումը համակարգված գործընթաց է դառնում: Ընտրություններից բավական առաջ այն արդեն դրսևորվում է բարեգործության անվան տակ:

Արդյունքում՝ ընտրությունները Հայաստանում ժողովրդավարականից վեր են ածվել առանձին մարդկանց կամ դրանց խմբերի անձնական հետաքրքրություններն ու շահերը սպասարկող ինստիտուտի:



Քաղաքական կուսակցությունների չկայացվածության պայմաններում, ընտրապայքարը վեր է ածվում անհատների պայքարի, գրեթե բացակայում է պայքարն ու բանավեճը հիմնական արժեքների եւ զարգացման այլընտրանքային ուղիների շուրջ:

Ըստ էության ժողովրդավարական հիմքերի բացակայության պայմաններում բացառվում է ընդդիմադիր եւ իշխանամետ կուսակցությունների արդար մրցակցության որեւէ հնարավորություն, իսկ իշխող կամ իշխանամետ կուսակցությունների մրցակցությունը ավելի շուտ կուսակցությունները ղեկավարող օլիգարխների մրցակցություն է կառավարման լծակների տիրանալու համար:

## **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ, ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԼԻԳԱՐԽԻԱՅԻՑ**

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ կուսակցությունների դրամական միջոցները այլ աղբյուրների թվում կարող են գոյանալ նաեւ նվիրատվություններից (հոդված 24): Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն չի թույլատրվում նվիրատվություններ ստանալ, մասնավորապես՝ «օտարերկրյա պետություններից, օտարերկրյա քաղաքացիներից ու իրավաբանական անձանցից, ինչպես նաեւ օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձանցից, եթե օտարերկրյա մասնակցի բաժնետոմսերը, փայր, բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք, փայտահավաք) կապիտալում 25 տոկոսից ավելի է», ինչպես նաեւ՝ «միջազգային կազմակերպություններից եւ միջազգային հասարակական շարժումներից»:

2006 թվականի նոյեմբերին, հերթական անգամ այցելելով Հայաստան, գործարար, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը հայտարարեց, որ 2007 թվականի խորհրդարանական ընտրություններում Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը աջակցելու են կուսակցություններից մեկին: Սա միջազգային եւ օտարերկրյա կազմակերպության Հայաստանի կուսակցությունների գործունեությանը միջամտելու մի օրինակ է: Հայտնի է, որ 2003 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ Արա Աբրահամյանը օժանդակում էր Հայաստանի Ռամկավար-Ազատական կուսակցության (ՀՌԱԿ) ընտրարշավին: Ի դեպ, դեռեւս 2006 թվականի մայիսի 23-ին ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը հայտարարեց, թե լինելով Համաշխարհային հայկական կոնգրեսի համահիմնադիր՝ ՀՌԱԿ-ը «առանձնապես ցնծության մեջ չէ» այս կառույցի գործունեությունից: Հարություն Առաքելյանը նշեց, որ կուսակցությունում կան Կոնգրեսից դուրս գալու տրամադրություններ. «Ես եմ զսպում»<sup>10</sup>: 2006 թվականի նոյեմբերի 11-ին ՀՌԱԿ-ը տարածեց հայտարարություն, որում, մասնավորապես, ասվում էր. «ՀՌԱԿ ղեկավարությունը բազմիցս դիմել է Համաշխարհային հայկական կոնգրեսի ղեկավարությանը տարեկան կատարած աշխատանքների մասին հաշվետվություններ կայացնելու կապակցությամբ, սակայն մինչ օրս չի ստացվել որեւիցե պատասխան», եւ հաշվի առնելով Կոնգրեսի ղեկավարության ներկա գործելաճը, որը ձգվում է շուրջ 3 տարի՝ ՀՌԱԿ-ը հայտարարում է Կոնգրեսի հիմնադիր կազմից դուրս գալու մասին. «ՀՌԱԿ հանրապետական վարչությունը հայտարարում է, որ այսուհետ չի կրում որեւէ պատասխանատվություն Համաշխարհային հայկական կոնգրեսի գործունեության համար»: Ի պատասխան այս հայտարարության, Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահ Վլադիմիր Աղայանը «Ազգ» օրաթերթին տված հարցազրույցում նշեց, թե «ՀՌԱԿ-ը երբեւիցե Համաշխարհային հայկական կոնգրեսի

<sup>10</sup> «ՀՌԱԿ-ը դժգոհ է», «Առավոտ», 24. 05. 2006

հիմնադիր անդամ չի հանդիսացել, քանի որ Համաշխարհային հայկական կոնգրեսը միջազգային հասարակական կազմակերպություն է եւ գրանցվել է Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության կողմից: Իսկ ՌԴ օրենսդրության համաձայն, քաղաքական կուսակցություններին իրավունք չի վերապահվում դառնալու հասարակական կազմակերպության հիմնադիր անդամ»<sup>11</sup>: Այսուհանդերձ, փաստ է, որ ՌԴ քաղաքացի գործարարի եւ նրա ստեղծած կազմակերպության աջակցությունը որեւէ կուսակցության ընտրարշավին (2003 թվականին), արդեն իսկ օրենքի խախտում է, ինչպես որ օրենքի խախտում է Արա Աբրահամյանի վերոհիշյալ հայտարարությունը:

Իշխանությունների կողմից հայտարարվել է, թե արտասահմանյան երկրների հետ կապերի մեջ է «Նոր ժամանակներ» կուսակցության առաջնորդ Արամ Կարապետյանը: Վերջինս պաշտոնապես հերքել է նման կապերի առկայությունը:

2006 թվականի հուլիսին Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ դարձավ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, որն այնուհետեւ՝ 2006 թվականի հուլիսի 22-ին կայացած կուսակցության համագումարում ընտրվեց ՀՀԿ խորհրդի նախագահ՝ կուսակցական հիերարխիայում զբաղեցնելով երկրորդ պաշտոնը: Պաշտպանության նախարարի կուսակցական դառնալը հասարակության մեջ բուռն քննարկումների առիթ դարձավ: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն «Կուսակցության անդամ չեն կարող լինել .... 4) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի ծառայողները»: Հենց այս փաստը մատնանշելով՝ «Մարդու իրավունքներ-96» կուսակցության վարչությունը հուլիսի 17-ին հայտարարեց, թե նախարարը խախտել է օրենքը: Այս հայտարարությանն ի պատասխան, ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար Սեյրան Շահումվարյանը «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակցին ասաց, թե «պաշտպանության նախարարը քաղաքացիական անձ է, հետեւաբար ՀՀ Սահմանադրությունը եւ օրենսդրությունը նրան չեն արգելում լինել կուսակցական»<sup>12</sup>: Մամուլի քարտուղարի կարծիքով Սարգսյանի պաշտոնը եւ կուսակցական մանդատն իրար հետ անհամատեղելի կլինեին, եթե նախարարը միեւնույն ժամանակ լիներ նաեւ զինվորական: Այլ կերպ ասած, ըստ Շահումվարյանի, Սերժ Սարգսյանի ուսադիրների բացակայությունը նրան իրավունք է տալիս լինել կուսակցական<sup>13</sup>: Այս խնդիրը դեռ շարունակում է բանավեճերի առարկա մնալ, ամեն դեպքում՝ մտահոգությունը, որ կուսակցությունը, հնարավոր է, կախման մեջ ընկնի զինված ուժերից կամ ընդհակառակը՝ 2007-ի խորհրդարանական ընտրություններում բանակի մեծամասնությունը, հնարավոր է, քվեարկի ՀՀԿ-ի օգտին, մնում է:

Պաշտպանության նախարարի կուսակցական դառնալն իր հետ էլի խնդիրներ առաջացրեց: Նրանից հետո այս կուսակցությանն անդամագրվեցին մի խումբ գործարարներ եւ գործարար պատգամավորներ: Այսինքն՝ կուսակցական դարձավ գործարարների մի ստվար խավ: Իսկ նրանցից ոմանք համագումարում ընտրվեցին նաեւ կուսակցության ղեկավար մարմնի՝ խորհրդի կազմում: Իհարկե, օրենքը չի արգելում գործարարներին անդամագրվելու այս կամ այն կուսակցությանը, սակայն խոշոր բիզնեսի ներկայացուցիչների ներգրավումը ՀՀԿ, այդ կուսակցության՝ տնտեսական շահերից հնարավոր կախվածության մտահոգություններ է առաջացնում: Ավելացնենք, որ պաշտպանության նախարարի հետ միասին ՀՀԿ-ին անդամագրվեցին նաեւ տարբեր տրամաչափի պաշտոնյաները, մասնավորապես Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, Երեւանի «Կենտրոն» համայնքի թաղապետ Գագիկ Բեգլարյանը եւ ուրիշներ:

Խոշոր կապիտալից կախվածության հնարավորությունը էլ ավելի բարձր է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պարագայում: Այս կուսակցության նախագահը հայտնի գործարար Գագիկ Ծառուկյանն է, որի սեփականությունը հանդիսացող «Մուլտի գրուպ» կոնցեռնի կազմում կան բազմաթիվ ձեռնարկություններ,

<sup>11</sup> «ՀՌԱԿ-ը Համաշխարհային հայկական կոնգրեսի անդամ չի եղել», «Ազգ», 23.11. 2006 թ.

<sup>12</sup> «Զինվորական չզբաղվել պոլիտիկա», «Հայկական ժամանակ» օրաթերթ, 18.07.2006

<sup>13</sup> Նույն տեղում

այդ թվում՝ այնպիսի խոշորները, ինչպիսիք են «Արարատ» կոնյակի, գինու, օղու կոմբինատը, Արարատի ցեմենտի գործարանը, «Մուլտի Սթուն» քարի արդյունաբերական մշակման ընկերությունը, «Մուլտի Լեոն» բենզալցակայանների ցանցը, կահույքի խանութների «Մեկ» ցանցը եւ այլն: Այս կուսակցությունը 2006 թվականի կեսերից ըստ էության սկսել է նախապատրաստվել 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին եւ հանրապետության մարզերում բարեգործական ակցիաներ է իրականացնում, հանդիպումներ կազմակերպում տեղի բնակչության հետ: Մեծ է հավանականությունը, որ ընտրություններում հաջողություն ունենալու դեպքում, այս կուսակցությունը կսպասարկի խոշոր բիզնեսի շահերը:

2006 թվականի մայիսին «Օրինաց երկիր» կուսակցությունը դուրս եկավ կառավարող կոալիցիայի կազմից, իսկ նրա առաջնորդ Արթուր Բաղդասարյանը՝ հրաժարական տվեց Ազգային ժողովի նախագահի պաշտոնից: Դրանից հետո կուսակցության եւ ԱԺ-ում ՕԵԿ խմբակցության անդամ գործարար պատգամավորների մի խումբ լքեց կուսակցությունը, իսկ նրանցից մի քանիսը անդամագրվեցին ՀՀԿ-ին: Այս, ինչպես նաեւ վերը ասվածները, հիմք են տալիս պնդելու, որ Հայաստանում ոչ միայն քաղաքականությունն է կախված բիզնեսից, այլեւ ընդհակառակը. կողմնորոշում չունեցող կամ ընդդիմադիր կուսակցությանն անդամ քիչ թե շատ խոշոր գործարարը միշտ աչքի առաջ ունի իր գործունեության մեջ էական դժվարությունների հանդիպելու վտանգը:

Հայաստանում կրոնական կազմակերպություններից կախված կամ կրոնական դավանաբանությամբ կուսակցություններ չկան:

### 3. ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի հասարակական կառույցների կողմից քաղաքացիների իրավունքների պաշտպանության հնարավորությունների գնահատման նպատակով անցկացվեցին խորացված հարցազրույցներ դիտարկվող ոլորտում գործունեության տարբեր ուղղություններ ունեցող եւ իրենց բնագավառում առավել հայտնի, հեղինակավոր 11 ոչ կառավարական կազմակերպությունների ղեկավարների հետ<sup>14</sup>:

Համարյա բոլոր հարցվածների կարծիքով, Հայաստանում իրավապաշտպան գործունեությունը կարգավորող օրենսդրությունը բավականին լիբերալ է եւ ՀԿ-ներին հնարավորություն է տալիս ազատորեն իրականացնելու իրենց աշխատանքները: Նրանք դրական են գնահատում նաեւ պետական իշխանության տարբեր ճյուղերի ու մասնուլի հետ համագործակցությունը:

Դրա հետ մեկտեղ, ինչպես հետեւում է անցկացված հարցումներից, իրավապաշտպանների դիմումներին պետական պաշտոնյաների դրական արձագանքն, իբրեւ կանոն, ապահովվում է շնորհիվ ՀԿ-ների կոնկրետ ղեկավարների անձնական հեղինակության եւ պետական կառույցների պաշտոնյաների հետ նրանց երկարամյա կապերի ու հարաբերությունների, այլ ոչ թե պաշտոնական՝ հասարակության առջեւ պետական ծառայողների սահմանադրորեն ամրագրված պատասխանատվության:

Փորձագետների տրամադրած տեղեկությունները, ինչպես նաեւ նրանց կարծիքներն ու գնահատականները հնարավորություն են տալիս Հայաստանում իրավապաշտպան գործունեությունը բնութագրել առանձին ուղղություններով:

Այսպես, խոսելով ժողովների, հավաքների, երթերի ազատության մասին, ոչ մի փորձագետ չնշեց այս ոլորտում որեւէ խնդիր՝ բացառությամբ ընդդիմության 2004 թվականի ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերվա ցույցը ուժային մեթոդներով ցրելու հայտնի դեպքերը: Այդ իրադարձություններից հետո ՀԿ-ները եռանդուն եւ բավականին հաջող գործողություններ են ձեռնարկել ցույցի՝ ձերբակալված եւ դատական հետապնդման ենթարկված ակտիվիստների պաշտպանության ուղղությամբ:

Հասարակական կազմակերպությունների ստեղծման (գրանցման) սահմանված կարգը, հարցվածների կարծիքով, բավականին լիբերալ է: Սակայն օրենսդրության մեջ նախատեսված են ՀԿ-ների գործունեության որոշ սահմանափակումներ: Միեւնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության մեջ մտահոգություն եւ որոշակի երկյուղ կա, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» գործող օրենքում ներկայումս քննարկվող փոփոխություններով եւ լրացումներով իշխանությունները կարող են «երրորդ սեկտորի» գործունեության նկատմամբ պետական վերահսկողության լրացուցիչ ձեւեր մտցնել, այն կերպ, ինչպես դա արվեց Ռուսաստանում:

Մշակութային ինքնարտահայտման, խղճի եւ գիտակա հետազոտությունների ազատության ոլորտի վերաբերյալ փորձագետները դարձյալ չնշեցին վարչական

<sup>14</sup> Հարցված փորձագետների ցուցակը. Աբգար Եղոյան, «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ, Ամալյա Կոստանյան, Տարածաշրջանային զարգացման կենտրոն/«Թրանսփարենսի ինթերնեշնլի» հայկական ներկայացուցչություն, Ավետիք Իշխանյան, «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ, Արտակ Կիրակոսյան, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, Գեորգ Առաքելյան, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ, Գեորգ Պողոսյան, Հայկական սոցիոլոգիական ընկերակցություն, Գրետա Միրզոյան, «Զինվորի մայր» ՀԿ, Լարիսա Ալավերդյան, Ընդդեմ իրավական կամայականության հիմնադրամ, Լիլիթ Բլեյան, «Հասարակական երկխոսությունների եւ զարգացման կենտրոն» ՀԿ, Ջեմմա Հասրաթյան, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ, Ստեփան Դանիելյան, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ:

սահմանափակման կամ քաղաքացիների միջև խտրականության փաստեր: Սակայն որոշակի քննադատական դիտողություններ արեցին հանրակրթական դպրոցների հասցեին, որոնցից շատերում անհանդուրժողականության մթնոլորտ է ձեւավորվում բոլոր կրոնական ուղղությունների նկատմամբ, բացառությամբ Հայ առաքելական եկեղեցու:

Մասնավոր սեփականության իրավունքի, տնտեսական շահագործումից պաշտպանության, մասնագիտական կազմակերպությունների ստեղծման եւ գործունեության ոլորտներում իրավիճակն ամենից անբավարարն է համարվում: Մասնավորապես, հասարակական մեծ արձագանք ունեցավ մայրաքաղաքի Բուզանդի փողոցի տնատերերի իրավունքների ոտնահարումը, որոնց սեփականությունն ապօրինաբար օտարվում էր: Տուժածների ցույցերն ու ՀԿ-ների աջակցությունը հանգեցրին որոշ դրական արդյունքների: ՀՀ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց այն իրավական ակտերը, որոնց հիման վրա կատարվել էր օտարումը:

Հատուկ տագնապ է առաջացնում վարձու աշխատողների շահագործումը: Վերջիններս գործնականում բացարձակապես անպաշտպան են. օրական 12-14 ժամ, առանց ընդմիջման, արձակուրդի եւ հիվանդության նպաստների աշխատում են ու կարող են ցանկացած պահի հեռացվել:

Ձեւականորեն գոյություն ունեցող արհմիությունները գործունակ չեն, ինչը, փորձագետների կարծիքով, մեծապես հետեւանք է պետական քաղաքականության. «Մեզ միայն գործադուլն էր պակաս», - ասել է մի պետական բարձրաստիճան պաշտոնյա՝ մեր զրուցակիցներից մեկին:

Ոստիկանական բռնություններից, անարդարացի բանտարկությունից եւ կտտանքներից քաղաքացիներին պաշտպանելու ուղղությամբ արդյունավետ գործունեություն ծավալելու համար, մի քանի ՀԿ-ներ պրոֆիլային գերատեսչությունների հետ միասին ստեղծել են հանձնաժողով: Այն կանոնավոր ազատագրկման վայրերի մոնիտորինգ է իրականացնում, ինչպես նաեւ, ըստ փորձագետների գնահատականների, բավականին արդյունավետ է աշխատում կոնկրետ գործերի քննության ժամանակ: Միաժամանակ, ինչպես պնդում են հարցվածները, ֆիզիկական բռնության եւ կտտանքների համակարգը, հատկապես քաղաքացիների նախնական կալանքի փուլում, Հայաստանում ավանդաբար առկա է:

Օրենքի առջեւ հավասարության եւ հավասար հնարավորությունների խնդիրը երկրի համար հատկապես հրատապ է: Փորձագետների մեծ մասը պնդում է, որ Հայաստանում չկա ոչ օրենքի առջեւ հավասարություն, ոչ էլ հնարավորություններն են հավասար: «Մեզ մոտ առկա է խտրականություն ըստ տնտեսական դիրքի: Պաշտպանված են միայն հարուստները», - նշեց փորձագետներից մեկը: Սա բնորոշ կարծիք է, որը տարբեր ձեւակերպումներով արտահայտեց հարցվածների նշանակալի մասը:

Ինչ վերաբերում է գեներային իրավահավասարությանը, հարկ է նշել, որ երկրում իրականացվում են զանազան հետազոտություններ եւ գործում են բազմաթիվ կանանց կազմակերպություններ, որոնք լուսավորչական եւ փորձառնական ծրագրեր են իրականացնում բնակչության տարբեր խավերի համար: Դրա հետ մեկտեղ, ՀՀ Ազգային ժողովում եւ կառավարությունում, ինչպես նաեւ բիզնեսի ոլորտում կանանց ներկայացվածությունը ծայրահեղորեն ցածր է, ինչը, որոշ փորձագետների կարծիքով, պայմանավորված է մի կողմից քողարկված խտրականությամբ, մյուս կողմից՝ նրանով, որ 90-ական թվականների այսպես կոչված «մեծ» մասնավորեցման ժամանակ կանայք խոշոր բիզնես մուտք չգործեցին եւ ներկայումս քաղաքական պայքարի ռեսուրսներ չունեն:

Ազատ տեղաշարժի, բնակության վայրի, աշխատանքի ընտրության, ընտանիք կազմելու եւ պլանավորելու ոլորտում պետության կողմից որեւէ սահմանափակում եւ խախտումներ չեն նշվում: Այսուհանդերձ, ինչպես նշեցին հարցվածները,

գործնականում քաղաքացիների այդ հնարավորությունները սահմանափակված են բնակչության նշանակալի հատվածի կյանքի ցածր մակարդակով:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում, փորձագետները գլխավոր խնդիրը համարում են երկրի տարածքի ընդհանուր անապատացումը, ինչպես նաև՝ երեւանի կենտրոնի գերխիտ կառուցապատումը՝ բնապահպանական նորմերի խախտմամբ: ՅԿ-ների պայքարն այս ոլորտում ընթանում է փոփոխակի հաջողություններով: Երբեմն հաջողվում է հասնել դրական լուծումների (Շիկահողի արգելոցի պահպանումը եւ այլն): Սակայն փորձագետները բերում են նաև այլ խնդիր. երբ բնապահպանական հարցերով զբաղվող ՅԿ-ների կողմից դատարան՝ հյուրանոցային համալիր կառուցելու նպատակով երեւանի Յադթանակի զբոսայգում ծառահատումներ իրականացնելու դեմ, դատավորը հրաժարվեց ընդունել հայցը՝ հղում կատարելով երկրի նախագահի՝ այդ առթիվ արած հրապարակային հայտարարությանը՝ «Կառուցել ենք ու պիտի կառուցենք»: Սրա հետ մեկտեղ, հարցվածների իսկ խոստովանությամբ, իշխանություններն ընդհանուր առմամբ, վերջին ժամանակներս սկսել են ավելի ուշադիր վերաբերվել բնապահպանների նախագուշացումներին եւ հաճախ են հաշվի առնում նրանց կարծիքը:

Բնակչության առողջության պահպանման ոլորտում ակտիվորեն գործում են մի շարք կազմակերպություններ, որոնք պաշտպանում են սպառողների շահերը: Այս ՅԿ-ները բացահայտում են անորակ արտադրանքը, մասնակցում են բնական մեծաշնորհների ծառայությունների արդարացի սակագների սահմանմանը, պայքարում են խմելու ջրի որակի համար եւ այլն, ինչպես նաև՝ հաճախ օգնում են իրենց դիմած սպառողներին՝ պաշտպանելու իրավունքները:

ՅԱՅՏՆԻ է, որ յուրաքանչյուր հասարակության մեջ քաղաքացիական իրավունքները կարգավորվում են օրենքով, իսկ նրանց իրականացումը պետք է ապահովեն համապատասխան պետական կառույցները: Այս խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններն իրականացնում են երկու գործառնություն. կուտակում են գաղափարներ եւ մշակում են օրենսդրության բարելավման առաջարկություններ, ինչպես նաև՝ վերահսկում են պետական կառույցների կողմից այդ օրենսդրության կատարումը:

Այսպիսով, ընդհանրացնելով հարցված փորձագետների կարծիքներն ու գնահատականները, կարելի է փաստել, որ քաղաքացիական իրավունքները կարգավորող ՅԿ օրենսդրությունը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջազգային չափանիշներին: ՅԿ-ներին հաջողվում է (ճիշտ է մեծ ջանքերի գնով) խորհրդարանին օրենսդրության կատարելագործման առաջարկություններ ներկայացնել եւ լրբբինգ անել քաղաքացիական հասարակության շահերը: Սակայն մարդու իրավունքների պահպանման, դրանց պաշտպանության իրական վիճակը, ըստ հարցվածների կարծիքի, ամենեւին էլ բարեհաջող չէ:

Որոշ ՅԿ-ներ հասարակությանը տարիներով ծառայելու շնորհիվ ձեռք բերված բավականին բարձր հեղինակությամբ, այդ կազմակերպությունների ղեկավարների ակտիվ գործունեությամբ, ինչպես նաև՝ պետական կառույցներում անձնական կապերով կարողանում են որոշակի հաջողությունների հասնել, հատկապես՝ քարոզչության, բնակչության եւ պետական ծառայողների շրջանում ուսուցում կազմակերպելու ասպարեզում, ինչպես նաև այնտեղ, ուր դա չի հակասում ազդեցիկ դեմքերի անձնական շահերին:

Միաժամանակ, ինչպես նշում են «երրորդ սեկտորի» ներկայացուցիչները, շարքային քաղաքացիների իրավունքների խախտումը, ծառայողական դիրքի չարաշահումը, որ համակել է հասարակությանը վերից վար, բնակչության շրջանում հուսահատության զգացում են ձեւավորում: Իբրեւ քաղաքացիական ազատությունների անբարենպաստության պատճառ, որոշ փորձագետներ համարում են հասարակության մեջ «ուժեղի իրավունքի» գերակշռումը, բնակչության ընդհանուր իրավական կուլտուրայի ցածր մակարդակը, նրա անտեղյակությունը գործող օրենքներին, դատական համակարգի կախվածությունը գործադիր իշխանությունից, ընդդիմության

թուլությունը, եւ որ գլխավորն է՝ քաղաքացիական ազատությունների պաշտպանության առավել բարձր մակարդակ ապահովելու՝ երկրի ղեկավարության քաղաքական կամքի բացակայությունը:

Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպությունների իրավապաշտպան գործունեության միտումներին, ապա այս հարցում փորձագետների կարծիքները տարբեր են: Ոմանք դրական դիմամիկա են տեսնում, դա բացատրելով եւ իրավապաշտպանների, եւ պետական ծառայողների որակավորման ընդհանուր աճով: Մյուսները՝ համարում են, որ միայն քաղաքացիական հասարակություն ձեւավորելու իմիտացիայի նպատակով դեկորատիվ փոփոխություններ են տեղի ունենում, ընդամին՝ դա աջակցություն է ստանում եւ Ռուսաստանից, եւ Արեւմուտքից: Վերջապես՝ երրորդները՝ ոչ մի փոփոխություն չեն նշում, ստեղծված իրավիճակը որակելով որպես լճացում:

«Երրորդ սեկտորի» ներուժը թուլացնում են նաեւ այդ դաշտում գործող, այսպես կոչված ԳՈՆԳՈ – ները (GONGO), այսինքն՝ տարբեր մակարդակների պաշտոնյաների կամ նրանց հարազատների ստեղծած «կառավարական ՅԿ-ները», որոնք հովանավորչությամբ շահում են պետությունից տրամադրվող դրամաշնորհների համար հայտարարված մրցույթները:

Միաժամանակ, էական խնդիր է մնում այն, որ հայկական ՅԿ-ների իրավապաշտպան գործունեությունն իրականացվում է հիմնականում արտասահմանյան դրամաշնորհների հաշվին, ինչը հղի է այդ գործունեության ընդհանուր անկման վտանգով, եթե նման աջակցությունը ինչ-ինչ պատճառներով կրճատվի կամ դադարեցվի:

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրությամբ հռչակված է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Ըստ Սահմանադրության 2-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

2005 թ. «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ» զեկույցում արդեն նշվել է, որ Հայաստանում վերջին 10 տարիներին իրականացված ոչ մի ընտրություն չի ճանաչվել իբրեւ ազատ, արդար եւ թափանցիկ ու միջազգային չափանիշներին համապատասխանող: Իսկ ոչ արդար ընտրությունների դեպքում կառավարության ձեւավորման վրա քաղաքացիների ազդեցությունը մեծ չէ:

Ի դեպ, 2006 թվականի հուլիսի 4-ին «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը հաղորդել է, որ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ամփոփագրում, որը կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն Ջոն Դանիլովիչը ներկայացրել է Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին, ասված է. «2006 թվականին ձայնի իրավունքի եւ հաշվետվողականության հայաստանյան միավորը 0,27-ից դարձել է 0, ինչի արդյունքում Հայաստանի ցուցանիշը դարձել է անբավարար»:

«Հայաստանի միավորը քաղաքացիական ազատությունների մասով շարունակաբար եղել է 4 (7բալանոց սանդղակով, որտեղ ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): Սակայն «Ֆրիդոմ Հաուս»-ի վերջին տվյալներով, իրադրությունը Հայաստանում այդ ոլորտում սկսել է վատանալ ու կարող է 4-ից դառնալ 5, այն ժամանակ, երբ կորպորացիան 2008 ֆինանսական տարվա ընտրություն կկատարի», - փաստում են ամփոփագրի հեղինակները: Նրանք նաեւ նշել են, թե «Քաղաքական ազատությունների մասով Հայաստանի միավորների վրա իր բացասական ազդեցությունը կունենա նաեւ 2005 թվականի նոյեմբերին անցկացված

սահմանադրական հանրաքվեն, որից հետո դիտորդները մտահոգություններ հայտնեցին կեղծիքների, ընտրական գործընթացների ոչ պատշաճ վարման ու ընդդիմադիր կուսակցական գործիչների նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ»:

2006 թվականի հոկտեմբերին Երեւան քաղաքի Աջափնյակ համայնքում տեղի ունեցան համայնքի ղեկավարի ընտրություններ: Ի սկզբանե, այս ընտրություններն իրենց մեջ ինտրիգ ունեին նրանով, որ այստեղ իբրեւ համայնքի ղեկավարի թեկնածու էին ցանկանում առաջադրվել գործող թաղապետ Արծրուն Խաչատրյանը եւ Երեւանի նախկին փոխքաղաքապետ, ՀՀ Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» (ամենամեծ) խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի որդին՝ Արման Սահակյանը: Սակայն իրադարձությունները ծավալվեցին այլ կերպ. չառաջադրվեցին ոչ առաջինը, ոչ երկրորդը՝ համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու համար ճանապարհ բացելով մի երրորդ անձի՝ ՀՀ գլխավոր դատախազի եղբոր՝ Ռուբեն Հովսեփյանի համար (որը առաջադրված երկու այլ թեկնածուների համեմատ մեծ առավելություն ուներ): Ինչպես եւ սպասվում էր, նախընտրական ինտրիգները հանգեցրին նրան, որ համայնքի ղեկավարի ընտրություններում ընտրողները բացարձակ անտարբերություն դրսեւորեցին. մասնակցեց ընտրողների 25 տոկոսը միայն, այն դեպքում, երբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընտրողների մասնակցության աստիճանը սովորաբար բարձր է լինում:

Այս առիթով կարելի է մեջբերել սոցիոլոգ, Երեւանի պետական համալսարանի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանի կարծիքը: Ըստ նրա՝ հասարակությունը մոռանում է, որ ինքն է ձեւավորում իշխանությունը: Նրա խոսքով 2007 թ. ընտրություններում իշխանությունը ակնկալում է իր հերթական ռոտացիան, իսկ գործարարները՝ իրենց դիրքերի ուժեղացում քաղաքական դաշտում, իսկ այս երկուսի համեմատ հասարակության՝ որպես երկրում չկոռուկացված իշխանության ստեղծման հիմնական շահագրգիռ բեւեռի, հետաքրքրությունները փոքր են<sup>15</sup>:

Իշխանության ներկայացուցիչներն, ըստ էության, արհամարհում են քաղաքացիների կարծիքները: Օրինակ. նոյեմբերի 13-ին, երբ Ազգային ժողովում պետք է քննարկվեր «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի նախագիծը, որի հեղինակը կառավարությունն է, դրա դեմ բողոքի ցույց էին կազմակերպել տարածքների օտարումից տուժած քաղաքացիները, որոնք սպառնում էին, որ եթե օրինագիծն ընդունվի, ապա իրենք ցույց են անելու կառավարության դիմաց եւ պահանջելու են վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հրաժարականը: Ի պատասխան քաղաքացիների այս սպառնալիքի, վարչապետն ասել է բառացիորեն հետեւյալը. «Ես նրանց խորհուրդ կտայի Սահմանադրությունը նայել ու տեսնել, թե իրենք իրավունք ունե՞ն կառավարության հրաժարական պահանջել»<sup>16</sup>:

## ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՐԱ ԶԼՄ-ՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Իշխանությունների գործունեության վրա զանգվածային լրատվության միջոցների սոցիալական վերահսկողության իրականացումը երկրի ժողովրդավարական զարգացման կարեւոր նախապայմաններից մեկն է: Որպեսզի պարզվի, թե Հայաստանի ԶԼՄ-ներին որքանով է հաջողվում իրականացնել այդ առաքելությունը, անցկացվեցին հարցազրույցներ մի շարք առաջատար տպագիր հրատարակությունների, հեռարձակող

<sup>15</sup> www.Lragir.am, 01.12.2006

<sup>16</sup> «Հայկական ժամանակ», օրաթերթ, 14.11.2006



ընկերությունների, ինչպես նաև լրագրողական կազմակերպությունների ղեկավարների եւ աշխատակիցների հետ<sup>17</sup>:

Հարցվողները, թեպետ եւ ներկայացնում էին տարբեր ուղղվածության (ընդդիմադիրից մինչև իշխանամետ) լրատվամիջոցներ, ըստ էության, համակարծիք էին. ՁԼՄ-ներն, ընդհանուր առմամբ, ի վիճակի չեն իրականացնելու իշխանությունների գործունեության վրա սոցիալական վերահսկողության գործառույթը, ազդելու հասարակական նշանակության խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելու վրա:

Լրատվամիջոցների ղեկավարները զրույցների ընթացքում բերեցին նաև դրական օրինակներ, երբ այս կամ այն սուր հրապարակումները (հեռուստասյուժեներ, ռեպորտաժներ) առաջ են բերել իշխանությունների համաարժեք արձագանքը՝ ձեռնարկվել են գործնական միջոցառումներ, դրանց մասին տեղեկացվել են խմբագրությունները: Ըստ լրագրողների դիտարկումների, իրենց հասցեին քննադատության հանդեպ համեմատաբար ավելի ուշադիր են ՀՀ վարչապետն ու կառավարության աշխատակազմը, արդարադատության նախարարությունը, ինչպես նաև՝ իշխող կոալիցիայի անդամ Հայ հեղափախական դաշնակցություն կուսակցությունը: Սակայն նման ուշադրությունը հազվադեպ երեւոյթ է եւ ավելի շուտ կարող է բացառություն համարվել: Իսկ ընդհանուր առմամբ, ըստ հարցվողների, իշխանություններն անտարբերություն են ցուցաբերում մամուլի հրապարակումների նկատմամբ: Հատկանշական է, որ նման կարծիք են արտահայտել ոչ միայն ընդդիմադիր, այլև իշխանամետ լրատվամիջոցների ներկայացուցիչները:

Ինչպես պնդում է «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը, տպագիր լրատվամիջոցները չեն կարող լրջորեն ազդել իշխանությունների գործունեության վրա՝ ծայրահեղ ցածր տպաքանակների, հետեւաբար՝ լսարանի ոչ բավարար ընդարձակության պատճառով, իսկ հեռուստաընկերությունները, որ առավել զանգվածային լրատվամիջոցներ են, վերահսկվում են հենց իշխանությունների կողմից: Այս տեսակետին համաձայն են երկու այլ օրաթերթերի՝ «Ազգի» եւ «Հայաստանի Հանրապետության» ղեկավարները: «Ազգի» գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանի կարծիքով, եթե հեռուստաընկերություններն ազատ լինեին, իրավիճակը բոլորովին այլ կլիներ: Ինչ վերաբերում է թերթերին, ապա, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր Տիգրան Ֆարմանյանի կարծիքով, նրանց փոքր տպաքանակներն ու նյութերի «անատամությունը» փոխկապակցված խնդիրներ են: «Ստացվել է փակ շրջան, եւ դժվար է ասել՝ տպաքանակները չեն մեծանում, որովհետեւ համարյա չկան իսկականից սուր հրապարակումներ, թե՞, ընդհակառակը, վերջիններիս բացակայությունն է պայմանավորված տպագիր լրատվամիջոցների ցածր պահանջարկով: Սրա հետեւանքով լուրջ խնդիրները հասարակական հնչողություն չեն ստանում», -նշում է Տիգրան Ֆարմանյանը:

ՁԼՄ-ների՝ իշխանությունների քաղաքականության վրա ազդելու անարդյունավետության պատճառը «Հայկական ժամանակ» օրաթերթի մեկնաբան Նաիրա Ջոհրաբյանը համարում է նրանց կախվածությունը տարբեր շահերից: Լրագրողի կարծիքով եւ տպագիր պարբերականները, եւ հեռարձակվող լրատվամիջոցները տարբեր քաղաքական ուժերի կողմից օգտագործվում են իրար հետ հարաբերություններ պարզելու նպատակով, եւ այդպիսով, փոխանակ օբյեկտիվորեն լուսաբանելու իշխանությունների գործունեությանն առնչվող հակասությունները, ՁԼՄ-ները դառնում են հակամարտությունների կողմ:

Ինչպես կարծում է Հայաստանի հանրային ռադիոյի «Ռադիոլուր» լրատվական ծրագրի ղեկավարի տեղակալ Թաթուլ Հակոբյանը, լրատվամիջոցները դառնում են նաև իշխանության ներսում առկա տարբեր խմբավորումների պայքարի միջոց: Եվ դա հենց այն հատուկեմտ դեպքերն են, երբ, պաշտպանելով այս կամ այն դիրքորոշումը,

<sup>17</sup> Հարցվածների ցուցակը. Արամ Աբրահամյան, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Գեղամ Մամուկյան, «Երկիր մեդիա» ՀԸ լրատվական եւ հասարակական-քաղաքական հաղորդումների խորհրդատու, Թաթուլ Հակոբյան, Հայաստանի հանրային ռադիոընկերության «Ռադիոլուր» լրատվական ծրագրի ղեկավարի տեղակալ, Հակոբ Ավետիքյան, «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Նաիրա Ջոհրաբյան, «Հայկական ժամանակ» օրաթերթի մեկնաբան, Նունե Սարգսյան, Հայաստանի «Ինտերնյուս» ՀԿ գործադիր տնօրեն, Տիգրան Ֆարմանյան, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր:

ՁԼՄ-ները ինչ-որ դեր կատարում են եւ ազդում են որոշումների ընդունման վրա: Սակայն այստեղ, ըստ Թաթուլ Չակոբյանի, առկա է իշխանության ներսում եղած կոնկրետ խմբավորումների շահերի եւ նրանց կողմից իրենց նպատակների համար օգտագործվող ՁԼՄ-ների շահերի համընկնումը:

Լսարանի ընդգրկման տեսակետից հեռուստաընկերությունները, ամենից առաջ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը (Հ1), ինչպես նաեւ բազմաթիվ մասնավոր հեռարձակողները, երկրի բնակչության համար տեղեկությունների ստացման հիմնական աղբյուր են: Սակայն, գտնվելով գործող իշխանության խիստ հսկողության տակ, նրանք, իբրեւ կանոն, ծառայում են նրան եւ եթերում բավարար չափով քաղաքական բազմակարծություն չեն ապահովում: Այս իրավիճակը արտացոլված է նաեւ ազդեցիկ միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի եւ այլոց վերջին տարիներին պատրաստած՝ Հայաստանին վերաբերող բազմաթիվ փաստաթղթերում: Մասնավորապես, ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտի 2006 թվականի հունիսի 26-ի հաշվետվության մեջ ասվում է. «Չնայած հեռարձակվող բազմաթիվ մասնավոր լրատվամիջոցների գոյությանը, Ներկայացուցիչն այս դաշտում չի տեսնում հանրային կարծիքի բազմազանության համակարգված լուսաբանում»:

Այս համապատկերում, ըստ հարցված անկախ փորձագետների կարծիքի, որոշ չափով առանձնանում է «Երկիր մեդիա» հեռուստաընկերության գործունեությունը: Վերջինիս եթերում էականորեն ավելացել է քաղաքական տեսակետների (այդ թվում ընդդիմադիր) ներկայացումը եւ այստեղ գնալով ավելի հաճախ են բարձրացվում հասարակական նշանակության այնպիսի հարցեր, որոնց լուծման համար իշխանությունների գործնական քայլեր են անհրաժեշտ:

Սակայն ինչպես եւ տպագիր լրատվամիջոցների ներկայացուցիչները, «Երկիր մեդիայում» էլ նշում են, որ նման նյութերը, որպես կանոն, սպասված արդյունքների չեն հանգեցնում: Քննադատությանն առավել շատ արձագանքում են պետական կառույցների ստորին օղակները, բարձրաստիճան պաշտոնյաները անտեսում են դրանք: Հեռուստաընկերությունը, մեզ տրամադրած տեղեկություններում, դա պատկերավոր ներկայացնում է հետեւյալ օրինակով. երբ հեռարձակվեց երեւանյան զբոսայգիներից մեկում ծառերի հերթական ապօրինի հատումների մասին սյուժեն, հետեւց քաղաքապետարանի խորհուրդը՝ չփչացնել քաղաքի տոնին նվիրված հանդիսությունների մթնոլորտը:

Իշխանությունների գործունեության վրա սոցիալական վերահսկողության գործառույթի իրականացմանը խոչընդոտում են նաեւ լրագրողների եւ ՁԼՄ-ների նկատմամբ ճնշումների զանազան ձեւերը, այդ թվում՝ բռնությունների եւ սպառնալիքների փաստերը, որոնք, արձանագրված են, մասնավորապես, Երեւանի մամուլի ակումբի եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տարեկան զեկույցներում, երկրի լրագրողական կազմակերպությունների մի շարք հայտարարություններում: Նման դեպքերը հանգեցնում են լրատվամիջոցներում ինքնագրաքննության տարածմանը: Վերջինս հաճախ հասարակությանը ներկայացվում է իբրեւ բացառապես լրագրողների ինքնասահմանափակում: Այնինչ, դեպքերը, երբ ինքնագրաքննությունը կրում է ոչ կամավոր բնույթ, այլ հետեւանք է արտաքին ճնշման, կարող են դիտարկվել իբրեւ «թաքնված», «քողարկված» գրաքննության դրսեւորումներ:

Ընդհանուր առմամբ, խոսելով իշխանությունների գործունեության վրա լրատվամիջոցների հսկողության մասին, տեղական անկախ փորձագետները այդ գործառույթի իրականացումը 100 միավորանոց համակարգով գնահատում են 0-ից մինչեւ 10 միավոր:

## 4. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվության ազատության ոլորտում, չնայած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի նոյեմբերի 15-ից) ընձեռած հնարավորություններին, եւս իրավիճակը բարվոք չի կարելի համարել: Այսպես, ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հրատարակած՝ 2001-2006 թթ. ընթացքում տեղի ունեցած տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության դատական գործերի փաստաթղթերի ամփոփ ժողովածուի<sup>18</sup> «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից մինչեւ 2006 թվականի դեկտեմբերի 1-ը տեղեկություններ չտրամադրելու համար հարուցվել է 17 դատական գործ: Դրանցից 8-ը հարուցվել է մարզերում: Ըստ նույն աղբյուրի, հարուցված գործերից 3-ն ավարտվել են մինչ դատական քննությունը, քանի որ պատասխանողները տրամադրել են տեղեկատվությունը՝ դատական քաջքշուկներից խուսափելու համար: Միաժամանակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նշում է, որ թեպետ եւ քրեական, եւ վարչական օրենսդրությունը պատասխանատվություն են նախատեսում տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար, մինչ այժմ այդ իրավունքը խախտած որեւէ պաշտոնյա չի ենթարկվել քրեական կամ վարչական պատասխանատվության: Տեղեկատվության ազատության ոլորտում շարունակում է խնդրահարույց մնալ այն, որ կառավարությունը չի կատարել այս օրենքի՝ 5-րդ եւ 10-րդ հոդվածների պահանջները եւ չի ընդունել տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգերը: Եվ, ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, դատարանները երբեմն մերժել են տեղեկատվություն չտրամադրելու վերաբերյալ հայցերը, հիմնավորելով, թե կառավարությունը չի հաստատել տրամադրման կարգը: Ի դեպ, այդ կարգերն ընդունելու անհրաժեշտությունը նշել է նաեւ ԵԱՀԿ մամուլի հարցերով ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտին 2006 թվականի հուլիսի 26-ին հրապարակված «Մամուլի ազատության իրավիճակը Հայաստանում» իր հաշվետվության մեջ: Եվս մի օրինակ՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի միեւնույն հարցմանը տվել է երեք իրարամերձ պատասխաններ՝ ի վերջո մերժելով կենտրոնին տրամադրել 2005թ. ընթացքում նախարարության եւ «Արմենտելի» միջեւ կայացած բանակցությունների միստերի արձանագրությունները, մերժումը հիմնավորելով նրանով, թե տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի տրամադրման կարգը սահմանված չէ կառավարության կողմից<sup>19</sup>:

Հայաստանում իշխանության երեք թեւերից ամենից թափանցիկը, թերեւս, Ազգային ժողովի գործունեությունն է: Այլ հարց է՝ ընդունված որոշումների եւ օրենքների արդյունավետությունը, սակայն բուն գործընթացը կարելի է թափանցիկ համարել. Ազգային ժողովի միստերը բաց են, բոլոր օրինագծերը, որ պետք է քննարկվեն, տեղադրվում են Ազգային ժողովի ինտերնետային կայքում, այդտեղ տեղադրվում են նաեւ ընդունված օրենքները, հաղորդագրություններ մշտական հանձնաժողովների աշխատանքի մասին, յուրաքանչյուր քառօյա միստերից հետո տեղի են ունենում խմբերի եւ խմբակցությունների մամուլ ասուլիսները: Հանձնաժողովներին կից կան նաեւ հասարակական խորհուրդներ, որոնք, անհրաժեշտության դեպքում ներգրավվում են օրինագծերի նախնական քննարկումներին:

<sup>18</sup> տես՝ <http://www.foi.am/UserFiles/File/GirqDatakan.pdf>

<sup>19</sup> տես՝ <http://www.foi.am/am/content/117/>

Իշխանության մյուս թելում՝ կառավարությունում որոշումներ ընդունելու գործընթացը թափանցիկ չէ. հիշատակենք թեկուզ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու պատմությունը *(տես՝ սույն գեկույցի «ՁԼՄ եւ տեղեկատվության ոլորտը կարգավորող օրենսդրությունը եւ փոփոխությունները 2006 թվականին» բաժնում)*:

Կառավարության քաղաքականության ոչ թափանցիկ լինելու փաստերից մեկը «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» 2002 թվականի օգոստոսի 8-ի 1151-Ն որոշումն ու դրա ուժով Երեւանի Բուզանդի փողոցում քաղաքացիներին իրենց բնակարաններից զրկելը: Հասարակության մի ստվար զանգվածի ճակատագրին վերաբերող որոշումն ընդունվել էր առանց նույն հասարակության շահերը հաշվի առնելու, ավելին՝ բնակիչների, հասարակական կազմակերպությունների ու գործիչների բազմաթիվ բողոքներն անգամ տարիներ շարունակ չէին ազդում կառավարության քաղաքականության վրա: Եվ միայն 4 տարի անց՝ 2006 թվականի մարտի 18-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հայցով Սահմանադրական դատարանը այդ որոշումը համարեց հակասահմանադրական, սակայն կառավարության, ըստ էության փակ դռների հետեւում ընդունված որոշումն արդեն իր բացասական ազդեցությունն էր ունեցել բազմաթիվ քաղաքացիների ճակատագրի վրա:

Կառավարության նիստերը լուսաբանվում են, ամեն հինգշաբթի կառավարության նիստից հետո լրագրողների առջեւ հաղորդումներ են ունենում կարելու հարցերից որեւէ մեկի պատասխանատուները, սակայն, որոշումների նախապատրաստության եւ ընդունման գործընթացն է փակ եւ դրա վրա հասարակության ազդեցությունը չնչին է, քանի որ կառավարության որոշումների նախագծերը համարվում են աշխատանքային փաստաթղթեր եւ մատչելի չեն հասարակության համար:

Կառավարության [www.gov.am](http://www.gov.am) ինտերնետային կայքը կառավարության նիստերի մասին պաշտոնական հաղորդագրությունները հրապարակում է նույն օրը, սակայն կառավարության որոշումները հրապարակվում են ուշացումով: Այսպես՝ 2006 թվականի նոյեմբերի 18-ին այդ էջ այցելողը այնտեղ կգտներ մինչեւ 2006 թվականի հոկտեմբերի 19-ի որոշումները: Այսինքն՝ կառավարության հոկտեմբերի 19-ից հետո տեղի ունեցած 4 նիստերում ընդունված որոշումները մատչելի կլինեն բավականին ուշացումով: Գիշտ է, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի «ՀՀ օրենքները, ՀՀ ԱԺ որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ կառավարության՝ օրենքի ուժ ունեցող որոշումները, ՀՀ նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ՀՀ կառավարության եւ ՀՀ վարչապետի որոշումները՝ դրանք ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում, պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», սակայն, ստացվում է, որ անգամ պաշտոնական հրապարակումից հետո դրանք անմիջապես չեն տեղ գտնում կառավարության կայքում: Իսկ «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիրը» հրապարակվում է յուրաքանչյուր երեքշաբթի, սակայն դրա տպաքանակը մեծ չէ՝ 1080 օրինակ: Ավելացնենք, որ «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ը սպասարկում է նաեւ <http://www.arlis.am> կայքը, որտեղ նույնպես հրապարակվում են օրենքներն ու կառավարության որոշումները: Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի, տեղեկատվության տնօրինողի ինտերնետային կայքի առկայության դեպքում պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները պետք է հրապարակվեն այդ կայքերում:

Ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եւ ԵՄԱ դիտարկումների, առավել արդյունավետ են աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության [www.mss.am](http://www.mss.am) , ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության [www.mfe.gov.am](http://www.mfe.gov.am) , առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության [www.minted.am](http://www.minted.am) , արդարադատության նախարարության՝ [www.justice.am](http://www.justice.am) , արտաքին գործերի

նախարարության՝ [www.ArmeniaForeignMinistry.am](http://www.ArmeniaForeignMinistry.am) ինտերնետային պաշտոնական կայքերը:

Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը բացել է միայն երիտասարդական քաղաքականության մասին [www.youthpolicy.am](http://www.youthpolicy.am) կայքը, որը նոր է եւ որեւէ օգտակար տեղեկություն չէր պարունակում, իսկ առողջապահության նախարարության ([www.armhealth.am](http://www.armhealth.am)) եւ էներգետիկայի նախարարության ([www.minenergy.am](http://www.minenergy.am)) կայք էջերը 2006 թվականի նոյեմբերի չէին գործում:

Տեղեկություններով բավականին հագեցած են եւ ՀՀ ոստիկանության ([www.police.am](http://www.police.am)) եւ գլխավոր դատախազության ([www.genproc.am](http://www.genproc.am)) ինտերնետային էջերը, ինչը չես ասի պաշտպանության նախարարության մասին, որի [www.mil.am](http://www.mil.am) պաշտոնական էջի միակ առավելությունը օրենսդրական բազան է, սակայն նորությունների բաժինն ավելի շատ նախարարի PR ակցիա է հիշեցնում:

Հայաստանի մաքսային պետական կոմիտեի [www.customs.am](http://www.customs.am) կայքի գերատեսչական նորմատիվ ակտերի բաժնում վերջին գրառումը 2002 թվականի մարտի 18-ի մի հրաման է: Մաքսային գործառույթների վերաբերյալ կառավարության որոշումների բաժնի գրառումներն ավարտվում են 2002 թվականի օգոստոսին, ընդ որում՝ այստեղ տրվում են ոչ թե որոշումները, այլ նշվում է միայն «Պաշտոնական տեղեկագրի» այն համարը, որտեղ տպագրված է տվյալ որոշումը:

## ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ

### Հանրային ոլորտի ծառայությունները եւ դրանց կարգավորումը

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որպես կարգավորվող ոլորտներ, նշվում են.

ա/ էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը,

բ/ ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, տեխնիկական, արդյունաբերական ջրի մատարարումը, ջրահեռացումը եւ կեղտաջրերի մաքրումը, գ/ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը:

Այս գլխում օգտագործված են Ջարգացման եւ վերակառուցման միջազգային բանկի, Համաշխարհային բանկի եւ ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ, Համայնքների ֆինանսիստների ասոցիացիայի մասնակցությամբ 2004թ.

իրականացված՝ Հայաստանի գյուղական ենթակառուցվածքների ուսումնասիրության նյութերը: Հանրային ծառայությունների ոլորտում իրավիճակն առավել մանրամասն ներկայացված է գյուղական համայնքների օրինակով: Դա, ամենից առաջ, պայմանավորված է նրանով, որ Հայաստանի 926 համայնքներից 871-ը գյուղական է: Ենթակառուցվածքների վիճակը, հետեւաբար՝ ծառայությունների մատուցման որակը հանրապետության գյուղական բնակավայրերում, միջին հաշվով, ավելի վատ է, քան քաղաքային բնակավայրերում: Բացի այդ՝ հանրային ծառայությունների ոլորտի հիմնախնդիրները եւ դրանց դրսեւորումները գյուղական բնակավայրերում ավելի ցայտուն եւ ակնառու են:

Հանրային կառավարման համակարգում քաղաքականության իրականացման, որոշումների կայացման գործընթացում շարունակվում է հանիրավի բարձր մնալ կենտրոնացվածության աստիճանը՝ բացակայում է թափանցիկությունը, չի գործում հաշվետվողականության արդյունավետ համակարգ, չի ապահովվում քաղաքացիական հասարակության լիիրավ մասնակցությունը, ցածր է դրանց որակը եւ մատչելիությունը բնակչության, հատկապես աղքատ շերտերի համար:

ՀՀ Սահմանադրությունը եւ մի շարք օրենքներ պարունակում են ծառայությունների, ներառյալ՝ հանրային ծառայությունների մատուցման ընթացքում ծագող իրավահարաբերություններին վերաբերող դրույթներ:

**ՀՀ Սահմանադրություն:** 31.1 հոդվածով՝ «Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների եւ աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ»:

**«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք** ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին: Այդ օրենքի համաձայն ստեղծվել եւ գործում է **Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը**, որը կոչված է հավասարակշռել սպառողների եւ նշված ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնողների շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձեւավորմանն ու զարգացմանը եւ խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

**«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք** ընդունվել է 2001թ. հունիսի 26-ին: Օրենքը կարգավորում է սպառողների եւ արտադրողների, (վաճառողների, կատարողների) միջեւ ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամանակ ծագող հարաբերությունները, սահմանում է սպառողների կողմից պատշաճ որակի եւ սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման իրավունքները, ինչպես նաեւ սահմանում է այդ իրավունքների իրականացման մեխանիզմը:

Օրենքն ուղղված է ոչ միայն սպառողների իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովմանը, այլեւ բարձրացնում է ապրանք արտադրողների, աշխատանք կատարողների, ծառայություն մատուցողների պատասխանատվությունը՝ իրենց աշխատանքի որակի համար:

Օրենքի նշանակությունը հատկապես կարեւորվում է այն սպառողների համար, որոնք ունենալով շատ ցածր գնողունակ հնարավորություն, ստիպված են ընտրել էժանազին եւ հետեւաբար ցածրորակ ապրանքներ ու սպասարկում:

Այդ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին առնչվող մի քանի պարտականություններ: Առաջին՝ կատարողը պարտավոր է սպառողին մատուցել ծառայություն, որի որակը համապատասխանում է պայմանագրին: Երկրորդ՝ պայմանագրում ծառայության որակի մասին պայմանների բացակայության դեպքում, կատարողը պարտավոր է մատուցել այնպիսի ծառայություն, որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար նման ծառայությունը սովորաբար օգտագործվում է: Երրորդ՝ եթե ծառայության որակի նկատմամբ նորմատիվ փաստաթղթերով սահմանված են պարտադիր պահանջներ, ապա կատարողը պարտավոր է սպառողին մատուցել դրանց համապատասխանող ծառայություն:

**ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք** ընդունվել է 1998 թ. մայիսի 5-ին: Օրենսգրքի 485-րդ հոդվածը սահմանում է ապրանքի որակի հասկացությունը եւ վաճառողի պարտավորությունները որակի հարցում: 486-րդ հոդվածը սահմանում է ապրանքի որակի երաշխիքի հասկացությունը: 490 եւ 491-րդ հոդվածներով սահմանվում են ապրանքի որակի ստուգման կարգը եւ անպատշաճ որակի ապրանք հանձնելու հետեւանքները: 521-րդ հոդվածը սահմանում է մատակարարման պայմանագիր, իսկ 550-րդ հոդվածը՝ էներգամատակարարման պայմանագիր հասկացությունները: 551-560-րդ հոդվածները կարգավորում են էներգամատակարարման պայմանագրով առաջացող իրավահարաբերությունները մատակարարող եւ սպառող կողմերի միջեւ:

**«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք** ընդունվել է 2001թ. մարտի 7-ին: Այս օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների, էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական

անձանց եւ էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

Օրենքով էներգետիկայի բնագավառում կարգավորումն իրականացնող մարմին է սահմանվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որը ի թիվս այլ իրավասությունների, սահմանում է կարգավորվող սակագները, սպասարկման որակի նկատմամբ պահանջները (հոդված 10 գ/ է/):

**ՀՀ ջրային օրենսգիրքն** ընդունվել է 2002թ. հունիսի 4-ին: Դրա 7-րդ հոդվածը, օրենսգրքի խնդիրների թվում, սահմանում է, մասնավորապես, «բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի եւ որակի ջրով ապահովումը»:

Օրենսգրքի 38-րդ հոդվածը, որպես ջրային համակարգի օգտագործման պարտադիր պայման, ամրագրում է մատուցվող ծառայությունների որակին ներկայացվող պահանջները:

66-րդ հոդվածը նվիրված է ջրերի որակի ստանդարտներին, իսկ 67-րդը՝ այդ ստանդարտների պահպանմանը: Խմելու ջրի ստանդարտները սահմանված են 70-րդ հոդվածով: 79 եւ 79.1 հոդվածները նվիրված են ոչ մրցակցային ջրօգտագործման սակագների սահմանմանն ու վերանայման գործընթացին:

**«էլեկտրոնային հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքն** ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին: Դրա 1-ին հոդվածի 6-րդ կետը, որպես օրենքի նպատակներից մեկը, նշում է ոլորտի արդյունավետ կարգավորում ապահովելը, «ներառյալ՝ արդար եւ ժամանակին արձագանքումը սպառողների բողոքներին»:

5-րդ հոդվածը կարգավորողին պարտավորեցնում է, մասնավորապես, ոլորտում ապահովել մատուցված ծառայությունների, դրանց հարակից ենթակառուցվածքների ընտրության, գների եւ որակի առավել օգտավետությունը վերջնական օգտագործողների համար: Այնուհետեւ՝ ... կարգավորել ծառայությունները, որի ապահովման համար «...սահմանել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների եւ ծառայություններ մատուցողների համար գործունեության որոշակի չափանիշներ»:

Օրենքի 9-րդ գլուխը կոչվում է «Սպառողների իրավունքների պաշտպանությունը»: Սակայն, ըստ փորձագետների, այդ գլխի հոդվածների մեջ ավելի շատ սահմանափակումներ եւ արգելքներ են պարունակվում սպառողների հանդեպ, քան իրավունքներ: Այսպես՝ 43-րդ հոդվածը (կետ 1) որոշակի հանգամանքներում, ծառայություններ մատուցողին իրավասություն է տալիս «հրաժարվել ծառայություններ մատուցելուց, դադարեցնել կամ ընդհատել դրանց մատուցումը»:

**«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքն** ընդունվել է 1999թ. նոյեմբերի 9-ին: Դրա 2-րդ հոդվածի ե) կետը սահմանում է տեխնիկական պայմաններ հասկացությունը, որպես տեխնիկական պահանջները սահմանող փաստաթուղթ, որին պետք է համապատասխանեն որոշակի արտադրանքը, աշխատանքը, ծառայությունը: 3-րդ հոդվածով, որպես ստանդարտացման նպատակ նշվում է արտադրանքի, աշխատանքի, ծառայության որակի բարձրացումը, իսկ որպես ստանդարտացման օբյեկտ՝ արտադրանքը, աշխատանքը եւ ծառայությունը: 9-րդ հոդվածի 2-րդ կետը ազգային ստանդարտների պահանջներ է սահմանում աշխատանքի եւ ծառայությունների որակի ապահովման վերաբերյալ:

**«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքն** ընդունվել է 2004թ. մայիսի 26-ին: Օրենքի 13-րդ հոդվածը նշում է, որ պետական չափագիտական հսկողությունը եւ վերահսկողությունը տարածվում են, մասնավորապես, այն չափումների վրա, որոնց արդյունքներն օգտագործվում են արտադրանքի եւ ծառայությունների որակի եւ անվտանգության հսկողության եւ փորձարկումների ժամանակ:

**«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն** ընդունվել է 1992թ. նոյեմբերի 16-ին: Ըստ օրենքի՝ քաղաքների եւ

այլ բնակավայրերի բնակիչներն ապահովվում են մարդու կենցաղային եւ ֆիզիոլոգիական կարիքների համար խմելու ջրով՝ անհրաժեշտ քանակությամբ՝ հիգիենիկ նորմատիվների համաձայն: Խմելու, կենցաղային, տնտեսական, արտադրական, տեխնիկական կարիքների համար օգտագործվող ջրի որակը պետք է համապատասխանի սանիտարական կանոններին:

Պետական մարմինները իրականացնում են միջոցառումներ ջրամատակարարման համակարգի պահպանման, զարգացման եւ բնակչությանը բարձրորակ ջրով ապահովելու ուղղությամբ:

Կենտրոնացված եւ ոչ կենտրոնացված ջրամատակարարման, լողանալու, սպորտով զբաղվելու եւ բնակչության հանգստի, բուժական նպատակներով օգտագործվող, ինչպես նաեւ բնակավայրերի սահմաններում գտնվող ջրամբարների ջրի որակը պետք է համապատասխանի սանիտարական կանոններին:

Բնակչության ջրօգտագործման աղբյուրների աղտոտումը կանխարգելելու եւ վերացնելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանվում են սանիտարական պահպանման գոտիներ՝ հատուկ ռեժիմով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ջրի որակը սանիտարական կանոններին չհամապատասխանելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության որոշմամբ ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների եւ քաղաքացիների կողմից ջրի աղբյուրների օգտագործումը դադարեցվում է:

**«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքն** ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին: Դրա 37 հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության եւ կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է մի շարք պարտադիր լիազորություններ, մասնավորապես՝ «կազմակերպում եւ կառավարում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի եւ այլ կառուցվածքների շահագործումը»:

**«Բնական գազի մատակարարման եւ օգտագործման ժամանակավոր կանոնները»** հաստատվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ:

Այս կանոնների հիման վրա են կնքվում գազի մատակարարման պայմանագրերը մատակարարների եւ սպառողների միջեւ: Կանոններում բնական գազ կամ գազ հասկացությունն ընդունվում է ԳՈՍ 5542-87-ի սահմանմամբ: Կանոնների 36-րդ կետը սպառողին գազի մատակարարման ընդհատումների կամ սահմանափակումների դեպքում, նախատեսում է տուգանք, որը պայմանագրի համաձայն, պետք է վճարվի սպառողին: 41-րդ կետի համաձայն, սպառողին իրավունք է վերապահված, գազի որակը պայմանագրին չհամապատասխանելու դեպքում, դադարեցնել գազի սպառումը, սակայն պաշտոնապես տեղեկացնելուց հետո:

**«Էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման ժամանակավոր կանոններ»:** Հաստատվել է ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001թ.

մայիսի 29-ի որոշմամբ: Կանոնների 37-րդ կետն սահմանում է, որ «Էլեկտրամատակարարող ընկերությունը պարտավոր է ապահովել սպառողների որակով, անվտանգ եւ հուսալի էլեկտրամատակարարումը՝ համաձայն պայմանագրով ամրագրված սնման սխեմայի»: 40-րդ կետը սահմանում է նաեւ տույժ՝ չմատակարարված էլեկտրաէներգիայի արժեքի 2%-ի չափով: 41-րդ կետը մատակարարին պարտավորեցնում է պահպանել պայմանագրում նշված էլեկտրաէներգիայի որակի ցուցանիշները, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում, որակի՝ տեխնիկական կանոնակարգերով սահմանված ցուցանիշները: Ըստ 42-րդ կետի, մատակարարը, որակին չհամապատասխանող մատակարարված էլեկտրաէներգիայի համար, փոխհատուցում է սպառողի կրած վնասը, պայմանագրով եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



## Հանրային ոլորտի ծառայությունների որակը

«Որակ» հասկացությունը կանոնակարգվում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ եւ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 485-րդ հոդվածներով: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը ծառայություն մատուցողին պարտավորեցնում է, մասնավորապես, պայմանագրին համապատասխանող որակի ծառայություն (ապրանք) մատուցել: Նույն հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է մատուցել այնպիսի ծառայություն (ապրանք), որոնց համար նման ծառայությունը (ապրանքը) սովորաբար օգտագործվում է, իսկ 5-րդ մասով սահմանվում է, որ եթե ծառայության (ապրանքի) որակի նկատմամբ նորմատիվ փաստաթղթերով սահմանված են պարտադիր պահանջներ, ապա մատակարարը պարտավոր է սպառողին հանձնել այդ պարտադիր պահանջներին համապատասխանող ծառայություն (ապրանք): Նույն պահանջները սահմանված են նաեւ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 485-րդ հոդվածի, համապատասխանաբար՝ 1-ին, 2-րդ եւ 4-րդ կետերով:

### Ա. Էներգետիկայի բնագավառ

#### 1. Էլեկտրական էներգիայի մատակարարում

Հայաստանում էլեկտրաէներգիայի մատակարարման հասանելիությունը մոտ է 100 տոկոսին՝ գրեթե բոլոր տնային տնտեսությունները միացված են մատակարարման ցանցին: Հայաստանի էլեկտրականության բաշխման ցանցը պատկանում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին եւ շահագործվում է նրա կողմից: Էլեկտրականության վճարումները կազմում են ընտանիքների բյուջեների զգալի մասը՝ մեկ ընտանիքի ընդհանուր ծախսերի մոտ 5%-ը<sup>20</sup> կամ կենցաղային ծառայությունների 87%-ը:

#### Ենթակառուցվածքի վիճակը

Էլեկտրամատակարարման ցանցը մեծ մասամբ հին է, իսկ գյուղական շրջաններում՝ շատ դեպքերում 40 տարուց ավել հնության էլ չի համապատասխանում ժամանակակից անվտանգության տեխնիկական ստանդարտներին: Հիշատակված ուսումնասիրության տվյալները վկայում են, որ համակարգը լավ վիճակում է գյուղական համայնքների 11%-ից պակասում, բավարար՝ 76%-ում, եւ վատ՝ 13%-ում: Դրա պատճառով տեղի են ունենում հոսանքի հաճախակի անջատումներ, անգամ երբ վճարումները իրականացվել են ժամանակին: Անջատումները միջին հաշվով կազմում են ամսական 20-25 ժամ:

Չնայած համակարգի ընդհանուր վատ վիճակին եւ ընթացիկ ծախսերի փոքր մակարդակին, հասարակության բավարարվածությունը բավականին բարձր է. ըստ նույն հարցման՝ 87%-ը բավարարված է էլեկտրականության մատակարարումից. նրանցից 40%-ը մտածում է, որ մատակարարումը լավ է:

Ընդհանուր առմամբ, բոլոր համայնքների բնակիչների համար էլ էլեկտրականությունը մատչելի է: Սակավաթիվ են այն բնակիչները, որոնք չեն կարողանում վճարել վարձը եւ զրկվում են լույսից: Այս մարդկանց թիվը սակավ է, քանի որ նրանց օգնության են հասնում գյուղապետարանները, համայնակիցները եւ երբեմն էլ էլեկտրացանցի աշխատակիցները զիջում են եւ սպասում, որ տվյալ ընտանիքը թոշակ կամ նպաստ ստանա, որպեսզի կարողանա վճարել վարձը:

<sup>20</sup> «Հայաստանում աղքատության սոցիալական ակնարկ», վիճակագրական վերլուծական հաշվետվություն, Երեւան 2003.

Դժգոհություններ կան հոսանքի գիշերային անջատումներից, որոնք երբեմն կանոնավոր բնույթ են կրում: Որոշ համայնքներում հոսանքի անջատումների հետ կապված հեռախոսային կապը եւս խափանվում է: Այս խնդիրը արդիական է հատկապես այն համայնքներում, որտեղ տեղադրվել է թվային ԱՅԿ:

Այս ծառայության մատչելիությունը, երբեմն էլ էլեկտրիկների «գիջողական վերաբերմունքը» բնակչության մոտ ծառայության որակի վերաբերյալ դրական կարծիք է ստեղծում, նրանք բողոքում են միայն այն դեպքերից, երբ հոսանքի տատանումների պատճառով շարքից դուրս է եկել կենցաղային տեխնիկան:

Հետազոտության տվյալները վկայում են, որ այս ենթակառուցվածքը ֆիզիկապես հնացել է. շատ տեղերում այն չի փոխվել խորհրդային տարիներից ի վեր: Հոսանքալարերի հնության պատճառով՝ ուժեղ քամիների եւ անձրեւների ժամանակ վթարներ են տեղի ունենում:

Հարցվողները դժգոհ են այս ծառայության պահպանման եւ սպասարկման աշխատանքներից: Լինում են էլեկտրասյուների տապալման եւ լարերի գետին ընկնելու դեպքեր: Հաճախ բնակիչների միջոցներով նոր կառուցված կամ վերականգնված հենասյուներն ու գծերը չեն համապատասխանում սահմանված չափանիշներին եւ անվտանգ չեն: Շատ կան թեքված եւ վերանորոգման խիստ կարիք ունեցող սյուներ, որոնք վտանգ են ներկայացնում բնակչության համար:

Հարցվողներից ոմանք նշել են, որ էլեկտրիկները օպերատիվ են աշխատում եւ ժամանակին վերացնում են վթարները, սակայն ավելի շատ նշվում է, որ էլեկտրիկների արձագանքը ուշացած է, ինչի պատճառով մարդիկ որոշ ժամանակով հոսանքազրկվում են:

## 2. Ջերմամատակարարում

Այս ոլորտում հասանելիության աստիճանը խիստ ցածր է: Խորհրդային տարիներին հանրապետության բոլոր քաղաքներն ու որոշ գյուղեր ունեին կենտրոնացված ջեռուցման համակարգեր: Բնակարանային ֆոնդի մասնավորեցումը, էներգակիրների թանկացումն ու բնակչության վճարունակության անկումը կենտրոնացված ջեռուցման ապահովումը դարձրին գրեթե անհնար: Վերջին տարիների ընթացքում կենտրոնացված ջեռուցումը հասանելի է եղել միայն Երեւան, Գյումրի, Հրազդան, Չարենցավան եւ Ջերմուկ քաղաքների մի քանի թաղամասերի բնակիչների:

Այս բնագավառում ավելի հեռանկարային է «լոկալ» ջեռուցման ուղին: «Լոկալ» ջեռուցման չեն անցնի, թերեւս, միայն այն բնակավայրերը կամ թաղամասերը, որոնք գտնվում են ջերմային էներգիա արտադրող կայաններին մոտ (Հրազդանի ՊՇԷԿ, Երեւանի ՋԷԿ):

## 3. Գազամատակարարում

Գազամատակարարման ենթակառուցվածքի հետ կապված համայնքների երեք խումբ կարելի է առանձնացնել. 1. համայնքներ, որոնք նախկինում ունեցել են այս ենթակառուցվածքը, 2. համայնքներ, որտեղ ամբողջությամբ նոր է կատարվում գազաֆիկացումը, 3. համայնքներ, որտեղ խորհրդային տարիներին գազաֆիկացում արվել է, սակայն բնակավայրը զարգացել է, ընդլայնվել եւ նոր թաղամասերն այդ ենթակառույցը չունեն:

Որոշ համայնքներում բնակչության զգալի մասը գազ ունի, սակայն ենթակառուցվածքի ֆիզիկական վիճակը լուրջ անհանգստություն է առաջացնում գյուղացիների մոտ: Համայնքների մի մասում խորհրդային տարիներին եղած ենթակառուցվածքը ներկայումս ավերված կամ թափանցել է: Այդպիսի իրավիճակ բնորոշ է հատկապես սահմանամերձ համայնքներին:

Գյուղական համայնքներում գազամատակարարումը իսպառ չի վերացնում վառելիքի ավանդական միջոցների օգտագործումը կենցաղային նպատակով: Երբ

համայնքը կամ տնտեսությունն ունի ավանդական վառելիքի ձեռքբերման մատչելի տարբերակներ, ապա, որպես կանոն, դրանք զուգահեռ օգտագործվում են գազի հետ միասին: Այս երեւոյթը առկա է հատկապես այն համայնքներում, որտեղ զարգացած է անասնապահությունը, եւ աթարը բավարարում է վառելիքի համար:

Ինչ վերաբերում է այս ծառայության որակին, ապա դրա գնահատականները միանշանակ չեն: Որոշ դեպքերում, հարցվողները նշում են, թե՝ «գազի կեսը օդ է», իսկ որոշ դեպքերում էլ գոհ են որակից: Հարցվողները դժգոհություն են արտահայտում նաեւ որոշ բնակիչների կողմից վճարների ուշացման հետ կապված զանգվածային անջատումներից:

Հարկ է նշել, որ չնայած բնական գազի մեծ պահանջարկին, այնուամենայնիվ շատերի համար այն մատչելի չէ, ընդ որում՝ բնակչության համար առավելապես անմատչելի են գազաֆիկացման ծախսերը, այլ ոչ թե վարձավճարները:

Չնայած դրան, շատերը պատրաստ են նաեւ տրամադրելու իրենց գոյության հիմնական միջոցները գազ ստանալու համար, քանի որ համոզված են, որ գազի առկայությունը կնպաստի.

- նյութական միջոցների արդյունավետ օգտագործմանը, քանի որ այն ավելի էժան վառելանյութ է, քան մյուս վառելիքները, որոնք հիմա օգտագործվում են,
- կենցաղի մաքրությանը եւ անվտանգությանը,
- ընտանիքների կողմից կատարվող ֆիզիկական աշխատանքների կրճատմանը,
- գոմաղբի՝ որպես պարարտանյութի, նպատակային կիրառմանը,
- բնապահպանական խնդիրների լուծմանը եւ անտառահաման կասեցմանը,
- ջերմոցային տնտեսությունների ստեղծմանը եւ ընդլայնմանը:

Գազի բաշխման համակարգը նախքան 1991-ը ծառայում էր մինչեւ 480000 բաժանորդի, ընդգրկելով 42 քաղաք եւ 365 գյուղ: Սակայն այս համակարգը սկսեց քայքայվել նախկին ԽՄ փլուզումից հետո, եւ գազամատակարարումը բնակչությանը աստիճանաբար դադարեց 1991-97 թթ.:

Վերջին տարիներին տեղի է ունենում համակարգի վերականգնում եւ ներկայումս գազի սպառողների թիվն արտահայտված է ստորեւ.

Թվականներ	2004	2005	2006
Բաժանորդներ (հազար բաժանորդ)	270	360.6	413.6
Գազֆիկացված համայնքներ	276	316	420
Այդ թվում՝ քաղաքներ	40	41	42

## Բ. Ջրային համակարգ

### 1. Խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում

Հայաստանն ունի հարաբերականորեն հարուստ ջրային ռեսուրսներ, ընդհանուր ջրային ռեսուրսները տարեկան կազմում են մոտ 10.2 միլիարդ խորանարդ մետր /մ<sup>3</sup>/, որից միայն 2.4 միլիարդն է օգտագործվում որպես խմելու ջուր: Խմելու ջրի համակարգը բաղկացած է 123 ջրի հավաքման կայաններից, 176 ստորգետնյա ջրային ակունքներից (արտեզյան հորեր եւ այլն), 29 գետային հավաքման կայաններից, 4820 կմ հիմնական ջրատարներից, որոնցից 700 կմ գտնվում է Երեւանի շուրջը, իսկ մնացածը՝ մարզերում: Բաշխման ընդհանուր ցանցը կազմում է 8020 կմ, որից 1900 կմ Երեւանում է:

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգում ընդգրկված են բոլոր քաղաքներն ու գյուղական բնակավայրերի 36.5%-ը: Կենտրոնացված ջրամատակարարումը հասանելի է տնային տնտեսությունների 71%-ին, քաղաքային բնակավայրերում՝ 87%-ին, գյուղական բնակավայրերում՝ 45%-ին:

Խմելու ջրագծերի ներքին ցանցերը, որպես կանոն, համայնքապատկան են, իսկ արտաքին ցանցերը հիմնականում պատկանում են ջրային տնտեսություններին:

Հայաստանում խմելու ջրի հիմնական պաշար են հանդիսանում ստորերկրյա ջրերը՝ բնական աղբյուրները եւ խորքային հորերը: Ջրամատակարարման մոտ 10%-ն իրականացվում է մակերեսային աղբյուրներից: Խմելու ջրից բացի, զգալի է նաեւ ոռոգման ջրի պահանջարկը, որը մասամբ բավարարվում է Սեւանա լճի ջրերի հաշվին:

Հայաստանում ջրամատակարարման եւ ջրաբաշխման համակարգերը քայքայված եւ վատթար վիճակում են: Ծառայության որակը, ընդհանուր առմամբ, չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

Երկրում խմելու նպատակով օգտագործվող ջուրը աղբյուրներում լավորակ է: Շատ դեպքերում աղբյուրներն իրենց հզորությամբ չեն բավարարում սպառողների ջրապահանջը: Աղբյուրների դիրքային տեղաբաշխվածությունը թույլ է տալիս բնակավայրերի մեծ մասի ջրամատակարարումն իրականացնել ինքնահոս եղանակով, այնինչ ներկայումս դեռ մեծ թվով բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է պոմպերի միջոցով: Վատ վիճակում են ջրամատակարարման համակարգերի պոմպակայանները, որոնք կարիք ունեն պոմպերի, էլեկտրական շարժիչների, փականների փոխարինման, ինչպես նաեւ՝ շենքի վերանորոգման կամ վերականգնման:

Ներկայումս գոյություն ունեցող քլորացման սարքավորումների մեծ մասը փոխարինման կարիք ունի: Տեղական աղբյուրներից սնվող որոշ համակարգեր չունեն նույնիսկ քլորակայաններ: Աղբյուրներից դեպի օրվա կարգավորման ջրամբարներ եւ համայնքներ տանող ջրատարները պողպատից կամ թուջից են, իսկ առանձին դեպքերում՝ նաեւ ասբեստոցեմենտից:

Չնայած աղբյուրներից վերցվում է հաշվարկային պահանջարկից ավելի շատ ջուր, համակարգից տեղի ունեցող մեծ չափերի կորուստների եւ ջրի անկառավարելի օգտագործման պատճառով, չի ապահովվում սպառողների շուրջօրյա ջրամատակարարումը: Արդյունքում, սպառողների մեծ մասը ջրով ապահովվում է օրվա ընթացքում 5 ժամից ոչ ավելի: Փոքր գյուղերից շատերը չունեն ջրամատակարարման ներտարածքային բաշխիչ ցանց, որի հետեւանքով գյուղերի բնակիչներն օգտվում են բակային ծորակներից կամ անհատական հորերից:

Բոլոր 10 մարզերի ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայություններով ապահովելը Հայջրնուդկոյուղի (ՀայՋԿ) ձեռնարկությանն մենաշնորհն է: Երեւանի Ջրնուդ-Կոյուղի (ԵրՋԿ) ձեռնարկությունն ապահովում է Երեւան քաղաքի եւ մի շարք հարակից գյուղերի ջրամատակարարումը: Մոտ 500 փոքր գյուղեր ունեն իրենց սեփական՝ ինքնուրույն գործող ջրամատակարարման համակարգը եւ չեն սպասարկվում ԵրՋԿ-ի կամ ՀայՋԿ-ի կողմից

Ջրամատակարարման բնագավառում, վերջին 10 տարիների ընթացքում, Հայաստանում գործող մարդասիրական, վարկային, հասարակական ու միջպետական ծրագրերով աշխատանքներ են կատարվել 242 բնակավայրերում:

Շուրջ 120 բնակավայրերում կատարված աշխատանքների շնորհիվ, լուծվել են նրանց ջրամատակարարման բնագավառում առկա հիմնական խնդիրների մի մասը: Խմելու ջրի ենթակառուցվածքի վերանորոգումը կնպաստի.

- որակյալ ջրի ստացմանը, ջուր, որը կլինի մաքուր եւ համաճարակների եւ հիվանդությունների աղբյուր չի հանդիսանա,
- ջրի ծավալի ավելացմանը եւ շուրջօրյա ջրամատակարարմանը,
- կենցաղի թեթևացմանը եւ կյանքի որակի բարելավմանը,
- ֆինանսական միջոցների խնայողությանը, քանի որ որոշ համայնքերում ջուրը գնվում է,
- ժամանակի խնայողությանը, քանի որ օրվա մեծ մասը մարդիկ զբաղված են խմելու ջուր բերելով:

Կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ գրեթե բոլոր համայնքներն ունեն խմելու ջրի ենթակառուցվածքի լուրջ վերանորոգման կարիք: Ընդ որում, պետք է վերանորոգվեն թե՛ խմելու ջրի ներքին ցանցերը, թե՛ արտաքին ցանցերը:

Ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս<sup>21</sup> որ գյուղական համայնքների միայն 2%-ը ունի խմելու ջրի ենթակառուցվածքի լավ վիճակ, իսկ համայնքների 63%-ում անհրաժեշտ են ֆինանսական ներդրումներ վիճակը բարելավելու համար:

### Խմելու ջրի համակարգի վիճակը մարզերում մակարդակով

Մարզի անունը	Համայնքների քանակը	Խմելու ջրի համակարգի վիճակը		
		Լավ	Բավարար	Վատ
Արագածոտն	111	5%	26%	68%
Արարատ	93	1%	47%	52%
Արմավիր	94	2%	22%	76%
Գեղարքունիք	87	0	14%	86%
Կոտայք	30	3%	43%	53%
Լոռի	105	4%	30%	67%
Շիրակ	116	3%	29%	68%
Սյունիք	106	0	69%	31%
Տավուշ	58	0	40%	60%
Վայոց Ձոր	41	0	20%	80%
<b>Ընդամենը</b>	<b>871</b>	<b>2%</b>	<b>35%</b>	<b>63%</b>

21. Համակարգի վիճակի գնահատումը հիմնված է գյուղապետերի գնահատականի վրա:

Հետազոտված համայնքների մի զգալի մասում խմելու ջրի խողովակները ասբեստյա են, որոնք արդեն վաղուց մաշվել են եւ վթարային են: Ըստ հարցվողների, դա ոչ միայն ջրի կորստի պատճառ է դառնում, այլ նաեւ՝ ջրատար են ներթափանցում կեղտաջրեր, ձնհալի եւ անձրեւաջրեր, միջատներ եւ սողուններ:

Արմավիրի մարզի հետազոտված համայնքերում մարդիկ հիմնականում օգտագործում են արտեզյան հորերի ջուրը, որը պոմպերով մղվում է ներքին ցանց: Հարցվողների կարծիքով, այդ ջուրը նախատեսված է ոռոգման համար, ծայրահեղ դեպքում՝ անասուններին ջրելու նպատակով, քանի որ այն չի համապատասխանում խմելու ջրի պահանջներին: Կան գյուղեր, որտեղ նույնիսկ այդպիսի ջուրն էլ է բացակայում: Այսպես օրինակ՝ Արմավիրի մարզի Վանանդ եւ Արեւադաշտ գյուղերում խմելու ջուր ընդհանրապես գոյություն չունի: Կենցաղային կարիքները հոգալու համար մարդիկ ջուր են գնում՝ 40լ դիմաց վճարելով 150-200 դրամ եւ մտավախություն ունեն նաեւ այդ ջրի որակի վերաբերյալ:

Արագածոտնի Արտենի համայնքի բնակիչների 70%-ը, ըստ հետազոտության տվյալների, ջուրը գնում է , իսկ մնացած 30%-ը, որն անվճարունակ է, օգտագործում է արտեզյան ջուրը: Կան համայնքներ, որտեղ ջրի ներքին ցանցը ընդհանրապես բացակայում է, օրինակ՝ Տավուշի մարզի Դեբեդավան, Մովսես եւ Բարեկամավան գյուղերը:

Հետազոտված գրեթե բոլոր համայնքներում ջուրը տրվում է ժամով: Սակավաթիվ են այն համայնքները, որտեղ կա շուրջօրյա ջրամատակարարում: Հաճախ գյուղի դիրքն այնպիսին է լինում, որ ջրի քիչ լինելու պատճառով ջուր հասնում է միայն գյուղի վերելի թաղերին, որոնք մոտ են ջրագծին: Գյուղի մյուս թաղերի բնակիչները հիմնականում դույլով են ջուրը բերում:

Խմելու ջրի պակասը լուրջ լարվածության եւ կոնֆլիկտների առիթ է հանդիսանում ներհամայնքային եւ միջհամայնքային հարաբերություններում:

Հետազոտության տվյալները վկայում են, որ ջրի անորակությունը համատարած բնույթ է կրում: Գրեթե բոլոր տեղերում հարցվողները նշում էին, որ ֆիլտրման աշխատանքներ համարյա թե չեն իրականացվում, ջուրը չի քլորացվում: Որոշ համայնքներում դժգոհում էին նրանից, որ ջուրը կոշտ է, կրային մասը շատ է եւ յոդի բավարար քանակություն չի պարունակում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղական համայնքների 88%-ը ունի լրիվ կամ մասնակի ելք դեպի խմելու ջուրը, մնացածները կախված են կամ ջրի մատակարարներից կամ հարեւան գյուղերի ջրօգտագործումից:

Գյուղական ընտանիքների միայն 51%ը տանն ունի ծորակ, իսկ քաղաքային ընտանիքների՝ 87%-ը:

Հարցման պատասխանները ցույց են տալիս, որ գյուղական ընտանիքների մոտ 10%-ը զգալի դրամական ծախսեր է ունենում խմելու ջուր գնելու ժամանակ՝ վճարելով 100-1000 դրամ մեկ դույլ ջրի համար:

Գյուղական ընտանիքների 86%-ը ջրի հավաքման վրա ծախսում է օրական մեկ ժամ կամ ավելին, 26%-ը ծախսում է 4 ժամից ավելի:

Ջրի մատակարարումը համայնքներում օրական կազմում է, միջին հաշվով, մոտ 14 ժամ, ընդ որում՝ համայնքների միայն 44% ունի շուրջօրյա ջրամատակարարում: Անբավարար մատակարարման խնդիրը հատկապես ցայտուն է Արարատի, Շիրակի եւ Տավուշի մարզերում:

Ջրի որակի վերաբերյալ բավարարվածությունը փոքր է համայնքներում, միայն 40%-ն է հայտնել ջրի որակի մասին բավարար եւ լավ կարծիք:

Բնակիչներին հուզող մեկ այլ խնդիր է այն, որ ջրի մշակման ժամանակ, ներարկված քլորի քանակությունը սովորաբար բավարար չէ պաշտպանելու բաշխման ցանցերն աղտոտումից:

### Կոյուղի

Կենտրոնացված կոյուղու համակարգը գործում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքների միայն 11%-ն ունի կենտրոնացված կոյուղի: Կենտրոնացված կոյուղու համակարգի մաշվածության պատճառով հաճախ ստեղծվում են վթարային վիճակներ, որոնք վտանգ են առաջացնում մարդկանց առողջության համար: Խնդիրներ են նաեւ կոյուղային կեղտաջրերի մաքրումն ու բնական ջրավազաններն աղտոտելը: Կոյուղու համակարգը վնասվում է ջրամատակարարման ընդհատումներից (ձմռանը սառելով), ինչպես նաեւ՝ չվերահսկվող շինարարական աշխատանքներից:

Շիրակի եւ Արարատի մարզերը ամենաապահովվածներն են, համայնքներից 205-ում կա հիմնական կոյուղի, իսկ Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերում այդպիսի համայնքները մի քանիսն են:

## 2. Ոռոգման ջրի մատակարարում

Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 80%-ը բաժին է ընկնում ոռոգելի հողագործությանը: Խորհրդային վերջին տարիներին հանրապետությունում ոռոգվում էին շուրջ 280 հազար հա հողատարածքներ, ինչի համար կառուցվել էին ավելի քան 70 ջրամբարներ, 3 հազ.կմ մայր եւ միջտնտեսային ջրանցքներ, շուրջ 18 հազ. կմ ներտնտեսային ջրանցքներ, ավելի քան 400 խոշոր եւ միջին պոմպակայաններ: Ոլորտի շահագործման համար տարեկան ծախսվում էր շուրջ 60 մլն. ռուբլի, եւս 120 մլն. ռուբլի ծախսվում էր համակարգի զարգացման համար: Էլեկտրաէներգիայի ցածր արժեքի պայմաններում լայնորեն օգտագործվում էր մեխանիկական ոռոգումը, որի համար տարեկան ծախսվում էր մինչեւ 800 մլն.կվտ/ժ էլեկտրաէներգիա: Ոռոգման ջուրը ջրօգտագործողներին (կոլեկտիվ եւ խորհրդային տնտեսություններին) մատակարարվում էր անվճար եւ ոլորտի բոլոր ծախսերը կատարվում էին պետական բյուջեի հաշվին:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո ընկած ժամանակահատվածում, վճարովի ոռոգման համակարգի անկատարության, մանր ֆերմերային տնտեսությունների անվճարունակության պայմաններում ոռոգման համակարգը կանգնեց փլուզման եզրին: 90-ականների կեսերից Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվեց «Ոռոգման համակարգերի վերականգնման» ծրագիրը (1994-2001թ.թ, 55 մլն. ԱՄՆ դոլար), ինչը ապահովեց երկրի 8 խոշոր ոռոգման համակարգերի անխափան գործունեությունը: Նույն ծրագրի շրջանակներում, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ վերականգնվեցին նաեւ ավելի քան 42 հազ. հա հողատարածքներ ոռոգող ներտնտեսային ցանցեր:

### Ոռոգման համակարգերի վիճակը

Ընթացիկ նորոգումներ չկատարելը եւ անբավարար պահպանությունը վերջին տասը տարիների ընթացքում քայքայիչ ազդեցություն են ունեցել համակարգի վրա: Համաձայն Ջրի սեկտորի զարգացման եւ ինստիտուցիոնալ բարելավման ԾԻԳի գնահատականների՝ ոռոգման համակարգը վատ վիճակում է կամ բոլորովին գործուն է նախկինում ոռոգվող հողերի 52 տոկոսում:

Համաձայն Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի տվյալների բազայի<sup>22</sup>, ոռոգելի տարածքների միայն 39%-ն է ոռոգվում (նախկինում՝ 54%): Այս նվազումը հետևանք է ոչ միայն ենթակառուցվածքի քայքայման, այլ նաև էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման:

Որոշ համայնքներում ներքին ցանցը հավասարաչափ բաշխված չէ, առուները բոլոր հողատարածքներին չեն հասնում, ինչը վեճեր է ընդհարումներ է առաջացնում: Այն դեպքերում, երբ ջուրը գալիս է մի քանի համայնքների միջով, հաճախ լինում են նաև միջհամայնքային վեճեր էլ տարածայնություններ:

Ընդհանուր առմամբ, դժգոհություն կա ջրի սակագնից. համարվում է, որ այն անարդարացի բարձր է, ինչը բնակչության մեծամասնության համար ոռոգումն անմատչելի է դարձնում: Որոշ համայնքներում, որտեղ ջուրը ինքնահոս է, օգտագործողները հիմնականում չեն վճարում ոռոգման ջրի դիմաց:

Դժգոհություն կա նաև վճարման մեխանիզմից: Ոռոգման ցանցերի անբավարար վիճակը թույլ չի տալիս օգտագործված ջրի ծավալի ճշգրիտ չափում իրականացնել: Գյուղացիները վճարում են կամ հեկտարի, կամ ժամերի հաշվով: Ոչ բավարար ջրի հոսքի կամ սխալ հաշվարկների պատճառով փաստացի ստացած ջրի էլ գանձվող վարձավճարի միջև անհամապատասխանություն է ստեղծվում: Բացի այդ, մեծ մասամբ գյուղացուն ստիպում են ջրի վարձը վճարել ոռոգման սեզոնի սկզբին, ինչը դժվարություններ է առաջացնում:

Որոշ համայնքներում ոռոգման ջրի սակավությունը գյուղացիների ստիպել է փոփոխություն կատարելու մշակաբույսերի ընտրության հարցում:

Բոլոր համայնքերի հարցվողները դժգոհ են ջրամատակարարման գրաֆիկից: Նախ՝ ջրի մատակարարումը սկսվում է ուշ: Ըստ հարցվողների, Արարատյան դաշտավայրում վեգետացիան սկսվում է մայիս ամսին, իսկ ոռոգման ջրամատակարարումը՝ հունիսի 10-ից: Բացի այդ, ոռոգման սեզոնի ընթացքում լինում են ջրամատակարարման չպատճառաբանված անջատումներ:

Ոռոգման բացակայության պատճառով բերքի կորուստների պատկերը հետևյալն է. հարցվածների 10%-ը նշել է, թե վնասներ չի կրել, իսկ 35%-ը՝ կորցրել է սպասվող բերքի 50%-ից ավելին: Կորսված բերքի արժեքը, վատ ոռոգման պատճառով, յուրաքանչյուր համայնքում կազմել է միջինը մոտ 150,000 ԱՄՆ դոլար:

Համայնքների 29%-ը ոռոգման ջուր է ստանում ողջ սեզոնի ժամանակ, իսկ մոտավորապես 50%-ը՝ միայն սեզոնի կեսի ընթացքում:

1997թ-ից նախապատրաստվել է 2002թ-ից իրականացվում է «Ոռոգման համակարգերի զարգացման» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվող բարեփոխումները ընդգրկել են կառավարման բոլոր օղակները՝ պետական մարմիններից մինչև ջրօգտագործողներ:

ՀՀ կառավարության կողմից ընդունված բարեփոխումների ծրագիրը նախատեսում է ոռոգման կառավարման մասնակցային ձև, որը նպատակ ունի բարելավել էլ հուսալի դարձնել ոռոգման համակարգը: Այդ բարեփոխման էական մաս է հանդիսանում Ջրօգտագործողների միության /ՋՕՄ/ ստեղծումը: ՋՕՄ-ը իր վրա է վերցրել երկրորդական էլ երրորդական ոռոգման համակարգերի շահագործումն ու պահպանումը էլ վարձավճարների հավաքումը: Կառավարման գործառնությունները էլ համակարգի օգտագործման իրավունքը փոխանցվել են Ջրօգտագործողների ընկերություններին (ՋՕԸ):

«Ոռոգման համակարգերի զարգացման» էլ «Գյուղատնտեսական ծառայություններ» ծրագրերի շրջանակներում երկրում հիմնադրվել են 52 ՋՕԸ-ներ, որոնց սպասարկման ոլորտում է ոռոգվող հողատարածքների մեծ մասը (225 հազ. հա): Հիմնադրված ՋՕԸ-ներում ընդգրկվել են հանրապետության 624 համայնքներ՝ 295 հազար ջրօգտագործողներով: Մնացած շուրջ 250 համայնքներից մոտ 50-ը չունեն ոռոգվող հողատարածքներ, իսկ 200 համայնքները սնվում են տեղական աղբյուրներից,

<sup>22</sup> Տվյալները հավաքվել են 2003 թ.



այլ համայնքներից մեկուսացված են եւ ներկայումս ԶՕԸ-ների միավորվելու անհրաժեշտություն չունեն:

Հիմնադրված ԶՕԸ-ներին 25 տարով անհատույց փոխանցվել է պետական եւ համայնքային սեփականության ոռոգման համակարգերի օգտագործման իրավունքը, սակայն (բացառությամբ վերջին տարիներին վերականգնված կառուցվածքների) համակարգերը փոխանցվել են կիսավթարային, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ անաշխատունակ վիճակում: Այսպես՝ 280 հազ. հա ոռոգվող հողատարածքներից, լիարժեք ոռոգվում է 160 հազ. հա: Վերականգնման կարիք ունեն եւ՝ պետական սեփականության մայր եւ միջտնտեսային ջրանցքները, պոմպակայանները, եւ՝ համայնքային սեփականության ներտնտեսային ցանցերը, որոնց վերականգնման մոտավոր արժեքը անցնում է 800 մլն. ԱՄՆ դոլարից:

## **Գ. Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ**

Հեռահաղորդակցության ենթակառուցվածքը պատկանում է Արմենթել ընկերությանը:

Ի տարբերություն էլեկտրաէներգիայի՝ այս ծառայությունը պակաս մատչելի է համայնքների համար: Եթե քաղաքային համայնքներն ամբողջությամբ ունեն ներհամայնքային հեռախոսակապ, ապա գյուղական համայնքներում, պատկերը բոլորովին այլ է: Կան համայնքներ, որտեղ լարային հեռախոս ընդհանրապես չկա: Համայնքների մի զգալի մասում կա ընդամենը մի քանի, կամ նույնիսկ՝ մեկ հեռախոսագիծ, որը գտնվում է գյուղապետարանում կամ փոստատանը: Մինչդեռ հեռահաղորդակցության ենթակառուցվածքը հարցվողների կարծիքով պակաս կարելու է՝ հաշվի առնելով արտագաղթի եւ աշխատանքային միգրացիայի ծավալները:

Վայոց Ձորի Շատին գյուղի նոր թաղամասում հեռախոսակապը ընդհանրապես բացակայում է: Քանի որ այդ թաղամասը գյուղի կենտրոնից գտնվում է 1 կմ հեռավորության վրա, ձմեռվա ամիսներին էլ ճանապարհը փակվում է, թաղամասի կապը արտաքին աշխարհի հետ լրիվ ընդհատվում է:

Հետագոտված համայնքների մեջ կան նաեւ այնպիսիք, որտեղ սակավաթիվ ընտանիքներ ունեն հեռախոս:

Հեռախոսակայանների սարքավորումները ջերմագգայուն են, ձմռան ցրտին եւ ամռան շոգ օրերին չեն աշխատում: Չեն աշխատում նաեւ անձրեւների եւ էլեկտրականության մատակարարման ընդհատումների ժամանակ: Նախկինում տեղադրված էին մարտկոցներ, որոնք էլեկտրականությանը ապահովում էին հոսանքի անջատումների ժամանակ, սակայն այժմ դրանք շարքից դուրս են եկել:

Քիչ չէ նաեւ այն համայնքների թիվը, որտեղ կա հեռախոսակապ, սակայն գյուղի բնակչության մինչեւ 50%-ի հեռախոսներն անջատած են՝ պարտքերի կուտակման պատճառով: Բնակիչները դա պատճառաբանում են նրանով, որ անիմաստ է վերամիացնել հեռախոսը, քանի որ դրանից օգտվելն անհնար է՝ անորակ կապի պատճառով:

Կապի ծառայության որակը գյուղական բնակիչների 70%-ի կողմից գնահատվել է ցածր եւ անբավարար, 19%-ը այն համարել են բավարար, իսկ 11%-ը լավ: Միջքաղաքային կապի որակը համարվել է ամենավատը: Դժգոհությունը վերաբերում է նաեւ Արմենթելի օպերատորներին, որոնք սպասարկում են միջքաղաքային զանգերը:

Այս առումով իրավիճակը զգալիորեն մեղմում է բջջային կապի առկայությունը: Սակայն այդ կապի ծառայությունից օգտվելը դեռեւս թանկ է եւ այդ պատճառով՝ դժվար մատչելի բնակչության լայն շերտերի համար: Այդ շուկայում վիճակը որոշ չափով մեղմվեց, երբ երկրորդ օպերատորը՝ «Վիվասելը» խախտեց «Արմենթելի» բացառիկ մենաշնորհը:

## ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՀՀ Սահմանադրությամբ հռչակված ժողովրդավարական, իրավական պետության, ինչպես նաև ընդհանրապես քաղաքացիական հասարակության կառուցման համար կարևոր է արհեստավարժ եւ, առավել եւս, արդարացի կառավարումը: Կառավարման գործընթացներում արհեստավարժության եւ արդարացիության ապահովման գործում մեծագույն նշանակություն ունեն քաղաքացիական ծառայողների ինչպես լավատեղակությունը քաղաքական անցուդարձից, երկրի քաղաքական կյանքում առկա հոսանքների գաղափարախոսական առանձնահատկություններից, այնպես էլ՝ պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում քաղաքական կառույցների ազդեցությունից զերծ մնալը: Այլապես անհնար կլինի կառավարման գործընթացներում ապահովել օբյեկտիվությունը եւ հասարակության բոլոր շերտերի իրավունքների ու շահերի արդյունավետ եւ հավասարակշիռ պաշտպանությունը:

Հայաստանի անկախացումից ի վեր պետական կառավարման ոլորտում լայնորեն կիրառվում էր մի գործելակերպ, երբ որեւէ քաղաքական ուժ, իշխանության գլուխ անցնելուց հետո, սկսում էր իր թիմակիցներով փոխարինել եթե ոչ պետական կառավարման համակարգում աշխատող բոլոր կադրերին, ապա առնվազն քիչ թե շատ առանցքային նշանակություն ունեցող պաշտոնյաների մեծ մասին: Ավելին, այդ բանն առավել կոպիտ ձեւերով էր ընթանում այն ժամանակ, երբ այս կամ այն գերատեսչության ղեկավարը փոխվում էր ոչ թե քաղաքական ուժերի վերադասավորման արդյունքում, այլ ընդամենը կոնյուկտուրային նկատառումներով: Եվ երբ նորանշանակ ղեկավարը հստակ չէր ներկայացնում որեւէ քաղաքական ուժ, աշխատակիցներին թիմակիցներով փոխարինելը ընդհանրապես զրկվում էր քիչ թե շատ գաղափարաքաղաքական հիմնավորումից եւ կրում էր զուտ անձնական կամ խմբային շահերով ղեկավարվելու բնույթ: Արդյունքում՝ վերջին ավելի քան տասը տարիների ընթացքում Հայաստանի պետական կառավարման համակարգում (եւ ոչ միայն այդտեղ) ձեւավորվեց, այսպես կոչված, «քաղաքական միգրանտություն» երեւույթը. այսինքն կայուն համոզմունքներ չունեցող պաշտոնյաները իրենց ունեցած դիրքը պահելու կամ այդտեղ ցանկալի դիրք գրավելու նկատառումներով փոխում էին իրենց կողմնորոշումները եւ կուսակցական պատկանելությունը՝ այդպիսով քայքայելով քաղաքական դաշտի կայունությունը եւ հասարակության ինքնակառավարման ներուժն ընդհանրապես: Բնականաբար, «քաղաքական միգրացիան» հավատամք եւ գործելակերպ դարձրած քաղաքացիական ծառայողից դժվար է ակնկալել անաչառ եւ արդարացի կառավարում:

2002 թվականին Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց քաղաքացիական ծառայության համակարգը (այսուհետ՝ ՔԾՀ), որի իրավական հիմքը կազմեց «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը: Վերջինս անցած չորս ու կես տարիների ընթացքում յոթ անգամ փոփոխությունների է ենթարկվել (վերջին անգամ՝ 2006թ. մայիսի 23-ին): ՔԾՀ ներդրումով պիտի հաղթահարվեր պետական կառավարման ոլորտի աշխատողների կախվածությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխություններից, սակայն քառամյա փորձը ցույց տվեց, որ այդ համակարգի ներդրումը ոչ միայն չի նվազեցրել պետական ծառայողների քաղաքական-միգրացիոն միտումները, այլև դրանք շատ ավելի մեծ չափերի եւ դրսևորման բացահայտ ձեւեր են ընդունել:

Այս իրողությունից ելնելով, հետազոտության հեղինակը<sup>23</sup>, առաջադրեց հետեւյալ աշխատանքային վարկածները.

<sup>23</sup> Սույն հետազոտությունը 2006 թվականին իրականացրել եւ սույն հաշվետվության համար ներկայացրել է «Երեւանյան ակադեմիա» հասարակագետների միջազգային ընկերակցություն» ՀԿ համանախագահ, սոցիոլոգ Վարդան Գեւորգյանը, որին է պատկանում նաեւ տվյալները տնօրինելու հեղինակային իրավունքը:

ա / Հայաստանի Հանրապետության ՔԾՀ-ն այսօր էլ մեծապես մնում է իշխող քաղաքական վերնախավի ուղղակի ազդեցության տակ, իսկ համակարգում եղած թափուր տեղերն զբաղեցնելու եւ աշխատողների՝ իրենց տեղը պահպանելը կամ պաշտոնական առաջընթացը, անկախ գործող մրցութային կամ ատեստացիոն բավականաչափ բարդ համակարգի առկայությունից, դեռեւս մեծապես կախված է տվյալ պաշտոնում նշանակելու լիազորություն ունեցող անձի սուբյեկտիվ կամքից,

բ / ՀՀ քաղծառայողների գերակշիռ մասը չի կարող դրսեւորել ինքնուրույն եւ կայուն գաղափարաքաղաքական վարքագիծ, որը որոշակի ազդեցություն ունենա ինչպես պետական կառավարման համակարգում ընդունվող կարեւորագույն որոշումների, այնպես էլ՝ հասարակական կյանքում տեղի ունեցող կարեւոր իրադարձությունների վրա:

Այս վարկածները հաստատելու կամ ժխտելու նպատակով պետք էր պարզել քաղծառայողների իրազեկության աստիճանը (երկրի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտների, հաստատությունների մասին, ինչպես նաեւ իրենց աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու աղբյուրները եւ հնարավորությունները), աշխատանքային որոշումների կայացմանը քաղծառայողների մասնակցության աստիճանը, որոշումներ ընդունելիս վերադասների քաղաքական ազդեցության աստիճանը, այդ ազդեցությունների ձեւերը, հաճախությունը եւ այլն:

Նշված հարցերը ուսումնասիրվել են հիմնականում երկու՝ իրավական եւ փաստացի առումներով: Առաջին՝ իրավական առումով հետազոտվել է, թե քաղծառայողները տեղեկություններ ստանալու օրենսդրությամբ սահմանված ինչպիսի իրավունքներ եւ սահմանափակումներ ունեն: Երկրորդ՝ փաստացի առումով հետազոտվել է, թե ինչպիսին են քաղծառայողների տեղեկություններ ստանալու եւ ինքնուրույն որոշումներ ընդունելու իրական հնարավորությունները:

Կիրառվել է երկու մեթոդ. ուսումնասիրվել եւ վերլուծվել են ՔԾՀ գործառնությունը կարգավորող օրենսդրական եւ այլ իրավական ակտերը, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությունը, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) եւ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի (ՔԾԽ)՝ 2004թ. դեկտեմբերի 1-ի թիվ 380 որոշմամբ հաստատված «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները» (այսուհետ՝ Կանոններ): Քաղծառայողների տեղեկացվածության եւ քաղաքական անկախության իրական աստիճանը պարզելու համար անկետային հարցման մեթոդով իրականացվել է կոնկրետ սոցիոլոգիական հետազոտություն:

Քաղծառայողները կազմում են բավականաչափ սովոր խումբ. 2006թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ շուրջ 7230 մարդ, որոնք տեղաբաշխված են պետական կառավարված քառասուն հիմնարկներում, այդ թվում՝ ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության աշխատակազմերում, 14 նախարարություններում (նախարարությունների մի մասում ներդրված չէ ՔԾՀ-ն), կառավարությանն առընթեր վեց մարմիններում, օրենքով ստեղծված վեց այլ մարմիններում (ճյուղային կարգավորող հանձնաժողովներ) եւ վերջապես ՔԾԽ աշխատակազմում: Հետազոտությունն ընդգրկել է այդ մարմինների ավելի քան մեկ քառորդը՝ ինը նախարարություններ եւ երկու մարզպետարան (այդ թվում՝ Երեւանի քաղաքապետարանը եւ Վայոց Ձորի մարզպետարանը): Այսպիսի ընտրանքը պայմանավորված էր նաեւ իրականացվող հետազոտության ռեսուրսային եւ ժամկետային սահմանափակումներով, չնայած ընդհանրացումներ կատարելու համար քանակական առումով այն բավարար ներկայացուցչական է:

Վերը նշված 11 մարմիններից հարցմանը մասնակցել են 128 քաղծառայողներ, որոնք ներկայացնում էին քաղծառայողների պաշտոնների երեք ամենածավալուն խմբերը՝ գլխավոր, առաջատար եւ կրտսեր: Քաղծառայողների բարձրագույն խմբի ներկայացուցիչներն իրենց թվաքանակի խիստ սակավության եւ առանձնահատուկ

կարգավիճակի նկատառումներով չեն ընդգրկվել հետազոտությունում: Ընտրանքում հնարավորինս պահպանվել է վերը նշված պետական հիմնարկների քաղժառայողների սեռային եւ պաշտոնական խմբերի համամասնությունները: Հարցմանը մասնակցած քաղժառայողների սեռային եւ պաշտոնական կազմը ներկայացված է ստորեւ բերված աղյուսակում:

**Հետազոտության ընտրանքն ըստ գերատեսչությունների**

	սեռը եւ պաշտ. խումբը հիմնարկը	կանայք			տղամարդիկ			ընդ.
		գլխ.	առաջ.	կրտսեր	գլխ.	առաջ.	կրտսեր	
1.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1	1	1	4	0	0	7
2.	ՀՀ էներգետիկայի նախարարություն	1	2	3	2	0	0	8
3.	ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն	3	2	3	1	1	0	10
4.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	1	1	2	3	2	1	10
5.	ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	4	2	3	1	0	0	10
6.	ՀՀ բնապահպանության նախարարություն	2	2	2	3	4	1	14
7.	ՀՀ առողջապահության նախարարություն	6	1	0	2	1	2	12
8.	ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն	2	4	4	3	3	0	16
9.	ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն	2	2	1	5	1	1	12
10.	Երեւանի քաղաքապետարան	3	3	1	6	1	2	16
11.	Վայոց Ձորի մարզպետարան	1	3	2	5	1	1	13
	<b>ընդամենը</b>	<b>26</b>	<b>23</b>	<b>22</b>	<b>35</b>	<b>14</b>	<b>8</b>	<b>128</b>

Սկստի ունենալով ընդգրկված հիմնարկներից յուրաքանչյուրից հարցմանը մասնակցած քաղժառայողների փոքր թիվը, հետագա վերլուծությունները ներկայացված են ընդհանրական:

**I. Քաղժառայողների իրազեկությունը**

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

Սահմանադրական այս իրավունքի իրացումը առանձին օրենքներով որոշակի սահմանափակումների է ենթարկվում առանձին հաստատություններում աշխատող մի շարք խմբերի համար:

Օրենքի 5-րդ՝ «Քաղաքացիական ծառայողների իրավական վիճակը» գլխում (հոդված 22) նշվում է, որ քաղժառայողն իրավունք ունի՝ ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր ունեցած իրավունքներն ու պարտականությունները սահմանող

իրավական ակտերին, իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին: Նրանք սահմանված կարգով կարող են ստանալ ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր եւ այլն:

Հարցման արդյունքների ամփոփումից պարզ դարձավ, որ քաղծառայողների շրջանում ընդհանուր առմամբ բարձր է երկրի հասարակական - քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով հետաքրքրվածության աստիճանը:

Հարցվողների մոտ 70%-ն իրենց հետաքրքրության աստիճանը 10 բալանոց սանդղակով (որտեղ հետաքրքրվածության աստիճանն աճում է 1-ից մինչև 10-ը) գնահատել է 7-10 բալով: Նրանց համակազմում ակնհայտորեն գերակշռում են տղամարդիկ՝ գրեթե 80% (կանայք՝ 20%): Պաշտոնների տարբեր խմբերում առավել շատ հետաքրքրվածների տեսակարարար կշիռներն առանձնապես չեն տարբերվում:

Բոլոր քաղծառայողների համար հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններ վերաբերյալ տեղեկություններ ստանալու թիվ մեկ աղբյուրը հեռուստատեսությունն է: Հարցվողների շուրջ 70 %-ի համար այդպիսի կարելու աղբյուրը են նաեւ թերթերը, մասսայականությամբ երրորդ տեղում է ռադիոն (մոտ 51%): Հաջորդ առավել ընդունելի աղբյուրը Ինտերնետ ցանցն է (ավելի քան 27%): Կին քաղծառայողների թվում գրեթե 30 %-ով գերակշռում են այս վերջին աղբյուրից օգտվողները: Կարելու տեղեկատվական աղբյուրներ են համարվել նաեւ աշխատակիցների եւ ընկերների ու ծանոթների խմբերը (20-ական %):

Տեղեկությունների ընդհանուր աղբյուրներից զատ պարզվել են նաեւ քաղծառայողների կողմից առավել շատ դիտվող եւ ունկնդրվող տեղական եւ արտասահմանյան հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները, ինչպես նաեւ՝ առավել հաճախ կարդացվող տեղական թերթերը:

Առավել շատ դիտվող հեռուստաընկերությունների թվում առաջատարը Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունն (Հ1) է : Այն մշտապես դիտում է քաղծառայողների երեք քառորդը: Երկրորդ տեղում Ռուսաստանի Առաջին ալիքն է (ավելի քան 48 %), երրորդ տեղում՝ «Շանթ» ՅՈՒՆԻՍԵՖ ( ավելի քան 31%): Վերջինիս իր մասսայականությամբ քիչ է զիջում Ռուսաստանի պետական հեռուստառադիոընկերության (ВГТРК) «РТР-Планета» հեռուստաալիքը:

Հատկանշական է, որ հարցվողների կողմից նշված 15 անուն հեռուստաընկերությունների 40%-ը արտասահմանյան, հատկապես՝ ռուսաստանյան է:

Առավել շատ ունկնդրվող ռադիոընկերությունների թվում առաջին տեղում է Հայաստանի Հանրային ռադիոն ( մոտ 35%), երկրորդ տեղում է «Ազատություն» ռադիոկայանը ( շուրջ 22 %), երրորդ տեղում՝ «Ռուսակոյե ռադիոն»՝ մոտ 15%:

Վերջինիս մի փոքր զիջում է «Ռադիո Վանը»՝ 13,3%: Թվարկված մյուս 10 ռադիոընկերություններից ոչ մեկը չի անցել 5%-ի սահմանը: Մեծ թիվ են կազմում ընդհանրապես ռադիո չլսողները (ավելի քան 40%): Այս վերջին հանգամանքը, հատկապես Երեւանից դուրս, ունի նաեւ զուտ օբյեկտիվ պատճառը: Օրինակ՝ Վայոց Ձորում քաղծառայողները ռադիո չեն լսում լարային ցանցի եւ տեղական հեռարձակողների բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է թերթերին, ապա այստեղ հարցվողների կողմից հիշատակված շուրջ 30 անուն թերթերից ընթերցողների 10 եւ ավելի %-ի կողմից նշվել են հետևյալ թերթերը՝ «Առավոտ» -շուրջ 54%, «Իրավունք»- 41,5%, «Հայկական ժամանակ»- ավելի քան 40%, «Հայաստանի Հանրապետություն»-մոտ 23%, «Հայոց աշխարհ»-ավելի քան 16%, «168 ժամ»-10%: Տղամարդ քաղծառայողների 82,5%-ը եւ կանանց 56,3%-ը թերթերը համարում են տեղեկատվության առավել կարելու աղբյուր: Քաղծառայողների իրազեկության աստիճանն իմանալու համար, պետք է, մասնավորապես պարզել իրենց իրավունքներին եւ պարտականություններին վերաբերող իրավական ակտերին, անձնական գործին, ծառայողական պարտականությունների կատարմանը վերաբերող նյութերին, աշխատանքի հետ առնչվող՝ իրենց անմիջական ստորաբաժանումում, իրենց գերատեսչությունում, այլ գերատեսչություններում մշակված նյութերին, անմիջական եւ

ոչ անմիջական ղեկավարների, ՀՀ կառավարության ընդունած որոշումներին, ՀՀ Ազգային ժողովի ընդունած ակտերին, ՀՀ նախագահի ուղերձներին եւ հրամանագրերին, ինչպես նաեւ ՀՀ-ի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումներին ծանոթանալու հնարավորությունները:

Ըստ հետազոտության արդյունքների՝ գլխավոր պաշտոնյաներն առավել մեծ հնարավորություններ ունեն ծանոթանալու անմիջապես իրենց ստորաբաժանումում մշակված, իրենց ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված նյութերին, ինչպես նաեւ ՀՀ ԱԺ ընդունած ակտերին: Այս խմբի հարցվածները առավել ցածր են գնահատել իրենց հնարավորությունները ՀՀ-ի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումներին, իրենց աշխատանքի հետ առնչվող այլ գերատեսչություններում եւ սեփական գերատեսչության այլ ստորաբաժանումներում մշակված նյութերին ծանոթանալու հնարավորությունը:

Առաջատար պաշտոնյաների համար, ի տարբերություն առաջին խմբի, առավել բարձր են նաեւ իրենց իրավունքների ու պարտականություններին վերաբերող իրավական ակտերին եւ մի քիչ ավելի քիչ են ՀՀ ԱԺ ընդունած փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունները: Այս խմբում, ի թիվս գլխավոր պաշտոնյաների նշածների, առավել ցածր են գնահատվել նաեւ ՀՀ նախագահի ուղերձներին եւ հրամանագրերին ծանոթանալու իրենց հնարավորությունները:

Կրտսեր պաշտոնյաները դժվարություններ ունեն ՀՀ կառավարության եւ վարչապետի ընդունած որոշումներին ծանոթանալու հարցում: Կին ծառայողների շրջանում 1,5-2 անգամ մեծ է հատկապես միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումներից անտեղյակ հարցվողների թիվը:

Ինչ վերաբերում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տիրող վիճակին եւ տարբեր հաստատությունների գործունեությանը տեղյակ լինելուն, ապա պարզվեց, որ բոլոր խմբերի համար ամենից հայտնի ոլորտներն են կրթության, սոցիալական ապահովության եւ արտաքին քաղաքականության ոլորտները, իսկ առավել անհայտ են բանակը, իրավապահ մարմինների գործունեության ոլորտը, եւ արդյունաբերությունը: Առաջատար եւ կրտսեր պաշտոնյաների համար առավել անհայտ ոլորտների թվին է պատկանում նաեւ գյուղատնտեսությունը:

Գլխավոր խմբի քաղծառայողները համեմատաբար տեղյակ են կուսակցությունների (հատկապես՝ իշխանական), հասարակական կազմակերպությունների եւ Հայ առաքելական եկեղեցու գործունեությանը: Առավել անտեղյակ են այլ կրոնական կազմակերպությունների եւ ՀՀ-ում գործող օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունից: Առաջատար պաշտոնյաները առավել անտեղյակ են նաեւ ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների, իսկ կրտսեր պաշտոնյաները՝ նաեւ հասարակական կազմակերպությունների գործունեությունից:

## II. Քաղաքացիական ծառայողների քաղաքական անկախությունը

Քաղծառայողների քաղաքական անկախության խնդիրը հետազոտվել է հետևյալ հարցադրումների ենթատեքստում՝ ա) որոշումների կայացման իրավասությունները եւ դրան փաստացի մասնակցությունը, բ) քաղծառայողների՝ իրենց իրավունքները պաշտպանելու, ինչպես նաեւ վերադասների կողմից ընդունած որոշումների վրա ազդելու հնարավորությունները, գ) աշխատանքի ընթացքում կոռուպցիոն երեւույթների հայտնաբերումը եւ դրանց նկատմամբ վերադասների արձագանքը, դ) «Կանոնների»՝ քաղծառայողների քաղաքական գործելակերպին առնչվող դրույթների նկատմամբ ունեցած վերաբերմունքը, ե) վերադասների քաղաքական կողմնորոշումները չկիսելու պատճառով կիրառվող քաղծառայողների նկատմամբ սանկցիաների հաճախությունը:

ՀՀ Սահմանադրության համաձայն (հ. 27, 1-ին մաս), «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն»:

Օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, քաղծառայողն իրավունք ունի, մասնավորապես՝ 1. սահմանված կարգով մասնակցել որոշումների ընդունմանը եւ անհրաժեշտության դեպքում պահանջել ծառայողական քննություն, 2. ունենալ իրավական պաշտպանություն, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից, 3. բողոքարկել մրցույթի եւ ատեստավորման արդյունքները եւ այլն:

Իսկ 23-րդ հոդվածում սահմանվում են քաղծառայողների պարտականությունները, մասնավորապես այն, որ վերջիններս պարտավոր են կատարել վերադաս մարմինների ու պաշտոնատար անձանց սահմանված կարգով տրված հանձնարարականները, ընդունած որոշումները եւ պահպանել «Կանոնները»:

Քաղծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումներից առանձնակի քննարկման է ենթակա հետեւյալ սահմանափակումը (Օրենքի հ. 24, կետ «դ»): «Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի ... իրականացնել քաղաքացիական ծառայողների քաղաքական զսպվածության սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքերն օգտագործելով կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաեւ իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել»: Այս սահմանափակումը իր հետագա ընդարձակ արտացոլումն է գտել «Կանոնները»-ում: Այն, լինելով ընդամենը ՔԾԽ կողմից հաստատված գերատեսչական նորմատիվ իրավական ակտ, ըստ էության, դառնում է քաղծառայողների քաղաքական անկախությունը կանխորոշող իրավական փաստաթուղթ: Յոթ բաժիններից կազմված այս փաստաթուղթը եւս քաղծառայողների համար սահմանում է մի շարք սահմանափակումներ, մասնավորապես՝

1. Քաղծառայողն, իր ծառայողական պարտականությունների շրջանակից դուրս, պետք է խուսափի պետական իշխանությունների հետ բախումների մեջ մտած անձանց հետ այլ գործնական շփումներից /մաս 1, կետ 1.5. /,

2. Քաղծառայողը չպետք է ելույթ ունենա ՁԼՄ-ներով, մասնակցի հարցազրույցների եւ ցանկացած այլ եղանակով արտահայտի կարծիք, որը սկզբունքորեն կարող է տարբերվել պետական քաղաքականությունից ամբողջությամբ կամ այն մարմնի պետական քաղաքականությունից, որի շահերը նա ներկայացնում է իրբեւ պաշտոնատար անձ /մաս 1, կետ 1.6. /,

3. Բարոյական նորմերը թելադրում են, որ քաղծառայողն իր քաղաքական կարիերան իրականացնի միայն զբաղեցրած պաշտոնից ազատվելուց հետո / մաս 6, կետ 6.3. /:

Նույն այդ «Կանոնների» 4-րդ բաժնի 4.8 կետը սահմանում է, որ «կոռուպցիայի դեպքերի բացահայտման գործում քաղծառայողը չպետք է հաշվի առնի ծառայողական հիերարխիայի կամ կոլեգիալության սկզբունքը»: Հետազոտության ընթացքում փորձ է արվել պարզելու ինչպես վերը նշված դրույթների հետ քաղծառայողների համաձայնության աստիճանը, այնպես էլ վերջին դրույթի կիրառելիության իրական հնարավորությունները կառավարման պրակտիկայում:

Հետազոտության սկզբում այստեղ եւս մշակվեցին որոշակի աշխատանքային կանխավարկածներ, մասնավորապես՝

1. նշված երեք դրույթները միարժեքորեն չեն ընկալվում քաղծառայողների կողմից՝ դրանց մեջ քաղաքական ցենզուրայի տարրերի առկայության պատճառով,

2. կոռուպցիայի մասին դրույթը չի կարող արդյունավետորեն գործել եւ քաղծառայողները խուսափելու են ազատորեն խոսել այդ դրույթում արտացոլված իրավահարաբերությունների հետ իրենց առնչությունների մասին:

Հետազոտությունից պարզվեց, որ գլխավոր խմբի պաշտոնյաների ավելի քան 18 %-ը երբեք չի մասնակցում կամ հազվադեպ է մասնակցում որոշումների ընդունմանը,

չնայած, որ ի պաշտոնե ունի այդ իրավասությունը: Առաջատար խմբի պաշտոնյաների ավելի քան 16 եւ կրտսեր քաղժառանգողների մոտ 7%-ը մշտապես կամ շատ հաճախ մասնակցում է որոշումների կայացմանը: Հատկանշական է նաեւ, որ գլխավոր ժառանգողների մոտ 10%-ն ընդհանրապես տեղյակ չէ, որ օրենքի համաձայն ունի որոշումների կայացմանը մասնակցելու իրավասություն:

Քաղաքական անկախության աստիճանի բացահայտման տեսանկյունից, որոշումների կայացման հետ ուղղակիորեն կապված են նաեւ քաղժառանգողների՝ սեփական իրավունքների պաշտպանության, մասնագիտական առաջընթացի ապահովման, աշխատանքային ինքնուրույն որոշումներ ընդունելու եւ վերադասների որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորությունների հարցերը:

Պարզվեց, որ գլխավոր կին պաշտոնյաների խմբում ամենից ավելի բարձր են գնահատվել սեփական հնարավորությունները մասնագիտական առաջընթացի ապահովման (70%) ապա՝ սեփական իրավունքների պաշտպանության եւ աշխատանքային ինքնուրույն որոշումներ ընդունելու ( 58-ական %) հարցերում:

Տղամարդ գլխավոր պաշտոնյաների խմբում սեփական հնարավորությունները մասնագիտական առաջընթացի ապահովման գործում բարձր գնահատողներն ավելի մեծ թիվ են կազմում՝ 80%: Նույն խմբում երկրորդ տեղում աշխատանքային ինքնուրույն որոշումներ ընդունելու հնարավորությունները բարձր գնահատողներն են (ավելի քան 70% ): Այս խմբի եւ կանայք, եւ տղամարդիկ ամենացածրն են գնահատում վերադասների որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորությունները (համապատասխանաբար՝ 31 եւ 26%):

Նույն համամասնություններն են առկա նաեւ պաշտոնների մյուս խմբերում, այդ թվում նաեւ վերադասների որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորությունների հարցում:

Ինչպես եւ ենթադրվում էր, կոռուպցիայի դեպքերի հայտնաբերման մասին հարցին «այո» պատասխանը տվեցին շատ քիչ թվով հարցվողներ (ընդամենը 5 հոգի կամ 4%-ը), չնայած այդ ցուցանիշը, հավանաբար, չի համապատասխանում իրականությանը: Ըստ հարցազրուցավարների դիտարկումների՝ հարցվողների մեծ մասն այդ հարցին պատասխանելիս բավականաչափ երկար էր մտածում: Նրանցից շատերը փորձում էին շրջանցել այն եւ միայն հարցազրուցավարի՝ հարցն անպատասխան չթողնելու համառ հորդորներից հետո երկմտելով նշում էին «ոչ» պատասխանը: Հարցվողների մոտ 10%-ը «ոչ» պատասխանն ընտրելուց հետո տվել է բանավոր մեկնաբանություններ այն մասին, որ հանդիպել է կոռուպցիոն հարաբերությունների, սակայն տարբեր նկատառումներով չի կարող նշել այդ մասին, մասնավորապես՝ «Իրականում մեր երկրում երբեք չի կարող լինել «ոչ» պատասխան, սակայն գրավոր այդպես պատասխանելը շատ պատասխանատու գործ է», «առանց այդ էլ բոլորը գիտեն, որ կոռուպցիոն դեպքերը մշտական բնույթ են կրում մեր հանրապետությունում», «այդպիսի մի դեպքի համար երկու տարի անց ինձ ստիպել են փոխել ստուգումների ընթացքում իմ արած եզրակացությունները» եւ այլն: Բազմաթիվ հարցվողներ նմանատիպ խոստովանություններ էին կատարում նաեւ որոշումների կայացմանը մասնակցելուն վերաբերող հարցին պատասխանելիս՝ նշելով, որ «շատ էլ թե ունեն որոշումներ կայացնելու իրավասություններ, սակայն իրականում ո՞վ է թույլ տալիս մասնակցել դրանց»:

Ինչպես նշվեց վերելում, հետազոտության շրջանակներում քաղժառանգողների քաղաքական անկախության կարելորագույն ցուցիչ է դիտարկվել «Կանոնների»՝ հատկապես քաղժառանգողների քաղաքական վարքագծին վերաբերող դրույթների նկատմամբ վերաբերմունքը:

Պարզվեց, որ «Քաղժառանգողը, իր ժառանգողական պարտականությունների շրջանակից դուրս, պետք է խուսափի պետական իշխանությունների հետ բախումների մեջ մտած անձանց հետ այլ գործնական շփումներից» դրույթի հետ լիովին կամ հիմնականում համաձայն չէ հարցվողների մոտ 51%-ը , նրանց թվում՝ գլխավոր կին պաշտոնյաների 26%-ը , տղամարդկանց՝ մոտ 50%-ը, առաջատար կին ժառանգողների



52% -ից ավելին, տղամարդկանց՝ 50%-ը, կրտսեր կին պաշտոնյաների 54,5 եւ տղամարդկանց՝ 37,5%-ը: Հաշվի առնելով Հայաստանի յուրահատուկ քաղաքական իրավիճակը, այս դրույթը էականորեն սահմանափակում է ընդդիմադիր կուսակցություններին քաղծառայողների անդամագրվելու հնարավորությունը:

«Կանոնների»՝ «Քաղծառայողը չպետք է ելույթ ունենա ՁԼՄ-ներով, մասնակցի հարցազրույցների եւ ցանկացած այլ եղանակով արտահայտի կարծիք, որը սկզբունքորեն կարող է տարբերվել պետական քաղաքականությունից ամբողջությամբ կամ այն մարմնի պետական քաղաքականությունից, որի շահերը նա ներկայացնում է իբրեւ պաշտոնատար անձ» դրույթի հետ լիովին կամ հիմնականում համաձայն չէ հարցվողների մոտ 40 %-ը , նրանց թվում՝ գլխավոր կին պաշտոնյաների 30,8, գլխավոր տղամարդ պաշտոնյաների 37, առաջատար կին ծառայողների 39, տղամարդկանց՝ 28,5, կրտսեր կին պաշտոնյաների մոտ 60 եւ տղամարդկանց՝ 50%-ը:

«Կանոնների» քաղծառայողների «դատին» հանձնված երրորդ՝ «Բարոյական նորմերը թելադրում են, որ քաղծառայողն իր քաղաքական կարիերան իրականացնի միայն զբաղեցրած պաշտոնից ազատվելուց հետո» դրույթի վերաբերյալ ամբողջությամբ կամ գլխավորապես անհամաձայնություն հայտնած քաղծառայողների տեսակարար կշիռը կազմում է ավելի քան 39 %, նրանց թվում՝ գլխավոր կին պաշտոնյաների 35, տղամարդ պաշտոնյաների 40, առաջատար կին ծառայողների 39, տղամարդկանց՝ 36, կրտսեր կին պաշտոնյաների մոտ 50 եւ տղամարդկանց՝ 25 %-ը:

Այսպիսով, այս հարցի վերաբերյալ հաստատվեց Կանոններից վերցված՝ վերելում հիշատակված երեք դրույթները քաղծառայողների կողմից ոչ միաբեռն ընկալվելու մասին առաջադրած կանխավարկածը:

Բացի այդ, «Կանոնների» որոշ դրույթների նկատմամբ քաղծառայողների վերաբերմունքի հետազոտությունը իրականում ստուգիչ դեր կատարեց այլ հարցերին նրանց պատասխանները գնահատելու համար: Հարցվողների պատասխաններն ապացուցեցին, որ քաղծառայողներն իրականում ազատ չեն ոչ իրավաբանորեն, ոչ գործնականում եւ ոչ էլ հոգեբանորեն: Այն ինչ նրանք չեն նշում իրենց աշխատանքային հարաբերություններին վերաբերող ուղղակի հարցերին պատասխանելիս, նշում են, այսպես կոչված, տեսականացված հարցերին պատասխանելու ժամանակ: Այս էթիկական կողմի հետազոտությունը դերակատարում ունեցավ նաեւ քաղծառայողների պատասխանների անկեղծությունը ստուգելու համար: Անկեղծ պատասխաններ տալուն մեծապես խանգարում է որոշ գերատեսչություններում քաղծառայողների վարքագծի նկատմամբ ստեղծված տոտալ վերահսկողական մթնոլորտը: Որոշ նախարարություններում քաղծառայողները համաձայնվում էին մասնակցել հարցազրույցին անմիջական ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի թույլտվությունից հետո միայն: Օրինակ, ՀՀ առողջապահության նախարարությունում քաղծառայողները համաձայնեցին պատասխանել հարցերին նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետի թույլտվությունից հետո միայն, իսկ վերջինս հարցազրույցի ավարտից հետո ուղղակիորեն բռնագրավել էր հարցաթերթերը եւ պնդում էր, որ դրանք վերադարձնելու է միայն աշխատակազմի ղեկավարի ծանոթանալուց հետո: Հարցաթերթերը հաջողվեց վերադարձնել միայն աշխատակազմի ղեկավարի տեղակալի միջամտության շնորհիվ:

Հաջորդ հարցը, որին, հետազոտողների կարծիքով քաղծառայողները անկեղծ չէին պատասխանել, վերաբերում էր վերադասների կողմից քաղծառայողների նկատմամբ կիրառվող վարչական սանկցիաներին՝ կապված վերադասներին հակաճառելու, նրանց համար անհաճո անձանց հետ մտերիմ հարաբերություններ ունենալու, նրանց քաղաքական կողմնորոշումներին չհետեւելու, ընդդիմադիր կողմնորոշում ունեցող անձանց կամ կազմակերպությունների հետ շփումների կամ օրենսդրությանը հակասող հանձնարարությունները չկատարելու հետ:

Այդ հարցի վերաբերյալ հարցվողների ընդամենը 13,3 %-ն է նշել, որ բավական հաճախ կամ երբեմն վերադասներին հակաճառելու համար արժանանում է

սանկցիաների: Նույնքան մարդ էլ նշել է, որ այդ նույն պատճառով թեկուզեւ հազվադեպ, բայց ենթարկվում է սանկցիաների:

Հարցվողներից վերադասների համար անհաճո անձանց հետ մտերմություն ունենալու կամ վերադասների քաղաքական կողմնորոշումներին չհետեւելու համար ավելի քան երեք անգամ պակաս թվով մարդիկ են արժանացել պարսավանքի:

Քաղծառայողների մոտ 9 % -ը նշել է, որ ենթարկվել է սանկցիաների ընդդիմադիր անձանց կամ կազմակերպությունների հետ շփումների կամ վերադասների կողմից տրված օրենսդրությանը հակասող հանձնարարությունները չկատարելու համար:

Քաղծառայողների անկեղծությունն ստուգելու դեր կատարեց նաեւ նրանց ուղղված այն հարցը, որի նպատակն էր պարզել պետական իշխանության ձեւավորման գործընթացներում նրանց իրական կողմնորոշումները:

Պարզվեց, որ հարցմանը մասնակցած քաղծառայողների մոտ 65%-ն անցած ընտրություններում քվեարկել է ՀՀ գործող նախագահի օգտին, շատ ավելի փոքր թիվ են կազմում այն հարցվողները ( մոտ 38%), ուն նախընտրած պատգամավորության թեկնածուն մեծամասնական ընտրակարգով ընտրվել է ՀՀ ԱԺ 2003 թվականի ընտրություններում:

Մոտ 43 %-ի նախընտրած թեկնածուն ընտրվել է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար:

Հետազոտողների կարծիքով, հարցվողները անկեղծ չէին նաեւ իրենց կուսակցական պատկանելության մասին հարցին պատասխանելիս: Այսպիսի եզրակացության համար հիմք են ծառայել ինչպես հարցազրուցավարների կողմից հարցազրույցի ընթացքում հարցվողների վարքագծի դիտարկումները, այնպես էլ հարցվողների մի մասի կուսակցական պատկանելության մասին ունեցած տեղեկությունների եւ նրանց տված պատասխանների անհամապատասխանությունը, ինչպես նաեւ նրանց մի մասի կողմից այդ հարցին որոշ մտորումներից հետո չպատասխանելը: Այնուամենայնիվ, ըստ քաղծառայողների տված պատասխանների, հարցվողների ընդամենը 11% -ն է նշել, որ որեւէ կուսակցության անդամ է: Ընդ որում, կուսակցական հարցվողների մոտ 70 %-ը ՀՀԿ անդամ է, 23 %-ը՝ ՀՀԴ, մնացածները այլ կուսակցությունների անդամներ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները կարելի է փաստել հետեւյալ իրողությունները՝

1. ՀՀ քաղծառայողների համար տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրներ են էլեկտրոնային լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, որն իշխանության հսկողության տակ է:

2. Այլընտրանքային տեղեկությունների «քաղցր» քաղծառայողները փորձում են լրացնել արտասահմանյան հեռուստաալիքների դիտելով եւ ռադիոկայաններ ունկնդրելով, ինչպես նաեւ՝ տեղական տպագիր ընդդիմադիր մամուլն ընթերցելով (առավել շատ ընթերցվող երեք թերթերն էլ ունեն ընդդիմադիր ուղղվածություն):

3. Քաղծառայողները բավականաչափ լայն հնարավորություններ ունեն իրենց աշխատանքային պարտականություններին առնչվող տեղեկությունների ձեռք բերման առումով՝ բացառությամբ այլ գերատեսչություններում եւ իրենց հիմնարկների այլ ստորաբաժանումներում մշակվող նյութերի: Սա, թերեւս, վկայում է ինչպես միջգերատեսչական, այնպես էլ ներգերատեսչական տեղեկատվական հոսքերի համակարգերի թերզարգացածության մասին:

4. Քաղծառայողները բավականաչափ լավ տեղեկացված են կրթության, առողջապահության եւ սոցիալական ապահովության ոլորտների, ինչպես նաեւ կուսակցությունների գործունեության մասին, սակայն անտեղյակ են բանակում, իրավապահ մարմիններում առկա վիճակի, ինչպես նաեւ կրոնական (բացառությամբ՝

Հայ առաքելական եկեղեցու), միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունից:

5. Քաղժառայողները եւ իրավաբանորեն, եւ հոգեբանորեն հեռու են անկախ լինելուց: Դա են ապացուցում ինչպես «Քաղժառայողների էթիկայի կանոնների» սահմանափակումները, այնպես էլ նրանց զգուշավոր վարքագիծը հարցազրույցի ընթացքում: Քաղժառայողների համար դեռեւս կան թեմաներ, որոնց մասին նրանք կամ աշխատում են չխոսել ընդհանրապես, կամ էլ ասել ոչ այն, ինչ մտածում են:

## 5. ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ, ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՊԱՅ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԳԱՆՔԸ: ԲՈՆԻ ԵՒ ՈՉ ԲՈՆԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Հայաստանում ոստիկանության լիազորություններն ամրագրված են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2001թ.: Ըստ փորձագետների ՀՀ օրենքը ընդունվել է առանց եխ պահանջները հաշվի առնելու: Փաստաթուղթը մի քանի անգամ փոփոխվել է և լրացվել է (վերջին անգամ 01.06.2006թ.):

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ ոստիկանության դերին եւ գործունեության սկզբունքներին վերաբերող դրույթները մեծ մասամբ համապատասխանում են միջազգային չափանիշներին<sup>24</sup>, սակայն լիազորություններ, պարտականություններ, պատասխանատվություն սահմանող դրույթներում բազմաթիվ են բացթողումները:

Բացի այդ, այն գործառույթները եւ գործունեության սկզբունքները, որոնք «Ոստիկանության մասին» օրենքով ամրագրված են, պրակտիկայում հաճախ խախտվում են:

Օրենքի թերություններից են.

- ոստիկանության գործառույթները շատ ընդհանուր են սահմանված, օրենքը չի պարունակում սկզբունքների կիրառման եւ գործառույթների պրակտիկ իրականացման համար անհրաժեշտ հասկացությունների կոնկրետ ձեւակերպումներ,

- չեն հստակեցված ոչ ուժային մեթոդների կիրառման դեպքերը, այն, թե ինչ են իրենց մեջ ներառում «տրանսպորտի եւ այլ կազմակերպությունների աշխատանքը կազմալուծող զանգվածային անկարգություններ» կամ «խմբակային գործողությունները խափանել», «ցուցաբերվող անհնազանդությունը հաղթահարել», «բավարար հիմքեր» հասկացությունները,

- օրենքում չափից ավելի են հղումներն այլ օրենքներին, հայտարարության բնույթ ունեցող ծրագրային ձեւակերպումները,

- չի պահպանված միայն օրենքով վերապահված լիազորությունների սահմաններում գործելու սկզբունքը,

- «Ոստիկանության մասին» եւս հռչակագրի 1 հոդվածը պարտավորեցնում է ոստիկանությանը՝ բռնարարքներից եւ այլ վնասարար գործողություններից քաղաքացիներին պաշտպանելու իրենց օրինական պարտավորությունները կատարել օրենքին համապատասխան, իսկ 3-րդ հոդվածը ցանկացած հանգամանքներում պարտավորեցնում է ոստիկանին՝ չենթարկվել անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք ցուցաբերելուն պարտադրող հրամաններին, ցուցումներին: Այդ պարտականությունը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածով հավասարեցվել է հետեւյալին. «Ղեկավարներից (անմիջական կամ ուղղակի) կամ այլ լիազորված պաշտոնատար անձանցից օրենքին հակասող

<sup>24</sup> Իրավապահ մարմինների գործունեությանը վերաբերող չափանիշներ կան մարդու իրավունքներին վերաբերող միջազգային հիմնական փաստաթղթերում, բացի այդ հատուկ փաստաթղթեր են ընդունվել եւս եւ ՄԱԿ-ի կողմից, որոնք անմիջականորեն վերաբերում են իրավապահ մարմինների աշխատանքներին եւ աշխատակիցներին՝ սահմանելով հիմնական սկզբունքները: Այդ թվում՝ «Ոստիկանության մասին» եւս հռչակագիրը եւ «Իրավակարգի պահպանման ուղղությամբ պաշտոնատար անձանց վարքագծի» ՄԱԿ-ի կանոնագիրը, «Իրավակարգի պահպանման համար պաշտոնատար անձանց կողմից ուժի եւ հրազենի կիրառման» ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները, ՄԱԿ-ի՝ «Ցանկացած ձեւով ձերբակալման կամ կալանքի ենթարկված բոլոր անձանց պաշտպանելու սկզբունքների հանրագումար» բանաձեւը եւ այլն:

ակնհայտ անօրինական հրամաններ, հրահանգներ եւ կարգադրություններ ստանալիս ոստիկանության աշխատակիցը պարտավոր է ղեկավարվել միայն օրենքի պահանջներով՝ այդ մասին տեղյակ պահելով վերադասին»: Ակնհայտ անօրինական հրամանը կամ կարգադրությունը չկատարելը բացառում է պատասխանատվությունը: Սակայն «ակնհայտ անօրինական» հասկացության մեկնաբանությունը տրված չէ: Ոստիկանն անձամբ է պատասխանատու իր կատարած գործողությունների համար, սակայն ոստիկանությունը հիերարխիկ կարգապահական կառույց է, եւ պրակտիկայում ոստիկանը գրեթե չի կարող չենթարկվել որեւէ տեսակի հրամանների, ցուցումների:

Միջազգային չափանիշներով ոստիկանության կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է եւ առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է համարվում մարդուն ֆիզիկապես եւ բարոյապես ընկճելու, վախեցնելու, անլիարժեքության եւ ճնշվածության զգացողություն առաջացնող գործողությունները: ՀՀ «Ոստիկանության մասին» օրենքով եւս արգելված է խոշտանգումը, սակայն օրենքի 30 հոդվածը, որը ոստիկանությանը թույլատրվում է հարկադրանքի միջոցներ (այդ թվում՝ հատուկ միջոցներ) կիրառել, հստակ չէ, դեպքերը, երբ թույլատրվում է հարկադրանքի կիրառումը, շատ ընդհանուր են: Այսպես, սահմանված է. «Իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու եւ ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության աշխատակցի օրինական պահանջներին չենթարկվելու, անհնազանդություն ցուցաբերելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաեւ ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության աշխատակիցն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական հարկադրանք (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաեւ ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը»):

Իսկ օրենքի 31 հոդվածով ամրագրված է, որ ոստիկանության աշխատակիցներն անձամբ կամ ստորաբաժանման կազմում ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք ունեն ոստիկանության տրամադրության տակ գտնվող հատուկ միջոցներ գործադրել, մասնավորապես, «ոստիկանության աշխատակցին ... ցուցաբերվող անհնազանդությունը հաղթահարելիս կամ դիմադրությունը խափանելիս» (կետ 2), «տրանսպորտի, կապի եւ այլ կազմակերպությունների աշխատանքը կազմալուծող զանգվածային անկարգությունները եւ խմբակային գործողությունները խափանելիս» (կետ 7):

Այս դրույթներն իշխանությունների կողմից ազատ մեկնաբանվում են ըստ սեփական հայեցողության՝ հնարավորություն տալով արդարացնել բռնարարքները՝ վկայակոչելով «Ոստիկանության մասին» օրենքը:

Ընդհանրության 2004 թ. ապրիլյան բողոքի ակցիաները ցրելուց<sup>25</sup> հետո ՀՀ Ոստիկանության հաղորդագրության մեջ նշվեց, թե «ստեղծված իրավիճակի վտանգավորությունից» ելնելով, «մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգը չեզոքացնելու նպատակով՝ ոստիկանության աշխատակիցները «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով, հարկադրված էին ֆիզիկական ուժ եւ հատուկ միջոցներ կիրառել»: Որեւէ կերպ չի հիմնավորված, թե խաղաղ ցուցարարներն ի՞նչ վտանգ էին ներկայացնում մարդկանց կյանքին եւ առողջությանը:

Վերջին տարիներին բարեփոխումների մի քայլ է կատարվել. ոստիկանությունը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծել է ՀՀ Ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում

<sup>25</sup> Տես՝ «Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների մոնիտորինգ»-ի 2005 թ. գեկույցի «Հանրահավաքներ, ժողովներ, մարդկանց ազատ տեղաշարժ» բաժինը

հասարակական դիտորդների խումբ, որն իրավունք ունի անարգել մտնել ժամանակավոր պահման մեկուսարաններ եւ մոնիտորինգ կատարել, զրուցել այնտեղ գտնվողների հետ:<sup>26</sup> Սակայն ժամանակավոր պահման վայրերում, մեծ մասամբ, շատ դժվար է հայտնաբերել անօրինական մեթոդներ կիրառելու դեպքեր: Դրանք հիմնականում կատարվում են ոստիկանական բաժանմունքներում, որտեղ խումբը մուտքի իրավունք չունի: Այսուհանդերձ, նման խմբի ստեղծումը հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության մի քայլ է:

«Ոստիկանության մասին» օրենքով ամրագրված գործառույթներից եւ գործունեության սկզբունքներից առավել հաճախ խախտվում են օրենքին համապատասխանության, համարժեքության, համաչափության, խտրականության, խոշտանգումների բացառման, կամայականություններից անձին պաշտպանելու սկզբունքները:

Ինչ վերաբերում է օրենքի մյուս սկզբունքներին եւ նորմերին, դրանց խախտումները առավել դրսևւորվում են հասարակության քաղաքական ակտիվության ժամանակաշրջաններում: Այսպես՝ համաչափությունը ենթադրում է ասեմբլե, հավաքների ազատության եւ հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման միջեւ հավասարակշռում, բայց ընդդիմության կողմից կազմակերպվող հանրահավաքների ժամանակ միշտ առավել կարելու է համարվում հասարակական կարգի պահպանումը: Ըստ օրենքի 29 հոդվածի՝ «Ոստիկանության աշխատակիցը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու եւ իրավախախտումը դադարեցնելու համար»: Մինչդեռ 2004 թ. ապրիլի 12-ի լույս 13-ի հանրահավաքը ցրելու ընթացքում նախազգուշացումն անելն ու ջրանետ մեքենաների մոտենալն իրականացվել է գրեթե 1 րոպեի տարբերությամբ: Օրենքի 31 հոդվածով սահմանվում է, թե որ դեպքերում կարող են գործադրվել հատուկ միջոցներ՝ ռետինե մահակներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, ջրանետեր, էլեկտրահարող սարքեր եւ այլն: Սակայն կարելի է վերապահությամբ ասել, որ 2004 թ. ապրիլի 12-ի լույս 13-ի ցույցը ցրելիս, այդ հոդվածով նախատեսված 9 կետերից միայն 2-ն է պահպանվել: Օրինակ, օրենքով թույլատրվում է հատուկ միջոցներ գործադրել «ցուցաբերվող անհնազանդությունը հաղթահարելիս կամ դիմադրությունը խափանելիս»: Այնինչ հիշյալ դեպքերի ժամանակ նախ կիրառվել են հատուկ միջոցներ, եւ հետո են միայն ցուցարարները դիմադրություն ցույց տվել:

2004թ. հանրահավաքների ընթացքում չեն պահպանվել նաեւ օրենքի 5 հոդվածի 3-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձանց «Իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավական օգնություն ստանալու իրենց իրավունքից, օրենքով սահմանված կարգով տեղյակ պահել նրանց հարազատներին, աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին: Անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել նրանց բժշկական եւ (կամ) այլ օգնություն ցույց տալու»:

Օրենքի 43 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ոստիկանության աշխատակցի նկատմամբ՝ «իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար»: Ոստիկանության գործունեության օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնում է դատախազությունը: Սահմանադրությամբ ոստիկանությունը եւ դատախազությունը համարվում են իրարից տարանջատված, բայց, ըստ էության, դրանք նույն համակարգի մաս են կազմում, քանզի դեռեւս հայտնի չէ որեւէ դեպք, որ խոշտանգումների (չնայած բազմաթիվ դիմումների), հանցագործության վերաբերյալ քաղաքացիների հայտարարությունները չգրանցելու, վկաների եւ բերման ենթարկվածների իրավունքները խախտելու համար որեւէ

<sup>26</sup> Մանրամասն՝ տես նշված դիտորդական խմբի մասին սույն զեկույցի «խոշտանգումներ եւ անմարդկային վերաբերմունք» բաժնում:

նստիկան պատասխանատվություն կրած լինի, թեպետ դատախազությունը ըստ ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի պարտավոր է հսկողություն իրականացնել, մասնավորապես, հետաքննության եւ նախաքննության, ինչպես նաեւ՝ հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Խորհրդային տարիներին միլիցիան եւ դատախազությունը պետության հենարանն էին: Անցումը ժողովրդավարական նստիկանական համակարգի՝ ենթադրում էր վարչակազմի շահերին ծառայող օղակի վերափոխում հասարակության շահերին ծառայող կառույցի: Սակայն քանի որ այս փոխակերպման աստիճանը կախված է ժողովրդավարացման աստիճանից, իսկ ժողովրդավարացման գործընթացը դեռ կայացած չէ, հասարակության մեջ այժմ էլ պահպանվում է Խորհրդային շրջանում արմատավորված պետության դերի գերազնահատումը եւ հասարակության դերի թերազնահատումը, նստիկանության, դատախազության համակարգերը շարունակում են մնալ վախի ու պատժի մթնոլորտ ստեղծելու միջոցով հասարակությանը իշխանության ենթակայության տակ պահելուն ծառայող կառույցներ:<sup>27</sup> 2004թ.-ին, երբ սպասվում էր ընդդիմության բողոքի ալիքը՝ տեղափոխություններ եղան նստիկանական համակարգում, որին նույնիսկ հանրապետության նախագահի շուրթերով բացատրություն տրվեց՝ «այդ փոփոխություններն այն բանի համար են, ինչ մասին դուք մտածում եք»:<sup>28</sup> 2004թ. մարտին ՀՀ գլխավոր դատախազ նշանակելով Աղվան Հովսեփյանին (որը ի դեպ գլխավոր դատախազ էր նաեւ 1999թ.)՝ երկրի նախագահը հայտարարեց, որ դատախազությունում կոշտ գործելակերպ ունեցող մարդիկ են հարկավոր:<sup>29</sup>

«Եվրոպական հարեւանության քաղաքականություն» եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրերի շրջանակներում Հայաստանը պարտավորվել է ամրապնդել դատախազների անկախությունը, անկողմնակալությունը, նրանց նշանակման եւ առաջխաղացման ընթացակարգերը: Սահմանադրական փոփոխություններից հետո գլխավոր դատախազին ՀՀ նախագահի առաջարկությամբ նշանակում է ՀՀ Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով (նախկինում վարչապետի առաջարկությամբ նշանակում էր ՀՀ նախագահը): Գլխավոր դատախազին պաշտոնանկ անել կարող է միայն Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Սակայն ԱԺ-ն կարող է նշանակել կամ պաշտոնանկ անել գլխավոր դատախազին (հ.103) միայն ՀՀ նախագահի առաջարկությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերում: Բացի այդ գլխավոր դատախազի տեղակալներին եւս նշանակում եւ ազատում է ՀՀ նախագահը՝ գլխավոր դատախազի առաջարկությամբ (հ.55 կետ 9): Գլխավոր դատախազի թեկնածությունը ՀՀ նախագահը պետք առաջարկի 2007թ. Ազգային ժողովի ընտրություններից ոչ ուշ քան 5 ամիս հետո:

Նույնիսկ Խորհրդային ամբողջատիրական համակարգում իրավապահ մարմինների հասարակական ընկալումը շատ ավելի դրական երանգավորում ուներ, քան այժմ: Դրա պատճառներից մեկը այն է, որ նախկինում հասարակությունը, չնայած որոշակի վախ ուներ այդ մարմիններից, հանձինս նրանց տեսնում էր դեստրուկտիվ շրջանակներից իրեն պաշտպանողի: Այսօրվա իրավապահ համակարգը հասարակական կարծիքում հաճախ ընկալվում է իբրեւ այդ տարրերի հովանավոր եւ ոչ թե՛ քաղաքացիների պաշտպան:<sup>30</sup>

Ինչ վերաբերում է օրենսդրությանը, ապա «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքից առհասարակ դուրս են մնացել ՄԱԿ-ի «Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնակարգ»-ում սահմանված իրավապահ մարմնի՝ ներկայացուցչականության, հասարակության պահանջները բավարարելու, հասարակությանը հաշվետու լինելու սկզբունքները: Դրանք չկան նաեւ «Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը

<sup>27</sup> «Ոստիկանության դերը ժողովրդավարական համակարգերում», Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երեւան 2001թ., էջ 53:

<sup>28</sup> «Ազգ» օրաթերթ 24 փետրվարի 2004թ.

<sup>29</sup> «Դիտորդ» 9 (27) 2005թ, էջ 2-8:

<sup>30</sup> «Ոստիկանության դերը ժողովրդավարական համակարգերում», Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երեւան 2001թ., էջ էջ 31, 53:

հաստատելու մասին» ՀՀ օրենքում: «Եվրոպական հարելանության քաղաքականություն» եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրերի շրջանակներում Հայաստանը պարտավորվել է ոստիկանների եւ դատախազներ համար կիրառել 2001 թ-ի սեպտեմբերի 19-ին Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված Ոստիկանության էթիկայի եվրոպական օրենսգիրքը:

Ոստիկանության աշխատանքի արդյունավետությունը շարունակում է գնահատվել հանցավորության քանակական ցուցանիշներով: Ինչը պատկերացում չի տալիս մարդու իրավունքները եւ ազատությունները պաշտպանելու ոստիկանության հիմնական գործառույթի իրականացման վերաբերյալ: Մասնավորապես, ոստիկանները խուսափում են գրանցել քաղաքացիների դիմումները՝ հետագայում չբացահայտված գործերի մեծ թիվ չունենալու համար:

Ընդհանրապես իրավապահ մարմինների աշխատանքի գնահատման մեջ որեւէ կերպ չի արտահայտվում հասարակության կարծիքը: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի՝ 2005թ. ընթացքում ստացած դիմումների մեջ 3-րդ տեղը զբաղեցնում են ոստիկանությունից դժգոհ քաղաքացիների բողոքները: Իսկ կոռուպցիայի վերաբերյալ հասարակական հարցումների արդյունքում ոստիկանությունը 20 կառույցների թվում զբաղեցնում է 2-6 տեղերը:<sup>31</sup>

«Եվրոպական հարելանության քաղաքականություն» եւ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրերի շրջանակներում Հայաստանը պարտավորվել է իրականացնել եւ կիրառել հատուկ հակակոռուպցիոն միջոցառումներ ոստիկանների, դատախազներ համար, սերտորեն համագործակցել ԵԱՀԿ եւ Եվրոպայի խորհրդի հետ կոռուպցիայի վերացման, ինչպես նաեւ ոստիկանության ու հասարակության միջեւ առավել վստահության հաստատման նպատակով:

Ըստ «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսսի ինտերնեյշնլ - Հայաստան» կազմակերպության անցկացրած հարցման արդյունքների, առավել կոռուպացված պետական կառույցների մեջ 5-րդ տեղը զբաղեցնում է դատախազությունը, իսկ ոստիկանությունը՝ 6-րդ տեղը:<sup>32</sup>

Հայաստանի Դեյվիդսոնյան կոմիտեի կողմից 2006 թ էջմիածին քաղաքում 117 հարցվածներից 100-ն իրենց պաշտպանված չեն զգում: Հարցվածներից միայն 9-ն է գտնում, որ կկարողանա պաշտպանել իր շահերը իրավապահների միջոցով եւ միայն երկուական հարցվածներ ասացին, որ իրենց շահերի ոտնահարման դեպքում կդիմեին ոստիկանություն եւ դատախազություն: Հարցվածներից 39-ը ամենակոռուպացված ատյան են համարել ոստիկանությունը, իսկ 42-ը՝ դատախազությունը:<sup>33</sup>

Քրեական իրավունքում բռնի են համարվում բռնությանը զուգորդվող հանցագործությունները, մինչդեռ Հայաստանի քրեաիրավական վիճակագրության մեջ հանցագործությունները վերլուծվում են ըստ ստորեւ նշվող բաժինների, որոնցից յուրաքանչյուրն էլ իր մեջ ներառում է թե բռնի եւ թե ոչ բռնի հանցագործություններ:

Ընդհանուր առմամբ 2006 թ. նկատվել է գրանցված հանցագործությունների թվի 10% աճ:

2006 թվականին առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են տարվա ընթացքում գրանցված հանցագործությունների 1.7%-ը, 2005-ի համեմատ դրանց թիվն աճել է 23 %-ով: Ծանր հանցագործությունները կազմում են 2006թ. ընթացքում գրանցված հանցագործությունների 37%-ը, 2005-ի համեմատ դրանց թիվն աճել է 15%-ով: Միջին ծանրության հանցագործությունների թիվը 2005-ի համեմատ աճել է 85 %-ով, իսկ ահա ոչ մեծ ծանրության հանցագործությունների թիվը 2005-ի համեմատ նվազել է 21 %-ով:

<sup>31</sup> Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի 2004թ. իրականացրած հասարակական հարցում

<sup>32</sup> «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006», Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսսի ինթերնեյշնլ-Հայաստան, Երեւան-2006, էջ. 14-15:

<sup>33</sup> Հարցման արդյունքները գտնվում են վերջնամշակման փուլում:



2006 թվականին բռնությամբ զուգորդվող հանցագործությունների դինամիկան 2005 թ. համեմատ այսպիսին է՝

1. մարդու դեմ ուղղված հանցագործություններ, այդ թվում.

- սպանության փորձ (նվազել է)

- դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը (նվազել է)

- բռնաբարություն, բռնաբարության փորձ, սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված բռնի գործողություններ (նվազել է)

- սպանություն (աճել է)

2. բնակչության առողջության դեմ հանցագործություններ (աճել է), այդ թվում՝

- ծեծ, այլ բռնի գործողություններ (աճել է)

3. պետական իշխանության ներկայացուցիչների դեմ հանցագործությունները, այն է՝ պետական, հասարակական գործչի սպանություն, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրում, 2005-ի համեմատ նվազել են:

Բռնի գործողությունների կիրառման աստիճանը համեմատաբար ցածր է սեփականության դեմ ուղղված հանցագործություններում (որոնց ընդհանուր թիվը սակայն 2005 թ. համեմատ աճել է) եւ տնտեսական գործունեության դեմ հանցագործություններում, (որոնց թիվը նույնպես աճել է):<sup>34</sup>

## ՊԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կազմավորման իրավական հիմքերը դրվեցին ՀՀ 1995թ. Սահմանադրությամբ: Համաձայն դրա՝ ՀՀ-ում գործում է ընդհանուր իրավասության եռաստիճան դատական համակարգ եւ Սահմանադրական դատարանը: Սահմանադրությամբ հռչակվեցին դատարանների անկախության երաշխիքները: Մասնավորապես՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա» (հ. 5), «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան», (հ. 91), «Դատավորը եւ Սահմանադրական դատարանի անդամը անփոփոխելի են» (հ. 96), «Արդարադատություն իրականացնելիս դատավորը եւ Սահմանադրական դատարանի անդամն անկախ են եւ ենթարկվում են միայն օրենքին» (հ. 97):

Սակայն, դատարանների անկախության հիմնական երաշխիքը՝ գործադիր իշխանությունից նրանց անկախության օրենսդրական հիմքերը չապահովվեցին: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ ՀՀ նախագահը Արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում եւ ազատում է դատավորներին, հաստատում է դատավորների պաշտոնական պիտանիության եւ ծառայողական առաջխաղացման ցուցակները, ինչպես նաեւ համաձայնություն է տալիս դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Բացի ՀՀ նախագահին առաջարկություններ ներկայացնելու լիազորությունը, Արդարադատության խորհրդին վերապահվեց նաեւ գործող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություն:

Չնայած սահմանվեց, թե «Դատավորը եւ Սահմանադրական դատարանի անդամը անփոփոխելի են» (վերը հիշատկված 96 հոդվածը), սակայն 1996-2006 թ.թ. ՀՀ նախագահը վաղաժամկետ դադարեցրել է մի շարք դատավորների լիազորություններ:

<sup>34</sup> Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ Ոստիկանության՝ [www.police.am](http://www.police.am) եւ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքերից:

Դատավորները զրկված են իրենց իրավունքները պաշտպանելու օրենսդրական մեխանիզմներից, այդ թվում դատարանների միջոցով:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում իրավական նախաձեռնության (ABA/CEELI) հայաստանյան գրասենյակի ուսումնասիրությունները փաստում են, որ երկրում դեռեւս գերակայում է խորհրդային ժամանակների մտածելակերպը, ըստ որի իրավապահ մարմինները (դատախազություն, ոստիկանություն) իրավական համակարգում դասվում են բոլորից վեր:

Կալանքի սանկցիա տալու, նախնական կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ իրավապահների միջնորդությունները դատարաններում (հիմնականում առաջին ատյանի) գրեթե չեն մերժվում (այսպես, 2003, 2004 թ.թ. մերժվել է միջնորդությունների 4%-ը միայն<sup>35</sup>): Դատավարությունների ընթացքում մեղադրյալների մոտ 80%-ը հրաժարվում է նախաքննության ժամանակ տված ցուցմունքներից՝ պատճառաբանելով, որ դրանք տվել են խոշտանգումների եւ բռնությունների ազդեցության տակ:<sup>36</sup> Սակայն այդ հայտարարությունները դատարաններում անուշադրության են մատնվում<sup>37</sup>, որոշ դեպքերում բռնությունները նույնիսկ արդարացվում են: Օրինակ. Սյունիքի մարզի առաջին ատյանի դատավոր Աթանյանը իր դատավճռում անրագրել է. «Դատարանը գնահատական տալով Գ.Տավարածյանի տված հակասական ցուցմունքներին ... նախաքննության եւ դատաքննության ընթացքում՝ գտնում է, որ իրականում հետաքննական մարմնի կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»<sup>38</sup>:

Դատարանների կողմից լրացուցիչ նախաքննության ուղարկված գործերի մեծ մասը կարճվում է, սակայն դատարաններն իրենք իրենց վրա պատասխանատվություն չեն վերցնում ընդունել արդարացման որոշումներ: 2000թ. արդարացման ոչ մի դատավճիռ չի կայացվել, 2001 կայացվել է 3-ը, 2002-ին՝ 4, 2003-ին՝ 10, 2004-ի առաջին կիսամյակում՝ 1<sup>39</sup>:

Դատավարական ընթացակարգերի խախտման փաստերը, թե քրեական, թե քաղաքացիական դատավարությունների ընթացքում, շատ են: Երեւանի պետական համալսարանի իրավաբան-գիտնականների կողմից կատարված հետազոտություններով պարզվել է, որ քրեական գործերի քննությունը ձգձգվում է մինչեւ երկու, իսկ երբեմն՝ ավելի տարիներ: Իսկ քաղաքացիական գործերի դեպքում սահմանված երկամսյան ժամկետի փոխարեն 100 քաղաքացիական գործերից 20-ի դեպքում վճիռները կայացվել են մեկ ամիս ուշացումով, 8-ի դեպքում 2 ամիս ուշացումով, իսկ 5-ի դեպքում՝ 3 ամիս ուշացումով:

Դատական նիստերի ուշ սկսելը, ձգձգումները, կողմերին պատշաճ չժանուցելը եւ առանց պատասխանող կողմի դատական նիստերի անցկացումը, վճռի տրամադրման ձգձգումը համատարած բնույթ են կրում:

Այդպիսի խախտումներով 2003 թ. աշնանից - 2004թ. դատարանը բավարարել է «Հյուսիսային պողոտա եւ կասկադ» ծրագրերի իրականացման գրասենյակի գրեթե բոլոր դիմումները՝ քաղաքացիների սեփականությունները հարկադրաբար օտարելու վերաբերյալ: Դատարանը դիմումները ստանալու իսկ օրերին վճիռներ է կայացրել քաղաքացիներին իրենց տներից վտարելու մասին<sup>40</sup>:

Հայաստանում դատական իշխանության կարգավիճակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով դատաիրավական բարեփոխումների անցկացման համար Համաշխարհային բանկը տրամադրել է 11.4

<sup>35</sup> ՀՀ գլխավոր դատախազության 2004 թ. աշխատանքների արդյունքները՝ ներկայացված գլխավոր դատախազության կոլեգայի 18.02.05թ. ընդլայնված նիստում:

<sup>36</sup> «Հանցագործություն հանուն հանցագործության բացահայտման», «Դիտորդ» 2002 # 3:

<sup>37</sup> ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի 13.06.03թ. որոշումը դատապարտյալ Յ.Լ.-ի վերաբերյալ:

<sup>38</sup> «Օրենք եւ իրականություն», 2003 թ., թիվ 5-6, էջ 19:

<sup>39</sup> ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի տեղեկանքը:

<sup>40</sup> Տես «Դիտորդ» 2004 #3, 2005 # 12

մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ, որի հաշվին վերակառուցվել են դատարանների շենքեր, իրականացվել են կառուցվածքային բարեփոխումներ: Իրավական տեղեկատվության մատչելիության ապահովման համար ստեղծվել է [www.arlis.am](http://www.arlis.am) տեղեկատվական կայքը, որը ի տարբերություն վճարովի irtek համակարգի կառուցվածքային առումով լավ մշակված չէ, որոնողական հնարավորությունները թերի են:

2005թ. նոյեմբերի 27-ին անցկացված հանրաքվեով ընդունվեցին Սահմանադրության փոփոխությունները:

Մասնավորապես՝

1. փոխվեց Սահմանադրության 94-րդ հոդվածը, արդյունքում՝ դատարանների անկախության երաշխավորը ոչ թե Հանրապետության նախագահն է, այլ Սահմանադրությունը եւ օրենքը,

2. փոխվեցին դատավորների նշանակման/լիազորությունների վաղաժամկետ դադարեցման գործում կարելորագույն դեր ունեցող մարմնի՝ Արդարադատության խորհրդի կազմը եւ լիազորությունները:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում (94.1 հոդված) Հանրապետության նախագահը չի գլխավորում Արդարադատության խորհուրդը: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի: Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Ըստ Սահմանադրության փոփոխությունների անցումային դրույթների՝ Արդարադատության խորհրդի կազմում շարունակում են մնալ միայն Արդարադատության խորհրդի գործող դատավոր եւ իրավաբան գիտնական անդամները (մինչեւ իրենց լիազորությունների ավարտը): Ազգային ժողովի կողմից 2006թ. մարտին կատարվեցին նոր անդամների (2 իրավաբան գիտնական) նշանակումները:

Արդարադատության խորհուրդը (ըստ փոփոխված Սահմանադրության 95-րդ հոդված) այսուհետ՝

-ինքնուրույն է կազմելու եւ ՀՀ նախագահի հաստատմանը ներկայացնելու դատավորների թեկնածությունների եւ ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները (մինչ փոփոխությունները Արդարադատության խորհուրդը ցուցակները կազմում էր արդարադատության նախարարի առաջարկով),

-եզրակացություն է տալու վերաքննիչ, առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների դատավորների ներկայացված թեկնածությունների վերաբերյալ: Մինչ փոփոխությունները սահմանված էր, որ նշված դատավորների թեկնածությունները առաջարկվում են արդարադատության նախարարի կողմից: Սակայն

Սահմանադրության փոփոխություններով ամրագրված չէ առաջարկող սուբյեկտը:

Այսուհանդերձ, պահպանվել է Սահմանադրության մեջ 1995թ. ամրագրված այն դրույթը, ըստ որի Արդարադատության խորհրդի առաջարկած դատավորների լիազորությունները դադարեցնում կամ առաջարկված թեկնածուին դատավոր է նշանակում ՀՀ նախագահը: Այսինքն, վերջնական որոշում կայացնողը նախագահն է եւ սահմանված չէ, թե ինչ կարող է անել Արդարադատության խորհուրդը, եթե նախագահը դատավոր չի նշանակում իրենց առաջարկած թեկնածուին:

Սահմանադրությունում կատարված վերոնշյալ փոփոխությունները, փորձագետների գնահատմամբ դրական քայլ լինելով հանդերձ, անուամենայնիվ, չեն կարող բավարար համարվել դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախությունը երաշխավորելու համար:

Սահմանադրական փոփոխություններից հետո էլ արդարադատության նախարարին է վերապահված դատավորների պաշտոնեական պիտանելիության եւ ծառայողական առաջխաղացման քննությունների կազմակերպումը եւ անցկացումը: Ընդ որում, նախարարը ղեկավարվում է ոչ թե օրենքով, այլ վարչապետի որոշմամբ:

Արդարադատության նախարարը Արդարադատության խորհրդին ներկայացնում է դատավորի լիազորությունների դադարեցման առաջարկություն եւ այն հիմնավորող նյութեր: Միաժամանակ, դատավորների առաջխաղացումը միշտ չէ ծառայողական առաջխաղացման ցուցակի վրա հիմնված. երկար տարիներ այդ ցուցակում գտնված անձիք կարող են պաշտոնական առաջխաղացում չունենալ, իսկ նոր ընդգրկվածները՝ միանգամից նշանակվել պաշտոնի: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի նախագահ Տիգրան Մուկուչյանը այդ պաշտոնում նշանակվեց 2006 թվականին՝ առաջին անգամ ցուցակում ընդգրկվելուց անմիջապես հետո:

Դատարանները շարունակում են խուսափել քաղաքացիների, այլ ոչ թե գործադիր կամ իրավապահ մարմինների, օգտին որոշումներ կայացնելուց, կամ էլ՝ ընդունել արդարացման դատավճիռներ:

Դատարանների կախվածությունը դրսևորվեց 2005 նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների (սահմանադրական հանրաքվեից հետո դրա արդյունքների հետ կապված բողոքի ակցիաների ժամանակ) քաղաքական լարվածության ընթացքում, երբ կրկին ընդդիմադիրների նկատմամբ հետապնդումներ, վարչական կալանքներ կիրառվեցին:

Առայժմ շարունակում է չգործել դատական իշխանության արդյունավետության կարելու երաշխիքներից մեկը՝ դատարանների իրավասությունը օրենքը դիտարկել որպես իրավունքի իրականացման միջոց եւ չկիրառել այն օրենքները, որոնք խախտում են մարդու սահմանադրական իրավունքները: Դատարանները հիմնականում շարունակում են հանդես գալ ոչ թե իրավունքի այլ օրենքի պաշտպան: Մինչ սահմանադրական փոփոխությունները դատարանները կարող էին կասեցնել գործի վարույթը, եթե այդ գործին առնչվող նորմատիվ ակտի դրույթը իրենց կարծիքով հակասում է Սահմանադրությանը եւ դիմել Դատարանների նախագահների խորհրդին, որպեսզի նա օրենքով սահմանված կարգով դիմի ՀՀ նախագահին, իսկ վերջինս դիմի Սահմանադրական դատարան՝ տվյալ նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով: 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով Սահմանադրական դատարան անմիջական դիմելու իրավունք ստացան (հ.101): Սակայն 2006 թվականի վերջի դրությամբ դատարանները նման որեւէ դիմում չեն ներկայացրել: Ինչպես եւ նախկին միջնորդավորված հնարավորությունները, այնպես էլ այժմ Սահմանադրական դատարան ուղղակի դիմելու հնարավորությունը դատարանները չեն օգտագործում՝ գերադասելով մնալ միայն որպես նորմատիվ ակտի դրույթները կիրառող:

Ինչ վերաբերում է դատական իշխանության արդյունավետության մեկ այլ կարելու չափանիշին՝ դատավորների ֆինանսական անկախությանը, ապա հարկ է նշել, որ դատավորների աշխատավարձը Ադրբեջանի եւ Վրաստանի համեմատ Հայաստանում ցածր է: Դատավորների աշխատավարձի բարձրացման նախաձեռնությամբ հանդես է գալիս Արդարադատության նախարարը՝ դա դիտարկելով, որպես դատական համակարգի հակակոռուպցիոն ծրագրի մաս: Ջարմանալի է դատավորների անտարբերությունն իրենց աշխատավարձերի նկատմամբ: Երբ մերժվեց 2007 թ. պետբյուջեով դատավորների աշխատավարձը բարձրացնելու առաջարկը, դատավորները ինչպես եւ նախկինում որեւէ կերպ հանդես չեկան դրա դեմ:

Արդարադատության արդյունավետության վրա իր ազդեցությունը թողնում է նաեւ արդարադատության մատչելիության աստիճանը: Քրեական եւ քաղաքացիական գործերով քաղաքացիներն ունեն դատարան դիմելու լայն իրավական հնարավորություն: Սահմանադրական փոփոխություններով հանվել է նաեւ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները եւ որոշումները Վճռաբեկ դատարան միայն գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների միջոցով բողոքարկելու պահանջ:

Պրակտիկայում, սակայն, արդարադատության մատչելիության խնդիրներ ծագում են բնակչության սոցիալ-տնտեսական ոչ բարվոք վիճակի պատճառով: Մատչելիության ապահովման ֆինանսական մեխանիզմներից ՀՀ օրենսդրությամբ ներկայումս

ամրագրված են երկուսը. 1. դատական ծախսերի գծով որոշ արտոնություններ, 2. որոշակի դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու քաղաքացիների իրավունքը: Անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է հիմնականում քրեական գործերով: Այնինչ քաղաքացիական գործերը կազմում են դատարաններում քննվող գործերի 90 տոկոսը: Երկրի բնակչության հիմնական մասը սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառով չի կարողանում վճարել իրավաբանական ծառայությունների համար:

2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո քաղաքացիները Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ստացան (Սահմանադրություն հ.101): Յուրաքանչյուր անձ կարող է վիճարկել կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթների սահմանադրականությունը, եթե սպառնվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները: 2006 հուլիսից նույնքեր ընկած ժամանակահատվածում Սահմանադրական դատարան քաղաքացիները 15 դիմում են ներկայացրել, որոնց վերաբերյալ քննվել է 7 գործ, դրանցից 2-ի դեպքում վիճարկվող դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Դատական իշխանության կանխատեսելիությունը ըստ էության երկու տեսանկյուն ունի՝ իրավական եւ քաղաքական: Իրավական առումով դատական նախադեպը նոր պետք է մուտք գործի դատական պրակտիկա: Գրավի ինստիտուտի ներդրման վերաբերյալ 2006 թ. ընթացքում ABA/CELLI-ի անցկացրած ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իբրեւ խափանման միջոց գրավով ազատ արձակելու դատական նախադեպը դատարանների կողմից արդեն կիրառվում է: Առկա են նաեւ ՀՀ վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանների կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի կիրառման փաստեր: ՀՀ Սահմանադրական դատարանը որոշումներ կայացնելիս հղումներ է կատարել ինչպես իր նախկին որոշումներին, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային: Առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվել է (հոդված 92), որ «Վճռաբեկ դատարանը ... կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը»:

Քաղաքական առումով սակայն դատական իշխանությունը առավել կանխատեսելի է, քանի որ այն քաղաքական կոնյուկտուրային համապատասխան վարքագիծ է դրսևորում, բազմաթիվ դեպքերում նույն հիմքերով բացարձակապես տարբեր որոշումներ (վճիռներ) կարող են կայացվել<sup>41</sup>:

---

<sup>41</sup> Տես ՀՀ նախագահի ընտրություններ 2003, «Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբ, Եր. 2003.

## 6. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

### ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

#### ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի 2006թ. կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ)<sup>42</sup> համաձայն՝ դիտարկված երկրների մոտավորապես երեք քառորդի ցուցանիշը ցածր է 5-ից (ըստ «1-10» սանդղակի, որտեղ 1 միավոր շնորհվում է «լիովին կոռումպացված» պետությանը, իսկ 10 միավոր՝ «կոռուպցիայից բացարձակապես զերծ» պետությանը): Սա վկայում է, որ աշխարհի պետությունների մեծ մասում կոռուպցիայի ընկալման աստիճանը միանգամայն բարձր է: 71 երկիր (դիտարկվածների գրեթե կեսը) 3-ից ցածր ցուցանիշ ունեն, ինչը նշանակում է, որ դրանցում կոռուպցիան գնահատվում է որպես խիստ տարածված: Ներկայումս Հայաստանը տեղ է զբաղեցնում հենց այս երկրների խմբում եւ վերջին երեք տարիներին նկատելի առաջընթաց չի արձանագրել. նրա ԿԸՀ-ն 2004, 2005 եւ 2006 թվականներին կազմել է, համապատասխանաբար, 3.1, 2.9 եւ 2.9:

Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում պաշտոնապես հռչակվեց 2001-ին, երբ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորությամբ ստեղծվեց կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի աշխատանքները համակարգող հանձնաժողով<sup>43</sup>: 2002թ. տեղացի եւ օտարերկրյա փորձագետների խումբը, Համաշխարհային բանկի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված դրամաշնորհի շրջանակներում, մշակեց հակակոռուպցիոն ազգային ռազմավարության նախագիծը: Թեեւ 2003-ի սկզբներին նախագիծն արդեն իսկ պատրաստ էր քննարկման դրվելու եւ հաստատվելու, սակայն իշխանությունները հետաձգեցին այդ գործընթացը՝ սպասվող նախագահական ու խորհրդարանական ընտրությունների պատճառով, որոնք տեղի ունեցան, համապատասխանաբար, 2003-ի փետրվար-մարտին եւ մայիսին:

2003թ. հունիսին նոր ձեւավորված կոալիցիոն կառավարությունը վերջնական տեսքի բերեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը (ՀՌ) եւ դրա իրականացման միջոցառումների ծրագիրը (ԻՄԾ), որոնք 2003թ. դեկտեմբերի 10-ին վավերացվեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից: Թե՛ ՀՌ-ն եւ թե՛ ԻՄԾ-ն մշակվեցին «փակ դռների ետեւում», առանց շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու: Դրանք ամփոփվեցին մեկ միասնական փաստաթղթում<sup>44</sup>, եւ դրանց իրականացումը նախատեսված է ավարտել 2007 թվականին: Այդ պատճառով 2007թ. պետք է մշակվի եւ հաստատվի Ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագրի նոր տարբերակը: Ներկայումս կառավարության ինտերնետային կայքէջում<sup>45</sup> զետեղված է գործող ՀՌ-ի խմբագրված տարբերակը, որը կարող է օգտագործվել հետագա փոփոխություններ կատարելու համար:

Մասնագիտացված նոր կառույցներ ստեղծելու փոխարեն՝ Հայաստանի կառավարությունը որդեգրել է գործող իրավապահ մարմինները հզորացնելու մոտեցումը: Երկրում չկան նաեւ զուտ կոռուպցիոն հանցագործությունների քննությանն ու քրեական հետապնդմանը վերաբերող հատուկ իրավական կամ ընթացակարգային գործիքներ: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմամբ եւ քննությամբ զբաղվող մարմիններն են դատախազությունը, ոստիկանությունը եւ Ազգային անվտանգության ծառայությունը: Կոռուպցիային առնչվող հանցագործությունների

<sup>42</sup> [http://www.transparency.org/policy\\_and\\_research/surveys\\_indices/cpi](http://www.transparency.org/policy_and_research/surveys_indices/cpi)

<sup>43</sup> Տե՛ս ՀՀ վարչապետի 2001թ. հունիսի 1-ի N 44 որոշումը:

<sup>44</sup> «Հակակոռուպցիոն ռազմավարության եւ դրա իրականացման միջոցառումների ծրագիր»: Երեւան:- 2003թ.:

<sup>45</sup> [http://www.gov.am/armversion/premier\\_2/primer\\_council\\_6hashvet.htm](http://www.gov.am/armversion/premier_2/primer_council_6hashvet.htm)

(ինչպիսիք են կաշառակերությունը, պաշտոնեական դիրքի չարաշահումը, պաշտոնեական կեղծիքը եւ այլն) մեծ մասը հետաքննվում է դատախազության կողմից: ՀՀ գլխավոր դատախազության կազմում 2004-ի ապրիլի 30-ին ստեղծված կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ բաժինը համակարգում է ՀՀ ոստիկանության եւ ազգային անվտանգության ծառայության հետաքննչական գործողությունները՝ կապված կոռուպցիային առնչվող դեպքերի հետ:

Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության իրականացմանն աջակցելու նպատակով՝ 2004թ. հունիսին ստեղծվեցին կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը (ԿՊԽ) եւ դրան առընթեր Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովը (ՄՀ)<sup>46</sup>: ԿՊԽ-ի կազմում, որը գլխավորում է վարչապետը, բարձրաստիճան պաշտոնյաներ են, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ), կառավարության աշխատակազմի, գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, նախագահի աշխատակազմի, Կենտրոնական բանկի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի եւ վերահսկիչ պալատի ներկայացուցիչներ:

ԿՊԽ-ի հիմնական գործառնություններն են՝ համակարգել ՀՌ-ի իրականացման աշխատանքները, քննարկել ՄՀ-ի կողմից ներկայացվող առաջարկությունները, վերլուծել ՀՌ-ի միջոցառումների իրականացման համար պատասխանատուների կատարած աշխատանքը, կազմակերպել եւ համակարգել նախարարություններում հակակոռուպցիոն ծրագրերի մշակումն ու իրականացումը եւ այլն: ԿՊԽ-ի մասին որոշակի տեղեկություններ կարելի է ստանալ [www.gov.am](http://www.gov.am) կայքէջից, որը, սակայն, պարբերաբար չի թարմացվում (այսպես, 2006-ի դեկտեմբերի դրությամբ՝ 2006 թվականի որեւէ արձանագրություն չէր տեղադրված): Լայն հասարակայնությունը ԿՊԽ-ի գործունեության մասին հիմնականում տեղեկանում է մամուլի հրապարակումներից:

Այն, որ ԿՊԽ-ի կազմում ընդգրկված են հանրության տեսակետից առավել կոռումպացված համարվող<sup>47,48</sup> հաստատությունների ներկայացուցիչ բարձրաստիճան պաշտոնյաներ, չի նպաստում խորհրդի հանդեպ հասարակության վստահության ձեւավորմանը: ԿՊԽ-ի նիստերի անկանոն բնույթը հավելյալ ապացույց է, որ դեռեւս չկա իրական քաղաքական կամք՝ կոռուպցիայի դեմ պայքարելու համար (կամ առնվազն՝ հիմնելու արդյունավետ գործող կառույցներ, որոնք կհամակարգեին հակակոռուպցիոն քաղաքականությունը եւ կվերահսկեին դրա իրականացումը երկրում): 2004-2005թթ. խորհուրդը հրավիրել է ընդամենը 4 նիստ, իսկ 2006-ին (հոկտեմբերի դրությամբ)՝ հազիվ 3 նիստ, թեւեւ իր կանոնադրությամբ<sup>49</sup> 5-րդ կետի համաձայն այն պետք է յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում հրավիրի առնվազն 2 հերթական նիստ:

Մոնիտորինգի հանձնաժողովը սկզբնապես գլխավորում էր ՀՀ նախագահի խորհրդական Բագրատ Եսայանը՝ մինչեւ 2006թ. մայիսին կրթության եւ գիտության փոխնախարարի պաշտոնը ստանձնելը: 2006թ. հունիսի 21-ին ՀՀ նախագահի ՆՀ-100-Ն հրամանագրով կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում «ՀՀ նախագահի խորհրդական» բառերը փոխարինվել են «ՀՀ նախագահի օգնական» բառերով, սակայն մինչեւ 2006-ի սեպտեմբեր ամիսը համապատասխան փոփոխություն չէր կատարվել բուն ՄՀ-ի կազմում: ՄՀ-ի նախագահից բացի՝ հանձնաժողովում ընդգրկված են նաեւ «Եվրոպական երկրների կոռուպցիայի դեմ պայքարի խմբում» (ԳՐԵԿՈ) ՀՀ պատվիրակության ղեկավարը, պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի քարտուղարը, ՀՀ կառավարության աշխատակազմի մեկ ներկայացուցիչ, ինչպես նաեւ՝ Ազգային ժողովի (ԱԺ) խմբերի ու

<sup>46</sup> Տե՛ս ՀՀ նախագահի 2004թ. հունիսի 1-ի ՆՀ-100 որոշումը:

<sup>47</sup> «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում. 2005թ. հեռախոսային հարցում»: - «ՏՁԿ/ԹԻ-Հայաստան», Երեւան, 2006թ.: «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում. ո՞վ է հասել հաջողության եւ ինչո՞ւ»: - Համաշխարհային բանկի զեկույցը, 2006թ.:

<sup>48</sup> [http://www.transparency.am/media\\_archive.php](http://www.transparency.am/media_archive.php)

<sup>49</sup> [http://www.gov.am/armversion/premier\\_2/primer\\_council\\_6kanon.htm](http://www.gov.am/armversion/premier_2/primer_council_6kanon.htm)

խմբակցությունների եւ հասարակական կազմակերպությունների (ՅԿ-ներ) ներկայացուցիչներ:

ՅԿ-ները Հանձնաժողովում ներկայացված են՝ հանձինս «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան»-ի («ՏԶԿ/ԹԻ-Հայաստան») նախագահի, ինչպես նաեւ՝ ԱԺ-ի բոլոր խումբ-խմբակցությունների կողմից մեկ տարի ժամկետով առաջադրված հասարակական կազմակերպությունների մեկական ներկայացուցիչ: Քանի որ ԱԺ-ի ընդդիմադիր խմբակցությունները («Արդարություն» դաշինքը եւ «Ազգային միաբանությունը») բոյկոտում են ՄՅ-ի աշխատանքները, վերջինիս անդամների թիվը 4-ով պակաս է (2-ական ներկայացուցիչ ընդդիմադիր խմբակցություններից եւ իրենց կողմից առաջարկվող ՅԿ-ներից): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչո՞ւ պետք է ՅԿ ներկայացուցիչների անդամակցությունը կախված լինի քաղաքական կուսակցությունների ու խորհրդարանական խմբերի առաջադրումից:

Հանձնաժողովի գործառնություններն են. անցկացնել Հակակոռուպցիոն ռազմավարության եւ նախարարությունների հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման մոնիտորինգ՝ ներգրավելով քաղաքացիական հասարակությանը եւ ՁԼՄ-ներին, ուսումնասիրել եւ ամփոփել կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային ու տեղական փորձը, հետեւել ՀՀ կողմից ստորագրված եւ վավերացված հակակոռուպցիոն միջազգային կոնվենցիաներից բխող՝ ՀՀ միջազգային պարտավորությունների կատարմանը, անցկացնել փորձագիտական վերլուծություն՝ օրենքներում եւ օրինագծերում կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով<sup>50</sup>: Մինչդեռ ՄՅ-ն հիմնականում սահմանափակվում է միայն կոռուպցիոն հանցանքներին վերաբերող վիճակագրություն հավաքելով (տե՛ս 2005թ. տվյալները ՀՀ կառավարության կայքէջում<sup>51</sup>) եւ իրականացման միջոցառումների ծրագրի կատարման ընթացքը ստուգելով՝ հիմնվելով պետական համապատասխան հաստատությունների տրամադրած տեղեկատվության վրա: ՄՅ-ի նախագահի անունով ստացված բոլոր բողոքներն ու դիմումները սովորաբար ուղարկվում են պատկան մարմիններին, հաճախ՝ անգամ նրանց, ում կոռումպացված լինելու դեմ բողոքում է դիմումատուն:

ՄՅ-ին կից ստեղծվեցին ՅԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած 12 աշխատանքային խմբեր, որոնք կոչված էին հետեւել որոշակի ոլորտներում (օր.՝ ֆինանսական, կրթական, առողջապահական, բնապահպանական, տրանսպորտի եւ այլն) հակակոռուպցիոն միջոցառումների կատարմանը: Խմբերը նշակեցին 2005թ. իրենց աշխատանքային պլանները եւ ներկայացրեցին Հանձնաժողովին: Սակայն մի քանի հանդիպում անցկացնելուց հետո այդ խմբերի գործունեությունը հիմնականում դադարեց: Ընդհանրապես, ՄՅ-ն չունի համապատասխան նյութական, վարչական եւ այլ ռեսուրսներ՝ լուրջ մոնիտորինգ իրականացնելու համար, ինչն, իր հերթին, խոչընդոտում է կոռուպցիայի դեմ պայքարի ծավալմանը Հայաստանում: Ավելին, 2005-ի դեկտեմբերից ի վեր ՄՅ-ն անցկացրել է ընդամենը երկու նիստ՝ 2006 թվականին, ինչն ուղղակի խախտում է ՄՅ-ի կանոնադրությունը<sup>52</sup>, որը պահանջում է անցկացնել «ամիսը առնվազն մեկ նիստ»: Սա վկայում է, որ Հայաստանում դեռեւս չկա ինստիտուցիոնալ անհրաժեշտ հենք՝ ՀՀ իրականացմանն ուղղված ջանքերը համակարգելու եւ իրական մոնիտորինգ անցկացնելու համար:

Մինչ օրս կառավարությունը չի ապահովել օրենքների պատշաճ կիրարկումն ու օրենքի առջև մարդկանց հավասարությունը՝ անկախ նրանց պաշտոնից ու եկամտից: Անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել քաղաքացիների բողոքներին եւ մամուլի կողմից կոռուպցիայի դեպքերի բացահայտումներին, դրանք կոծկվել են կամ զուտ ձեւական ուշադրության արժանացել: Հասարակության մեջ գնալով խորանում է թերահավատությունն ու անտարբերությունը, վախն ու հուսահատությունը: Մինչդեռ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի անհրաժեշտ նախապայմաններից են

<sup>50</sup> «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», թիվ 30(329), հունիսի 9, 2004թ.:

<sup>51</sup> [http://www.gov.am/armversion/premier\\_2/pdf/prog\\_d\\_2.pdf](http://www.gov.am/armversion/premier_2/pdf/prog_d_2.pdf)

<sup>52</sup> [http://www.gov.am/armversion/premier\\_2/pdf/prog\\_d\\_2.pdf](http://www.gov.am/armversion/premier_2/pdf/prog_d_2.pdf)



կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելումն ու բացահայտումը, կաշառատուների եւ կաշառակերների դատապարտումը եւ կոռուպցիայի դեմ հասարակության անհանդուրժողականությունը:

Ըստ հանրության եւ փորձագետների տեսակետի՝ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի պաշտոնական հռչակումից ի վեր կոռուպցիայի մակարդակը երկրում չի նվազել: 2005թ. «ՏՁԿ/ԹԻ-Հայաստան»-ը երկրի ողջ տարածքում 1500 տնային տնտեսությունների շրջանում անցկացրեց հեռախոսային հարցում<sup>53</sup>: Պարզվեց, որ հարցման մասնակիցների 62.9%-ի կարծիքով կոռուպցիան երկրում նույնիսկ աճել է: Հարցվողների զգալի մասը համարում էր, որ բոլոր պետական հաստատությունները կոռումպացված են, ըստ որում՝ ոստիկանությունը, դատարանները եւ դատախազական համակարգը հիշատակվում էին որպես առավելագույնս կոռումպացված ոլորտներ: Կոռուպցիայի հիմնական պատճառների շարքում նշվում էին սոցիալական անբարենպաստ պայմանները, անիշխանությունը եւ պետական պաշտոնյաների ազահությունը: Նույն ընթացքում անցկացված 25 անհատական հարցազրույցները եւ 5 ֆոկլորային խմբերի հետ քննարկումները, որոնց մասնակիցների թվում էին պետական պաշտոնյաներ, զործարարներ, լրագրողներ, ՀԿ-ների, Սփյուռքի եւ օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցիչներ, ցույց տվեցին, որ մասնակիցների մեծամասնության կարծիքով եւս Հայաստանում կոռուպցիայի մակարդակը վերջին 3 տարվա ընթացքում բարձրացել է<sup>54</sup>:

Ամենից կոռումպացված ոլորտներ են համարվել դատական համակարգը, դատախազությունը, ոստիկանությունը, պետավտոտեսչությունը, մաքսային եւ հարկային ծառայությունները, կրթական, առողջապահական համակարգերը, քաղաքականությունը: Իբրեւ կոռուպցիայի տարածման հիմնական պատճառներ նշվել են սոցիալական ծանր պայմանները (ցածր աշխատավարձերը), օրենսդրության անկատարությունը, օրենքների ոչ պատշաճ կիրարկումը, կոռուպցիայի դեմ պայքարելու քաղաքական կամքի բացակայությունը, անպատժելիության մթնոլորտը, խոսքի եւ մամուլի անբավարար ազատությունը, կոռուպցիայի հանդեպ հասարակության հանդուրժողականությունը, ազգային մտածելակերպը, տեղեկատվության մատչելիության սահմանափակությունը, ոչ արդյունավետ վարչարարությունը եւ այլն: Մասնակիցների մեծամասնության գնահատմամբ՝ Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն ձեռնարկներն անարդյունավետ են<sup>55</sup>:

2006թ. «Ֆրիդոմ Հաուս»-ի հրապարակած ուսումնասիրության տվյալների համաձայն (տե՛ս «Անցումային երկրներ» զեկույցը<sup>56</sup>)՝ 1999-ից ի վեր Հայաստանում կառավարության բոլոր մակարդակներում կոռուպցիայի պատկերը չի փոխվել, եւ կոռուպցիայի համաթիվը մնացել է նույնը՝ 5.75 (ըստ «1-7» սանդղակի, որտեղ 1-ը նշանակում է «կոռուպցիայից բացարձակապես զերծ», իսկ 7-ը՝ «լիովին կոռումպացված»): Ըստ 2006թ. «Գելափի կոռուպցիայի համաթվի»՝ ուսումնասիրված 101 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 69-րդ հորիզոնականը՝ 82 միավորով (այստեղ ամենացածր միավորը ցույց է տալիս, որ բնակչությունը նվազագույնն է հակված, իսկ ամենաբարձր միավորը՝ որ առավելագույնն է հակված՝ կոռուպցիան ընկալել իբրեւ լայնորեն տարածված)<sup>57</sup>: Բացի այդ, 2006-ին Համաշխարհային բանկը (ՀԲ) հրապարակեց իր՝ «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում-3. ո՞վ է հասել հաջողության եւ ինչո՞ւ» զեկույցը, որտեղ, մասնավորապես, նշվում է, որ չնայած 2003-ին Հայաստանում մշակվել է հակակոռուպցիոն ռազմավարություն եւ դրա իրականացման միջոցառումների ծրագիր, իսկ 2004թ. ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է կոռուպցիայի դեմ պայքարի բարձր

<sup>53</sup> «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում. 2005թ. հեռախոսային հարցում»:- «ՏՁԿ/ԹԻ-Հայաստան», Երեւան, 2006թ.:

<sup>54</sup> «Հակակոռուպցիոն քաղաքականությունը Հայաստանում»:- «ՏՁԿ/ԹԻ-Հայաստան», Երեւան, 2006թ.:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> <http://www.freedomhouse.hu/nit.html>

<sup>57</sup> <http://www.gallupoll.com/content/?ci=25612&pg=1>

մակարդակի խորհուրդ, կոռուպցիայի մի շարք պարամետրերով 2005-ին իրավիճակը երկրում զգալիորեն վատթարացել է 2002-ի համեմատությամբ<sup>58</sup>:

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանը 2004թ. հունվարից դարձել է «Եվրոպական երկրների կոռուպցիայի դեմ պայքարի խմբի» (ԳՐԵԿՈ)<sup>59</sup> անդամ: ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Եվրոպայի խորհրդի (ԵԽ) «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» եւ «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի» երկու կոնվենցիաները՝ համապատասխանաբար 2004-ի հունիսի 8-ին եւ նույն տարվա դեկտեմբերի 8-ին<sup>60</sup>: Հայաստանն ընդգրկված է նաեւ խորհրդային նախկին 8 հանրապետությունների համար մշակված՝ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան»<sup>61</sup> ծրագրում: Բացի այդ, 2005-ի մայիսին Հայաստանը ստորագրեց Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիան, որը ԱԺ-ի կողմից վավերացվեց 2006-ի հոկտեմբերին: 2006թ. նոյեմբերին Եվրոպական Միությունը եւ Հայաստանը վավերացրին «Եվրոպական հարեւանության քաղաքականության» (ԵՀՔ) իրականացման միջոցառումների ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է իբրեւ գերակա ոլորտ<sup>62</sup>: Այսպիսով, Հայաստանը ենթակա է միջազգային մոնիտորինգի, որով գնահատվում է, թե որքանով է երկիրը համապատասխանում միջազգային հակակոռուպցիոն չափանիշներին:

«Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլանը» ներառում է Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը եւ Ուկրաինան եւ նպատակ ունի բարելավել մասնակից երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը՝ միջազգային փորձագետների առաջարկած հանձնարարականների կատարման միջոցով: Հայաստանի համար նախատեսված հանձնարարականները մշակվեցին եւ ընդունվեցին 2004թ. հունիսի 15-18-ը Փարիզում կայացած հանդիպման ժամանակ: ՀՀ կառավարությունը կանոնավորապես ներկայացնում է զեկույցներ՝ հանձնարարականների կատարման ընթացքի մասին: Ընդհանուր առմամբ, ՏՀԶԿ-ն տվել է 24 հանձնարարական, որոնք կարելի է դասակարգել երեք հիմնական խմբի. 1) Ազգային հակակոռուպցիոն քաղաքականություն եւ հաստատություններ (յոթ հանձնարարական), 2) Հակակոռուպցիոն օրենսդրություն եւ կոռուպցիայի քրեականացում (ութ հանձնարարական), 3) Պետական ծառայության թափանցիկություն եւ ֆինանսական վերահսկողություն (ինը հանձնարարական):

2006թ. դեկտեմբերի 8-ին՝ ՏՀԶԿ-ի մոնիտորինգի 6-րդ փարիզյան հանդիպման ժամանակ քննարկվեց Հայաստանի կողմից 2004թ. հանձնարարականների կատարման ընթացքը եւ ընդունվեց երկրի վերաբերյալ մոնիտորինգի զեկույցը: Դրանում հիշատակված են մի շարք ոլորտներ, որտեղ արձանագրվել են դրական տեղաշարժեր, սակայն նշված է նաեւ, որ դեռեւս շատ անելիք կա՝ հանրային ու գործարար կյանքի տարբեր բնագավառներում կոռուպցիայի բեռը նվազեցնելու ուղղությամբ:<sup>63</sup> Ըստ զեկույցի՝ ՏՀԶԿ-ի հանձնարարականներից մեկն իրականացվել է ամբողջությամբ, 8-ը՝

<sup>58</sup> «Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում-3. ո՞վ է հասել հաջողության եւ ինչ ո՞ւր»: - Համաշխարհային բանկի զեկույցը, 2006թ., էջ 63:

<sup>59</sup> <http://www.greco.coe.int>

<sup>60</sup> «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 34 (333), հունիս 2004թ. եւ 2 (374), հունվար, 2005թ.

<sup>61</sup> <http://www.oecd.org/corruption/acn>

<sup>62</sup> [http://www.delarm.cec.eu.int/en/press/16\\_11\\_2006.pdf](http://www.delarm.cec.eu.int/en/press/16_11_2006.pdf)

<sup>63</sup> [http://www.oecd.org/document/35/0,2340,en\\_2649\\_34857\\_37846947\\_1\\_1\\_1\\_1,00.html](http://www.oecd.org/document/35/0,2340,en_2649_34857_37846947_1_1_1_1,00.html)

հիմնականում, 11-ը՝ մասամբ, իսկ 4-ը ընդհանրապես չեն կատարվել<sup>64</sup>: Ստորել ներկայացվում են միմիայն չիրականացված հանձնարարականները, թեպետ որոշակի քննադատություն է հնչել նաև մասամբ, մինչև իսկ՝ հիմնականում կատարված, հանձնարարականների առնչությամբ:

Հանձնարարական 10-ը վերաբերում է անձեռնմխելիությունից զրկելու հստակ, պարզ եւ թափանցիկ կարգի սահմանմանը, ինչպես նաև՝ անձեռնմխելիությունից օգտվող անձանց դասակարգման ու նման անձեռնմխելիության սահմանների վերանայման անհրաժեշտությանը, որպեսզի այդ կարգը համապատասխանի միջազգային չափանիշներին: Ինչպես նշված է ՏՀԶԿ-ի գեկույցում՝ այս խնդիրը հստակորեն չի ամրագրված Հայաստանի օրենսդրության մեջ: Այսպես, ըստ Սահմանադրության՝ երկրի նախագահը, հիմնվելով Արդարադատության խորհրդի եզրակացության վրա, կարող է անձեռնմխելիությունից զրկել դատավորներին: Այդուհանդերձ, պարզ չէ՝ արդյո՞ք նախագահը պետք է առաջնորդվի դրական եզրակացությամբ, թե՞ նրան թույլ չի տրվում բացասական եզրակացության դեպքում զրկել անձին անձեռնմխելիությունից: Խնդրահարույց է նաև այն, որ չկան կանոններ՝ սահմանելու համար այն չափանիշները՝ ըստ որոնց կարելի է որոշել, թե արդյո՞ք տեղին է անձեռնմխելիությունից զրկելը: Ասեմք, կարող են լինել ամրագրված չափորոշիչներ, որոնց համաձայն անձը անձեռնմխելիությունից կզրկվի միայն այն դեպքում, եթե չկան ապացույցներ, որ առաջ քաշված մեղադրանքները քաղաքական հիմնավորում ունեն կամ նախատեսված են պաշտոնյայի վրա ճնշում գործադրելու եւ կամ նրանից վրեժխնդիր լինելու համար:

Չկատարվածների թվում է նաև հանձնարարական 18-ը, որը վերաբերում է նվերների ստացման կարգի նկատմամբ մշտական վերահսկողության ապահովմանը, շահերի բախման իրավիճակներից խուսափելու անհրաժեշտությանը եւ այս ամենի խախտման դեպքում պատշաճ պատժամիջոցների կիրառմանը: Շահերի բախում հասկացության հստակ սահմանում գոյություն չունի եւ չկան նման իրավախախտումների դեպքում օրենքով նախատեսված պատժամիջոցներ: Չկա նաև շահերի բախման իրավիճակների կարգավորման ընթացքը դիտարկելու որոշակի համակարգ, ինչը շարունակում է մնալ Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպման ամենախոցելի կողմերից մեկը:

Հանձնարարական 20-ը վերաբերում է կոռուպցիային առնչվող կասկածների մասին հայտնելու, տեղյակ պահելու պարտավորության խթանմանը եւ պետական հիմնարկների աշխատակիցներին կարգապահական տույժերից ու հետապնդումներից պաշտպանող միջոցառումների ձեռնարկմանը՝ այն դեպքերում, երբ վերջիններս իրավապահ մարմիններին կամ դատախազությանը հայտնում են հիմնարկում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ իրենց կասկածների մասին: Հանձնարարականը անդրադառնում է նաև ներքին քարոզչության կազմակերպման անհրաժեշտությանը, ինչն ուղղված կլինի քաղժառայողների շրջանում նման միջոցառումների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը: ՏՀԶԿ-ի գեկույցում նշված է, որ Հայաստանում չի գործում պետական հիմնարկների աշխատակիցներին պաշտպանող նման մեխանիզմ:

Հանձնարարական 24-ը պահանջում է սահուն, տեւական շփում ու գործողությունների համակարգվածություն ապահովել ֆինանսական վերահսկողությունն եւ աուդիտ իրականացնող հաստատությունների միջև՝ նպատակ ունենալով հեշտացնել կոռուպցիայի դեպքերի բացահայտումը: Սակայն Հայաստանում թույլ է կազմակերպված աշխատանքների համակարգումն ու տեղեկատվության փոխանակումը ֆինանսական վերահսկողություն, ներքին ու արտաքին աուդիտ իրականացնող հաստատությունների միջև, ինչպես նաև՝ իրավապահ մարմինների հետ: Այնպիսի կառույցների աուդիտը, ինչպիսիք են հարկային, ռազմական եւ իրավապահ մարմինները, բարդ գործ է, քանի որ գաղտնի, խորհրդապահական

<sup>64</sup> <http://www.oecd.org/dataoecd/18/19/37835966.pdf>

տեղեկատվությունը մեծ ծավալ է զբաղեցնում: Ավելին, թեպետ ՀՌ-ն նախատեսում է 2007 թվականին ընդունել պետական ֆինանսական վերահսկողության մասին նոր օրենք, ՏՀԶԿ-ի մոնիտորինգի խմբի կարծիքով՝ մինչ օրս որեւէ քայլ չի ձեռնարկվել՝ ռազմավարության այս դրույթն իրականացնելու ուղղությամբ:

Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի գնահատման առաջին զեկույցն ընդունվել է 2006-ի մարտի 10-ին: Դրանում մեկտեղվել են առաջին եւ երկրորդ փուլերի գնահատականները՝ Հայաստանի կառավարության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման արդյունավետության վերաբերյալ: Ձեկույցում նշված է, որ կոռուպցիան Հայաստանում «...գլխավոր խնդիրներից է, որն ազդում է պետական ծառայության բազմաթիվ հատվածների վրա»,<sup>65</sup> եւ ներկայացված են 24 հանձնարարականներ, որոնք նպատակ ունեն բարելավել ներկա իրավիճակը հակակոռուպցիոն ոլորտում<sup>66</sup>: ԳՐԵԿՈ - ի հանձնարարականների կատարման վերջնաժամկետը 2007թ. սեպտեմբերի 30-ն է:

ԳՐԵԿՈ-ի հանձնարարականները հիմնականում ունեն կանխարգելիչ, բացահայտող բնույթ: Մեծամասամբ (24 հանձնարարականներից 20-ը) դրանք վերաբերում են օրենքների ու կանոնակարգերի ընդունմանը կամ բարելավմանը: Հանձնարարականներից վեցում նախատեսվում է պետական պաշտոնյաների եւ աուդիտորների համար վերապատրաստման դասընթացների անցկացում, իսկ Հանձնարարական 1-ը անհրաժեշտ է համարում կատարել համապատասխան ուսումնասիրություններ՝ Հայաստանում կոռուպցիայի եւ դրա դրսեւորումների առավել ամբողջական պատկերը վեր հանելու համար: Հասարակության մասնակցության բաղադրիչը հիշատակված է միմիայն Հանձնարարական 2-ում, որն ընդգծում է հակակոռուպցիոն միջոցառումների եւ դրանց կատարման արդյունքների մասին հանրությանը պարբերաբար իրազեկելու անհրաժեշտությունը: Հարկ է նշել, որ ՏՀԶԿ-ի Հանձնարարականներ 1, 5, 8, 10, 12, 17 եւ 20-ը լիովին կամ մասամբ համընկնում են ԳՐԵԿՈ-ի համապատասխան հանձնարարականների հետ:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիան» հուսալի հիմք է՝ աշխարհում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար: Կոնվենցիայի ուշադրության առանցքում կանխարգելիչ միջոցառումներն են, կոռուպցիայի եւ իրավապահ մարմինների քրեականացումը, միջազգային համագործակցությունը, ունեցվածքի փոխհատուցումը, փորձագիտական աջակցությունը եւ տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաեւ՝ Կոնվենցիայի դրույթների իրականացմանը միտված մեխանիզմները: Մասնակից կողմերի՝ 2006-ի դեկտեմբերին Հորդանանում կայացած համաժողովին որոշում ընդունվեց՝ ստեղծել լիամասշտաբ վերահսկողության մեխանիզմ, որը կհետեւի պարտադիր ու ոչ պարտադիր դրույթների կատարմանը: Որոշվեց նաեւ հիմնել միջազգային հիմնադրամ իրավական հարցերով փորձագետների համար ու նախաձեռնել համաշխարհային մասշտաբի ծրագիր՝ ուղղված արդարադատության եւ իրավապահ գործակալությունների, կառույցների ունակությունների հզորացմանը:

Հայաստանի համար նախատեսված՝ ԵԶԲ իրականացման միջոցառումների ծրագրով սահմանված գերակայությունների շարքում հատուկ ուշադրություն է հատկացված հակակոռուպցիոն 8 միջոցառումներին, որոնցից են՝ կոռուպցիային առնչվող հանցանքների պատշաճ հետապնդման եւ դատապարտման ապահովումը՝ վարչական դատարանների ստեղծման միջոցով, Քրեական օրենսգրքի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին, դատավորների եւ դատախազների համար վարքականոնի մշակումը, պաշտոնատար անձանց կողմից իրենց գույքի եւ եկամուտների ոչ հավաստի հայտարարագրման համար պատժամիջոցների սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը եւ

<sup>65</sup> «Հայաստանին վերաբերող՝ գնահատման առաջին եւ երկրորդ փուլերը ներառող զեկույց», մարտի 10, 2006թ. (*Joint First and Second Evaluation Round Evaluation Report on Armenia*, Strasbourg, 10 March, 2006) (Տե՛ս նաեւ <http://www.greco.coe.int/evaluations>), էջ. 37:

<sup>66</sup> <http://www.greco.coe.int/evaluations>

այլն: ԵՅՔ իրականացման ծրագրով նախատեսված գրեթե բոլոր միջոցառումները նույնպես ներառված են թե՛ վերոհիշյալ կոնվենցիաներում եւ թե՛ ԳՐԵԿՈ-ի ու ՏՀԶԿ-ի հանձնարարականներում:

Ընդհանուր առմամբ, միջազգային հակակոռուպցիոն մեխանիզմների արդյունավետ կիրառումն ապահովելու համար՝ հարկ է մշտական եւ անկողմնակալ վերահսկողություն իրականացնել Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վրա: Հակառակ դեպքում կարող է այնպես ստացվել, որ Հայաստանը կվավերացնի միջազգային կոնվենցիաները եւ կոռուպցիայի դեմ պայքարի պարտավորություններ կվերցնի, որոնք չեն կատարվի: Առանց գոյություն ունեցող քաղաքական, իրավական, ինստիտուցիոնալ կամ այլ բնույթի լուրջ խոչընդոտները հաղթահարելու՝ տարբեր միջազգային կառույցներին Հայաստանի անդամակցության նպատակահարմարությունն ու արդյունավետությունը հարցականի տակ կդրվի:

## ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՍ

Համաշխարհային բանկի գործարար միջավայրի եւ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ (ԳՄՁԳՅ) 2005թ. ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանում 2002-ի համեմատ կոռուպցիան դարձել է գործարարությունն արգելակող առավել լուրջ խնդիր<sup>67</sup>: Ըստ այս ուսումնասիրության արդյունքների՝ բիզնեսի զարգացումն արգելակող այնպիսի ոլորտների ու գործոնների շարքում, ինչպիսիք են մակրոտնտեսական անկայունությունը, հարկային վարչարարությունը, հողի սեփականության կամ վարձակալության իրավունքի գրանցումը, հողահատկացումը եւ ֆինանսական միջոցների մատչելիությունը, մեծ թվով ընկերություններ հիշատակել են կոռուպցիան: Ընդ որում, ուսումնասիրության տվյալների համաձայն՝ այլ երկրներում կոռուպցիան նույնչափ մտահոգություն չի առաջացրել:

Հարցմանը մասնակցած ընկերությունները նշել են, որ, համեմատած 2002-ի հետ, 2005թ. իրենց տարեկան շրջանառության կաշառքին ուղղված միջոցների ընդհանուր ծավալը զգալիորեն աճել է: Մինչդեռ ԱՊՀ, ինչպես նաեւ Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրների դեպքում այդ ցուցանիշը նվազել է: Միեւնույն ժամանակ, Հայաստանում նվազել է կաշառքի դեպքերի հաճախականությունը, ինչը կարող է բացատրվել կոռուպցիայի ինստիտուցիոնալ բնույթի ընդլայնմամբ (կամ արմատավորված ներքին կոռուպցիոն ցանցերի առկայությամբ): Հարցված ընկերությունների կարծիքով՝ «ստվերային» մուծումները ավելի հաճախ կատարվում են հետեւյալ դեպքերում՝ պետական պայմանագրեր ձեռք բերելու, գործունեության արտոնագրերի եւ թույլտվություններ ստանալու, կոմունալ ծառայությունների (օրինակ՝ էլեկտրականության եւ հեռախոսակապի) տեղադրման ու սպասարկման համար, ինչպես նաեւ՝ հարկերի ու դրանց հավաքման, աշխատանքի հիգիենայի եւ անվտանգության տեխնիկայի, հրշեջ ծառայության, շենքերի պահպանման եւ բնության պահպանության տեսչությունների, մաքսային կառույցների (ներկրումների դեպքում) եւ դատարանների հետ առնչվելու ժամանակ:

«Գործարարություն 2007. ինչպե՞ս բարեփոխել» զեկույցում<sup>68</sup> հրապարակված մեկ այլ հարցման արդյունքները վկայում են, որ 2005-ի համեմատ Հայաստանի դիրքը անկում է ապրել, ըստ որում՝ հաշվի են առնվել հետեւյալ ցուցանիշները՝ «աշխատողների վարձում», «ներդրողների պաշտպանություն», «հարկերի վճարում» եւ «բիզնեսի լուծարում»: Միաժամանակ՝ տեսանելի առաջընթաց է գրանցվել

<sup>67</sup> <http://www.info.worldbank.org/governance/beeps>

<sup>68</sup> <http://www.doingbusiness.org/ExploreEconomies/Default.asp?economyid=10>

«արտոնագրերի հետ կապված գործողություններ» եւ «վարկերի ստացում» ցուցանիշների առումով: Հետաքրքրական է, որ ուսումնասիրված 175 տնտեսությունների շարքում Հայաստանը զբաղեցնում է 2-րդ տեղը՝ «սեփականության գրանցում» ցուցանիշով եւ 148-րդը՝ «հարկերի վճարման» գծով:

2006թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «ՏԶԿ/ԹԻ-Հայաստան»-ը անցկացրել է առերես հարցում-հարցազրույցներ հարկային եւ մաքսային մարմինների, ՀՀ պետական գնումների գործակալության, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաեւ՝ մի շարք գործարար ընկերակցությունների ու մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ: Սրան զուգահեռ՝ կազմակերպության փորձագետները դիտարկել են վերջին ամիսներին նշված թեմաներին առնչվող հրապարակումները լրատվամիջոցներում: Ամփոփված տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ չնայած շարունակական բարեփոխումներին, որոնք նպատակ ունեն առավել բարենպաստ միջավայր ապահովել փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման եւ տնտեսական արդար մրցակցության խթանման համար, Հայաստանում գործարար հանրությունը դեռեւս բախվում է լուրջ դժվարությունների:

Ինչպես ներկայացվեց ՀՀ պետական մաքսային կոմիտեի ներկայացուցիչի հետ հարցազրույցի ժամանակ, կոռուպցիայի հնարավորությունների կրճատմանն ուղղված մաքսային ոլորտի բարեփոխումները իրականացվելու են երեք հիմնական ուղղություններով. մաքսային ծառայողների որակավորման բարձրացում, տեխնիկական վերազինում, համապատասխան օրենսդրության բարելավում: Հարցազրույցի ժամանակ նշվեց նաեւ, որ մաքսային ծառայության աշխատակիցների համար կազմակերպվել են բազմաթիվ դասընթացներ, թրեյնինգներ, եւ որ 2003-ից ի վեր մաքսային ծառայողները (բացառությամբ բարձրագույն ղեկավար պաշտոնյաների) աշխատանքի են ընդունվում մրցութային կարգով: 2005թ. ներքին հետաքննության արդյունքում 55 հոգի ազատվել է աշխատանքից, եւս 95 աշխատակից ենթարկվել է վարչական տույժերի: Որակավորման վերջին ատեստավորումից հետո մաքսային ծառայության 70 աշխատակիցներ ազատվել են աշխատանքից՝ մասնագիտական պահանջվող չափանիշներին չբավարարելու հիմնավորմամբ:

Հիշատակված ձեռքբերումներից գլխավորը մաքսային արժեքի էլեկտրոնային հայտարարագրման մեթոդի ներմուծումն է: Նման հայտարարագիրը կարող է ներկայացվել Մաքսային պետական կոմիտե, եթե ընկերությունը նախապես ստացել է համապատասխան հատուկ կոդ: Մաքսային պետական կոմիտեի ներկայացուցչի հավաստմամբ՝ ապրանքների առաքումից հետո դրանց նկատմամբ երեքամյա վերահսկողության (հետբացթողումային ստուգման) կարգի կիրառումը եւս մի առաջադեմ քայլ է ներկրող ընկերությունների համար մաքսային ձեւակերպումները հեշտացնելու ուղղությամբ: Տեղադրված արբանյակային կապի համակարգը բարձրացրել է կենտրոնական ու մարզային մաքսային կառույցների միջեւ հաղորդակցության արդյունավետությունը եւ արագացրել մաքսագերծման գործընթացը: Նշվեց, որ մաքսային ձեւակերպումների հետ կապված համանման արդյունք է գրանցվել նաեւ «Զվարթնոց» օդանավակայանում՝ ռենտգենյան բարձրակարգ սարքավորումների տեղադրման շնորհիվ:

Ուշադրություն է դարձվում նաեւ մաքսային եւ համապատասխան այլ օրենսդրության մեջ առկա սողանցքներին, անհամապատասխանություններին, օրինակ՝ ՀՀ Մաքսային օրենսգրքի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի ներդաշնակեցմանը: Նշվեց, որ մաքսային ծառայությունը փորձում է համագործակցել գործարարների հետ եւ իր ընթացիկ գործունեության ու նորարարությունների մասին ծանուցել հանրությանը: Թեպետ 2005թ. ի վեր բողոքների եւ զանգատների հատուկ փոստարկղեր են տեղադրվել ինչպես Մաքսային պետական կոմիտեում, այնպես եւ մաքսակետերում, սակայն մինչ օրս ստացվել է ընդամենը մեկ բողոք:

Հարցազրույցին մասնակցած գործարարների կարծիքով՝ մաքսային ոլորտի կոռուպցիան դեռևս ամենալուրջ հիմնախնդիրներից մեկն է փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման ճանապարհին: Նրանց խոսքերով՝ եթե գործարարը փորձի պաշտպանել իր իրավունքները եւ, ասենք, բողոքարկել մաքսային ծառայողի նշանակած մաքսային արժեքը՝ դիմելով Մաքսային պետական կոմիտեի ղեկավարին, ապա այդ ամենը սովորաբար այնքան երկար ժամանակ է խլում եւ այնքան մեծ վնասներ հարուցում, որ նա այլևս երբեք չի փորձի իրավաբանորեն լուծել մաքսազերծմանն առնչվող խնդիրները:

ՋԼՄ-ները եւս հիմնականում քննադատաբար են անդրադառնում մաքսային ոլորտում տիրող իրավիճակին: Տեւական ժամանակ հատուկ անդրադարձների է արժանացել սուրճ ներկրող «Ռոյալ Արմենիա» ընկերության նախագահի եւ նախկին տնօրենի կալանավորումը: Նրանց փաստաբան Աշոտ Սարգսյանի պնդմամբ՝ սա իշխանությունների ակնհայտ վրեժն է՝ ի պատասխան կոռուպցիայի եւ կաշառք պահանջելու մեջ Մաքսային պետական կոմիտեի ղեկավարության դեմ հնչեցրած մեղադրանքի<sup>69</sup>: Թեպետ Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը որոշում կայացրեց՝ հանել «Ռոյալ Արմենիա»-ին պատկանող սուրճի 115 տոննա խմբաքանակի ներմուծման արգելանքը<sup>70</sup>, կալանավորված այդ անձանց ապագան դեռևս պարզ չէ:

Լրատվական մեկ այլ հաղորդագրության մեջ հղում է արվում Համաշխարհային բանկի անցկացրած հարցմանը, որի արդյունքներով՝ կաշառքները կազմում են մաքսազերծման ընդհանուր ծախսերի 46%-ը՝ արտահանողների եւ 8%-ը՝ ներմուծողների համար<sup>71</sup>: Հատկանշական է, որ Հայաստանի խոշոր գործարարներից մեկը՝ Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը, նույնպես իր մտահոգությունն է հայտնել մաքսային ոլորտում տիրող իրավիճակի շուրջ՝ նշելով, որ իշխանությունները պատշաճ ուշադրություն չեն դարձնում այն փաստին, որ Մաքսային պետական կոմիտեի պետի տեղակալը մի շարք ձեռնարկություններ ունի, ինչն անխուսափելիորեն խնդիրներ է հարուցում ներկրող ընկերությունների համար<sup>72</sup>:

Հարկային ոլորտի բարձր մակարդակի մի պաշտոնյա ներկայացրեց իրենց ոլորտի բարեփոխումները . 2006թ. հարկային մուտքերը աննախադեպ են եղել՝ 220 մլրդ դրամ: Նա նշեց, որ վերջին մի քանի տարիներին սոցիալական հարկից բացի, մյուս հարկերի դրույքաչափերը չեն բարձրացել: Ըստ որում, հարկային մուտքերի աճը գերազանցել է տնտեսական աճի ցուցանիշը, ինչը վկայում է հարկերի հավաքման եւ հարկային վարչարարության բարելավման մասին: Հայաստանում իրականացվող հարկային բարեփոխումների հիմնական ուղղություններն են. «Ֆիզիկական անձանց գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկման նախապատրաստումը (այն ուժի մեջ է մտնելու 2008 թվականից), հարկերից խուսափելու համար առավել խիստ տույժերի սահմանումը, հարկային ծառայությունների գործունեության թափանցիկության եւ հրապարակայնության խթանումը, ֆինանսական հաշվետվությունների ընդունումը փոստային եղանակով, առևտրի եւ սպասարկումներ ոլորտում հսկիչ-դրամարկղային մեքենաների հետագա ներդրումը, կեղծ ապրանքագրերի համար տուգանքների սահմանումը, համապատասխան օրենսդրության եւ ընթացակարգերի բարելավումը, հարկային նոր տեսչությունների կազմավորումը, բողոքների ընդունման ու քննարկման համար հատուկ հանձնաժողովի ստեղծումը, հարկային պաշտոնյաների կողմից վարչարարական խախտումների համար պատասխանատվության խստացումը:

Հարկային իշխանությունների ներկայացուցչի կարծիքով՝ կարելուր նախաձեռնություններից է խոշորագույն հարկատուների (նաեւ՝ հարկային ամենամեծ պարտատուների եւ առավելագույն վնասով աշխատողների) ցանկերի պարբերական

<sup>69</sup> «Առավոտ» օրաթերթ, հունվարի 4, 2006թ.: «Հայկական ժամանակ» օրաթերթ, մարտի 4, 2006թ.:

<sup>70</sup> «Հայկական ժամանակ» օրաթերթ, նոյեմբերի 11, 2006թ.:

<sup>71</sup> «Ազգ» օրաթերթ, փետրվարի 28, 2006թ.:

<sup>72</sup> «Չորրորդ իշխանություն» («Կիրակնամուտ»), սեպտեմբերի 23, 2006թ.:

հրապարակումը: Հարկային հաշվետվությունների փոստով ընդունումը եւս համարվում է կոռուպցիայի հնարավորությունների նվազեցմանն ուղղված արդյունավետ միջոց, քանի որ այդպիսով վերանում է հարկատուների ու հարկային պաշտոնյաների դեմառդեմ շփման առիթը: 2005թ. վերոհիշյալ հանձնաժողովին ներկայացված 200 բողոքների կեսը լուծվել է հոգուտ հարկատուների: 2006-ին հարկային ծառայության 500 աշխատակիցներից 70-ը չեն անցել ատեստավորումը: Միայն 2006 թ. առաջին կեսին պաշտոնեական չարաշահմանն առնչվող բողոքների հիման վրա անցկացվել է 40 ներքին հետաքննություն, եւ երկու հոգի ազատվել է աշխատանքից:

Նշվեց նաեւ, որ գործարարները սովորաբար հակված են խուսափել հարկերից, քանզի նրանք, որպէս կանոն, փորձում են հնարավորություն գտնել խախտելու օրենքը եւ կաշառելու հարկային պաշտոնյաներին: Քանի որ տեխնիկապէս շատ բարդ է անցկացնել Հայաստանի բոլոր 130 հազար հարկատուների ֆինանսական գործունեության ամենամյա աուդիտ, առաջին հերթին աուդիտի են ենթարկվում խոշորագույն հարկատուները՝ պետբյուջեի եկամուտները ճիշտ գնահատելու նպատակով: Ըստ հարցազրույցին մասնակցած պաշտոնյայի՝ անհրաժեշտ ուշադրություն է դարձվում ռիսկերի գնահատմանը եւ կառավարմանը: Այդ նպատակով ստեղծվել է հարկատուների տվյալների շտեմարան, եւ վերլուծության է ենթարկվում նրանց գործունեությունը, որպէսզի առավել արդյունավետորեն իրականացվի հարկային վերահսկողությունը:

Գործարար շրջանակների ներկայացուցիչները ճիշտ հակառակ տեսակետն ունենին հարկային ծառայության ոլորտում տիրող իրավիճակի մասին: Նրանցից մեկի կարծիքով՝ հարկային տեսուչները գործարարների նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունեն, թե նրանք բոլորն օրենք խախտողներ են: Բացի այդ, հարկային պաշտոնյաների կողմից հարկերի կանխավճարում պահանջելու ընդունված գործելակերպը չի նպաստում նրանց եւ հարկատուների միջեւ վստահության ու համագործակցության հաստատմանը: Մասնավոր հատվածի մեկ այլ ներկայացուցիչ էլ նշեց, որ Հայաստանում այն ընկերությունները, որոնք «հովանի» չունեն քաղաքական ասպարեզում, չեն կարող գոյատեւել իրենց վրա դրված 72% հարկային բեռի տակ: Ի մասնավորի՝ նա հղում արեց ԱԱՀ-ի 20%-ին եւ շրջանառությունից հարկվող 1%-ին՝ իբրեւ շահութահարկի այլընտրանք այն ընկերությունների համար, որոնք չեն կարողանում շահույթ ապահովել, եւ առաջարկեց սահմանել միասնական հարկ (ինչպէս մի շարք այլ երկրներում)՝ խուսափելու համար բազմաթիվ հարկերի մեջ «խճճվելուց» եւ թղթարարության վրա ավելորդ ժամանակ վատնելուց: Նա եւս ընդգծեց այն փաստը, որ հարկային տեսուչները գործարարներին համարում են պոտենցիալ հանցագործներ: Հարցազրույցին մասնակցած երրորդ գործարարը պաշտպանեց հարկային բեռը թեթեւացնելու անհրաժեշտության գաղափարը, որպէսզի երկրում զարգանա գործարարությունը, բացի այդ՝ մատնանշեց չափից ավելի շատ (շուրջ 40) տեսչությունների առկայությունը, ինչը բազում հնարավորություններ է ստեղծում կոռուպցիայի համար:

Պետական գնումների գործակալության ներկայացուցչի հավաստմամբ՝ պետական գնումների համակարգը Հայաստանում ունի բավականին մշակված օրենսդրական դաշտ: «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը գործողության մեջ է մտել 2005թ. հունվարի 1-ից: Հարցազրույցի մասնակիցը նշեց, որ պահանջվող բոլոր հարակից օրենքները եւս կարգավորված են: Նրա կարծիքով՝ այս ոլորտում լուրջ բարեփոխումների կարիք չկա, թեւ լավ կլիներ, եթե ապահովվեր գործակալությունում անցկացվող բոլոր հայտամրցույթների համաժամանակյա հեռարձակումը ինտերնետով («օն-լայն» ռեժիմով): Զրուցակիցը շեշտեց, որ արվում է ամենայն հնարավորը՝ գնման գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու համար: Այդուհանդերձ, նրան մտահոգում էր այն, որ սակավաթիվ են ինտերնետով իրենց հայտերը ներկայացնող ընկերությունները, եւ որ հայտերի փաթեթներում ամփոփված փաստաթղթերը պարունակում են անճշտություններ:



Պետական գնումների ոլորտի մասին միանգամայն այլ տեսակետ ունեին գործարարները եւ լրագրողները: Փոքր եւ միջին ընկերությունները նույնիսկ չեն էլ փորձում մասնակցել հայտարարված մրցույթներին, քանզի նրանք բոլորն էլ քաջատեղյակ են հայտ ներկայացրածների ու պետգնումների ոլորտի պաշտոնյաների միջեւ գաղտնի համաձայնության կայացման ընդունված կարգի մասին: Ըստ որոշ գործարարների՝ Հայաստանում չի հրապարակվում որեւէ տեղեկատվություն այն չափորոշիչների մասին, որոնց համաձայն ընտրվում են պետական գնումների հայտը շահած ընկերությունները: Այնուամենայնիվ, այս ոլորտում կոռուպցիայի դեպքերի մասին ծանրակշիռ փաստեր չկան, եւ ամենայն հավանականությամբ՝ այն պատճառով, որ գաղտնի համաձայնության եկողները չեն ցանկանում վկայություններ տալ այդ մասին, որ հանկարծ պատասխանատվության չենթարկվեն հակաօրինական արարքների համար:

Եվ վերջապես, հարցազրույցին մասնակցած բոլոր գործարարները հիշատակեցին հայաստանյան շուկայում տիրող ծայրաստիճան անհավասարությունն ու տնտեսական արդար մրցակցության բացակայությունը: Նրանցից մեկը նշեց, որ փոքր եւ միջին ընկերություններին թույլ են տալիս մուտք գործել միմիայն շուկայի այնպիսի հատվածներ, որոնք բնավ շահութաբեր չեն: Սրա հիմնական պատճառն այն է, որ եկամտաբեր հատվածները «օլիգարխների» մենաշնորհն են: Միեւնույն ժամանակ, նույնիսկ միջին շահույթ ապահովելու դեպքում՝ ընկերությունը պետք է գտնի բարձրաստիճան «հովանի» եւ նրան մի զգալի բաժին հանի իր ստացած եկամտից՝ իրեն շնորհված «պաշտպանվածության» դիմաց:

«ՏԶԿ/ԹԻ-Հայաստան»-ի խնդրանքով՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացրած գրավոր զեկույցում խոշոր ձեռնարկությունների կողմից Հայաստանի շուկայի մենաշնորհման փաստը բացատրվում է շուկայական ցածր պահանջարկով, սովերային տնտեսությամբ, որոշ ընկերություններին տրվող արտոնություններով, իրական գների մասին ճշգրիտ տեղեկատվության բացակայությամբ եւ դրանից բխող՝ շուկայի աղավաղված «պատկերով» եւ այլն: Նկատի առնելով այս ամենը՝ դժվար է քննել զեկույցում ներկայացված տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը եւ գտնել արդյունավետ լուծումներ: Հայաստանի շուկայի միտումները գնահատելուն խանգարող հավելյալ խոչընդոտ է ոչ բավարար համագործակցությունը մասնավոր ընկերությունների հետ, որոնք այնքան էլ ակտիվ չեն Հանձնաժողովին իրենց բողոքները ներկայացնելու հարցում: Ինչպես նշվեց, առանց գործարարների աջակցության՝ Հանձնաժողովը հազիվ թե կարողանա անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ երկրում տնտեսական մրցակցությունը խթանելու համար:

## **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԹՈՒՄԸ»**

Տարբերակվում են քաղաքական կոռուպցիայի տասը տեսակներ, որոնք են՝ ընտրությունների ժամանակ ֆինանսական միջոցների անօրինական ծախսումը (ներառյալ ընտրակաշառքները), անհայտ աղբյուրներից թեկնածուների եւ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորումը, պաշտոնների, տիտղոսների կամ տեղեկատվության վաճառքը, պետական (վարչական) ռեսուրսի չարաշահումը, անձնական հարստացումը, պետական ծառայողներից մուծումներ պահանջելը, քաղաքական ֆինանսավորման կարգերին չենթարկվող գործունեության իրականացումը, որեւէ «լավության», պայմանագրերի ձեռքբերման կամ քաղաքականության փոփոխման դիմաց տրվող ֆինանսական աջակցությունը, մասնավոր հատվածին՝ «հովանի» ձեռք բերելու համար վճարել պարտադրելը եւ ընդդիմադիր կուսակցությունների ֆինանսավորման հնարավորությունների

սահմանափակումը<sup>73</sup>: Հայաստանի օրենսդրության մեջ ամրագրված են դրույթներ, որոնք կոչված են սանձել քաղաքական կոռուպցիայի վերոհիշյալ որոշ տեսակներ:

Այսպես, ՀՀ Ընտրական օրենսգրքի հոդված 139-ը սահմանում է հանցանքների 30 տեսակ, որոնց կատարողները ենթակա են պատասխանատվության (այդ թվում՝ քվեաթերթիկների եւ ընտրական հանձնաժողովների կնիքների կեղծում, ընտրողների ցուցակների կեղծում, ընտրական գործառնությունների խոչընդոտում, քվեարկության գաղտնիության խախտում եւ այլն): Իսկ ՀՀ Քրեական օրենսգրքի հոդված 149-154-ում, ինչպես նաեւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի հոդված 40.1-40.7-ում այդ հանցանքներից յուրաքանչյուրի համար սահմանված են կոնկրետ պատիժներ:

ՀՀ Ընտրական օրենսգրքը (տե՛ս հոդվածներ 18-23) կանոնակարգում է նախընտրական քարոզչության անցկացումը եւ ներառում քաղաքական կոռուպցիայի դրսեւորումներին առնչվող առանձին դրույթներ: Մասնավորապես, այն հավասար հնարավորություններ է սահմանում բոլոր կուսակցությունների եւ թեկնածուների համար, արգելում է նախընտրական քարոզչություն կատարել եւ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ պետական պաշտոնյաներին (իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս), Սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, ՀՀ Ոստիկանության եւ Ազգային անվտանգության, դատախազության մարմինների աշխատակիցներին, զինծառայողներին, բարեգործական եւ կրոնական կազմակերպություններին, օտարերկրյա քաղաքացիներին ու կազմակերպություններին, ընտրական հանձնաժողովների անդամներին: Օրենսգրքը ընտրություններին մասնակցող կուսակցություններին եւ թեկնածուներին արգելում է նաեւ քաղաքացիներին տալ կամ խոստանալ դրամ, սննդամթերք, ապրանքներ, արժեթղթեր կամ ծառայություններ, եւ պահանջում, որպեսզի ՁԼՄ-ները հավասար պայմաններ ապահովեն կուսակցությունների ու թեկնածուների նախընտրական քարոզչության համար: Հավասար պայմաններ են պահանջվում նաեւ պաստառների եւ քարոզչական այլ տպագիր նյութերի հրապարակման ու տարածման համար: Նշված հարցերը կանոնակարգվում են նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ով, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի հոդված 8.4-ով, ինչպես նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի հոդվածներ 79 եւ 80-ով:

Կուսակցությունների եւ թեկնածուների նախընտրական քարոզչության ֆինանսավորումը կանոնակարգվում է ՀՀ Ընտրական օրենսգրքի հոդվածներ 25, 26, 79, 112 եւ 128-ով: Օրենսգրքը (տե՛ս հոդված 25) սահմանում է այն աղբյուրները, որոնցից թեկնածուների եւ կուսակցությունների նախընտրական հիմնադրամները կարող են ստանալ միջոցներ, եւ արգելում է ֆինանսավորումը որոշակի աղբյուրներից, ինչպես օրինակ՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող միջոցներ, բյուջետային հիմնարկներ ու կազմակերպություններ, օտարերկրյա ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, տնտեսական միավորներ, որոնց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում բաժնեմաս ունեն պետությունը կամ տեղական համայնքները, կազմակերպություններ, որոնց բաժնեհավաք կապիտալում 30%-ից ավելին կազմում են օտարերկրյա միջոցները, ինչպես նաեւ՝ բարեգործական ու կրոնական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ ու միջազգային հասարակական շարժումներ:

ՀՀ Ընտրական օրենսգրքը պարունակում է նախընտրական հիմնադրամների եւ ֆինանսավորողների հետ կապված որոշակի սահմանափակումներ, որոնք ամրագրված են հոդված 79-ում (նախագահի թեկնածուների դեպքում), 112-ում (ԱԺ-ի ընտրություններին մասնակցող պատգամավորության թեկնածուների եւ

73 Տե՛ս Financing Politics: A Global View by M. Pinto-Duschinsky, *Journal of Democracy*, Vol. 13, No 4, October 2002. (Մ. Պինտո-Դուշչինսկի, «Քաղաքականության ֆինանսավորումը. դիտարկում աշխարհի կտրվածքով»:- «Ժողովրդավարության տեղեկագիր», հատոր 13, N 4, հոկտեմբեր, 2002թ.):

կուսակցությունների դեպքում) եւ 128-ում (տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առաջադրված թեկնածուների դեպքում): Միեւնույն ժամանակ, Օրենսգիրքը չի ապահովագրում այնպիսի դեպքերից, երբ ֆինանսավորողները ապրանքներ կամ ծառայություններ են ձեռք բերում իրենց համակրած կուսակցությունների կամ թեկնածուների համար՝ այդ գումարները նախընտրական հիմնադրամներին ուղղակիորեն նվիրաբերելու փոխարեն:

Ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսի չարաշահման մեկ այլ դրսեւորում է պետական բարձրաստիճան պաշտոնյաների կամ նրանց հետ կապված անձանց ու հաստատությունների կողմից ընտրական գործընթացի մասնակիցների վրա (ընտրողներ, լրագրողներ, վստահված անձինք, դիտորդներ եւ ընտրական հանձնաժողովների անդամներ) ճնշում գործադրելը կամ վերջիններիս «վախեցնելը»: Այս խնդիրը քիչ թե շատ կարգավորվում է Ընտրական օրենսգրքի հոդված 22.1-ով. այսպես, Օրենսգրքի առանձին հոդվածներ սահմանում են վստահված անձանց, դիտորդների եւ լրագրողների, նաեւ՝ ընտրական հանձնաժողովների անդամների կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները եւ պարունակում են նրանց վրա անհարկի ճնշում գործադրելն արգելող դրույթներ (տե՛ս հոդվածներ 27, 27.1, 30 եւ 33): Ընտրական հանձնաժողովների անկախությունը քաղաքական կոռուպցիայի սանձման՝ միջազգայնորեն ընդունված եւս մի մեխանիզմ է: Ընտրական օրենսգրքի հոդվածներ 32-37-ը կարգավորում են ընտրական հանձնաժողովների անկախության երաշխավորմանն առնչվող հարցերը (հավելյալ մանրամասների համար՝ տե՛ս սույն զեկույցի «Ազատ եւ արդար ընտրությունների գերակշռումը, ընտրություններում կուսակցությունների արդար մրցակցության հնարավորությունները» գլխում):

«ՏԶԿ/ԹԻ-Յայաստան»-ն անցկացրել է 2003թ. ԱԺ-ի ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման մոնիտորինգ, որը բացահայտեց ընտրարշավի ֆինանսավորման բազմաթիվ խախտումներ, հատկապես՝ այն երեք քաղաքական կուսակցությունների պարագայում, որոնք հետագայում ձեւավորեցին կառավարական կոալիցիան: Սակայն նրանցից եւ ոչ մեկը պատասխանատվության չենթարկվեց՝ ընտրական օրենսդրությունը խախտելու համար: «ՏԶԿ/ԹԻ-Յայաստան»-ը թեկնածուների նախընտրական քարոզչության ոչ թափանցիկ ֆինանսավորման եւ վարչարարական ռեսուրսի չարաշահման դեպքեր արձանագրեց նաեւ 2005թ. Վանաձորի քաղաքապետի ընտրությունների ժամանակ: Ըստ հարցումների եւ դիտարկումների՝ ընտրակաշառքները սովորական երեւույթ էին ինչպես համապետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում էլ<sup>74</sup>:

Յայաստանում առկա են քաղաքական կոռուպցիայի հետեւյալ հիմնական ռիսկերը. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող՝ քաղաքական ղեկավարների կողմից պաշտոնեական դիրքի չարաշահումը՝ քաղաքական դիվիդենտներ շահելու նպատակով, կազմակերպված հանցագործության կառույցների կամ օտարերկրյա կառավարությունների կողմից ֆինանսավորումը (ծայրահեղ դեպքում՝ նշված գործող անձինք կարող են ձեւավորել իրենց առանձին կուսակցությունները), պետական միջոցների անօրինական փոխադրումը կուսակցության «գրպանը»՝ հատուկ այդ նպատակով հիմնված ընկերությունների ու կազմակերպությունների միջոցով, ընդդիմադիր կուսակցությունների որոշ ղեկավարների կամ աչքի ընկնող անդամների կաշառումը՝ իրենց կուսակցությունից հրաժարվելու դիմաց, քաղծառայողներին եւ այլ պետական պաշտոնյաներին կուսակցության անդամ դառնալ հարկադրելը եւ կուսակցության կարիքների համար նրանցից գումար կորզելը, մասնավոր հատվածից, հատկապես՝ օլիգարխներից անօրինական նվիրատվություններ ընդունելը եւ դրանց դիմաց արտոնություններ տրամադրելը, ձեռներեցներին ստիպելը, որպեսզի «ընդունեն» իշխող կուսակցության ղեկավարներին եւ բարձրաստիճան քաղաքական պաշտոնյաներին՝ որպես իրենց

<sup>74</sup> Տե՛ս [www.transparency.am/publications.php](http://www.transparency.am/publications.php)

բիզնեսի «տանիք», ինչպես նաև՝ ընդդիմադիր կուսակցությունների համար ֆինանսական եւ այլ ռեսուրսների մատչելիության սահմանափակումը:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը ներառում է մի շարք դրույթներ, որոնք անդրադառնում են վերոհիշյալ կոռուպցիոն ռիսկերին: Այսպես, հոդված 10-ը արգելում է կուսակցությունների՝ պետական կամ տեղական ինքնակառավարմիներում պաշտոն զբաղեցնող անդամներին՝ օգտագործել իրենց պաշտոնական դիրքն հոգուտ կուսակցական շահերի: Օրենքը նաև պարզորոշ արգելում է դատավորներին, դատախազներին, ազգային անվտանգության, ոստիկանության եւ այլ իրավապահ մարմինների աշխատակիցներին, ինչպես նաև՝ զինված ուժերի եւ այլ զորքերի ծառայողներին՝ լինել որեւէ քաղաքական կուսակցության անդամ:

Հոդվածներ 23-25-ը կանոնակարգում են կուսակցությունների դրամական միջոցներին եւ գույքին վերաբերող հարցերը: Օրինակ՝ սահմանվում են այն աղբյուրները, որոնցից կարող են գոյանալ կուսակցության սեփականությունը, դրամական միջոցները (անդամավճարներ, նվիրատվություններ, ԱԺ-ում ներկայացված կուսակցությունների բյուջետային ֆինանսավորում եւ այլն), ինչպես նաև՝ հստակեցվում են նվիրատվությունների տրամադրման ընթացակարգերը: Հետեւյալ կառույցներին արգելվում է նվիրատվություններ անել կուսակցություններին. բարեգործական եւ կրոնական կազմակերպություններ, ինչպես նաև նրանց հիմնադրած կազմակերպություններ, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկներ ու կազմակերպություններ, ինչպես նաև այդ մարմինների մասնակցությամբ հիմնադրված կազմակերպություններ, պետական կառավարչական հիմնարկներ, պետական ոչ առեւտրային կազմակերպություններ, նվիրատվության կատարման օրվանից մինչև վեց ամիս առաջ գրանցված իրավաբանական անձինք, օտարերկրյա պետություններ, օտարերկրյա քաղաքացիներ ու իրավաբանական անձինք, ինչպես նաև՝ օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձինք, եթե օտարերկրյա մասնակցի բաժնեմասը տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 25%-ից ավելի է, միջազգային կազմակերպություններ եւ միջազգային հասարակական շարժումներ, անանուն անձինք: Նման նվիրատվությունները պետք է վերադարձվեն նվիրատուին՝ բացառությամբ վերջին դեպքի (անանուն անձինք), երբ նվիրատվությունը փոխանցվում է պետբյուջե: Բացի այդ, հոդված 28-ը պահանջում է, որպեսզի կուսակցությունները հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ ներկայացնեն իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունը: Նույն օրը նշանակված է նաև որպես ՁԼՍ-ներում այդ ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու վերջնաժամկետ:

Քաղաքական կոռուպցիան կարելի է կրճատել նաև այլ կանխարգելիչ միջոցներով, որոնցից են պետական բարձրաստիճան պաշտոնյաների ու կուսակցությունների ղեկավարների գույքի եւ եկամուտների հայտարարագրումը, պատգամավորների՝ խորհրդարանական իրենց խմբակցություններից դուրս գալուն առնչվող հարցերի կանոնակարգումը, իշխանության գործադիր եւ օրենսդիր ճյուղերի պաշտոնյաներին այլ ընկերություններում կամ պետական հաստատություններում մեկ ուրիշ պաշտոն զբաղեցնելու արգելումը եւ այլն: Հայաստանի օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված է նման հարցերի կանոնակարգումը: Մասնավորապես՝ «Իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի եւ եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը պահանջում է, որպեսզի ամենամյա նման հայտարարագրեր ներկայացնեն ոչ միայն իրենք՝ պաշտոնյաները, այլև նրանց ամենամոտ մերձավորները:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության հոդված 65-ն արգելում է ԱԺ-ի անդամներին՝ պաշտոններ զբաղեցնել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Սահմանադրության հոդված 88-ը նույնպիսի սահմանափակումներ է ներկայացնում կառավարության անդամներին, իսկ հոդված 94-ը հռչակում է դատական մարմինների անկախությունը, ինչը քաղաքական կոռուպցիային դիմագրավելու եւս մի հուսալի երաշխիք է: Այդուհանդերձ,

մինչ օրս որեւէ բարձրաստիճան պաշտոնյա պատասխանատվության չի ենթարկվել իր գույքի եւ եկամուտների մասին կեղծ տեղեկություններ հայտարարագրելու համար<sup>75</sup>:

2006թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց (երկրորդ ընթերցմամբ) «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը, որպեսզի ապահովվի 2007-ի խորհրդարանական եւ 2008-ի նախագահական ընտրությունների առավել արդար անցկացումը: Սակայն բոլոր նախորդ ընտրությունները ցույց տվեցին, որ չնայած Ընտրական օրենսգրքի շարունակական բարելավմանը (1999թ. փետրվարից ի վեր այն լրամշակվել է վեց անգամ), միջազգային դիտորդների եզրակացմամբ՝ Հայաստանում ընտրությունները չեն համապատասխանել միջազգային չափանիշներին: Բացի այդ, ներկայիս իշխանությունները դեռեւս չեն դրսևւորել գործող օրենսդրության կիրարկումն ապահովելու իրական հետաքրքրվածություն եւ պատրաստակամություն՝ քաղաքական կոռուպցիան նվազեցնելու նպատակով:

Ինչ վերաբերում է «պետության զավթում» (կամ խոշոր ձեռնարկատիրության, զինվորականների եւ այլ ազդեցիկ խմբերի կողմից իշխանության օրենսդիր, գործադիր կամ դատական ճյուղերի վրա ազդեցություն) երեւույթին, դրան անդրադարձել են Համաշխարհային բանկի ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի կողմից համատեղ անցկացված՝ Գործարար միջավայրի եւ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ հարցումների (ԳՄՁԳՀ) բոլոր երեք՝ 1999, 2002 եւ 2005 թվականների ուսումնասիրությունները: ԳՄՁԳՀ 1999թ. ուսումնասիրությունը բացահայտել էր, որ հարցմանը մասնակից՝ անցումային տնտեսությամբ 22 երկրների շարքում Հայաստանը, ինչպես եւ Սլովենիան, ուներ «պետության զավթման» ամենացածր համաթիվը<sup>76</sup>: Այն ժամանակ Հայաստանի «պետության զավթման» համաթվի ցածր լինելը թերեւս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տնտեսությունը այդքան շատ կենտրոնացված չէր «օլիգարխների» փոքր խմբի ձեռքում: Հնարավոր մյուս պատճառն էլ այն է, որ պետության «զավթումն» արդեն իսկ իրականացվել էր ավելի շուտ այլ խմբերի, քան ընկերությունների կողմից:

ԳՄՁԳՀ 2002-ի արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանում «պետության զավթման» ազդեցության աստիճանը դարձյալ ամենացածրն էր ուսումնասիրված երկրների շարքում<sup>77</sup>: Սակայն 2005-ին Հայաստանը շոշափելի հետընթաց գրանցեց «պետության զավթման» համաթվի դասակարգման սանդղակում<sup>78</sup>: Արդյունքները վկայում էին, որ «օլիգարխ» կառույցները գնալով ավելի վճռական դերակատարում են ստանձնում պետության քաղաքականության ձեւավորման եւ իրագործման մեջ: Միեւնույն ժամանակ, չի անցկացվել որեւէ լուրջ ուսումնասիրություն՝ «պետության զավթում» երեւույթն առանձին վերլուծելու եւ երկրում դրա տարածվածության աստիճանը չափելու համար: Այդուհանդերձ, տնտեսության մենաշնորհման եւ «օլիգարխիզացիայի» աստիճանի վերաբերյալ կա փորձագիտական տեսակետ, ըստ որի՝ ներկրվող ապրանքների տեսականու 40%-ի «կենտրոնացման» աստիճանը միջին հաշվով կազմում է 78%<sup>79</sup>:

Հայաստանում քաղաքական կոռուպցիայի առկայության մասին վկայող աղբյուրներից մեկն էլ քաղաքական կոռուպցիայի բացահայտված դեպքերի մասին

<sup>75</sup> «Հայոց աշխարհ» օրաթերթ, հոկտեմբերի 28, 2006թ.:

<sup>76</sup> *Anticorruption in Transition: A Contribution to the Policy Debate*, The World Bank, Washington, D.C. 2000. («Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում. մասնակցություն քաղաքականությունների բանավեճին»:- Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, 2006թ.):

<sup>77</sup> *Anticorruption in Transition 2: Corruption in Enterprise-State Interactions in Europe and Central Asia 1999-2002*, The World Bank, Washington D.C. 2004. («Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում-2. կոռուպցիան ձեռնարկություն-պետություն փոխհարաբերություններում եվրոպայում եւ կենտրոնական Ասիայում 1999-2002 թթ.»:- Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, 2004թ.):

<sup>78</sup> *Anticorruption in Transition 3: Who Is Succeeding... and Why?* The World Bank, Washington D.C. 2006. («Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում-3. ո՞վ է հասել հաջողության եւ ինչո՞ւ»:- Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, 2006թ.):

<sup>79</sup> *Еженедельник "Деловой экспресс"*, No 38(695), 14-е октября, 2006г.

ՁԼՄ-ներում (հատկապես՝ ընդդիմադիր մամուլում) հրապարակված նյութերն են կամ ՀԿ-ների անցկացրած մոնիտորինգը: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 176-ի հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները կարող են դառնալ քրեական գործ հարուցելու առիթ: Նույն Օրենսգրքի հոդված 179-ը սահմանում է, թե որոնք են հանդիսանում լրատվության միջոցների հաղորդումներ եւ ՁԼՄ-ներից պահանջում՝ համագործակցել հետաքննության մարմինների հետ: Սակայն պետական պաշտոնյաները կամ իրավապահ մարմինները երբեք լուրջ չեն ընդունել նման տեղեկությունները՝ հայտարարելով, թե դրանք անհիմն են: Արդյունքում՝ բարձր դիրք զբաղեցնող որեւէ քաղաքական գործիչ երբեւէ նման հիմքով չի ենթարկվել դատական հետապնդման կամ պատասխանատվության:

Ընդդիմադիր որոշ թերթերում լույս են տեսել մի շարք հրապարակումներ՝ կապված ՀՀ բնապահպանության նախարարին կոռուպցիայի մեջ մեղադրելու մի պատմության հետ, ըստ որի՝ լիցենզիա տրամադրելու համար նախարարը 3 մլն ԱՄՆ դոլարի կաշառք էր պահանջել ոսկի արդյունահանող մի ընկերությունից: Թեպետ նախարարը ժխտեց բոլոր մեղադրանքները եւ քրեական գործ չհարուցվեց նրա դեմ, սակայն այդպես էլ պարզ չեղավ, թե ինչո՞ւ նա գրպարտության համար դատի չտվեց այս պատմությունը հրապարակած թերթերից որեւէ մեկին:

Մյուս դեպքը կապված է ԱՄՆ դոլարի, եվրոյի կամ ֆունտ ստերլինգի համեմատ Հայաստանի ազգային արժույթի՝ դրամի շարունակական արժեւորմանը: Ընդդիմադիր թերթերն ու քաղաքական գործիչները, ինչպես նաեւ բազմաթիվ տնտեսագետներ, պնդում են, որ դրամի արժեւորումն արհեստական է, եւ որ ՀՀ Կենտրոնական բանկը պարզապես աչք է փակում (թերեւս՝ ոչ «հենց այնպես») արտարժույթի շուկայում կատարվող մանիպուլյացիաների վրա, որոնք նախաձեռնել են որոշ օլիգարխներ, ում ձեռքում է կենտրոնացած մի շարք կենսական անհրաժեշտության ապրանքների, օրինակ՝ բենզինի, շաքարի եւ այլն, Հայաստան ներկրման մենաշնորհը: Նրանց հիմնական փաստարկն այն է, որ, չնայած տեղական արժույթի վերաարժեւորմանը, ապրանքների գները ոչ միայն չեն նվազել, այլեւ բարձրացել են՝ այդպիսով հավելյալ շահույթ ապահովելով մոնոպոլիստների համար: Կենտրոնական բանկը շարունակ ժխտել է այս մեղադրանքները, սակայն այս դեպքում եւս որեւէ հետաքննություն չի իրականացվել:

Երեւանի կենտրոնում «Էլիտար» բնակելի շենքերի կառուցումը, որը սկիզբ է առել 2004 թվականից, եւս մի նախադեպ է, որը կարելի է դասել «պետության զավթում» շարքին: Նման շինարարության օրինական հիմքն ապահովում էին ՀՀ հողային օրենսգրքի հոդվածներ 104, 106 եւ 108-ը, ինչպես նաեւ՝ ՀՀ կառավարության կողմից 2002թ. օգոստոսի 1-ին ընդունված՝ թիվ 1151-Ն որոշումը: Սակայն գործընթացն ուղեկցվում էր շինհրապարակների տարածքում իրացված փոքր տների սեփականատեր բնակիչների իրավունքների զանգվածային խախտումներով: Ընդդիմադիր ղեկավարների եւ լրատվամիջոցների պնդմամբ՝ այս «Էլիտար» շինությունների սեփականատերերը հիմնականում բարձրաստիճան պետական այրերին ոչ պաշտոնապես պատկանող ընկերություններն են:

2006թ. ապրիլի 18-ին ՀՀ Սահմանադրական դատարանը որոշեց, որ վերոհիշյալ իրավական ակտերը, եւ հետեւաբար բնակիչների դեմ կայացված բոլոր նախորդ դատավճիռները, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը: Միեւնույն ժամանակ, կառավարությունը ԱԺ-ի քննարկմանը ներկայացրեց «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» նոր օրենքի նախագիծը, որն ընդունվեց ԱԺ-ի կողմից 2006թ. նոյեմբերի 27-ին: Որոշ փորձագետներ պնդում են, որ այդ օրենքը իրավաբանորեն կհիմնավորի վերը նշված խախտումները, եւ տների բնակիչներին էլ ավելի հեշտորեն կզրկի իրենց սեփականությունից այն դեպքերում, երբ տների իրացումը կկատարվի առանց բնակիչների համաձայնության կամ պատշաճ փոխհատուցման: